ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն Փակ բաժնետիրական ընկերություն

Թողարկողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական ձևը

ՀՀ, 0023, ք.Երևան, Ագաթանգեղոս փ. 2ա
հեռ. (+374 12) 55 55 55
էլ. փոստ՝ info@finca.am, ինտերնետային կայք՝ www.finca.am

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» Բաց բաժնետիրական ընկերություն

Տեղաբաշխողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական ձևը

ՀՀ, 0002, ք.Երևան, Բուզանդի 87, 85 տարածք
հեռ. (+374 10) 59 23 23
էլ. փոստ՝ info@araratbank.am, ինտերնետային կայք՝ www.araratbank.am

---

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի դասը՝	Անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս	
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային	
Արժեթղթերի քանակը՝	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով	
Արժեկտրոնային եկամտաբերություն՝		
Շրջանառության ժամկետը՝		
Տեղաբաշխման ձևը՝		
Արժեթղթերի թողարկման արժույթը՝	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	մինչև 1,667,000,000 (մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունյոթ միլիոն) ՀՀ դրամ, որից մինչև առավելագույնը 4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար ծավալը կարող է թողարկվել ԱՄՆ դոլարով, պայմանով, որ ցանկացած թողարկման պահի դրությամբ թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալը:	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 3

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 5

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ 6
1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 11
1.3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 13
1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձ 16
1.5. Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և բաժնետերերը 16
1.6. Թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ 18
1.7. Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները 18
1.8. Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը 20
1.9. Այլ էական տեղեկություններ 20
1.10. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները 20

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23

2.1. Ռիսկային գործոններ 23
2.2. Հիմնական տեղեկատվություն 24
2.3. Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ 25
2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները 33
2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 37
2.6. Լրացուցիչ տեղեկատվություն 39

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 38

3.1. Անկախ աուդիտորները 40
3.2. Ռիսկային գործոններ 40
3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին 50
3.4. Բիզնեսի նկարագիրը 53
3.5. Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը 59
3.6. Հիմնական միջոցները 60
3.7. Զարգացման վերջին միտումները 60
3.8. Շահույթի կանխատեսումը 62
3.9. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 64
3.10. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը 70
3.11. Կառավարման մարմինների գործունեությունը 78
3.12. Հսկող անձինք 80
3.13. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 80
3.14. Լրացուցիչ տեղեկատվություն 81
3.15. Էական պայմանագրերը 82
3.16. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 82
3.17. Այլ տեղեկատվություն 83

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ծրագրային ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Զարլաշտ Վարդակ	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի նախագահ**	Zar Wardak	20.04.2023
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Նիվեդիտա Նիտյանանդ	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ**	Nivedita. N.	20.04.2023
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Մուրադ Մուրադյան	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ**		20.04.2023
անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռիչարդ Մարնի	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ**	Richard Marney	20.04.2023
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սթիվեն Մայքլ Հասս	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Գլխավոր տնօրեն/Վարչության նախագահ**		20.04.2023
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

FINCA

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Անուշ Պետրոսյան	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Գլխավոր ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ**		20.04.2023
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վարդան Հարոյան	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Գլխավոր գործառնական տնօրեն**		20.04.2023
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Չադրյան	**Իրավաբանական վարչության ղեկավար**		20.04.2023
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միհր Անանյան	**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		20.04.23
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունների իսկությունը հաստատում եմ՝

Սթիվեն Մայքլ Հասս	**«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Գլխավոր տնօրեն/Վարչության նախագահ**		20.04.2023
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ ԵՐԵՎԱՆ * CJSC "FINCA" UNIVERSAL CREDIT ORGANIZATION YEREVAN * RA
«ՖԻՆՔԱ» FINCA 0045174

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ «ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԹՈՂԱՐԿՈՂ ԿԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԱԶԴԱԳԻՐ) ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով Թողարկողի և/կամ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Տեղաբաշխող) ինտերնետային կայքերում՝ www.finca.am:

2020 - 2021 թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուրն են հանդիսանում Ընկերության աուդիտ արված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, իսկ 2022թ. դրությամբ ներկայացված տվյալներինը՝ աուդիտի չենթարկված հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Սույն ազդագրում ներկայացված տեղեկատվությունը, բացառությամբ տարեկան ֆինանսական հաշվետվությունների, անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ «ФИНКА» УНИВЕРСАЛЬНАЯ КРЕДИТНАЯ ОРГАНИЗАЦИЯ Закрытое Акционерное Общество.

անգլերեն՝ “FINCA” UNIVERSAL CREDIT ORGANIZATON Closed Joint-Stock Company.

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ռուսերեն՝ «ФИНКА» УКО ЗАО

անգլերեն՝ “FINCA” UCO CJSC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի փ. 2ա, գրանցման համարը՝ 13:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի փ. 2ա:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 12) 55 55 55

էլ. փոստ՝ info@finca.am,

ինտերնետային կայք՝ www.finca.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Կազմակերպության Գանձապետ Արևիկ Հովհաննիսյանի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+37412) 555555 (1400), էլ. փոստ՝ arevik.hovhannisyan@finca.am:

1.1.1. Կազմակերպության համառոտ նկարագիրը

Կազմակերպությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2006 թվականի մարտի 28-ին՝ որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 128Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 13 գրանցման վկայական:

Կազմակերպությունը ստեղծվել է «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ Ինք.» ամերիկյան ոչ առևտրային կազմակերպության կողմից ՀՀ միկրոֆինանսական շուկայի ձևավորման նախնական փուլում՝ նպատակ ունենալով ֆինանսական ծառայություններ մատուցել ֆինանսական հաստատություններից սահմանափակ վարկավորման հնարավորություն և ամենացածր եկամուտ ունեցող ձեռնարկատերերին:

Կազմակերպության առաքելությունն *է* հիմնավոր լուծումների միջոցով հաղթահարել աղքատությունը՝ օգնելով մարդկանց ստեղծել ակտիվներ, նոր աշխատատեղեր և բարելավել իրենց ապրելակերպը:

Կազմակերպության նպատակն *է* լինել ոչ ավանդական համայնքային ֆինանսական հաստատություն, որը շահեկանորեն ու ամենայն պատասխանատվությամբ մատուցում է նորարական և արդյունավետ ֆինանսական ծառայություններ՝ հասանելի դարձնելով կայուն, սոցիալապես պատասխանատու ֆինանսական ծառայությունները կարիքավոր անհատներին ու համայնքներին՝ նշված խմբերին հնարավորություն ընձեռելով ներդրում կատարել ապագայի մեջ:

Կազմակերպության հիմնական նպատակն է ցածր եկամուտ ունեցող բնակչությանը հնարավորություն տալ բարելավել իրենց կյանքը և զարգացնել իրենց բիզնեսը՝ ավելի հարմար և արագ վարկատեսակներ առաջարկելու միջոցով: Այդ իսկ պատճառով Կազմակերպությունը կարևորում է ֆինանսական ծառայությունների թվայնացումը և վերջին տարիների ընթացքում զարգացրել է իր առցանց ծառայությունները և նախատեսում է նաև ներդնել մոբայլ հավելված: Թվայնացման միջոցով ներդրվել է որոշումների ընդունման և վարկերի տրամադրման ավտոմատացված համակարգ՝ ռիսկի վրա հիմնված գնագոյացումով:

Կազմակերպության հիմական նպատակն է նաև իր հաճախորդների համար հանդիսանալ որպես բիզնես գործընկեր, այլ ոչ թե զուտ վարկատու և աջակցել հաճախորդներին ոչ ֆինանսական ծառայություններ մատուցելու միջոցով (ուսուցում և սեմինարներ):

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 4,905,960,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 490,596 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Կազմակերպության միակ բաժնետեր է հանդիսանում «ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու. Էյ» կազմակերպությունը:

1.1.2. Բիզնեսի համառոտ նկարագիրը

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը: Գործունեությունը սկսելուց ի վեր Կազմակերպությունն իր բնույթով հանդիսանում է ունիվերսալ վարկային կազմակերպություն, մասնավորապես, որպես հիմնական գործունեություն ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց, որպես գործակալ կնքում է ԱՊՊԱ և ապահովագրական այլ պայմանագրեր: Իր կողմից մատուցվող ծառայություններն ամբողջականացնելու նպատակով Կազմակերպությունը սկսած 2013 թվականից մատուցում է նաև արտարժույթի փոխանակման ծառայություններ:

Վարկավորման գործընթացը Կազմակերպությունն իրականացնում է ինչպես սեփական կապիտալի, այնպես էլ ներգրավված միջոցների հաշվին:

Հաճախորդների սպասարկման գործընթացն առավել հարմարավետ դարձնելու համար, Կազմակերպությունն անընդհատ բարելավվում է վարկավորման գործընթացները՝ առաջարկելով ժամանակակից (թվայնացված) ծառայություններ: Այսպես՝

- 2018 թվականի ապրիլին գործարկվեց OLA հարթակը (www.ola.am), որի միջոցով հաճախորդները հնարավորություն ունեն առցանց դիմել վարկավորման համար և առավելագույնը մեկ օրվա ընթացքում պատասխան ստանալ հայտի վերաբերյալ:
- 2019 թվականի սկզբից Կազմակերպությունն իր հաճախորդներին առաջարկում է Թաբլետ վարկավորման գործընթացը, որը հնարավորություն է տալիս առանց հաճախորդի մասնաճյուղ այցելության վերցնել հայտը և կատարել վերլուծություն:
- 2020 թվականին Կազմակերպությունը ներդրեց վարկավորման նոր ծրագիր, որը մի քանի անգամ արագացրեց վարկավորման գործընթացը:
- Հաշվի առնելով գործընթացների թվայնամացման արագ տեմպերը, Կազմակերպությունը 2023 թվականին նախատեսում է կատարելագործել OLA հարթակը և իր հաճախորդներին առաջարկել որոշումների կայացման և վարկավորման ամբողջությամբ ավտոմատ գործընթաց, որի դեպքում հաճախորդը կարող է վարկը ստանալ մի քանի րոպեների ընթացքում:

2020 թվականից Կազմակերպությունը սկսեց վերանայել իր կողմից առաջարկվող հիմնական ծառայությունների սակագները՝ հաճախորդներին առաջարկելով ծառայությունների անհատական պայմաններ (risk-based price): Վերջինս Կազմակերպությանը հնարավորություն տվեց առաջարկել մրցակցային պայմաններ և հետևաբար ամրապնդել իր դիրքը շուկայում:

2022 թվականի հուլիսից Կազմակերպությունը իր հաճախորդներին առաջարկում է Էվոկաբանկի հետ թողարկված համատեղ քարտ (co-branded card), որի միջոցով հաճախորդները վարկերը ստանում են անկանխիկ եղանակով:

2022 թվականին Կազմակերպությունը ներդրեց «Հիփոթեքային վարկ» վարկատեսակը, ինչի շնորհիվ ընդլայնվեց Կազմակերպության հաճախորդների շրջանակը:

2022 թվականի օգոստոսի 23-ից «Գյուղատնտեսական արժեշղթա» վարկային ծրագրի շրջանակներում ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ն ներկայացրել է գյուղատնտեսական վարկատեսակը, որն ուղղված է գյուղատնտեսական մթերքների վերամշակողների և մատակարարների ծախսերի ֆինանսավորմանը:

2022 թվականի սեպտեմբերի 01-ից սկսած Ազգային Հիփոթեքային Ընկերություն ՎՎԿ ՓԲԸ-ի ծրագրի շրջանակներում ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ն տրամադրում է բնակելի անշարժ գույքի ձեռքբերման և կառուցապատման, ինչպես նաև վերանորոգման նպատակով հիփոթեքային վարկեր:

Ֆինանսական գործառնությունները Կազմակերպության կողմից իրականացվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ կանխիկ և անկանխիկ եղանակներով:

Կազմակերպությունը միջնաժամկետ և երկարաժամկետ դրամական միջոցներ ներգրավելու նպատակով համագործակցում է այնպիսի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ, ինչպիսիք են «ՔեյէՖԴաբլյու բանկը» (KfW Bankengruppe), Symbiotics-ը, Enabling Qapital-ը, Agents for Impact և այլ: 2022 թվականի չորրորդ եռամսյակների ընթացքում Կազմակերպությունը մոտ 9 մլն ԱՄՆ դոլարի միջոցներ է ներգրավել տեղական և միջազգային գործընկերներից, որից 2 միլիոն ԱՄՆ դոլարի երկարաժամկետ միջոցները ներգրավվել է նոր միջազգային գործընկեր կազմակերպությունից՝ KIVA REFUGEE INVESTMENT FUND LLC-ից, որով նախատեսված

միջոցները ուղղվելու են հիմնականում տեղահանված վարկառուների աջակցմանը և ֆինանսավորմանը:

Հիմնադրման օրվանից Կազմակերպությունը համագործակցում է նաև մի շարք հեղինակավոր միկրոֆինանսավորման զարգացման հիմնադրամների հետ, ինչպես, օրինակ, «responsAbility Investments AG», «Symbiotics», «Blue Orchard», «Triple Jump», «DWM», «BANK IM BISTUM ESSEN eG (BIB), IFC, EBRD, ADB և այլն»:

«ՖԻՆՔԱ»-ն 2018թ. դարձավ առաջին կազմակերպությունը Հայաստանում, որին շնորհվեց **«Հաճախորդների պաշտպանության» միջազգային Smart հավաստագիր**:

Կազմակերպությունն ունի 30 մասնաճյուղ և վարկավորում է իրականացնում ՀՀ բոլոր մարզերում: Մասնաճյուղերի ցանկը, հասցեներով ներկայացված է 3.3.1 մասում:

1.1.3 Ակտիվների համարժեքությունը և պիտանելիությունը

2022 թվականին, համաձայն աուդիտի չենթարկված միջանկյալ հաշվետվությունների, Կազմակերպությունը գեներացրել է 214,029 հազար ՀՀ դրամի զուտ շահույթ, որի արդյունքում կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին մեծությանը) կազմել է 3.60%, ակտիվների շահութաբերությունը՝ 0.98%: Լևերիջի գործակիցը (ընդհանուր պարտավորությունների հարաբերությունն ընդհանուր կապիտալին) կազմել է 2.79:

Կազմակերպության ակտիվները 2022 թվականի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ աճել են 10.95%-ով կամ մոտ 2.3 մլրդ ՀՀ դրամով, իսկ պարտավորությունները՝ 13.81%-ով կամ 2.1 մլրդ ՀՀ դրամով: Դիտարկվող ժամանակահատվածում Կազմակերպության վարկային պորտֆելը գրանցել է 3.91%-ի կամ 713 մլն ՀՀ դրամի աճ:

Ստորև ներկայացվում է Կազմակերպության ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.

հազ. ՀՀ դրամ

	31.12.2022թ.[1]	2021թ.	2020թ.	2019թ.
Ակտիվներ, այդ թվում՝	**22,959,614**	**20,694,354**	**21,538,870**	**27,304,026**
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	**20,541,395**	**18,249,609**	**19,810,384**	**25,112,960**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	18,960,500	18,247,724	19,810,232	23,921,915
Շահույթ կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	1,885	152	-
Ներդրումային արժեթղթեր	202,296	-	-	1,191,045
Պահանջներ բանկերի նկատմամբ	1,378,599	-	-	-

[1] 2022թ. տվյալները ներկայացված են հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից և աուդիտի կողմից ստուգված չեն:

Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում	**89.5%**	**88.2%**	**92.0%**	**92.0%**

1.1.4 Կազմակերպության կազմակերպչական կառուցվածքը

Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը հետևյալն է.



1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ինչպես բոլոր տնտեսվարող սուբյեկտները, Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը պետք է տեղյակ լինեն այդ ներդրման հետ կապված ռիսկերի մասին:

Ընդհանուր առմամբ, պարտատոմսերում ներդրում կատարողները բախվում են ինչպես թողարկող կազմակերպության գործունեության հետ կապված, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից առաջացող ռիսկերի և պարտատոմսերի հետ կապված ռիսկերի հետ:

1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներից և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Կազմակերպությունը մշտապես զարգացնում է իր ֆինանսատնտեսական վիճակին սպառնացող ռիսկերի կառավարման արդյունավետությունը և որպես հիմնական ռիսկեր դիտարկում վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, գործընկերոջ (Counterparty Risk), գործառնական, տնտեսության վիճակի և օրենսդրության փոփոխություններով պայմանավորված ռիսկերը: Կազմակերպությունը ռիսկերի կառավարման հարցում առաջնորդվում է ՖԻՆՔԱ Իմփեքթ Ֆայնենսի կողմից մշակված «Դուստր Կազմակերպությունների Քաղաքականությունների Ձեռնարկ»-ով և ներքին մշակված իրավական ակտերով:

Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները, որոնք թողարկողից անկախ են: Նման ռիսկերից զերծ մնալու կամ հետևանքները նվազեցնելու նպատակով Թողարկողը մշակում է գործունեության անընդհատության ապահովման և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգեր: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը: Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները գնահատելու համար ներդրողները կարող են օգտվել Թողարկողի ինտերնետային կայքում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններից՝ www.finca.am:

Թողարկողի կողմից որպես առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Վարկային ռիսկը Կազմակերպության վարկառուների, փոխառուների և վերջինիս նկատմամբ պարտավորություններ ստանձնած անձանց կողմից պայմանագրային պարտավորությունները ժամանակին և սահմանված չափով կամ մասամբ չկատարելու հավանականությունն է, ինչը կարող է վնաս հասցնել Կազմակերպության կապիտալին: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարումը Թողարկողի կարևորագույն խնդիրներից է:

Իրացվելիության ռիսկը, երբ Կազմակերպության ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման, ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության, օրենսդրական փոփոխությունների, նորմատիվային դաշտի փոփոխությունների և այլ պատճառներով:

Իրացվելիության ռիսկի հետևանքով դժվարություններ կարող են առաջանալ Կազմակերպության ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելու ժամանակ, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու հետ կապված:

Տոկոսադրույքի ռիսկը, երբ շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, տոկոսային եկամուտների և արդյունքում նաև կապիտալի վրա:

Արտարժութային ռիսկը, որը սահմանվում է որպես փոխարժեքի փոփոխության հետևանքով Կազմակերպության ֆինանսական արդյունքների և կապիտալի վրա ունեցած բացասական ազդեցության ռիսկ:

Գործընկերոջ ռիսկի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է ունենալ: Կախված ռիսկի ծագման աղբյուրից՝ միջբանկային գործընկերոջ ռիսկը կարելի է տրոհել ռիսկերի հետևյալ տեսակների՝ մայր գումարի կորստի ռիսկ, փոխարինման ռիսկ, առաջին վճարողի ռիսկ և վճարման ռիսկ, թողարկողի ռիսկ:

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Կազմակերպության կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես՝ վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, որի պատճառով Թողարկողը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը:

Գործառնական ռիսկը, որը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների բացասական ազդեցության արդյունքում, ինչը կարող է կորուստ բերել Թողարկողի կապիտալի և/կամ շահույթի վրա: Գործառնական ռիսկի հետևանքով կարող է վտանգվել նաև Թողարկողի համբավը:

1.2.2. Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Կազմակերպությունը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար:

Ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանն՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժութային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը, հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռքբերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկը: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

1.3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է որդեգրած ռազմավարությանը համաձայն: Կազմակերպության գործունեությունը մշտապես գտնվում է Կազմակերպության տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով

Կազմակերպության կողմից առաջարկվող ծառայությունները և դրանց սակագները շուկայի պահանջներին:

2022թ. վերջի դրությամբ Կազմակերպության ակտիվները նախորդ տարվա համեմատ աճել են 10.95%-ով կամ 2.3 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 23.0 մլրդ ՀՀ դրամ, այն դեպքում, երբ 2021թ. վերջի դրությամբ Կազմակերպության ակտիվները նախորդ տարվա նկատմամբ նվազել էին 845 մլն ՀՀ դրամով կամ 3.9%-ով՝ կազմելով՝ 20.7 մլրդ ՀՀ դրամ:

Դիտարկվող ժամանակաշրջանի վերջում Կազմակերպության պարտավորությունների ծավալը կազմել է 16.9 մլրդ ՀՀ դրամ՝ 2021թ. վերջի դրությամբ աճելով 13.8%-ով կամ 2.1 մլրդ ՀՀ դրամով: 2021թ. վերջի դրությամբ պարտավորությունների ծավալը կազմել է 14.9 մլրդ ՀՀ դրամ՝ 2020թ. դեկտեմբերի 31–ի համեմատ նվազելով 852 մլն ՀՀ դրամով կամ 5.4 %-ով:

Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 214 մլն ՀՀ դրամով կամ 3.7%-ով և կազմել 6.1 մլրդ ՀՀ դրամ: Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2021թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 7 մլն դրամով կամ 0.1%-ով՝ կազմելով 5.8 մլրդ ՀՀ դրամ:

2022 թվականի ընթացքում Կազմակերպությունը գեներացրել է 214 մլն ՀՀ դրամի զուտ շահույթ՝ նախորդ տարվա 7 մլն ՀՀ դրամ զուտ շահույթի համեմատ: Կապիտալի և ակտիվների շահութաբերության ցուցանիշները 2022 թվականին կազմել են համապատասխանաբար՝ 3.60% և 0.98%:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը 2022 թվականի վերջի դրությամբ կազմել է 4,905,960,000 ՀՀ դրամ, որը բաղկացած է 490,596 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

2022թ. դեկտեմբերի 31-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագրի գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Ազդագրի ԿԲ գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, Կազմակերպության դեմ չկան և չեն սպասվում դատական հայցեր, որոնք կարող են նյութական, բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական վիճակի կամ Կազմակերպության զարգացման հեռանկարների վրա:

Կազմակերպությունը համապատասխանում է միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունների պայմանագրերով ստանձնած բոլոր ֆինանսական նորմատիվներին, բացառությամբ շահութաբերությանը վերաբերող նորմատիվին, որը կազմակերպությունը ակնկալում է վերականգնել հունիս ամսվանից սկսած: Կազմակերպության գործադիր մարմինը սերտորեն աշխատում է վերը նշված ֆինանսական կազմակերպության հետ տվյալ խախտումը վերացնելու ուղղությամբ: Կազմակերպության որևէ ակտիվ չի հանդիսանում գրավի առարկա այդ վարկերի գծով:

Կազմակերպության ղեկավարությունը մշտապես իր ուշադրության ներքո է պահում նաև Կազմակերպության կազմակերպական կառուցվածքը արդիական և ժամանակակից բիզնեսի վարման կանոններին համապատասխանեցնելու խնդիրը, որի հետևանքով հնարավոր են Թողարկողի կազմակերպական կառուցվածքի փոփոխություններ, որոնք միտված կլինեն

Կազմակերպության գործունեության բարելավմանը և արդյունավետության ու շահութաբերության բարձրացմանը:

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	31.12.2022 (աուդիտ չանցած)	2021 (աուդիտ անցած)	2020 (աուդիտ անցած)	2019 (աուդիտ անցած)
Ակտիվներ	22,959,614	20,694,354	21,538,870	27,304,026
Պարտավորություններ	16,909,177	14,857,946	15,709,458	20,077,042
Կապիտալ	6,050,437	5,836,408	5,829,412	7,226,984

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	31.12.2022 (աուդիտ չանցած)	2021 (աուդիտ անցած)	2020 (աուդիտ անցած)	2019 (աուդիտ անցած)
Զուտ տոկոսային եկամուտ	2,379,161	2,549,331	2,314,870	4,369,159
Գործառնական եկամուտ	2,903,188	2,742,210	1,978,888	4,550,363
Զուտ շահույթ/վնաս	214,029	6,996	-901,572	924,040

Հիմնական տնտեսական նորմատիվներ 31/12/2022թ.դրությամբ

Նորմատիվներ (հազ. դրամ)	Փաստացի մեծությունը	ՀՀ ԿԲ սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	4,905,960	150,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	5,121,715	1,000,000	Խախտում առկա չէ
Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	29.0%	12.0%	Խախտում առկա չէ
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	1.6%	25.0%	Խախտում առկա չէ
Ն51 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	0.0%	10.0%	Խախտում առկա չէ
Ն52 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	0.0%	5.0%	Խախտում առկա չէ

1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձ

Կազմակերպության 2012-2021թթ. ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է **«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ** աուդիտորական կազմակերպությունը, որի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Ամիրյան փող., 4/7 շենք, 7-րդ հարկ («Իմպերիում Պլազա» բիզնես-կենտրոնի շենքում), հեռ.՝ (+37410) 526-520, իսկ 2022թ. Ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացնում է **«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ**-ն, որի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0015, Գ.Լուսավորիչի 9, Երևան Պլազա Բիզնես Կենտրոն, հեռ.՝ (+374 10) 500-964:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ եզրակացությունները Կազմակերպության կողմից պատրաստված 2020-2021թթ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ներկայացված են կից Հավելվածներում: Վերջին 5 տարիների ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

1.5. Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և բաժնետերերը

Թողարկողի կանոնադրությամբ սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները՝

- ✓ **Բաժնետերերի ժողով,**
- ✓ **Տնօրենների խորհուրդ,**
- ✓ **Վարչություն,**
- ✓ **Գլխավոր տնօրեն:**

Կազմակերպության Բաժնետերերի ժողովը կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Կազմակերպության Տնօրենների խորհուրդն ընտրվում է Բաժնետերերի որոշմամբ՝ Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան: Վարչությունը և Գլխավոր տնօրենը կառավարում են Վարկային կազմակերպության առօրյա ընթացիկ գործունեությունը:

Կազմակերպության Տնօրենների խորհուրդը բաղկացած է չորս անդամներից.

	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1.	Զարլաշտ Վարդակ	Խորհրդի նախագահ	ավելի քան 24 տարի
2.	Ռիչարդ Մարնի	Խորհրդի անդամ	ավելի քան 49 տարի
3.	Մուրադ Մուրադյան	Խորհրդի անդամ	ավելի քան 18 տարի
4.	Նիվեդիտա Նիտյանանդ	Խորհրդի անդամ	ավելի քան 18 տարի

Կազմակերպության Վարչությունը բաղկացած է չորս անդամներից.

	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1.	Սթիվեն Մայքլ Հասս	Վարչության նախագահ, Գլխավոր տնօրենի,	ավելի քան 31 տարի
2.	Անուշ Պետրոսյան	Վարչության անդամ, Գլխավոր ֆինանսական տնօրեն և գլխավոր հաշվապահ	ավելի քան 25 տարի
3.	Վարդան Հարոյան	Գլխավոր գործառնական տնօրեն	ավելի քան 14 տարի
4.	Հարություն Չադրյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության ղեկավար	ավելի քան 14 տարի

Կազմակերպության աշխատակիցների թիվը նշված ժամանակաշրջանների վերջի դրությամբ կազմել է.

	31.12.2022 թ.	2021 թ.	2020թ.	2019թ.
Աշխատակիցների ցուցակային թվաքանակը	**356**	**371**	**469**	**573**

2011թ. նոյեմբերի 1-ից «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ միակ բաժնետերն է հանդիսանում «ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ» Յու. Էյ նիդերլանդական կազմակերպությունը: Վերջինս ստեղծվել է Նիդերլանդներում «ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Հոլդինգ Քոմփանի» ՍՊԸ և «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ» ՍՊԸ կողմից: «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հայտարարված և տեղաբաշխված բաժնետոմսերը կազմել են 490,596՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 4,905,960,000 ՀՀ դրամ:

1.6. Թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2017 թվականից ի վեր կատարել է պարտատոմսերի 13 թողարկում, որոնցից 6-ը 31.12.2022թ. դրությամբ գտնվում են շրջանառության մեջ:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾԱՎԱԼԸ

31.12.2022թ. դրությամբ

Արժեթուղթ	Շրջանառության մեջ առկա ծավալ	Արժույթը	Արժեկտրոնի եկամտաբերություն	Շրջանառության ժամկետ	Մարման ամսաթիվ
AMFNCAB2DER2	1,000,000	ԱՄՆ դոլար	7.5%	24 ամիս	16.11.2024
AMFNCAB2CER4	501,820,000	ՀՀ դրամ	13%	24 ամիս	16.11.2024

AMFNCAB2BER6	684,625	ԱՄՆ դոլար	6.5%	24 ամիս	21.06.2024
AMFNCAB2AER8	250,000,000	ՀՀ դրամ	12.5%	24 ամիս	21.06.2024
AMFNCAB29ER7	1,053,250	ԱՄՆ դոլար	6.5%	24 ամիս	20.04.2024
AMFNCAB27ER1	1,400,000,000	ՀՀ դրամ	12%	36 ամիս	10.02.2025

1.7. Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները

Պարտատոմսերի տեսակը՝	անվանական արժեկտրոնային	
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով	
Պարտատոմսերի ձևը՝	ոչ փաստաթղթային	
Պարտատոմսերի փոխարկելիությունը՝	ոչ փոխարկելի	
Պարտատոմսերի թողարկման արժույթը՝	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի թողարկման ծավալը՝	մինչև 1,667,000,000 (մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունյոթ միլիոն) ՀՀ դրամ անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր (որից մինչև առավելագույնը 4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար ծավալը կարող է թողարկվել ԱՄՆ դոլարով պայմանով, որ ցանկացած թողարկման պահի դրությամբ թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալը՝ առանձին փուլերով (տրանշերով): Ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալը պետք է առնվազն հավասար լինի ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի ծավալի առնվազն 10%-ի չափով:	
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝	50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո	

քանակը՝	յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով
Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը՝	
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝	
Պարտատոմսերի տոկոսադրույքը՝	
Պարտատոմսերի շրջանառության ձևը՝	Տեղաբաշխումից հետո արժեթղթերի առուվաճառքը երկրորդային շուկայում կարող է իրականացվել բացառապես կարգավորվող շուկայում:

Կազմակերպության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն օգտագործվելու են վարկային պորտֆելի աճը ֆինանսավորելու նպատակով: Վարկային պորտֆելի աճին աջակցելու նպատակով կազմակեպությունը 2022թ.-ի ընթացքում մշակել և ներդրել է նոր վարկատեսակներ: Հարկ է նշել, որ որոշ նոր վարկատեսակներ գտնվում են մշակման փուլում և կներկայացվեն հաճախորդներին 2023թ.-ին: 2022 թվականի օգոստոսի 23-ից «Գյուղատնտեսական արժեշղթա» վարկային ծրագրի շրջանակներում «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն ներկայացրել է գյուղատնտեսական վարկատեսակը, որն ուղղված է գյուղատնտեսական մթերքների վերամշակողների և մատակարարների ծախսերի ֆինանսավորմանը: 2022 թվականի սեպտեմբերի 01-ից սկսած Ազգային Հիփոթեքային Ընկերություն ՎՎԿ ՓԲԸ-ի ծրագրի շրջանակներում «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն տրամադրում է բնակելի անշարժ գույքի ձեռքբերման և կառուցապատման, ինչպես նաև վերանորոգման նպատակով հիփոթեքային վարկեր:

Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները ենթակա են որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի կողմից, յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ: Թողարկման վերջնական պայմանները հրապարակվելու են Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.finca.am և www.araratbank.am :

1.8. Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով՝ Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ բացառությամբ Շուկա ստեղծողի կողմից ձեռքբերման ենթակա պարտատոմսերի: Թողարկողի և Տեղաբաշխողի կողմից սահմանվում է պոտենցիալ Շուկա ստեղծողի կողմից ձեռքբերման ենթակա պարտատոմսերի ծավալ:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ հրապարակվելու են Թողարկողի, ինչպես նաև Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ համապատասխանաբար՝ www.finca.am, www.araratbank.am:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրելու նպատակով Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրման հայտը հնարավոր է չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո երեք ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Թողարկողի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

1.9. Այլ էական տեղեկություններ

Թողարկողի ֆինանսական հաշվետվությունները հասանելի են Թողարկողի պաշտոնական կայքում՝ www.finca.am, ինչպես նաև Ազդագրին կից Հավելվածներում:

1.10. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	31.12.2022 (աուդիտ չանցած)	2021 (աուդիտ անցած)	2020 (աուդիտ անցած)	2019 (աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	214,029	6,996	-901,572	924,040
Սեփական կապիտալի միջին մեծություն	5,943,423	5,832,910	6,528,198	7,472,665
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	***3.60%***	***0.12%***	***-13.81%***	***12.37%***
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	214,029	6,996	-901,572	924,040

Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	21,826,984	21,116,612	24,421,448	27,168,076
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	***0.98%***	***0.03%***	***-3.69%***	***3.40%***
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	214,029	6,996	-901,572	924,040
Գործառնական եկամուտ	2,903,188	2,742,210	1,978,888	4,550,363
Զուտ շահույթի մարժա (NPM), %	***7.37%***	***0.26%***	***-45.56%***	***20.31%***
Գործառնական եկամուտ	2,903,188	2,742,210	1,978,888	4,550,363
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	21,826,984	21,116,612	24,421,448	27,168,076
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	***13.30%***	***12.99%***	***8.10%***	***16.75%***
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	21,826,984	21,116,612	24,421,448	27,168,076
Սեփական կապիտալի միջին մեծություն	5,943,423	5,832,910	6,528,198	7,472,665
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	***3.67***	***3.62***	***3.74***	***3.64***
Զուտ տոկոսային եկամուտ	2,379,161	2,549,331	2,314,870	4,369,159
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	18,706,203	19,029,997	22,461,672	25,253,027
Զուտ տոկոսային մարժա (NIM)	***12.27%***	***13.40%***	***10.31%***	***17.30%***
Տոկոսային և կոմիսիոն եկամուտ	4,515,883	5,344,799	6,499,827	6,961,770
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	19,395,502	19,029,997	22,461,672	25,253,027
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	***23.28%***	***28.09%***	***28.94%***	***27.57%***
Տոկոսային ծախսեր	1,352,014	1,279,102	1,536,214	1,544,856
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	16,121,224	14,254,891	15,165,372	17,816,070
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	***8.39%***	***8.97%***	***10.13%***	***8.67%***

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	214,029	6,996	-901,572	924,040
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	490,596	490,596	490,596	490,596
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	***0.44***	***0.01***	***(1.84)***	***1.88***
Տոկոսային և կոմիսիոն եկամուտ	4,515,883	5,344,799	6,499,827	6,961,770
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	19,395,502	19,029,997	22,461,672	25,253,027
Տոկոսային ծախսեր	1,352,014	1,279,102	1,536,214	1,544,856
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	16,121,224	14,254,891	15,165,372	17,816,070
ՍՊՐԵԴ	***14.90%***	***19.11%***	***18.81%***	***18.90%***

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ռիսկային գործոններ

Արժեթղթերում՝ ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Թողարկողի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և, հետևաբար, գնի անկմանը:

2.1.1. Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Կազմակերպությունը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար:

Ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանը՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:

Պարտատոմսերին առնչվող հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել հետևյալները.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է: Վերջինս կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի

ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռքբերման գինը:

Կազմակերպությունը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով, այն է՝ շուկա ստեղծողի (market maker) միջոցով ապահովել պարտատոմսերի իրացվելիությունը: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը դրանց շրջանառության ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար ֆինանսապես շահավետ գնով:

Արտարժութային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Ուստի, այս իմաստով արտարժութային ռիսկ կարող են կրել այն ներդրողները, ովքեր իրենց դրամական միջոցները սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով ստիպված կլինեն իրենց ֆինանսական միջոցները փոխարկել այլ արժույթներից ՀՀ դրամի:

Տոկոսադրույքի ռիսկը: Տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Թողարկողի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող ընդհանուր իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

2.2. Հիմնական տեղեկատվություն

2.2.1. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Կազմակերպության անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն օգտագործվելու են վարկային պորտֆելի աճը ֆինանսավորելու նպատակով: Վարկային պորտֆելի աճին աջակցելու նպատակով կազմակեպությունը 2022թ.-ի ընթացում մշակել և ներդրել է նոր վարկատեսակներ: Որոշ նոր վարկատեսակներ գտնվում են մշակման փուլում և կներկայացվեն հաճախորդներին 2023 թվականի սկզբում:

Կազմակերպության կողմից հետևողականորեն իրականացվում է ֆինանսավորման

աղբյուրների տարատեսականացման (դիվերսիֆիկացիա) գործուն քաղաքականություն, որի նպատակն է ապահովել մեկ ֆինանսավորողի կամ մի քանի ֆինանսավորողների խմբի ռիսկի նվազեցումը, հաշվեկշռի երկարաժամկետ պարտավորությունների մասի ֆինանսավորման կայուն ենթակառուցվածքների ստեղծումն ու գործարար հարաբերությունների զարգացումը:

Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնում ենք, որ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

2.3. Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ պարտատոմսերն անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային ոչ փաստաթղթային, առանց ապահովվածության պարտատոմսեր են, որոնց թողարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից:

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 7.5 և 7.6 կետերի պահանջները «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2023թ. հոունվարի 10-ին դիմում է ներկայացրել ՀՀ ԿԲ՝ ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու նպատակով պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու համար բավարարում ստանալու նպատակով:

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 7.7 կետի պահանջները և հաշվի առնելով, որ ՀՀ ԿԲ-ից 30-օրյա ժամկետում մերժման վերաբերյալ գրություն չի ստացվել, հետևաբար պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու վերաբերյալ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ դիմումը համարվում է բավարարված:

2.3.1. Պարտատոմսերի պայմանները

Պարտատոմսերի տեսակը	Անվանական արժեկտրոնային	
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային	
Պարտատոմսերի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի	
Պարտատոմսերի թողարկման արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար

Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	մինչև 1,667,000,000 (մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունյոթ միլիոն) ՀՀ դրամ (որից մինչև առավելագույնը 4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար ծավալը կարող է թողարկվել ԱՄՆ դոլարով պայմանով, որ ցանկացած թողարկման պահի դրությամբ թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալը՝ առանձին փուլերով (տրանշերով): Ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալը պետք է առնվազն հավասար լինի ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի ծավալի առնվազն 10%-ի չափով:	
Պարտատոմսերի քանակը	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով	
Թողարկման և տեղաբաշխման օրը		
Տեղաբաշխման ձևը		
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը		
Արժեկտրոնի եկամտաբերությունը		
Պարտատոմսերի ռեեստրը	Պարտատոմսերի ռեեստրը ենթակա է վարման «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀԿԴ) կողմից:	
Պարտատոմսերի ապահովվածությունը	Առաջարկվող պարտատոմսերն ապահովված չեն:	
Տեղաբաշխող	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ, համաձայն Թողարկողի և «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ միջև 20.03.2023թ. կնքված Համագործակցության պայմանագրի և չերաշխավորված եղանակով արժեթղթերի տեղաբաշխման մասին համաձայնագրի:	
Շուկա Ստեղծող	Ընկերությունը նախատեսում է օգտվել Շուկա ստեղծողի ծառայություններից:	
Պարտատոմսերի տեղաբաշխումը	Պարտատոմսերը տեղաբաշխվում են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով: Աճուրդի տևողության, ինչպես նաև աճուրդի անցկացման այլ մանրամասները յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ	

	կսահմանվեն «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով
Թողարկումը	Համաձայն պարտատոմսերի թողարկման վերաբերյալ Թողարկողի Տնօրենների Խորհրդի կողմից 16.02.2023թ. - ին ընդունված թիվ 05/2023 որոշման:
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով
Արժեկտրոնների հաշվարկման օրերը	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով
Օրերի հաշվարկման պայմանականությունը	փաստացի/փաստացի DCS=Օրերի փաստացի քանակը, D2M2Y2 - D1M1Y1 DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1 DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2 որտեղ՝ D1M1Y1 գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է. D2M2Y2 գործարքի կատարման ամսաթիվն է D3M3Y3 գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:
Արժեկտրոնի կուտակումը	$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}$ որտեղ AI - կուտակված տոկոս, FV - պարտատոմսերի անվանական արժեք, C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույք, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է մեկ տարում Արժեկտրոնի կուտակումը սկսում է հաշվարկվել պարտատոմսերի թողարկման օրվանից,
Պարտատոմսերի գինը	Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{FV}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC -գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է մեկ տարում

N -հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը

C - միավոր պարտատոմսի տարեկան արժեկտրոնը

y - մինչև մարում եկամտաբերություն,

i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից,

FV- պարտատոմսի անվանական արժեք:

Պարտատոմսերի եկամտաբերությունը	Պարտատոմսերի եկամտաբերությունը հաշվարկվում է նախորդ կետում ներկայացված բանաձևի միջոցով
Պարտատոմսերի մարման օրը	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով
Արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի մարումը	ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով : ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար արժեկտրոնների վճարումը և մարումն իրականացվում է ԱՄՆ դոլարով, անկանխիկ եղանակով: Արժեկտրոնի հաշվարկման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 18:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Թողարկողը արժեկտրոնի վճարման/ պարտատոմսերի մարման կատարման օրը հանձնարարական է

	տալիս իր սպասարկող բանկին՝ համապատասխան վճարումները փոխանցելու Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածքում գործող բանկերում բացված բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ): Թողարկողը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Թողարկողը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ:
Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում	Պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում: Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են: Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են:
Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում	Տեղաբաշխումից հետո արժեթղթերի առուվաճառքը երկրորդային շուկայում կարող է իրականացվել բացառապես կարգավորվող շուկայում:
Ցուցակումը	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

2.3.2. Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Կազմակերպության առաջարկվող պարտատոմսերի մարումների և Կազմակերպության կողմից ներգրավված այլ պարտավորությունների մարումների միջև ստորադասություն չկա: Այսինքն, Կազմակերպությունը չունի այնպիսի պարտավորություն, որի պարտատերերն ունեն մարման առաջնահերթություն այլ պարտատերերի, այդ թվում նաև առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի նկատմամբ: Կազմակերպության սնանկության դեպքում Կազմակերպության գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ: Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ՝ համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների

և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգի:

Առաջարկվող պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները՝ կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, համաձայն որի Կազմակերպության կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են 4-րդ հերթին: Ընդ որում, յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Կազմակերպության պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:

2.3.3. Տեղեկություններ պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքների վերաբերյալ

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

- ✓ ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը,
- ✓ իրականացնել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող ցանկացած գործառույթ,
- ✓ թողարկման օրվանից հաշված արժեկտրոնների վճարման պարբերականությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
- ✓ պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
- ✓ Թողարկողի կողմից Պարտատոմսերի մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից:
- ✓ օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
- ✓ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք:
- ✓ Օրենքով և իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

Օրենքով և իրավական ակտերով սահմանված պարտատոմսերի սեփականատերերի իրավունքների սահմանափակումներ չկան:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՄԲ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ունենալ սեփական (անվանատիրոջ)

արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռքբերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման նպատակով:

Կազմակերպության պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից՝ ուղղակիորեն կամ վերջինիս հաշվի օպերատորների միջոցով:

ՀՀ օրենսդրությամբ, Թողարկողի կանոնադրությամբ և Թողարկողի անվանական պարտատոմսերի թողարկման մասին վերջինիս խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ սահմանված չեն:

2.3.4. Իրավասու մարմնի որոշումը նոր թողարկման մասին

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ անվանական պարտատոմսերը թողարկվելու են համաձայն Կազմակերպության Տնօրենների խորհրդի 2023թ. փետրվարի 16-ին «Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» որոշման, վերջինով սահմանվել է թողարկել և տեղաբաշխել մինչև 1,667,000,000 (մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունյոթ միլիոն) ՀՀ դրամ անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր (որից մինչև առավելագույնը 4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար ծավալը կարող է թողարկվել ԱՄՆ դոլարով պայմանով, որ ցանկացած թողարկման պահի դրությամբ թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալը՝ առանձին փուլերով (տրանշերով): Ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալը պետք է առնվազն հավասար լինի ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի ծավալի առնվազն 10%-ի չափով: Թողարկվող դրամային պարտատոմսերի անվանական արժեքը սահմանվել է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, իսկ դոլարային պարտատոմսերի համար՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար: Միաժամանակ, սահմանվել է, որ տեղաբաշխումը պետք է իրականացվի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով:

Կազմակերպության Տնօրենների խորհրդի որոշմամբ սահմանվել է, որ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից պարտատոմսերի վաղաժամկետ հետգնում և մարում չի նախատեսվում՝ բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու հայտի՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կողմից մերժման դեպքի, որի պարագայում տեղաբաշխումը համարվելու է չեղյալ, և պարտատոմսերի դիմաց վճարված, ինչպես նաև հաշվեգրված արժեկտորնների գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:

2.3.5. Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

Կարևոր ծանուցում

Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ իր կողմից թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարելիս ներդրողները արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման վերաբերյալ սույն բաժնում ներկայացված տեղեկատվությունը չպետք է համարեն հարկային

խորհրդատվություն և հիմնվեն վերջինիս վրա, ուստի խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման կամ փոփոխության արդյունքում ներդրողների ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Պարտատոմսերից ստացված եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

- ✓ **Շահութահարկ** (Իրավաբանական անձանց դեպքում),
- ✓ **Եկամտային հարկ** (Ֆիզիկական անձանց դեպքում):

Պարտատոմսերից կարելի է եկամուտ ստանալ հետևյալ տեսքով.

1. Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը)
2. Կապիտալի հավելաճ (ձեռքբերման պահից հետո պարտատոմսի գնի աճը, հաշվարկվում է որպես մինչև մարման օրը պարտատոմսի վաճառքի և գնման գնի դրական տարբերություն)

Շահութահարկ

Շահութահարկ վճարողներ են համարվում ՀՀ գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Այս պահին շահութահարկի դրույքը 18 տոկոս է:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի համար կազմում է 10 տոկոս: Թողարկողի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

2020թ.-ի մարտի 1-ից ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող Ֆոնդային բորսայում մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը ցուցակված պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամտի, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութահարկի վճարումից: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք ՀՀ գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել են մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

Եկամտային հարկ

Եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Այս պահին եկամտային հարկի դրույքաչափը 10 տոկոս է: Թողարկողի պարտատոմսերում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

2020թ.-ի մարտի 1-ից ՀՀ-ում գործող Ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից ստացվող եկամուտները ազատվում են եկամտային հարկից: Բացառություն են կազմում միայն բանկերի թողարկած այն պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է 2 տարուց: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք ՀՀ գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել են մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1. Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար

- Ազդագրի շրջանակում առաջարկը կարող է իրականացվել Ազդագրի հրապարակմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում՝ պայմանով, որ առկա է ՀՀ ԿԲ թույլտվությունը:
- Ազդագրի շրջանակում Կազմակերպությունը նախատեսում է թողարկել անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ մինչև 1,667,000,000 (մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունյոթ միլիոն) ՀՀ դրամ անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր (որից մինչև առավելագույնը 4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար ծավալը կարող է թողարկվել ԱՄՆ դոլարով պայմանով, որ ցանկացած թողարկման պահի դրությամբ թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալը՝ առանձին փուլերով (տրանշերով): Ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալը պետք է առնվազն հավասար լինի ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի ծավալի առնվազն 10%-ի չափով:
- Թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը կազմելու է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ և 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար:
- Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները կսահմանվեն Կազմակերպության Տնօրենների խորհրդի առանձին որոշումներով: Այդ մասին տեղեկատվությունը կհրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.finca.am, www.araratbank.am:
- Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով՝ Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ բացառությամբ Շուկա ստեղծողի կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի: Ընդ որում՝ տեղաբաշխման աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:
- Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնց ցանկը հասանելի է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ պաշտոնական կայքում՝ www.amx.am: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել (օգտվել առաջարկից) Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:
- Բորսայի տարբեր մասնակիցներ կարող են սահմանել աճուրդին մասնակցելու (առաջարկից օգտվելու) տարբեր գործընթացներ, պարտատոմսերի դիմաց վճարումներ կատարելու մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերը ստանալու մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերի

վերաբերյալ քաղվածք ստանալու ձևեր, ներդրողների հայտերի բավարարման արդյունքների մասին իրազեկման կարգեր և ձևեր, ինչպես նաև սահմանել տարբեր սակագներ: Այդ իսկ պատճառով, Կազմակերպությունը չի կարող սպառիչ տեղեկություններ հրապարակել նշված հարցերի վերաբերյալ և հորդորում է Բորսայի անդամ չհանդիսացող պոտենցիալ ներդրողներին ուսումնասիրել Բորսայի անդամների կողմից առաջարկվող պայմանները իրենց համար լավագույն տարբերակ գտնելու համար:

- Պարտատոմսերի թողարկման օրը՝ Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների խորհրդի առանձին որոշումներով:
- Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ժամանակ Կազմակերպության և Տեղաբաշխողի կողմից սահմանվում է պոտենցիալ Շուկա ստեղծողի կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի նվազագույն ծավալ:
- Պարտատոմսերի տեղաբաշխման օրը, իսկ մի քանի օր լինելու դեպքում տեղաբաշխման սկզբի և ավարտի օրերը, Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների խորհրդի առանձին որոշումներով:
- Տեղաբաշխման օրվանից/տեղաբաշխումը մի քանի օր լինելու դեպքում՝ տեղաբաշխման սկզբից/ առնվազն 3 աշխատանքային օր առաջ Կազմակերպությունն այդ մասին տեղեկությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Կազմակերպությունը նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով:
- Գնորդները պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով գնման մրցակցային հայտեր են ներկայացնում տեղաբաշխման համակարգ՝ տեղաբաշխման օրվա/օրերի/ ժամը 11^{00}-ից մինչև 13^{30}-ը: Գնորդներն իրավունք ունեն հետ կանչել կամ փոփոխել իրենց կողմից ներկայացված հայտերը և նոր հայտեր մուտքագրել մինչև 13^{30}-ը: Տեղաբաշխողի կողմից աճուրդի անցկացումը, որի ընթացքում տեղի է ունենում արժեթղթերով առքուվաճառքի գործարքների կնքման գործընթացը, տևում է մինչև տեղաբաշխման օրվա ժամը 15^{00}-ն:
- Գնման մրցակցային հայտով գործարքները կնքվում են այն գներով, որոնք նշված են գնման հայտերում՝ ըստ գների նվազման հաջորդականության: Միևնույն գին ունեցող հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:
- Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդն իրականացվելու է դրամական միջոցների և պարտատոմսերի նախնական դեպոնացմամբ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված կարգով: Տեղաբաշխման ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից գործարքներ կարող է կնքել նախապես դեպոնացված դրամական միջոցների սահմաններում, իսկ տեղաբաշխողը՝ նախապես դեպոնացված արժեթղթերի սահմաններում: Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում գնորդները կարող են կատարել դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացումներ և ապադեպոնացումներ՝ Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններով» և ըստ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված ընթացակարգերի:

- Որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից ներկայացված մրցակցային հայտերում նշված արժեթղթերի ընդհանուր քանակի համար սահմանափակում չկա: Գնորդը կարող է տեսնել միայն իր կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված բոլոր գնման հայտերը:
- Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է չեղյալ համարվել Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ով և «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ով սահմանված ընթացակարգերով և դեպքերում:
- Տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է գործարքի կնքման օրվա ընթացքում:
- Տեղաբաշխման ավարտից հետո Բորսան «Տեղեկատվության բացահայտման կանոններին» համապատասխան կազմակերպում է տեղաբաշխման արդյունքների հրապարակումն իր պաշտոնական կայքում:
- Թողարկողն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.finca.am, տեղաբաշխման ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է աճուրդի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ներկայացնելով առաջարկությունների ընդհանուր ծավալը, բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը, տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված գինը (եկամտաբերությունը) և այլն:
- Թողարկողի պարտատոմսերի դիմաց սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորներիի կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4.2. Պարտատոմսերի տեղաբաշխման պլանը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին: Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 1 (մեկ) ժամվա ընթացքում Բորսայի իրավասու ստորաբաժանումը Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ին համապատասխան ձևակերպում է կնքված գործարքների գրանցման վկայականները և ուղարկում Բորսայի համապատասխան անդամին: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին տեղեկանում են Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

2.4.3. Առաջարկի գինը

Տեղաբաշխման համակարգում գրանցվելուց հետո տեղաբաշխման մասնակիցները տեղաբաշխման նստաշրջանի բացման պահից տեղաբաշխման համակարգ են մուտքագրում

պարտատոմսերի գնման հայտերը:

Պարտատոմսերի լրիվ գինը տեղաբաշխման առաջին օրվանից սկսած, հաշվարկվում է 2.3 կետում նշված բանաձևի հիման վրա: Ներդրողները աճուրդը կազմակերպողին ներկայացվող հայտում նշում են ձեռք բերվող պարտատոմսերի պահանջվող եկամտաբերությունը/գինը և պարտատոմսերի այն ծավալը, որը ներդրողը պատրաստ է ձեռք բերել հայտում ներկայացված եկամտաբերությամբ/գնով: Հայտերի բավարարման կտրման գնի վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար կներառվի պարտատոմսերի տեղաբաշխման վերաբերյալ հրապարակվող համապատասխան տրանշով թողարկվող պարտատոմսերի վերջնական պայմանների և հայտարարության մեջ:

Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում (www.amx.am):

Արժեթղթերի հաշիվները բացվում և սպասարկվում են ՀԿԴ հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է ՀԿԴ պաշտոնական ինտերնետային կայքում (www.cda.am):

Բորսայի անդամ հանդիսացող ներդրողներից տեղաբաշխման աճուրդի ընթացքում ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվում են միջնորդավճարներ Բորսայի Սակագների մասին կանոններով սահմանված չափերով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց կողմից ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվող միջնորդավճարների մասին կարող են տեղեկանալ Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին:

2.4.4. Տեղաբաշխումը

2.4.4.1. Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Ծրագրային ազդագրի հրապարակման պահին Թողարկողը որևէ տեղաբաշխողի հետ երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու վերաբերյալ կնքված պայմանագիր չունի: Սակայն, տեղաբաշխման առանձին թողարկումների համար Թողարկողը կարող է ներգրավել երաշխավորված տեղաբաշխում իրականացնողների: Այդ պարագայում, տեղաբաշխողներին վերաբերող տեղեկատվությունը (այդ թվում՝ անվանումները, գտնվելու վայրերը, երաշխավորված ծավալը և այլն) ենթակա է ներկայացման Թողարկման վերջնական պայմաններով:

2.4.4.2. Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերը չերաշխավորված տեղաբաշխումն իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից՝ համաձայն 20 մարտի 2023թ. վերջիններիս միջև կնքված Համագործակցության պայմանագրի և դրա հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրի:

Տեղաբաշխողի՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք,85-րդ տարածք, գրանցման համարը՝ 4, հեռ.՝ +(374 10) 59 23 23, ֆաքս՝ +(374 10) 54 78 94, էլ. փոստ՝ info@araratbank.am, պաշտոնական ինտերնետային կայք՝ www.araratbank.am:

Պարտատոմսերի տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի դեպքում պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (երաշխավորված կամ չերաշխավորված), պարտատոմսերի ծավալը, քանակը, պարտատոմսերի տեղաբաշխման կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի իրավունքներն ու պարտականությունները, Տեղաբաշխողին վճարման ենթակա գումարի չափն ու կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի պատասխանատվությունը կսահմանվեն վերջիններիս միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրերով:

Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ժամանակ Կազմակերպության և Տեղաբաշխողի կողմից սահմանվում է պոտենցիալ Շուկա ստեղծողի կողմից ձեռքբերման ենթակա պարտատոմսերի նվազագույն ծավալ, որը Շուկա ստեղծողի կողմից ձեռք է բերվում անվանական արժեքով:

Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.amx.am: Տեղաբաշխումից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի առքուվաճառքի գործարք կնքելու համար ներդրողները պետք է դիմեն կա՛մ ներդրումային ընկերություններին, կա՛մ բրոքերային ծառայություն մատուցող բանկերին:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձինք պետք է ունենան արժեթղթերի հաշիվներ, որոնք բացվում և սպասարկվում են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ (www.cda.am):

Պարտատոմսեր ձեռք բերող անձը, նախքան ներդրում իրականացնելը, պարտավոր է նաև որևէ բանկում իր անվամբ բացել դրամային բանկային հաշիվ, և այդ հաշվի վերաբերյալ տվյալները ներկայացնել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին՝ պարտատոմսերում կատարված ներդրումների մարման և արժեկտրոնային եկամուտների ստացման համար:

2.4.4.3. Տեղաբաշխման պայմանները

Համաձայն Թողարկողի և Տեղաբաշխողի միջև կնքված համագործակցության պայմանագրի և Չերաշխավորված եղանակով արժեթղթերի տեղաբաշխման մասին համաձայնագրի՝ Թողարկողը պարտավորվել է Տեղաբաշխողին վճարել՝ տեղաբաշխման փաթեթի պատրաստման և ազդագրի կազմման վճար՝ 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ միանվագ (առանց ավելացված արժեքի հարկի), Ծրագրայի ազդագրի յուրաքանչյուր լրացման համար՝ 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (առանց ավելացված արժեքի հարկի), իսկ Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտից հետո Թողարկողը Տեղաբաշխողին է վճարում Արժեթղթերի տեղաբաշխման ծառայությունների վճար փաստացի տեղաբաշխված արժեթղթերի անվանական ծավալի 0.3%-ի չափով (առանց ավելացված արժեքի հարկի):

2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում

Թողարկողը սահմանված կարգով դիմում է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի հայտը հնարավոր է չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո երեք ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Կազմակերպության Տնօրենների խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

Կազմակերպության՝ 29.12.2021 թվականին գրանցված ծրագրային ազդագրի շրջանակներում 2022 թվականի փետրվարի 10-ին տեղաբաշխված 7-րդ թողարկման ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի անվանական արժեկտրոնային պարտատոմսերը գտնվում են ազատ շրջանառության մեջ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ ընդգրկված լինելով պարտատոմսերի հիմնական Abond ցուցակում (նախատեսվում է, որ պարտատոմսերը կմնան ազատ շրջանառության մեջ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ մինչև իրենց մարման օրը՝ 10.02.2025-ը): Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

Կազմակերպության՝ 29.12.2021 թվականին գրանցված ծրագրային ազդագրի շրջանակներում 2022 թվականի ապրիլի 20-ին տեղաբաշխված 9-րդ թողարկման ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի անվանական արժեկտրոնային պարտատոմսերը գտնվում են ազատ շրջանառության մեջ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ ընդգրկված լինելով պարտատոմսերի երկրորդային Bbond ցուցակում (նախատեսվում է, որ պարտատոմսերը կմնան ազատ շրջանառության մեջ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ մինչև իրենց մարման օրը՝ 20.04.2024-ը): Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

Կազմակերպության՝ 29.12.2021 թվականին գրանցված ծրագրային ազդագրի շրջանակներում 2022 թվականի հունիսի 21-ին տեղաբաշխված 10-րդ և 11-րդ թողարկման ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի անվանական արժեկտրոնային պարտատոմսերը գտնվում են ազատ շրջանառության մեջ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ ընդգրկված լինելով պարտատոմսերի երկրորդային Bbond ցուցակում (նախատեսվում է, որ պարտատոմսերը կմնան ազատ շրջանառության մեջ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ մինչև իրենց մարման օրը՝ 21.06.2024-ը): Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

Կազմակերպության՝ 29.12.2021 թվականին գրանցված ծրագրային ազդագրի շրջանակներում 2022 թվականի նոյեմբերի 16-ին տեղաբաշխված 12-րդ և 13-րդ թողարկման ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի անվանական արժեկտրոնային պարտատոմսերը գտնվում են

ազատ շրջանառության մեջ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ ընդգրկված լինելով պարտատոմսերի երկրորդային Bbond ցուցակում (նախատեսվում է, որ պարտատոմսերը կմնան ազատ շրջանառության մեջ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ մինչև իրենց մարման օրը՝ 16.11.2024-ը): Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

Կազմակերպությունը պարտատոմսի թողարկումներն իրականացնում է՝ ցանկացած պահի դրությամբ պահպանելով ՀՀ ԿԲ «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 6-րդ կետի պահանջները:

Թողարկողը պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո կնքելու է համապատասխան պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնողի հետ (շուկա ստեղծող)՝ Թողարկողի պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Շուկա ստեղծողը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ: Շուկա ստեղծողի պարտավորության հիմնական պայմանները սահմանվում են վերջինիս և Թողարկողի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով և «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի «Շուկա ստեղծողի կանոններ»-ով: Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր պարտատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

2.6. Լրացուցիչ տեղեկատվություն

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվության հավաքագրման և մշակման համար որպես խորհրդատու հանդես է եկել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն: Ներկայացված տեղեկատվությունն անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

Կազմակերպությանը և Կազմակերպության կողմից տեղաբաշխված պարտատոմսերին վարկանշող կազմակերպությունների կողմից որևէ վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Անկախ աուդիտորները

Կազմակերպության 2012-2021 թվականների ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է **«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ** աուդիտորական կազմակերպությունը, որը հանդիսանում էր Դելոյթ ԱՊՀ Հոլդինգս Լիմիթեդի («Դելոյթ ԱՊՀ») փոխկապակցված կազմակերպությունը, որը DTTL անդամ ընկերությունն է: «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ հասցեն է ՀՀ 0010, Երևան Ամիրյան փող., 4/7 շենք, 7-րդ հարկ («Իմպերիում Պլազա» բիզնես-կենտրոնի շենքում), հեռ.՝ (+37410) 526-520: 2022թ. ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացնում է **«Գրանթ Թորնթոն»** ՓԲԸ աուդիտորական կազմակերպությունը: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է ՀՀ ք. Երևան 0015, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9 շենք («Երևան Պլազա» բիզնես-կենտրոն), հեռ.՝ (+37410) 500-964, ինտերնետային կայք՝www.grantthornton.am, «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ եզրակացությունները Կազմակերպության կողմից պատրաստված 2020-2021թթ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ներկայացված են կից Հավելվածներում: Վերջին 5 տարիների ընթացքում Թողարկողի աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

3.2. Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների, պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործառնությունների, ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

Ելնելով նշվածից՝ Թողարկողը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար: Մասնավորապես կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ռիսկերը.

***Վարկային ռիսկ*:** Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված գործընկերոջ վարկունակության, վարկառուի կողմից պարտավորության չկատարելու կամ մասնակի կատարելու հետ, որոնք Կազմակերպությանը կարող են կորուստներ պատճառել:

Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Թողարկողը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և վճարունակությանը: Ստորև ներկայացված է Կազմակերպության տրամադրած վարկերի որակական վերլուծությունը, 31.12.2022թ. դրությամբ և նախորդ 4 տարիների համար:

Հաճախորդներին տրված վարկեր

Հազ. ՀՀ դրամ

	31.12.2022[2]	31.12.2021	31.12.2020	31.12.2019	31.12.2018
Ոչ ժամկետանց	**18,237,834**	**16,608,189**	**16,311,446**	**23,022,403**	**23,122,481**
ժամկետանց՝					
-1-30 օր ժամկետանց	214,639	355,372	1,223,781	263,427	364,438
- 31-60 օր ժամկետանց	140,643	179,494	549,348	154,105	148,364
-61-90 օր ժամկետանց	63,140	76,628	845,668	181,842	115,479
-90 օրից ավել ժամկետանց	3,196,950	5,898,308	5,368,558	2,638,625	2,223,347
Ընդամենը ժամկետանց վարկեր	**3,615,371**	**6,509,802**	**7,987,355**	**3,237,999**	**2,851,628**
Ընդամենը համախառն վարկեր	**21,853,205**	**23,117,991**	**24,298,801**	**26,260,402**	**25,974,109**
Հնարավոր կորուստների պահուստ	(2,892,706)	(4,870,267)	(4,488,569)	(2,338,487)	(1,797,202)
Ընդամենը զուտ վարկեր	**18,960,500**	**18,247,724**	**19,810,232**	**23,921,915**	**24,176,907**
Խնդրահարույց վարկեր/Վարկային պորտֆել	**16.54%**	**28.16%**	**32.87%**	**12.33%**	**10.98%**

Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, վարկային ռիսկը մեծագույն կարևորություն ունի միկրոֆինանսավորման կազմակերպությունների ռիսկերի կառավարման մեջ: Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Կազմակերպությունը կիրառում է տարբեր մեթոդներ վարկային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:

Ռիսկերի կառավարումը և մոնիթորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Վարկային կոմիտեների և Կազմակերպության Տնօրենների խորհրդի կողմից: Առօրյա ռիսկերի կառավարումն իրականացվում է վարկային ռիսկերի բաժնի, հետգործառնական և ներքին վերահսկողության բաժինների կողմից:

Վարկային պորտֆելի որակի կառավարման նպատակով սահմանված է նաև որոշում կայացնող մարմինների սահմանաչափերի հստակ համակարգ, վարկերի և վարկունակության նվազագույն պահանջների վերանայման և թեստավորման սկզբունքներ:

[2] 2022 թվականի տվյալները վերցված են աուդիտ չանցած միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից

Կազմակերպության վարկային քաղաքականությունը սահմանված է ներքին քաղաքականություններում և ընթացակարգերում, որտեղ հստակ սահմանված են բոլոր առնչվող պահանջները համապատասխան վերահսկողական մեխանիզմների հետ մեկտեղ, ներառյալ վարկի տրամադրումը, չվճարված վարկերի մոնիտորինգը, ժամկետանց վարկերի հետ աշխատելու գործընթացը և այլն:

Վարկային կոմիտեն վերլուծող մարմին է, որը պատասխանատու է վարկային հայտերում ամփոփված տեղեկատվությունը վերլուծելու և վարկային ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար: Վարկային կոմիտեն Կազմակերպության ներսում անկախ մարմին է, որը լիազորված է կայացնելու վերջնական որոշում վարկային հայտը ֆինանսավորելու կամ մերժելու վերաբերյալ:

Կազմակերպությունը բաշխում է վարկային ռիսկի մակարդակը՝ սահմանափակելով մեկ վարկառուի գծով կամ վարկառուների խմբի գծով: Վարկային ռիսկի սահմանաչափերն ըստ վարկառուի և ըստ վարկատեսակի հաստատում է Տնօրենների խորհուրդը և Կազմակերպության Գործադիր մարմինը: Փաստացի ռիսկերի համապատասխանությունը սահմանաչափերին հսկվում է օրական կտրվածքով՝ Կազմակերպության կողմից սահմանված վարկային սահմանաչափերի և վարկունակության ուղեցույցների չխախտվելու համար:

Ըստ նպատակահարմարության, և վարկերի մեծ մասի դեպքերում, Կազմակերպությունն ընդունում է գրավ կամ անձնական երաշխավորություն: Վարկերի զգալի մասն անհատական են, որտեղ որպես ապահովության միջոց հանդես են գալիս երաշխավորությունները: Այսպիսի ռիսկերը մոնիթորինգի են ենթարկվում շարունակական հիմունքով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների:

Կազմակերպությունը սկզբունքորեն կիրառում է ռիսկերի կառավարման միևնույն քաղաքականությունը հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար:

Կազմակերպությունում մշակվել է վարկառուի գնահատման կենտրոնացված մոտեցում՝ փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությունը գնահատելու և դրանց վարկավորման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով: Այդ մոտեցումը ենթադրում է ստանդարտ վարկատեսակների հաստատում գլխամասային գրասենյակի կողմից՝ ելնելով վարկառուների արդյունավետության հիմնական ցուցանիշներից՝ վարկային պատմությունից, ֆինանսական վիճակից, վարկառուների հետ հարաբերություններից, կառավարման որակից, նպատակային օգտագործումից, գրավից և այլն: Կախված շուկայում տիրող իրավիճակից վարկավորման մոտեցումները կարող են փոփոխվել՝ դառնալով ավելի լիբեռալ կամ ավելի կոնսերվատիվ:

Ստորև ներկայացվում է Կազմակերպության հաճախորդներին տրամադրված վարկերի դասակարգման և վարկային ռիսկի կառավարման համար վնասների և կորուստների պահուստին կատարվող հատկացումների վերաբերյալ տեղեկատվությունը 31.12.2022թ. դրությամբ:

Ռիսկի դասերը	Վարկեր							
	Քանակ		Գումար/հազ.դր/		Տրված վարկերի գծով պահուստ			
					մնացորդը/հազ.դր/		%	
1	2		3		4		5	
	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ
1. Ստանդարտ	15,880	1,376	14,977,166	2,015,088	(188,369)	(35,241)	-1.3%	-1.7%

2. Հսկվող	1,064	173	611,273	159,774	(54,041)	(31,813)	-8.8%	-19.9%
3. Ոչ ստանդարտ	351	57	228,699	46,457	(69,687)	(8,320)	-30.5%	-17.9%
4. Կասկածելի	288	56	182,636	34,975	(72,750)	(12,101)	-39.8%	-34.6%
5. Անհուսալի	3,293	1,429	2,224,118	1,337,018	(1,531,850)	(888,534)	-68.9%	-66.5%
Ընդամենը	**20,876**	**3,091**	**18,223,892**	**3,629,312**	**(1,916,697)**	**(976,009)**	**-10.5%**	**-26.9%**

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը կապված է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնասներ կրելու ռիսկը:

Կազմակերպության իրացվելիությունը գտնվում է տնօրինության ուշադրության կենտրոնում, մասնավորապես՝ Կազմակերպությունում գործում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով, որը վերահսկում է Կազմակերպության իրացվելիության ռիսկերը ժամկետայնության վերլուծության միջոցով: Միաժամանակ իրացվելիության ռիսկի կառավարման շրջանակում իրականացվում են խիստ սթրես թեստերի մշակում և կիրառում, իրացվելիության սահմանաչափերի և գործակիցների պահպանում, վաղ զգուշացման ցուցիչների վերահսկողություն, մշակվել է արտակարգ իրավիճակների ֆինանսավորման պլան: Ընթացիկ իրացվելիության աջակցման և դրամական հոսքերի օպտիմալացման նպատակով ընթացիկ իրացվելիությունը կառավարվում է գանձապետի կողմից, ով վարում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների պորտֆելը:

Կազմակերպության իրացվելության աղբյուրները դիվերսիֆիկացված են և իրենց մեջ ներառում են երկարաժամկետ և միջնաժամկետ վարկեր միջազգային ֆինանսական ֆոնդերից, դրամական միջոցների կարճաժամկետ ներգրավումներ ՀՀ բանկերից և իրավաբանական անձանցից, պարտատոմսերի թողարկումից ձևավորված միջոցներ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Կազմակերպության ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետային կառուցվածքը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազ.ՀՀ դրամ

	Մինչև մարում մնացած ժամանակը								
	Մինչև 30 օր	**31-90 օր**	**91-180 օր**	**181-270 օր**	**271- 1 տարի**	**1-2 տարի**	**2-3 տարի**	**3 տարուց ավել**	**Ընդամենը**
Տեղաբաշխված միջոցներ	3,466,566	1,134,967	1,987,059	1,888,233	2,030,719	7,300,592	2,994,068	2,157,411	22,959,614
Ներգրավված միջոցներ	1,242,465	1,231,986	1,149,293	1,663,584	1,364,959	5,974,374	2,891,687	1,390,834	16,909,181

GAP	2,224,101	(97,019)	837,766	224,649	665,760	1,326,218	102,381	766,577	6,050,433

Կազմակերպությունը ներկայումս բանակցություններ է վարում մի քանի միջազգային ներդրումային ֆոնդերի հետ ֆինանսավորման ներգրավման նպատակով: Միաժամանակ, Կազմակերպությունը միացել է ԳՀՀ-ի և KFW բանկի մի շարք վարկային ծրագրերի, որը ոչ միայն նպաստել է իրացվելության դիրքերի ամրապնդմանը, այլև նպաստել է Կազմակեպության շուկայական դիրքի ամրապնդմանը:

Կազմակերպությունը հնարավորինս ձգտում է համադրել իրացվելիության ռիսկի նվազեցման և իրացվելիության արդյունավետ կառավարման սկզբունքները՝ ՀՀ բանկերից ներգրավելով վարկային գծեր: 28.02.2023թ. դրությամբ Կազմակերպությունը ՀՀ առևտրային բանկերից ունի 3 դրամային վարկային գիծ՝ ընդհանուր 1,1 մլրդ ՀՀ դրամ ծավալով, մինչև մեկ տարի մարման ժամկետով:Կազմակերպությունը նոյեմբերից փետրվար ընկած ժամանակահատվածում միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավել է 2,9 մլն ԱՄՆ դոլարի վարկ մինչև 36 ամիս մարման ժամկետով, իսկ տեղական բանկերց 7,3 մլն ԱՄՆ դոլարի վարկ մինչև 24 ամիս մարման ժամկետով :

***Տոկոսադրույքի ռիսկ*:** Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում, որն էլ իր հերթին կարող է ազդել Կազմակերպության զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Կազմակերպության ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև այն նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Կազմակերպությունը կառավարում է իրական արժեքով տոկոսադրույքի ռիսկը՝ պարբերաբար գնահատելով պոտենցիալ կորուստները, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից: Կազմակերպության ղեկավարությունն իրականացնում է Կազմակերպության ընթացիկ ֆինանսական գործունեության մոնիթորինգ, գնահատում է Կազմակերպության իրական արժեքով տոկոսադրույքի փոփոխությունների զգայունությունը և դրա ազդեցությունը Կազմակերպության շահութաբերության վրա:

Կազմակերպության ռիսկերի կառավարման սկզբունքներից ելնելով սահմանափակվում են տոկոսադրույքի հանդեպ զգայուն ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ ճեղքվածքի մեծությունը, արժեթղթերի պորտֆելի մեծությունը, կենտրոնացվածությունը և ժամկետայնությունը:

Իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկի վերլուծությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

2022 թ. դեկտեմբերի 31

Իրացվելիության ռիսկ	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-5 տարի	Ընդամենը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1.41%	981,806				981,806
Պահանջներ բանկերի նկատմամբ	3.25%	-			1,378,599	1,378,599
Ներդրումային արժեթղթեր	7.15%	-			202,073	202,073
Հաճախորդներին տրված վարկեր	26.10%	2,219,453	1,138,567	5,788,038	9,814,442	18,960,500
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ		**3,201,259**	**1,138,567**	**5,788,038**	**11,395,114**	**21,522,978**
Ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		539,076				539,076
Այլ ֆինանսական ակտիվներ		56,115				56,115
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ		**595,191**	**0**	**0**	**0**	**595,191**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ		**3,796,450**	**1,138,567**	**5,788,038**	**11,395,114**	**22,118,169**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ						
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	11.88%	199,329	0	0	0	199,329
Այլ փոխառու միջոցներ	8.12%	713,927	1,103,879	4,027,711	6,659,586	12,505,104
Թողարկված պարտքային արժեթղթեր	11.25%	0	79,600	5,389	3,223,524	3,308,513
Վարձակալության գծով պարտավորություն	13.17%	14,943	30,984	147,837	385,003	578,768
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		**928,199**	**1,214,464**	**4,180,937**	**10,268,113**	**16,591,714**
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ						
Այլ փոխառու միջոցներ						
Ընդամենը փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		**0**	**0**	**0**	**0**	**0**
Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ						
Այլ ֆինանսական պարտավորություններ		123,563	0	-	-	123,563
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ		**123,563**	**0**	**0**	**0**	**123,563**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		**1,051,762**	**1,214,464**	**4,180,937**	**10,268,113**	**16,715,276**
Տոկոսադրույքի զգայունության տարբերություն		2,273,060	-75,897	1,607,100	1,127,001	
Տոկոսադրույքի զգայունության կուտակային տարբերություն		**2,273,060**	**2,197,163**	**3,804,263**	**4,931,264**	
Ածանցյալ ֆինանսական գործիքներ						
Համախառն՝ արտարժույթի սվոփեր (Պարտավորություն)		9,856	0	0	0	**9,856**
Իրացվելիության տարբերություն		**2,734,832**	**-75,897**	**1,607,100**	**1,127,001**	
Իրացվելիության կուտակային տարբերություն		**2,734,832**	**2,658,935**	**4,266,035**	**5,393,037**	

Ակտիվների և պարտավորությունների կուտակային իրացվելիության տարբերություն

2022թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ

	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-5 տարի	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ							
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	11.88%	199,329	0	0	0	199,329	199,329
Փոխառու միջոցներ	8.12%	741,458	1,184,596	4,576,241	7,315,857	13,818,151	12,505,104
Թողարկված պարտքային արժեթղթեր	11.25%	0	118,565	217,610	3,610,899	3,947,074	3,308,513
Վարձակալության գծով պարտավորություն	13.17%	21,195	63,742	192,213	422,180	699,330	578,768
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		**961,982**	**1,366,903**	**4,986,064**	**11,348,936**	**18,663,885**	**16,591,714**
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ							
Այլ փոխառու միջոցներ		0	0	0	0	**0**	**0**
Ընդամենը փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**
Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ							
Այլ ֆինանսական պարտավորություններ		123,563	0	0	0	123,563	123,563
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ		**123,563**	**0**	**0**	**0**	**123,563**	**123,563**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ		**1,085,544**	**1,366,903**	**4,986,064**	**11,348,936**	**18,787,447**	**16,715,276**

Արտարժութային ռիսկ: Արտարժութային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Կազմակերպությունը կիրառում է արտարժութային ռիսկի կառավարման հետևյալ սկզբունքները.

- Կազմակերպությունը ձգտում է միանգամից փակել արտարժութային դիրքերը և զերծ մնալ սպեկուլյատիվ գործառնություններից:
- Կազմակերպությունն արտարժութային շուկաներում չի բացում սպեկուլյատիվ դիրքեր: Ածանցյալ գործիքները կարող են օգտագործվել միայն հեջավորման նպատակով՝ փակելու դիրքը:

- Կազմակերպությունը ձգտում է համապատասխանեցնել ակտիվների և պարտավորությունների արժույթներն ինչպես գումարներով, այնպես էլ ժամկետներով՝ պաշտպանված լինելու համար փոխարժեքային տատանումներից:
- Կազմակերպությունը վերահսկում է արտարժութային դիրքն օրական կտրվածքով:

Կազմակերպության Գանձապետարանը ու Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը վերահսկում են արտարժույթի ռիսկը՝ կառավարելով արժութային բաց դիրքն ԱՄՆ դոլարի արժեզրկման և այլ մակրոտնտեսական ցուցանիշների գնահատումների հիման վրա, ինչը Կազմակերպությանը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել վնասներն ազգային արժույթի նկատմամբ փոխարժեքի զգալի տատանումներից: Գանձապետն իրականացնում է Կազմակերպության արժութային բաց դիրքի ամենօրյա մոնիթորինգ: Ընդհանուր առմամբ Կազմակերպությունը ունակ է կլանել ՀՀ դրամի էական արժեզրկման ռիսկը առանց հիմնական տնտեսական նորմատիվները վտանգելու և իրացվելիության լուրջ խնդիրների:

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Կազմակերպության վրա 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	288,277	1,177,133	55,510	**1,520,920**
Պահանջներ բանկերի նկատմամբ	0	1,361,675	0	**1,361,675**
Ներդրումային արժեթղթեր	0	202,073		**202,073**
Հաճախորդներին տրված վարկեր	12,700,876	6,259,624	0	**18,960,500**
Ներդրումային արժեթղթեր	21,377	34737.7713	0	**56,115**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**13,010,530**	**9,035,243**	**55,510**	**22,101,283**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	199,329	0	0	199,329
Այլ փոխառու միջոցներ	5,415,005	7,089,952	0	12,504,957
Այլ ֆինանսական պարտավորություններ	74,911	13,970	34682.2037	123,563
Թողարկված պարտքային արժեթղթեր	2,223,556	1,084,957	-	3,308,513
Վարձակալության գծով պարտավորություն	578,768	0	-	578,768
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**8,491,569**	**8,188,879**	**34,682**	**16,715,130**
Հաշվեկշռային բաց դիրք	**4,518,961**	**846,364**	**20,828**	**5,386,153**
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				

Համախառն՝ արտարժույթի սվոփեր	-2,190,234	2,180,378	0	-9,856
Բաց դիրք	**2,328,727**	**3,026,742**	**20,828**	**5,376,297**

Գործընկերոջ ռիսկ: Գործընկերոջ ռիսկի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է կրել: Կազմակերպությունը գործընկերոջ ռիսկը կառավարում է համաձայն Դուստր կազմակերպության ընդհանուր քաղաքականություն» ձեռնարկի Հավելված 5-ի՝ «ԱՊԿԿ քաղաքականության» սկզբունքների համաձայն: Կազմակերպությունը ձգտում է նվազեցնել գործընկերոջ ռիսկը՝

Սահմանափակելով գործընկերների ցանկը կառավարելի քանակով:

- Կիրառելով գործընկերների հաստատման հիմնավոր գործընթաց մինչև ցանկացած նոր գործընկերոջ հետ որևէ գործառնության կնքումը: Հաստատման գործընթացը ներառում է բազմակողմանի գնահատում՝ ապահովելու գործընկերոջ հաստատման գործընթացի համապատասխանությունը Դուստր կազմակերպության ընդհանուր քաղաքականության ձեռնարկին:
- Սահմանափակելով Կազմակերպության ռիսկը մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի նկատմամբ:

Սահմանաչափերի ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կողմից:

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա: Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Կազմակերպության վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը, հաճախորդների կողմից Կազմակերպության հուսալիության հանդեպ կասկածանքի կամ բացասական վերաբերմունքի, կարող են էապես ազդել Կազմակերպության գործունեության վրա: Դա կարտահայտվի Կազմակերպության կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ: Կազմակերպությունում ռիսկերի արդյունավետ կառավարման և նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվում են տնտեսության վիճակի հնարավոր բացասական փոփոխությունների ազդեցության տարբեր սցենարային իրավիճակների վերլուծություններ: Նման վերլուծությունները և սցենարները քննարկվում են ԱՊԿԿ-ի ընթացքում, որն իրականացվում է ամիսը մեկ կամ երկու անգամ: Նման հաճախականությունը հնարավորություն է տալիս արագ արձագանքել շուկայում սպասվող կամ տեղի ունեցող փոփոխություններին և մշակել գործունեության պլան փոփոխված իրավիճակին համապատասխան:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Վարկային կազմակերպության գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների

իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և վարկային կազմակերպությունների ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Կազմակերպության գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա: Կազմակերպությունը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում:

***Մրցակցային ռիսկ*,** որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում: ՀՀ-ում վարկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է, շուկայում գործում են նաև արտերկրի վարկային կազմակերպությունների դուստր կառույցները, որոնք ունեն հզոր ֆինանսական կարողություններ և անկայուն իրավիճակներում ֆինանսական ներարկումներ ստանալու մեծ հնարավորություններ, առաջավոր և փորձարկված տեխնոլոգիաներ, որի շնորհիվ նրանք ունեն պոտենցիալ առավելություններ ստանալու հավակնություն: Կազմակերպությունը, իր մրցակցային դիրքերն ամրապնդելու առումով, հետևողականորեն առաջնորդվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներով, իրականացնում է իր կառավարման համակարգի ինստիտուցիոնալ համակարգված բարեփոխումներ, ներդնում է վարկավորման ինովացիոն առաջավոր տեխնոլոգիաներ, բարձրացնում է մատուցվող սպասարկումների որակը և մատչելիությունը:

Կադրերի հոսունության ռիսկ, որն իրենից ներկայացնում է մրցունակ կադրերի աշխատանքից ազատման դեպքում Կազմակերպության վնասներ կրելու հավանականությունը: Բարձրորակ մասնագետների առկայությունը Կազմակերպության աշխատակազմում շատ կարևոր է մրցունակ լինելու և պլանավորված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Նման մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի պատճառով՝ առաջանում է նաև կադրերի հոսունության ռիսկ, որի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով Կազմակերպության ղեկավարությունը նպատակային և հետևողական միջոցառումներ է իրականացնում աշխատողների որակավորման բարձրացման, նյութական խրախուսման և սոցիալական ապահովման խնդիրների բարելավման ուղղությամբ: Մասնավորապես, աշխատողների որակավորման բարձրացման նպատակով Կազմակերպությունը ստեղծել է ներքին աշխատակիցների օգտագործման համար նախատեսված առցանց դասընթացների հարթակ, իսկ ՖԻՆՔԱ Զարգացման Ակադեմիայի միջոցով կազմակերպում են միջին օղակի ղեկավարների վերապատրաստման համար դասընթացներ:

***Գործառնական ռիսկ*:** Գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառույթները, գործառնական ռիսկերը կարող են վնասել Կազմակերպության հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգող հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Կազմակերպությունը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիթորինգի և դրանց հակազդման միջոցով: Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

Կազմակերպությունում գործառնական ռիսկը կառավարվում է այդ գործառույթի համար նախատեսված ստորաբաժանման՝ «Ներքին վերահսկողության» բաժնի կողմից: Գործառնական ռիսկերի կառավարման համար մշակված են և պարբերաբար վերանայվում են բազում հսկողական մեխանիզմներ, ինչպիսիք են՝ ռիսկային դեպքերի վերաբերյալ ազդակներ հաղորդող հատուկ մշակված 17 հաշվետվությունները գործընթացների մշակման, գրանցման և հաստատման գործառույթների բաժանումը տարբեր աշխատակիցների միջև, ամենամսյա այցելությունները մասնաճյուղեր և տվյալ տարածաշրջանի հաճախորդներին:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը, մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխությունները և դրանցով պայմանավորված մարտահրավերները՝ Կազմակերպությունը պատրաստ է իրականացնել այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով ապահովել ծրագրավորված ակտիվապասիվային և եկամտային ցուցանիշների կատարումը:

3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին

3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ «ФИНКА» УНИВЕРСАЛЬНАЯ КРЕДИТНАЯ ОРГАНИЗАЦИЯ Закрытое Акционерное Общество.

անգլերեն՝ “FINCA” UNIVERSAL CREDIT ORGANIZATON Closed Joint-Stock Company.

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ռուսերեն՝ «ФИНКА» УКО ЗАО

անգլերեն՝ “FINCA” UCO CJSC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի փ. 2ա, գրանցման համարը՝ 13:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի փ. 2ա:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 12) 55 55 55

էլ. փոստ՝ info@finca.am,

ինտերնետային կայք՝ www.finca.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Կազմակերպությունը հիմնադրվել է ՀՀ օրենսդրության շրջանակներում 2006թ. մարտի 28-ին որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ ԿԲ խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 128Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 13 գրանցման վկայական: Կազմակերպությունը ստեղծվել է «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ

Ինք.» ամերիկյան ոչ առևտրային կազմակերպության կողմից ՀՀ միկրոֆինանսական շուկայի ձևավորման նախնական փուլում՝ նպատակ ունենալով ֆինանսական ծառայություններ մատուցել ֆինանսական հաստատություններից սահմանափակ վարկավորման հնարավորություն և ամենացածր եկամուտ ունեցող ձեռնարկատերերին:

Կազմակերպության ստեղծումը նպատակ էր հետապնդում տրամադրել միկրոֆինանսական ծառայությունների լայն տեսականի՝ նպատակ ունենալով կրճատել աղքատությունը, բարձրացնել զբաղվածության մակարդակը, խթանել ձեռներեցությունն ու Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական համախմբումը, ինչպես նաև ստանալ շահույթ, որը հիմնականում պետք է ուղղվի այդ նպատակների իրագործմանը:

Կազմակերպությունն ունի 30 մասնաճյուղ և վարկավորում է իրականացնում ՀՀ բոլոր մարզերում:

Թողարկողի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

31.12.2022թ. դրությամբ Կազմակերպությունն ունի 30 մասնաճյուղ, որոնց ցանկը և գործունեության հասցեները ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

	Մասնաճյուղի անվանում	Հասցե
1.	**Ագաթանգեղոս մասնաճյուղ**	ք. Երևան, Ագաթանգեղոսի փ. 2 ա
2.	**Կոմիտաս մասնաճյուղ**	ք. Երևան, Կոմիտասի պող. 50/51
3.	**Աշտարակ մասնաճյուղ**	ք. Աշտարակ, Սիսակյան փ. 14/48բ
4.	**Թալին մասնաճյուղ**	ք. Թալին, Շահումյան փ. 1
5.	**Արարատ մասնաճյուղ**	ք. Արարատ, Աղբյուր Սերոբ փ. 10
6.	**Արտաշատ մասնաճյուղ**	ք. Արտաշատ, Շահումյան փ. 33
7.	**Մասիս մասնաճյուղ**	ք. Մասիս, Հանրապետության փ. 5/1
8.	**Վեդի մասնաճյուղ**	ք. Վեդի, Արարատյան փ. 54/6
9.	**Արմավիր մասնաճյուղ**	ք. Արմավիր, Երևանյան փ. 33/3
10.	**Էջմիածին մասնաճյուղ**	ք. Էջմիածին, Խորենացու փ. 8
11.	**Գավառ մասնաճյուղ**	ք. Գավառ, Կենտրոնական փ. 4
12.	**Մարտունի մասնաճյուղ**	ք. Մարտունի, Մյասնիկյան փ. 8
13.	**Վարդենիս մասնաճյուղ**	ք. Վարդենիս, Հ. Անդրեասյան փ. 6/5
14.	**Ալավերդի մասնաճյուղ**	ք. Ալավերդի, Թումանյան փ. 51/2

15.	**Սպիտակ մասնաճյուղ**	ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փ. 4
16.	**Ստեփանավան մասնաճյուղ**	ք. Ստեփանավան, Սուրբ-Նշանի փ. 12բ
17.	**Վանաձոր 1 մասնաճյուղ**	ք. Վանաձոր, Տիգրան Մեծ պող. 47ա
18.	**Աբովյան մասնաճյուղ**	ք. Աբովյան, Հատիս փ 1/28
19.	**Հրազդան մասնաճյուղ**	ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Օգոստոսի-23-ի փ., թիվ 22
20.	**Արթիկ մասնաճյուղ**	ք. Արթիկ, Անկախության փ. 29/1
21.	**Աշոցք մասնաճյուղ**	ՀՀ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, 2-րդ փ., 1-ին նրբ., 6 ռեստորան
22.	**Գյումրի մասնաճյուղ**	ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ փ. 46ա
23.	**Մարալիկ մասնաճյուղ**	ք. Մարալիկ, Հ. Շահինյան փ. 16
24.	**Գորիս մասնաճյուղ**	ք. Գորիս, Մաշտոցի փ. 5
25.	**Կապան մասնաճյուղ**	ք. Կապան, Շահումյան փ.2/1,62 առևտրի սրահ
26.	**Մեղրի մասնաճյուղ**	ք. Մեղրի, Փարամազ փ. 4/6
27.	**Եղեգնաձոր մասնաճյուղ**	ք. Եղեգնաձոր, Անդրանիկի փ. 10/1
28.	**Բերդ մասնաճյուղ**	ք. Բերդ, Մաշտոցի փ. թիվ 8
29.	**Իջևան մասնաճյուղ**	ք. Իջևան, Վալանսի փ. 26/8
30.	**Նոյեմբերյան մասնաճյուղ**	ք. Նոյեմբերյան, Բարեկամության փ. 2

Կազմակերպությունը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

3.3.2. Ներդրումները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև Ազդագրի ներկայացման պահը կազմակերպության կողմից էական ներդրումներ չեն կատարվել:

Կազմակերպության կառավարման մարմինները չեն ստանձնել որևէ պարտավորություն ապագայում էական ներդրումներ իրականացնելու վերաբերյալ:

3.4. Բիզնեսի նկարագիրը

3.4.1. Հիմնական գործունեությունը

Թողարկողն իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և իր Կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ: Կազմակերպությունը կարող է իրավաբանական անձանցից, իր մասնակիցներից, անհատ ձեռնարկատերերից, Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ:

Կազմակերպության գործունեության հիմնական ուղղվածությունը վարկերի տրամադրումն է, որոնք էլ ձգտում է հասանելի դարձնել տնտեսության տարբեր հատվածների, ինչպես նաև հասարակության լայն շրջանակների համար: Կազմակերպությունը, որպես հիմնական գործունեություն ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Ավելին, որպես պատասխանատու վարկատու, Կազմակերպությունը դեռ 2018 թվականի սկզբից նախաձեռնել էր **«Հաճախորդների պաշտպանության սերտիֆիկատ»-ի (SMART Certificate)** ստացումը, և որպես սերտիֆիկացում իրականացնող կազմակերպություն ընտրել էր MicroFinanza Raiting LLC (այսուհետ՝ MFR) իտալական ծագմամբ կազմակերպությունը: MFR ներկայացուցիչը 2018թ. ընթացքում այցելել է Հայաստան: Այցերի նպատակն էր անցկացնել անկախ ուսումնասիրություն և գնահատում: Արդյունքում 2018թ. դեկտեմբերին Կազմակերպությանը շնորհվել է Smart հավաստագիր առ այն, որ ընկերությունը լիովին համապատասխանում է հաճախորդների պաշտպանությանն ուղղված բարձր պահանջներին, որոնք սահմանվել են միկրոֆինանսավորման ոլորտում հաճախորդների պաշտպանությունը սատարող www.smartcampaign.org միջազգային նախաձեռնության կողմից: Կազմակերպությունն առաջին և առայժմ միակ հայաստանյան կազմակերպությունն է, որ արժանացել է նման բարձր գնահատականի հաճախորդների հանդեպ պատասխանատու և հոգատար վերաբերմունքի համար:

2013 թվականի հոկտեմբերից Կազմակերպությունը հաճախորդներին մատուցում է տարադրամի փոխանակման ծառայություն, ինչը Կազմակերպության հաճախորդներին և համայնքների բնակիչներին առավել հարմարավետ և բազմատեսակ սպասարկման հնարավորություն է տալիս:

Հաճախորդների սպասարկման գործընթացն առավել հարմարավետ դարձնելու համար, Կազմակերպությունն անընդհատ բարելավվում է վարկավորման գործընթացները՝ առաջարկելով ժամանակակից (թվայնացված) ծառայություններ: Այսպես՝

- 2018 թվականի ապրիլին գործարկվեց OLA հարթակը (www.ola.am), որի միջոցով հաճախորդները հնարավորություն ունեն առցանց դիմել վարկավորման համար և առավելագույնը մեկ օրվա ընթացքում պատասխան ստանալ հայտի վերաբերյալ:
- 2019 թվականի սկզբից Կազմակերպությունն իր հաճախորդներին առաջարկում է Թաբլետ վարկավորման գործընթացը, որը հնարավորություն է տալիս առանց հաճախորդի մասնաճյուղ այցելության վերցնել հայտը և կատարել վերլուծություն:

- 2020 թվականին Կազմակերպությունը ներդրեց վարկավորման նոր ծրագիր, որը մի քանի անգամ արագացրեց վարկավորման գործընթացը:
- Հաշվի առնելով գործընթացների թվայնամացման արագ տեմպերը, Կազմակերպությունը 2023 թվականին նախատեսում է կատարելագործել OLA հարթակը և իր հաճախորդներին առաջարկել որոշումների կայացման և վարկավորման ամբողջությամբ ավտոմատ գործընթաց, որի դեպքում հաճախորդը կարող է վարկը ստանալ մի քանի րոպեների ընթացքում:

2020 թվականից Կազմակերպությունը սկսեց վերանայել իր կողմից առաջարկվող հիմնական ծառայությունների սակագները՝ հաճախորդներին առաջարկելով ծառայությունների անհատական պայմաններ (risk-based price): Դա Կազմակերպությանը հնարավորություն տվեց առաջարկել մրցակցային պայմաններ և հետևաբար ամրապնդել իր դիրքը շուկայում:

2022 թվականի հուլիսից Կազմակերպությունը իր հաճախորդներին առաջարկում է Էվոկաբանկի հետ թողարկված համատեղ քարտ (co-branded card), որի միջոցով հաճախորդները վարկերը ստանում են անկանխիկ եղանակով:

2022 թվականին Կազմակերպությունը ներդրեց «Հիփոթեքային վարկ» վարկատեսակը, ինչի շնորհիվ ընդլայնվեց Կազմակերպության հաճախորդների շրջանակը:

Ֆինանսական գործառնությունները Կազմակերպության կողմից իրականացվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ կանխիկ և անկանխիկ եղանակներով:

Կազմակերպության հաշվեկշռի կառուցվածքի դինամիկան ներկայացվում է ստորև.



Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի և փոխառությունների ծավալների դինամիկան ներկայացվում է ստորև.

Հաճախորդներին տրված վարկերի դինամիկան 2013-2022թթ.[3]

Հազ. ՀՀ դրամ



Կազմակերպության կողմից տրամադրվող վարկերը ընդհանուր առմամբ կարելի է ներկայացնել 4 խմբի տեսքով՝ գյուղատնտեսական վարկեր, բիզնես վարկեր, սպառողական վարկեր և հիփոթեքային վարկեր:

Կազմակերպության կողմից հաճախորդներին տրված վարկերի ծավալներն ըստ վարկատեսակների 2018-2022թթ. դրությամբ ներկայացված են ստորև.

Հաճախորդներին տրված վարկերն ըստ վարկատեսակների

Հազ. ՀՀ դրամ

	31.12.2022[4]	31.12.2021	31.12.2020	31.12.2019	31.12.2018
Անհատական գյուղատնտեսական վարկեր	10,221,842	10,035,999	11,018,223	12,496,437	12,389,702
Անհատական բիզնես վարկեր	6,884,323	5,701,953	5,456,603	9,764,790	10,276,419
Սպառողական վարկեր	1,773,308	2,509,772	3,335,406	1,660,515	1,506,796
Հիփոթեքային վարկեր	81,027				
Խմբային վարկեր[5]	-	-	-	3	1,440

[3] 2022թ. տվյալները վերցված են արտաքին աուդիտ չանցած միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից
[4] 2022 թվականի տվյալները վերցված են ընկերության միջանկյալ եռամսյակային հաշվետվություններից, և աուդիտի կողմից ստուգված չեն
[5] Խմբային վարկեր Կազմակերպությունն այլևս չի տրամադրում

Խմբային գյուղատնտեսական վարկեր	-	-	-	**170**	**2,550**
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**18,960,500**	**18,247,724**	**19,810,232**	**23,921,915**	**24,176,907**

Կազմակերպությունը 2018թ. գործարկել է սպառողական վարկի նոր պրոդուկտ՝ արևային ջրատաքացուցիչներ ձեռք բերելու համար, ինչպես նաև ներդրել է վարկային հայտի ընդունման օնլայն տարբերակը՝ Online Loan Application (OLA), որը էապես մեծացրել է վարկերի տրամադրման արագությունը:

31/12/2022թ. դրությամբ Կազմակերպության հաճախորդների կառուցվածքը ըստ իրավաբանական կարգավիճակի ունեն հետևյալ պատկերը՝



31/12/2022թ. դրությամբ Կազմակերպության կողմից տրամադրված վարկերը ըստ արժույթի ունեն հետևյալ պատկերը՝



3.4.2. Հիմնական շուկաները

ՀՀ ֆինանսական շուկայում կազմակերպությունն առանձնանում է միկրոֆինանսական ծառայությունների լայն տեսականու մատուցմամբ՝ նպատակ հետապնդելով կրճատել աղքատությունը, բարձրացնել զբաղվածության մակարդակը, խթանել ձեռներեցությունն ու Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական համախմբումը:

Կազմակերպության վարկերը ըստ տնտեսության ոլորտի 2018-2022թթ. ժամանակահատվածում ունեն հետևյալ տեսքը՝

Հազ. ՀՀ դրամ

	31.12.2022	31.12.2021	31.12.2020	31.12.2019	31.12.2018
Գյուղատնտեսություն	11,937,106	12,922,509	13,695,466	13,950,911	13,490,225
Առևտուր	3,771,644	3,761,204	3,184,063	4,000,782	4,663,305
Արդյունաբերություն	1,055,834	786,060	849,593	1,133,689	1,287,313
Տրանսպորտ	650,604	660,728	769,154	837,550	879,480
Շինարարություն	45,327	49,012	90,927	154,624	383,656
Ծառայություն	3,616,770	4,158,855	4,791,741	5,025,840	-
Հիփոթեք	81,694	-	-	-	-
Այլ	694,226	779,623	917,857	1,157,006	5,270,130
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**21,853,205**	**23,117,991**	**24,298,801**	**26,260,402**	**25,974,109**
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(2,892,706)	(4,870,267)	(4,488,569)	(2,338,487)	(1,797,202)
Ընդամենը հաճախորդների տրված վարկեր	**18,960,500**	**18,247,724**	**19,810,232**	**23,921,915**	**24,176,907**

Վարկային կազմակերպությունների ընդհանուր վարկային ներդրումներում Թողարկողի վարկային պորտֆելի մասնաբաժինը 2018-2022թթ[6].-ին հետևյալն է.

Թողարկողի վարկային պորտֆելի մասնաբաժինը

Հազ. ՀՀ դրամ

	31.12.2022	31.12.2021	31.12.2020	31.12.2019	31.12.2018
Վարկային կազմակերպությունների	**265,885,002**	**327,905,458**	**346,790,631**	**436,726,050**	**306,286,491**

[6] 2022 թվականի տվյալները վերցված են ընկերության միջանկյալ եռամսյակային հաշվետվություններից, և աուդիտի կողմից ստուգված չեն

կողմից տրամադրված վարկեր[7]					
Կազմակերպության կողմից հաճախորդներին տրամադրված վարկեր	**18,960,500**	**18,247,724**	**19,810,232**	**23,921,915**	**24,176,907**
Թողարկողի մասնաբաժինը (%)	**7.13%**	**5.56%**	**5.71%**	**5.48%**	**7.89%**

Թողարկողի դիրքը վարկային կազմակերպությունների շուկայում 31.12.2022 թվականի դրությամբ հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ[8]

Ցուցանիշ	**Ֆինքա ՈՒՎԿ ՓԲԸ**	**Մասնաբաժինը վարկային կազմակերպությունների շուկայում (%)**[9]	**Դիրքը վարկային կազմակերպություն ների շուկայում**
Ընդհանուր ակտիվներ	22,959,614	3.4%	8
Հաճախորդներին տրված վարկեր	18,960,500	3.9%	7
Ընդհանուր պարտավորություններ	16,909,177	6.0%	5
Ընդհանուր կապիտալ	6,050,437	1.6%	9
Կանոնադրական կապիտալ	4,905,960	2.2%	5
Զուտ շահույթ	214,029	1.0%	8

[7] ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հրապարակվող ամսական տվյալներ, www.cba.am,

[8] Հաշվարկների հիմքում ընկած են ՀՀ վարկային կազմակերպությունների՝ 31.12.2022 թվականի դրությամբ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների (աուդիտ չանցած) տվյալները:

3.5. Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը

Թողարկողի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը հետևյալն է.



3.6. Հիմնական միջոցները

Կազմակերպությունն իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց արժեքի հանրագումարը չի գերազանցում Կազմակերպության ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 10%-ը: 31.12.2022[10] թվականի դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 66.5 մլն ՀՀ դրամ, իսկ ոչ նյութական ակտիվներինը՝ 185 մլն ՀՀ դրամ:

Կազմակերպության ոչ նյութական ակտիվների կազմը և կառուցվածքը 31.12.2022թ դրությամբ.

հազ. ՀՀ դրամ

	Համակարգչային ծրագրեր
Սկզբնական արժեք	714,845
Կուտակված մաշվածություն	(529,747)
Զուտ Հաշվեկշռային արժեք	**185,098**

Կազմակերպության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ առկա չեն:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցներն ունեցել են հետևյալ կազմը և կառուցվածքը.

Կազմակերպության հիմնական միջոցների կազմը և կառուցվածքը 31.12.2022թ. դրությամբ

հազ. ՀՀ դրամ

	Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Կապի և հաղոր-դակցման միջոցներ	Գրասենյա-կային գույք	Փոխադրա-միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք	269,453	542,461	332,483	63,074	221,644	1,429,115
Կուտակված մաշվածություն	(249,136)	(508,941)	(323,415)	(63,075)	(218,012)	(1,362,579)
Զուտ Հաշվեկշռային արժեք	20,317	33,520	9,068	(1)	3,632	66,536

Կազմակերպությունը մոտ ապագայում էական մեծություն կազմող հիմնական միջոցների ձեռքբերում չի պլանավորում:

[10] 2022 թվականի տվյալները վերցված են ընկերության միջանկյալ եռամսյակային հաշվետվություններից, և աուդիտի կողմից ստուգված չեն

3.7. Զարգացման վերջին միտումները

3.7.1. Արտաքին գործոնների վերլուծությունը

Կազմակերպությունը սեփական և հաճախորդների կարիքները բավարարելու համար գործունեություն է ծավալում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում, ուստի Կազմակերպության գործունեության վրա իրենց ուրույն ազդեցությունն են թողնում և՛ հայրենական, և՛ միջազգային տնտեսությունում տեղի ունեցող իրադարձությունները: Այսպես, Կազմակերպության գործունեության վրա էական ազդեցություն են թողել՝

- Զարգացած երկրներում տնտեսության անկայունությունները,
- Տարածաշրջանում առկա քաղաքական և տնտեսական անկայունությունները
- միջազգային շուկաներում տոկոսադրույքների բարձրացումը
- ՀՀ քաղաքական բարձր ռիսկերը և շարունակվող անկայունությունը,
- Փոխատվական կապիտալի շուկայում բարձր մրցակցության պահպանումը:

Կազմակերպությունն անընդհատ իրականացրել է ակտիվների և պարտավորությունների փոխհամաձայնեցված կառավարում, որպեսզի կարողանա չեզոքացնել վերը նշված երևույթների բացասական ազդեցությունը և հնարավորինս օգտվել ընձեռնված հնարավորություններից:

Տնտեսության ներքին և արտաքին հատվածներում ընթացող փոփոխություններով պայմանավորված՝ Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների սակագները պարբերաբար վերանայվում են՝ նպաստելով վերջիններիս մրցունակության բարձրացմանը և մատչելիության ապահովմանը:

3.7.2. Կազմակերպության հիմնական խնդիրները

Նախորդ պլանային ժամանակաշրջանում Կազմակերպությունը միտված է եղել առաջատար և մրցունակ տեղ գրավել ունիվերսալ վարկային կազմակերպությունների շարքում՝ նպատակ ունենալով՝

- պահպանել առաջատարի դիրքերը ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկավորման շուկայում,
- բարձրացնել վարկային պորտֆելի որակը և ապահովել ակտիվների և պարտավորությունների բավարար դիվերսիֆիկացում (ըստ տնտեսության ոլորտների, գործիքների և հաճախորդների),
- Կազմակերպության վերցրած հիմնական ռիսկերը պահել թույլատրելի մակարդակի վրա (չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում մշտապես պահել ցածր, արտարժութային դիրքը հնարավորինս փակ պահել, նվազագույնի հասցնել գործառնական ռիսկերը և այլն),
- ավելի երկարաժամկետ հատվածում մեծացնել ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը,

- ֆինանսական արդյունքների (եկամուտների) դիվերսիֆիկացում,
- միջոցների և նպատակային հաճախորդների ներգրավում (ներգրավել ռազմավարական նշանակություն ունեցող հաճախորդների, ում հետ կձևավորվեն գործընկերային փոխհարաբերություններ),
- աշխատակիցների վերապատրաստում և մոտիվացիայի բարձրացում:

Կազմակերպության գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ իմանալու համար ներդրողը կարող է ծանոթանալ Կազմակերպության տարեկան և միջանկյալ հաշվետվություններին, որոնք տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքի www.finca.am «Հաշվետվություններ» բաժնում:

3.8. Շահույթի կանխատեսումը

Առաջիկա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Կազմակերպությունը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- ✓ Կազմակերպության գործունեությունը նպատակամղել շահույթի, բաժնետիրական կապիտալի և ակտիվների եկամտաբերության աճին,
- ✓ Կազմակերպության ռեսուրսները տեղաբաշխել բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվներում (վարկեր հաճախորդներին)՝ ընդունելի մակարդակի վրա պահելով Կազմակերպության ռիսկերը, պահպանելով վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները,
- ✓ ապահովել Կազմակերպության դինամիկ զարգացման համար անհրաժեշտ մասնաճյուղերի ստեղծում, տեխնիկատեխնոլոգիական, տեղեկատվական համակարգերի արդիականացում,
- ✓ ապահովել Կազմակերպության զարգացմանը համահունչ անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,
- ✓ Կազմակերպության գործունեության ապահովման ծախսեր:

2021 թվականի ընթացքում Կազմակերպությունը գեներացրել է 6,996 հազ. ՀՀ դրամ զուտ շահույթ, իսկ 2022 թվականի տարեսկզբից մինչ չորրորդ եռամսյակի վերջ՝ 214,029 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ:

Առաջիկա տարիների համար Կազմակերպության զուտ շահույթի կանխատեսված ցուցանիշներն են՝

մլն. ՀՀ դրամ

	2023 թ.	2024 թ.	2025 թ.	2026 թ.
Զուտ շահույթ	499	775	717	686

Կազմակերպությունը, շահութաբերության վերոնշյալ մակարդակին հասնելու համար, թիրախավորում է հետևյալ ցուցանիշները.

- 1 օր ժամկետանց վարկային պորտֆելը (PAR 1) նվազում է և կազմում 9.4%-ի 2023 թվականի վերջին և 8.6%-ի ՝ 2026 թվականին:
- 30 օր ժամկետանց վարկային պորտֆելը (PAR 30) նվազում է և կազմում է 8%-ի՝ 2023 թվականի վերջին, ապա աստիճանաբար նվազելով 2024 - 2026թթ. ընթացքում՝ կազմում է 7.2% 2026 թվականին:
- Վերակառուցված վարկերի մասնաբաժինը ՀՎՊ-ում նվազում է և հասնում 6.52%-ի 2023թ-ի դեկտեմբերին համեմատ 2022թ-ի դեկտեմբերի 12.11% ցուցանիշի:
- Դուրս գրված վարկային պորտֆելից վերականգնումները միջինում կազմում են դուրս գրված պորտֆելի 0.7% 2022-2025 թվականների ընթացքում:
- 2023 թվականի համար Կազմակերպությունը կանխատեսում է 41 մլն ԱՄՆ դոլարի, 2024 թվականի համար՝ 42 մլն ԱՄՆ դոլարի, 2025 թվականի համար՝ 43 մլն ԱՄՆ դոլարի և 2026 թվականի համար 44 մլն ԱՄՆ դոլարի վարկերի տրամադրում :
- Ըստ կանխատեսման ՀՎՊ կազմելու է 52,8 մլն ԱՄՆ դոլար 31.12.2023թ դրությամբ: 2024-2026 թվականների համար միջինում կանխատեսվում է 5.5% վարկային պորտֆելի աճ:

Կազմակերպության կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- ✓ Կազմակերպության ներգրավող և տեղաբաշխվող միջոցների ծավալների կառավարում,
- ✓ Կազմակերպության ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում և կառավարում,
- ✓ Կազմակերպության տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական բազայի արդիականացմանն ուղղված ներդրումներ,
- ✓ Կազմակերպության անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,
- ✓ Կազմակերպության գործունեության ապահովման ծախսեր,
- ✓ Նոր ծառայությունների ներդրման ծախսեր:

Կազմակերպության կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- ✓ ներգրավվող միջոցների և վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույքների փոփոխության վարքագիծ,
- ✓ արժեզրկման ու փոխարժեքի վարքագիծ,

- ✓ անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կազմակերպության բնականոն գործունեությունը):

3.9. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.9.1. Կառավարման մարմինների կառուցվածքը, իրավասություններն ու պարտականությունները

Կազմակերպության կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները.

- ✓ **Բաժնետերերի ժողով,**
- ✓ **Տնօրենների խորհուրդ,**
- ✓ **Վարչություն,**
- ✓ **Գլխավոր տնօրեն:**

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



Կազմակերպության Կանոնադրությամբ Կազմակերպության կառավարման մարմիններին վերապահված են հետևյալ իրավասությունները.

Բաժնետերերի ժողովը (Ժողով)

Ժողովը Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Ժողովի բացառիկ իրավասություններն են՝

ա) Կազմակերպության Կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

բ) Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշումներ կայացնելը,

գ) Կազմակերպության լուծարման մասին որոշումներ կայացնելը, լուծարման հանձնաժողով նշանակելը, լուծարման պլանի, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

դ) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ե) Թողարկված բաժնետոմսերի առավելագույն քանակի որոշումը,

զ) Հայտարարված բաժնետոմսերի քանակի, անվանական արժեքի, տեսակների, և այդ բաժնետոմսերի սեփականատերերին վերապահված իրավունքների որոշումը,

է) Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով Կազմակերպության Կանոնադրական կապիտալի ավելացումը,

ը) Կազմակերպության բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, ընդհանուր քանակի կրճատման նպատակով Կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Կազմակերպության կողմից ձեռքբերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

թ) Կազմակերպության Վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ժ) Կազմակերպության Գլխավոր տնօրենի և Վարչության անդամների վարձատրության չափի և պայմանների որոշումը,

ժա) Արտաքին աուդիտորի հաստատումը,

ժբ) Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը, Կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության տարեկան արդյունքների հաստատումը,

ժգ) Բաժնետերերի ժողովի անցկացման կարգի որոշումը,

ժդ) Տնօրենների խորհրդի ներկայացմամբ՝ առաջին եռամսյակի, կիսամյակի, ֆինանսական տարվա առաջին ինը ամիսների արդյունքների հիման վրա շահութաբաժինների վճարման մասին որոշման կայացումը, ինչպես նաև դրանց գումարի, վճարման ձևի և ամսաթվի որոշումը,

ժե) Օրենքով սահմանված կարգով խոշոր գործարքների կնքման թույլատրումը,

ժզ) Օրենքով սահմանված դեպքերում Կազմակերպության թողարկած բաժնետոմսերի ձեռքբերման թույլատրումը,

ժէ) Տնօրենների խորհրդի ներկայացմամբ՝ բաժնետոմսերի համախմբման կամ բաժանման մասին որոշումը,

ժը) Կազմակերպության Վարչության կազմի հաստատումը,

ժթ) Հայաստանի օրենսդրությամբ Ժողովին վերապահված այլ իրավասությունների իրականացումը:

Տնօրենների խորհուրդը (Խորհուրդ)

Կազմակերպության Խորհուրդն իրականացնում է Կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են Ժողովի բացառիկ իրավասությանը, կամ Կազմակերպության Կանոնադրության համաձայն կամ Տնօրենների խորհրդի որոշմամբ պատվիրակված են Վարչությանը կամ Վարչության նախագահին:

Խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

ա) Որոշել Կազմակերպության գործունեության հիմնական ոլորտները,

բ) Վերահսկել Կազմակերպության ղեկավար մարմինների գործունեությունը,

գ) Հաստատել Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,

դ) Գումարել տարեկան և արտահերթ Ժողովներ, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,

ե) Հաստատել Ժողովների օրակարգը,

զ) Հաստատել Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը, ինչպես նաև լուծել բոլոր այն հարցերը, որոնք կապված են Ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանն Օրենքի դրույթներին համապատասխան,

է) Օրենքի համաձայն առաջարկություններ ներկայացնել Ժողովների քննարկմանը,

ը) Օրենքով սահմանված կարգով որոշել գույքի շուկայական արժեքը,

թ) Կազմակերպության Վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ առաջարկություններ նախապատրաստել Ժողովի համար,

ժ) Սահմանել Վարկային կազմակերպության Արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափը,

ժա) Միջանկյալ և տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ժողովին ներկայացվելիք առաջարկություններ նախապատրաստել,

ժբ) Օգտագործել Կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամները,

ժգ) Հաստատել կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթեր և այլ ներքին կանոնակարգեր,

ժդ) Հաստատել Կազմակերպության ամենամյա ծախսերի նախահաշիվը և գործարար ծրագիրը,

ժե) Որոշումներ կայացնել Կազմակերպության տեղաբաշխված բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր ձեռք բերելու վերաբերյալ,

ժզ) Որոշումներ կայացնել Կազմակերպության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման, այդ թվում՝ հրապարակային տեղաբաշխման մասին

ժէ) Նշանակել Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենի և Վարչության այլ անդամների, վաղաժամկետ դադարեցնել նրանց իրավասությունները,

ժը) Որոշում կայացնել դուստր ընկերությունների ստեղծման, դրանց կանոնադրական կապիտալում Կազմակերպության մասնակցության չափի մասին, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում, որը ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կողմից՝ Օրենքով սահմանված կարգով,

ժթ) Որոշում կայացնել Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման մասին և հաստատել դրանց ներքին կանոնակարգերը,

ժի) Որոշում կայացնել այլ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցելու մասին, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում, որը ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կողմից՝ Օրենքով սահմանված կարգով,

ի) Որոշում կայացնել հոլդինգային ընկերություններում, ֆինանսական և արդյունաբերական խմբերում, միավորումներում և առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցության մասին,

իա) Հաստատել ցանկացած պայմանագիր, ներառյալ՝ առանց սահմանափակման, Վարկային կազմակերպության գույքի օտարման պայմանագրեր, վարկային պայմանագիր, ծախսերի նախահաշվով չնախատեսված՝ գումարի փոխանցում, չեկ, մուրհակ, վարկ, երաշխիք կամ հավաստագիր, կամ այլ ֆինանսական գործիք կամ գործառնություն, որը գերազանցում է 50,000 ԱՄՆ դոլարի համարժեքը տեղական արժույթով: Ընդ որում, 50,000 ԱՄՆ դոլարի սահմանափակման մեջ չեն մտնում Վարկային կազմակերպության բանկային հաշվից ծախսերի նախահաշվով նախատեսված գործունեության կապակցությամբ կատարվող փոխանցումները, ինչպես նաև Վարկային Կազմակերպության կողմից որպես հիմնական գործունեություն հաճախորդներին տրվող վարկերը և ՀՀ բանկերում դրված ավանդները, ինչպես նաև կարճաժամկետ (վեց ամիսը չգերազանցող) դրամական հոսքերի փոխադարձ ապահովմամբ կատարվող գործարքների (back to back transactions (ներառյալ սվոփ)), ռեպո, դրամական միջոցների գրավով ապահովված վարկեր գործառնությունների, բանկերից ստացվող վարկերի և դեպոզիտների, ֆինանսական կազմակերպություն չհամարվող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձանցից ստացվող փոխառությունների, արտարժույթի առքուվաճառքի և կանխիկացման գործարքները,

իբ) Օրենքով նախատեսված դեպքերում թույլատրել խոշոր գործարքների կնքումը,

իգ) Սահմանել և ըստ անհրաժեշտության փոփոխել վարկային քաղաքականության ուղղությունը և ներքին վերահսկողության կանոնները, այդ թվում՝ Կազմակերպության ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության ընթացակարգերը,

իդ) Լուծել այլ հարցեր, որոնք Խորհուրդն էական է համարում Վարկային կազմակերպության զարգացման համար, կամ որոնք նախատեսված են Օրենքով և Կազմակերպության Կանոնադրությամբ:

Վերը ներկայացված հարցերը պատկանում են Կազմակերպության տնօրենների Խորհրդի բացառիկ իրավասությանը և չեն կարող պատվիրակվել Վարչությանը ՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Կազմակերպության Վարչությունը

Կազմակերպության ընթացիկ գործունեությունը ղեկավարվում է Կազմակերպության Գլխավոր տնօրենի կողմից՝ Վարչության հետ միասին: Կազմակերպության Գլխավոր տնօրենը և Վարչությունը հաշվետու են Տնօրենների խորհրդին և Բաժնետերերի ժողովին:

Վարչությունը Կազմակերպության կոլեգիալ գործադիր մարմին է: Կազմակերպության կանոնադրության, միակ բաժնետիրոջ որոշմամբ և ՀՀ օրենսդրության համաձայն Գլխավոր տնօրենը, Ֆինանսական տնօրենը, Գործառնական տնօրենը, Գլխավոր հաշվապահը և իրավաբանական վարչության ղեկավարը հանդիսանում են Վարչության անդամներ: Վարչության կազմը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Տնօրենների խորհրդի որոշմամբ: Գլխավոր տնօրենը հանդիսանում է Վարչության նախագահը և պատասխանատու է Վարչությունը գործունեության համար:

Վարչությունը իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) Նախապատրաստում և Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,

բ) Նախապատրաստում և Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության ծախսերի ամենամյա նախահաշիվը և գործարար ծրագիրը,

գ) Իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը և բոլոր գործառնությունները, ներառյալ պայմանագրերի բանակցումը և կնքումը, որը սույն Կանոնադրությամբ պահանջվող դեպքերում ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կամ Տնօրենների խորհրդի կողմից,

դ) Որոշումներ է կայացնում աշխատակազմի ընտրության, նշանակման և վերապատրաստման մասին, մշակում, հաստատում և անհրաժեշտության դեպքում Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի կառուցվածքը, խթանները և նյութական պարգևների ծրագրերը,

ե) Կազմակերպության ներքին կանոնակարգերը և մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների կանոնակարգերը ներկայացնում է Տնօրենների խորհրդի հաստատմանը,

զ) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության ծառայությունների նոր տեսակները և նոր գործառնությունների ու գործունեության իրականացման կարգը՝ սույն Կանոնադրությամբ նախատեսված շրջանակներում, ի նպաստ Կազմակերպության նպատակների իրագործման,

է) Սահմանում է Կազմակերպության կողմից վարկերի և փոխառությունների տրամադրման կարգն ու պայմանները, վարկային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների սակագները, ինչպես նաև վարկավորման ընթացակարգին վերաբերվող ներքին իրավական ակտերը, բացառությամբ Վարկային կազմակերպության առաքելության, Վարկային բաժնի կառուցվածքի, հաճախորդների ընտրության չափանիշների, վարկային ծառայողների, թիմի ղեկավարների և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների խրախուսական համակարգի, վարկերի վերակառուցման (վարկային գործող պայմանագրի պայմանների փոփոխության) կարգի, վարկային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների ընդհանուր բնութագրման, ներքին վերահոկողության հետ հարաբերությունների ընթացակարգերի, որոնք սահմանելու իրավասությունը հանդիսանում է Կազմակերպության Տնօրենների խորհրդի իրավասությունը:

ը) Ամենամյա հաշվետվություններ է պատրաստում Կազմակերպության գործարար գործունեության կարևորագույն ուղղությունների վերաբերյալ և դրանք ներկայացնում Տնօրենների խորհրդին,

թ) Որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեության այլ կարևոր հարցերի վերաբերյալ:

Վարչությունը կարող է իրականացնել Հայաստանի օրենսդրությամբ և Վարչության կանոնակարգով նախատեսված այլ գործառույթներ:

Կազմակերպության Գլխավոր տնօրենը

Գլխավոր տնօրենը Վարչության ղեկավարն է: Գլխավոր տնօրենը գործում է Կազմակերպության անունից առանց լիազորագրի, մասնավորապես.

ա) Տնօրինում է Կազմակերպության գույքը,

բ) Կազմակերպության անունից Կանոնադրության դրույթների համաձայն կնքում է գործարքներ և պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր,

գ) Ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական գերատեսչությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ հարաբերություններում,

դ) Տալիս է Կազմակերպության անունից գործելու լիազորագրեր,

ե) Արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ աշխատակիցներին և աշխատակազմի անդամներին և վերահսկում է դրանց կատարումը,

զ) Աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Վարկային կազմակերպության աշխատակիցներին,

է) Աշխատակիցների նկատմամբ կիրառում է Վարչության կողմից հաստատված խրախուսման և շահադրդման միջոցներ, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառում Կազմակերպության աշխատակիցների նկատմամբ,

ը) Ապահովում է, որպեսզի Կազմակերպության ծախսերը չգերազանցեն հաստատված բյուջեն,

թ) Իրականացնում է Հայաստանի օրենսդրությամբ և Վարչության Կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

3.10. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը

Տնօրենների խորհուրդ՝

1. **Խորհրդի նախագահ՝ Զարլաշտ Վարդակ**

Բնակության վայր	Լիսմիլ Սքուերը 43724, ք. Լիսբուրգ, Վիրջինիա, Միացյալ Նահանգներ
Իրավասությունները Պարտականությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցերի վերաբերյալ: Իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով: Որպես խորհրդի նախագահ համակարգում է վարկային կազմակերպության Խորհրդի աշխատանքները, գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը, նախագահում է Բաժնետերերի ժողովները:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	1. ՖԻՆՔԱ Հորդանան» տնօրենների խորհրդի նախագահ 2. «ՖԻՆՔԱ Աֆղանստան» տնօրենների խորհրդի նախագահ 3. «ՖԻՆՔԱ Պակիստան» տնօրենների խորհրդի անդամ 4. «ՖԻՆՔԱ Կոսովո» տնօրենների խորհրդի նախագահ 5. «ՖԻՆՔԱ Ադրբեջան» ՖԻՆՔԱ Ադրբեջանի տնօրենների խորհրդի անդամ/նախագահ 6. «ՖԻՆՔԱ Տաջիկստան» ՖԻՆՔԱ Տաջիկստանի տնօրենների խորհրդի անդամ

	7. «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ Ինք.» Փոխնախագահ և բաժնի տնօրեն (Աֆղանստան, Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Հորդանան, Կոսովո և Տաջիկստան)

2. Խորհրդի անդամ՝ Մուրադ Մուրադյան

Բնակության վայր	ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց 18/1, բն.18
Իրավասությունները Պարտականությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ - տնօրեն «Վիտրո» ՍՊԸ - տնօրեն «Հայաստանի գիտահետազոտական և կրթական կոմպյուտերային ցանցերի ասոցիացիա ԱՐԵՆԱ հիմնադրամ» - տնօրեն

3. Խորհրդի անդամ՝ Ռիչարդ Մարնի

Բնակության վայր	Գերտրուդստրասսե 69, Ցյուրիխ, Շվեյցարիա, 8003
Իրավասությունները	

Պարտականությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

4. Խորհրդի անդամ՝ Նիվեդիտա Նիտյանանդ

Բնակության վայր	9601 Քրենաթա Քով, Օսթին, Տեխաս 78759, ԱՄՆ
Իրավասությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Օսթին Քլաբհաուս, Օսթին, Տեխաս-տնօրենների խորհրդի անդամ և ժամանակավոր գանձապահ

Վարչություն՝

1. Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն՝ Սթիվեն Մայքլ Հասս

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան
Իրավասությունները	Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարում: Պատասխանատու և հաշվետու է ընկերության տնօրենների խորհրդին և միակ բաժնետիրոջը: Որպես Գլխավոր տնօրեն ղեկավարում է Ընկերությունը՝ մշակելով Տնօրենների խորհրդի և/կամ Բաժնետերերի ժողովի կողմից հաստատման ենթակա կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը, նպատակները և քաղաքականությունները՝ ապահովելով վերջիններիս իրականացումը և կիրառումը:
Պարտականությունները	Հիմնական պարտականություններն են՝ 1)Ընկերության աշխատակիցների նկատմամբ ցուցաբերել առաջնորդության լավագույն փորձը: 2)Կառավարել, խելամիտ և արդյունավետ կերպով օգտագործել ինչպես Ընկերության մարդկային և այլ ռեսուրսները, այնպես էլ ՖԻՆՔԱ-ում (ՖԻՆՔԱ Իմփեքթ Ֆայնենս գլխամաս, Տարածաշրջանային գրասենյակ, այլ ՖԻՆՔԱ դուստր կազմակերպություններ) առկա և արտաքին (ՖԻՆՔԱ-ից դուրս) ռեսուրսները: 3)Ապահովել բարձրորակ ֆինանսական ծառայություններ հաճախորդի համար և առավելագույնի հասցնել հաղորդակցումը և հասանելիությունը թիրախային խմբի հետ: 4)Կորպորատիվ ղեկավարման, ֆինանսական ղեկավարման և ռիսկերի կառավարման, կազմակերպչական կառուցվածքի և ընթացակարգերի մշակման, աշխատակազմի զարգացման և այլ գործընթացներում ապահովել հնարավոր լավագույն փորձի կիրառումը: 5)Ապահովել բոլոր գործընթացների և ընթացակարգերի համապատասխանությունը Ընկերության Կանոնադրությանը, ՖԻՆՔԱ-ի և Ընկերության քաղաքականություններին, ընթացակարգերին, ծրագրերին

	և համաձայնագրերին, Ընկերության կառավարման մարմինների որոշումներին, ինչպես նաև գլխամասային և տարածաշրջանային գրասենյակի որոշումներին: 6)Ակտիվորեն համագործակցել տարածաշրջանային գրասենյակի, գլխամասի և ղեկավար մարմինների հետ: 7)Մոբիլիզացնել ֆինանսավորման ռեսուրսները՝ պարտավորությունների և/կամ դրամաշնորհային կապիտալի տեսքով: 8)Նպաստել ՖԻՆՔԱ Իմփեքթ Ֆայնենսի բրենդի տարածմանը երկրում: 9)Նպաստել ՖԻՆՔԱ ցանցի զարգացմանը: 10)Գործել Ընկերության անունից առանց լիազորագրի, մասնավորապես. 10.1 Տնօրինել Ընկերության գույքը, 10.2 Ընկերության կանոնադրության դրույթներին համապատասխան Ընկերության անունից կնքել գործարքներ և պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր, 10.3 Ներկայացնել Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական գերատեսչությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ հարաբերություններում, 10.4 Տրամադրել Ընկերության անունից գործելու լիազորագրեր, 10.5 Արձակել հրամաններ, հրահանգներ, տալ դրանց իրականացման համար պարտադիր ցուցումներ աշխատակիցներին և վերահսկել դրանց կատարումը, 10.6 Աշխատանքի ընդունել և աշխատանքից ազատել Ընկերության աշխատակիցներին, 10.7 Աշխատակիցների նկատմամբ կիրառել Վարչության կողմից հաստատված խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ, 10.8 Ապահովել, որպեսզի Ընկերության ծախսերը չգերազանցեն հաստատված բյուջեն,

	10.9 Իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

2. Վարչության անդամ – գլխավոր ֆինանսական տնօրեն՝ Անուշ Պետրոսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները	• Պատասխանատու է Կազմակերպության բոլոր ֆինասական և հաշվապահական գործողությունների կազմակերպման համար, և ղեկավարում է ֆինանսական ամբողջ անձնակազմը: • Հանդիսանում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ: • Ապահովում է հաշվապահական հաշվառման իրականացումը համաձայն ՀՀ օրենսդրությամբ և ներքին ընթացակարգերով սահմանված պահանջների: • Վերահսկում է հաշվետվությունների պատրաստումն ու ներկայացումը տարբեր շահառուներին (ՀՀ կենտրոնական բանկ, հարկային մարմիններ, ՖԻՆՔԱ Իմփաքթ Ֆայնանս, միջազգային վարկառու կազմակերպություններ, ներքին ստորաբաժանումներ): • Ապահովում է արդյունավետ լիկվիդայնության կառավարումը՝ բանակցելով և ներգրավելով ֆինանսական միջոցներ ներքին և արտաքին ներդրողներց: • Ղեկավարում է Ընկերության պլանավորման և բյուջետավորման գործընթացները: • Կազմակերպում է տարեկան արտաքին աուդիտի իրականացումը: • Որպես Վարչության անդամ մասնակցում և քվեարկում է «Ֆինասական» և «Ոչ ֆինանսական» հարցերի շուրջ որոշումներ կայացնելու հարցում:
Պարտականությունները	

Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

3. Գլխավոր Գործառնական տնօրեն՝ Վարդան Հարոյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները	Գործառնական տնօրենի իրավասությունների շրջանակը ներառում է ՖԻՆՔԱ Հայաստանի վարկավորման գործունեության և դրա հետ կապված գործողությունների՝ անձնակազմի, վարկատեսակների և ընթացակարգերի կարգավորման ամբողջական ցիկլի կազմակերպումն ու ամենօրյա ղեկավարումը: Գործառնական տնօրենը մասնակցում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև Ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված Վարչության անդամների իրավասությանը պատկանող հարցերի քննարկման և համապատասխան որոշումների կայացման գործընթացին:
Պարտականությունները	Հիմնական պարտականություններն են գործառնական թիմի ձևավորում և ղեկավարում, մասնավորապես անձնակազմի աշխատանքի ընդունում, վարկային ոլորտի աշխատակիցների ղեկավարում, անձնակազմի ուսուցում, անձնակազմի տարբեր կատեգորիաների համար սեմինարների կազմակերպում, աշխատանքային թրեյնինգների իրականացում և այլ ուսուցանող մեթոդների կիրառում, վարկային ոլորտի անձնակազմի մոտիվացում: Վարկատեսակների զարգացում և/կամ փոփոխություն, ինչպես նաև առկա վարկատեսակների արդյունավետ կիրառում: «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և կից քաղաքականությունների, ընթացակարգերի, ծրագրերի և համաձայնագրերի, կից կառավարման մարմինների հետ կապված, ինչպես նաև գլխամասի և տարածաշրջանի գրասենյակների ղեկավարի/ղեկավարների, աշխատանքների համակարգում:

	Ղեկավարում է գործառնական ծրագրերի և բյուջեի պատրաստումը, իրականացնել գործառնական, ֆինանսական և ինստիտուցիոնալ զարգացման ծրագրերի կառավարումը, ձևավորում և կիրառության մեջ է դնում համապատասխան աշխատանքների հաշվետվություններ: Որպես Վարչության անդամ մասնակցում է ՖԻՆՔԱ Հայաստանի ընդհանուր կառավարմանը: Տեղեկացված է ՖԻՆՔԱ Հայաստանի բոլոր հիմնական գործընթացների և զարգացումների մասին, մշտապես իրազեկում է Վարչության անդամներին ՖԻՆՔԱ Հայաստանի գործունեության վերաբերյալ համապատասխան հարցերի և զարգացումների մասին Մասնակցում և քվեարկում է որոշումներ կայացնելիս համապատասխան գործունեության և ոչ գործառնական հարցերի վերաբերյալ:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

4. Վարչության անդամ – Իրավաբանական վարչության ղեկավար՝ Հարություն Զադրյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները	Պատասխանատու է կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպության Վարչության և Տնօրենների խորհրդին համապարփակ իրավաբանական և ռազմավարական խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև կազմակերպության ընդհանուր իրավական ռիսկի կառավարման համար: Իրավաբանական վարչության ղեկավարը կազմակերպության Վարչության անդամ է, ուստիև մասնակցում է տվյալ մարմնի կողմից իրականացվող բոլոր քննարկումներին և որոշումներին: Իրավաբանական վարչության ղեկավարը երկակի դեր ունի՝ բաղկացած հետևյալից՝ (I) որպես Իրավաբանական վարչության ղեկավար և Վարչության անդամ՝ նա կրում է հիմնական պատասխանատվություն Կազմակերպության իրավաբանական բաժնի գործառույթների համար և (II)
Պարտականությունները	

	որպես կորպորատիվ քարտուղար՝ նա կրում է պատասխանատվություն Կազմակերպության կորպորատիվ կառավարման համար:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

20/04/2023թ. դրությամբ Կազմակերպության ակտիվների 10 և ավելի տոկոսը կենտրոնացված չէ որևէ մասնաճյուղում:

Կազմակերպության և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև 20/04/2023թ. դրությամբ շահերի բախում չկա:

3.11. Կառավարման մարմինների գործունեությունը

Կազմակերպությունում գործում է Տնօրենների Խորհրդի, Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով, որի նպատակն է կարգավորել և վերահսկել Կազմակերպության ֆինանսական ռիսկերը, ներառյալ իրացվելիության (ֆինանսավորման) ռիսկը, տոկոսադրույքների ռիսկը և արտարժույթի ռիսկը: Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են նաև վարկային ռիսկը, վարկավորման ռիսկը և գործառնական ռիսկն այնքանով, որքանով դրանք ազդում են ֆինանսական ռիսկերի գնահատման և դրան առնչվող գործողությունների վրա: Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը գնահատում է նաև և խորհուրդներ է տրամադրում կապիտալի կառուցվածքին վերաբերող որոշումների շուրջ և ռիսկի կառավարման գործողությունների շրջանակում վերահսկում է կապիտալի բավարարությունը:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերը կազմակերպվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Կազմակերպության Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կազմը ներկայացված է ստորև.

Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Իրավասություններն ու պարտականությունները	Հանձնաժողովի գործունեությունից դուրս հանձնաժողովի անդամի ծավալած գործունեությունը
Զարլաշտ Վարդակ	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը,	ՖԻՆՔԱ Իմփեքթ Ֆայնենսի փոխնախագահ, տարածաշրջանի ղեկավար

	անդամ	հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	
Ջասթին Վարրեն	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը, հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	ՖԻՆՔԱ Իմփեքթ Ֆայնենսի Կապիտալ շուկաների խմբի Պարտքի և Կապիտալի ներգարավման ղեկավարի ժ/պ
Գևորգ Տեր-Հովհաննիսյան	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը, հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	ՖԻՆՔԱ Իմփեքթ Ֆայնենսի Գանձապետական ծառայությունների տնօրեն
Սթիվեն Մայքլ Հասս	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նախագահ	Կազմակերպում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի աշխատանքները, գումարում է հանձնաժողովի նիստերն ու նախագահում է դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը:	Կազմակերպության Գլխավոր տնօրեն
Անուշ Պետրոսյան	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը, հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	Կազմակերպության Գլխավոր ֆինանսական տնօրեն/ Գլխավոր հաշվապահ

Թողարկողի գլխավոր հաշվապահը

Կազմակերպության գլխավոր հաշվապահն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները և ի պաշտոնե հանդիսանում է Վարչության անդամ:

Կազմակերպության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին

առանց որևէ սահմանափակումների: Չնայած վերոգրյալին, վաճառքի և/կամ օտարման համար առաջարկվող բաժնետոմսերի («Առաջարկվող բաժնետոմսեր») նկատմամբ սեփականության իրավունքների որևէ վաճառք կամ օտարում չի կարող իրականացվել, եթե բոլոր մյուս Բաժնետերերը կամ Վարկային կազմակերպությունը սույն Հոդվածի 7.2 կետի համաձայն չեն իրականացրել Առաջարկվող բաժնետոմսերը ձեռք բերելու՝ նախապատվության իրավունքը: Բաժնետոմսերի ցանկացած օտարում ուժի մեջ է մտնում Վարկային կազմակերպության Բաժնետերերի ռեեստրում այդ մասին գրառում կատարելուց հետո: Սույն հոդվածի 2-րդ մասի դրույթները տարածվում են նաև բաժնետոմսերի գրավադրման և հետագայում դրանց իրացման նկատմամբ՝ սակայն պայմանով, որ գրավառուն իրավասու է պահպանել այդ բաժնետոմսերի նկատմամբ իր սեփականության իրավունքը՝ դրանք որևէ երրորդ անձի օտարելու փոխարեն:

rights to the shares offered for sale and/or transfer (the "Offered Shares") may be effected unless all other Shareholders or the Credit Organization exercise their preemption rights to purchase the Offered Shares under and in conformity with paragraph 7.2 of this Article. Any share transfer shall become effective after the entry thereof is made in the Register of Shareholders of the Credit Organization. The provisions of paragraph 2 of the present article shall also apply to the pledge of shares and their subsequent execution; however, the pledgee may reserve its title to such shares instead of alienating them to any third person.

7.2. Նախապատվության իրավունքները:
Բաժնետերերից յուրաքանչյուրը և Վարկային կազմակերպությունն ունեն Առաջարկվող բաժնետոմսերը գնելու նախապատվության իրավունքներ Հայաստանի օրենսդրության համաձայն, հետևյալ կարգով.

7.2. Preemption Rights.
Each of the Shareholders and the Credit Organization shall have preemption rights to purchase Offered Shares in accordance with the Armenian Law as well as in conformity with the following procedure:

ա) Իր բոլոր բաժնետոմսերը կամ դրանց մի մասը վաճառելու կամ այլ կերպ օտարելու մտադրություն ունեցող Բաժնետերը («Վաճառող բաժնետեր») տվյալ առաջարկի գնի, պայմանների և դրույթների մասին գրավոր ծանուցում է («Վաճառքի ծանուցագիր») մյուս Բաժնետերերին, որոնք իրենց բաժնետոմսերը չեն վաճառում («Չվաճառող բաժնետերեր»):

a) the Shareholder willing to sell or otherwise transfer all or portion of his shares (the "Selling Shareholder") shall notify in writing (the "Sale Notice") other Shareholders which are not selling their shares (the "Non-Selling Shareholders") and the Credit Organization of a price, terms and conditions of such offer;

բ) Վաճառքի ծանուցագիրը ստանալուց հետո Չվաճառող բաժնետերերը և Վարկային կազմակերպությունը կարող են իրականացնել Վաճառող

b) after they receive the Sale Notice, the Non-Selling Shareholders and the Credit Organization may exercise their preemption rights to purchase all or portion of the Offered Shares from the Selling Shareholder (the

բաժնետիրոջից Առաջարկվող բաժնետոմսերն ամբողջությամբ կամ դրանց մի մասը ձեռք բերելու՝ իրենց նախապատվության իրավունքները («Նախապատվության իրավունք»): Եթե մեկից ավելի Չվաճառող բաժնետերեր ցանկանում են իրականացնել իրենց Նախապատվության իրավունքը, ապա նրանք կարող են համամասնությամբ (այսինքն, Չվաճառող բաժնետերերին արդեն պատկանող Բաժնետերերի թվաքանակին համամասնորեն) ձեռք բերել վաճառքի համար առաջարկվող բաժնետոմսերը:

"Preemption Right"). If more than one Non-Selling Shareholder wish to exercise their Preemption Right, they can purshare shares offered for sale on a pro rata basis (in proportion to the number of Shares held by such Non-Selling Shareholders);

գ) Չվաճառող բաժնետերերը կարող են իրենց Նախապատվության իրավունքներն իրականացնել՝ Վաճառքի ծանուցագիրը ստանալուց հետո երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում («Կատարման ժամկետ») Վաճառող բաժնետիրոջը և Վարկային կազմակերպությանն ուղարկելով առաջարկի ընդունման գրավոր ծանուցում, որի մեջ պետք է նշված լինի, թե Առաջարկվող բաժնետոմսերից քանիսն է մտադիր ձեռք բերել Չվաճառող բաժնետերը («Ընդունման ծանուցագիր»):

c) the Non-Selling Shareholders may exercise their Preemption Rights by sending written notice of acceptance of such offer, stating the number of the Offered Shares that the Non-Selling Shareholder wishes to purchase (the "Acceptance Notice"), to the Selling Shareholder and the Credit Organization within thirty (30) calendar days after receipt of the Sale Notice (the "Performance Period");

դ) Եթե Չվաճառող բաժնետերերը հրաժարվում են իրենց նախապատվության իրավունքից կամ Կատարման ժամկետի ընթացքում Ընդունման ծանուցագիր չեն ներկայացնում Վաճառող բաժնետիրոջը, ապա Վաճառող բաժնետերը կարող է, նախապես ստանալով Չվաճառող բաժնետերերի համաձայնությունը, Առաջարկվող բաժնետոմսերը վաճառել կամ այլ կերպ օտարել երրորդ անձանց՝ վերջիններիս հետ համաձայնեցված պայմաններով, սակայն պայմանով, որ երրորդ անձին առաջարկվող գինը չպետք է ավելի ցածր լինի, քան Չվաճառող բաժնետերերին առաջարկված գինը, և որ գնորդը պետք է լինի վարկարժան, հասարակայնորեն պատասխանատու

d) if the Non-Selling Shareholders waive their preemption right or fail to furnish the Acceptance Notice to the Selling Shareholder within the Performance Period, the Selling Shareholder may sell or otherwise transfer the Offered Shares with prior approval of Non-Selling Shareholders to third persons on the terms as agreed with such third person; provided, that the offer price may not be less than such price offered to the Non-Selling Shareholders, and that the buyer is a creditworthy, socially responsible investor with a good reputation and like minded social objectives consistent with the mission of the founders and the Credit Organization.

ներդրող, բարձր հեղինակությամբ, և Վարկային կազմակերպության ու վերջինիս հիմնադիրների առաքելությանը համահունչ սոցիալական նպատակներով:

Սույն հոդվածը չի տարածվում այն դեպքերի նկատմամբ, երբ բաժնետոմսերն օտարվում են Բաժնետիրոջից (1) որևէ փոխկապակցված անձի, որը Բաժնետիրոջ կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն հսկվող, և/կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տվյալ Բաժնետիրոջը պատկանող կազմակերպություն է («Փոխկապակցված անձ»), (2) Բաժնետիրոջ տնօրենի, պաշտոնատար անձի կամ աշխատակցի, կամ (3) Փոխկապակցված անձի տնօրենի, պաշտոնատար անձի կամ աշխատակցի:

This Article shall not apply to transfers of shares from a Shareholder to (1) an affiliated entity, such entity being an organization that is either directly or indirectly controlled and/or owned by a Shareholder ("Affiliated Entity") (2) a director, officer, or employee of a Shareholder, or (3) a director, officer, or employee of an Affiliated Entity.

ՀՈԴՎԱԾ 8.
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Վարկային կազմակերպության բաժնետերերը:
Վարկային կազմակերպության Բաժնետերերն այն ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնք Հայաստանի օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ նախատեսված կարգով սեփականության իրավունքով ձեռք են բերել Վարկային կազմակերպության բաժնետոմսեր:

Վարկային կազմակերպությունը պետք է ունենա ոչ ավելի, քան 49 Բաժնետեր: Եթե Բաժնետերերի թիվը 49-ից ավել է դարձել, ապա Վարկային կազմակերպությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաց բաժնետիրական ընկերության կամ համապատասխանաբար կրճատի իր Բաժնետերերի թիվը: Հակառակ դեպքում Վարկային կազմակերպությունը ենթակա է լուծարման դատական կարգով:

8.2. Բաժնետերերի իրավունքները:
Վարկային կազմակերպության

ARTICLE 8.
SHAREHOLDERS OF THE CREDIT ORGANIZATION, THEIR RIGHTS AND OBLIGATIONS

8.1. Shareholders of the Credit Organization.
The Shareholders of the Credit Organization shall be individuals and legal entities having acquired shares of the Credit Organization by virtue of ownership rights in an order prescribed by the Armenian Law and this Charter.

The Credit Organization shall not have more than 49 Shareholders. If there are more than 49, the Credit Organization shall be reorganized into an open joint-stock company or the number of the Shareholders shall be reduced within one year. Otherwise the Credit Organization shall be liquidated by court.

8.2. Shareholders' rights.
Shareholders of the Credit Organization shall have

Բաժնետերերն ունեն հետևյալ իրավունքները.

the following rights:

ա) Սույն Կանոնադրությանը համապատասխան մասնակցել Վարկային կազմակերպության կառավարմանը,

a) to participate in management of the Credit Organization pursuant to this Charter;

բ) Անձամբ կամ լիազոր ներկայացուցչի միջոցով մասնակցել Վարկային կազմակերպության Բաժնետերերի ժողովին՝ վերջինիս ընթացքում քննարկվող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

b) to participate in the Shareholders' Meeting of the Credit Organization in person or by proxy with the right to vote on all issues discussed during the meeting;

գ) Ստանալ Բաժնետերերի ժողովների մասին գրավոր ծանուցում և այդ ժողովների համար առաջարկվող օրակարգը,

c) to receive a written notification of the Shareholders' Meetings and the proposed agenda for such meetings;

դ) Մասնակցել Վարկային կազմակերպության գործունեության կառավարմանը,

d) to participate in the management of the activities of the Credit Organization;

ե) Մասնակցել Վարկային կազմակերպության շահույթի բաշխմանը,

e) to participate in the distribution of profits of the Credit Organization;

զ) Հայաստանի օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ նախատեսված կարգով իրականացնել նախապատվության իրավունք Վարկային կազմակերպության կողմից լրացուցիչ թողարկված բաժնետոմսերի և Բաժնետիրոջ/Բաժնետերերի կողմից վաճառքի համար առաջարկվող՝ Վարկային կազմակերպության բաժնետոմսերի նկատմամբ,

f) to exercise preemptive right with respect to shares additionally issued by the Credit Organization and shares of the Credit Organization offered for sale by other Shareholder/s in accordance with the Armenian Law and procedures specified in this Charter;

է) Առաջարկներ անել Վարկային կազմակերպության Բաժնետերերի ժողովի ընթացքում,

g) to make proposals at the Shareholders' Meeting of the Credit Organization;

ը) Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված կարգով դիմել դատարան և բողոքարկել Բաժնետերերի ժողովի կամ Տնօրենների խորհրդի կողմից ընդունված որոշումները,

h) to seek court protection and challenge decisions adopted by the Shareholders' Meeting or the Board of Directors according to the procedure prescribed by the Armenian Law;

թ) Վարկային կազմակերպության լուծարման դեպքում ստանալ Վարկային կազմակերպության զույքի՝ տվյալ Բաժնետիրոջը պատկանող ամբողջությամբ վճարված սովորական բաժետոմսերի քանակին համապատասխանող մասը կամ արժեքը, պարտատերերի և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի հետ վերջնահաշվարկ կատարելուց հետո,

i) should the Credit Organization be liquidated, to receive part of the property of the Credit Organization or its value corresponding to the number of fully paid-in common shares held by such Shareholder, after the settlement with the creditors and preferred shareholders;

ժ) Ընտրել Վարկային կազմակերպության ընտրովի մարմինների անդամների և ընտրվել որպես այս մարմինների անդամ,

j) to elect members and be elected a member of elective bodies of the Credit Organization;

ժա) Վարկային կազմակերպության բարձրագույն և այլ մարմինների քննարկմանը ներկայացնել առաջարկներ,

k) to submit proposals for discussion by the supreme and other bodies of the Credit Organization;

ժբ) Ստանալ տեղեկություններ Վարկային կազմակերպության գործունեության մասին, այդ թվում՝ վերջինիս աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները, ծանոթանալ Վերստուգողի, Տնօրենների խորհրդի Աուդիտի և ռիսկի հանձնաժողովի (եթե այդպիսին ստեղծվում է) և արտաքին աուդիտորի հաշվետվություններին, հաշվապահական հաշվառման տեղեկություններին և Հայաստանի օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի:

l) to receive information on the activities of the Credit Organization including its audited financial statements, have access to reports of the Controller, the Audit and Risk Committee of the Board of Directors, if such is created, and External Auditor, accounting information, and other documentation as provided for under Armenian Law and this Charter.

Բաժնետերերի՝ այստեղ նշված իրավունքների ցանկը սպառիչ չէ: Բաժնետերերը կարող են իրականացնել նաև Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

The rights of the Shareholders stated herein are not exhaustive. Shareholders may exercise other rights as provided by the Armenian Law.

8.3. Բաժնետերերի պարտականությունները:
Վարկային կազմակերպության Բաժնետերերը պարտավոր են.

8.3. Shareholders' obligations:
Shareholders of the Credit Organization shall:

ա) Աջակցել Վարկային կազմակերպության գործունեությանը,

բ) Կատարել սույն Կանոնադրության և Բաժնետերերի ժողովի որոշումների պահանջները,

գ) Կատարել Վարկային կազմակերպության նկատմամբ ունեցած իր բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ գույքային մասնակցության հետ կապված պարտավորությունները, ինչպես նաև վճարել բաժնետոմսերի արժեքը սույն Կանոնադրությամբ և Բաժնետերերի ժողովի որոշմամբ սահմանված չափով, կարգով և եղանակով,

դ) Կատարել Վարկային կազմակերպության հետ կնքված բոլոր առանձին պայմանագրերով նախատեսված բոլոր պարտավորությունները՝ այդ պայմանագրերի դրույթներին և պայմաններին համապատասխան,

ե) Վարկային կազմակերպությանը ծանուցել բաժնետոմսերի ցանկացած օտարման կամ գրավադրման, կամ հասցեի ցանկացած փոփոխության մասին,

զ) Չհրապարակել որևէ Գաղտնի տեղեկություններ՝ սույնով նախատեսված իմաստով:

Վարկային կազմակերպության Բաժնետերերը կարող են ունենալ Հայաստանի օրենսդրությամբ և Վարկային կազմակերպության Բաժնետերերի ժողովի կողմից սասհմանված այլ պարտավորություններ:

8.4. Նշանակալից մասնակցությունը Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալում:

Անձն առանձին կամ իր հետ

a) support the activities of the Credit Organization;

b) comply with the provisions of this Charter and decisions of the Shareholders' Meeting;

c) execute all obligations to the Credit Organization, including those, connected with property participation, as well as pay the value of shares at the rate, in the order and manner as determined by this Charter and decision of the Shareholders' Meeting;

d) perform all obligations under any separate agreements entered into with the Credit Organization subject to the terms and conditions of such agreements;

e) notify the Credit Organization of any transfer or pledges of shares or any changes of address.

f) not disclose any Confidential Information, as defined herein.

Shareholders of the Credit Organization may have other obligations prescribed by Armenian Law and the Shareholders' Meeting of the Credit Organization.

8.4. Significant Participation in the Charter Capital of the Credit Organization.

A person individually or together with other persons related to him/her may, as a result of one or more transactions, acquire a significant

փոխկապակցված այլ անձանց հետ միասին իրավասու է մեկ կամ մի քանի գործարքների արդյունքում Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալում ձեռք բերել նշանակալից մասնակցություն, որով Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 10 և ավելի տոկոս, միայն նախապես այդ նպատակով ստանալով ՀՀ ԿԲ-ի համաձայնությունը:

participation in the Charter Capital of the Credit Organization that is more than 10% of shares of the Credit Organization only with the prior consent of the CBA.

ՀՈԴՎԱԾ 9.
ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ: ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐ:

9.1. Շահութաբաժիններ:

Զուտ շահույթը, որը մնում է բոլոր հարկերը վճարելուց և շահույթը ստանալու համար անհրաժեշտորեն կատարված այլ ծախսերը կրելուց հետո, հանդիսանում է Վարկային կազմակերպության սեփականությունը, որը Բաժնետերերի ժողովի որոշմամբ շահութաբաժինների տեսքով բաշխվում է Բաժնետերերի միջև, բացառությամբ երբ Բաժնետերերի ժողովը որոշում է այդ շահույթը վերներդնել այլ գործունեության կամ ծրագրերի մեջ:

Շահութաբաժինները հայտարարվում և վճարվում են եռամսյակը, կիսամյակը (միջանկյալ) կամ տարին մեկ անգամ՝ սույն Կանոնադրության և Հայաստանի օրենսդրության համաձայն: Վարկային կազմակերպության կողմից վճարման ենթակա բոլոր շահութաբաժինները բաշխվում են Բաժնետերերի միջև վերջիններիս պատկանող Բաժնետոմսերի քանակին համամասն: Շահութաբաժիններ վճարելու, դրանց չափի և վճարման ձևի մասին որոշումը Տնօրենների խորհրդի ներկայացմամբ կայացվում է Բաժնետերերի ժողովի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

Շահութաբաժինները վճարվում են կանխիկով, եթե Բաժնետերերի որոշմամբ ուղղակիորեն այլ բան չի նախատեսվում: Շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Բաժնետերերի որոշմամբ: Օտարերկրացի Բաժնետերերն իրավունք

ARTICLE 9.
ALLOCATION OF PROFITS. DIVIDENDS.

9.1. Dividends.

The net profit which is left over after the payment of all taxes and other necessary expenses made in receipt of the profit is the property of the Credit Organization which by a decision of the Shareholders' Meeting shall be distributed as dividends among the Shareholders unless the Shareholders Meeting decides to reinvest such profit into other activities or ventures.

Dividends may be declared and paid quarterly, semi-annually (interim) or annually in accordance with the provisions of this Charter and the Armenian Law. All dividends payable by the Credit Organization shall be distributed among Shareholders in proportion to the number of Shares held by such Shareholders. A decision on payment of dividends, their size and form of payment, shall be made by the Shareholders' Meeting by a majority vote upon the recommendation of the Board of Directors.

Dividends shall be paid in cash unless otherwise specified by resolution of the Shareholders.The date of payment of dividends shall be set in the resolution of the Shareholders. Foreign Shareholders shall have the right to repatriate dividends in freely convertible currency without any restrictions in accordance with Armenian Law.

ունեն շահութաբաժինները վերահայրենականացնել ազատ փոխարկելի արժույթով, առանց որևէ սահմանափակումների, Հայաստանի օրենսդրության համաձայն:

9.2. Շահութաբաժինների չվճարումը:
Վարկային կազմակերպությունն իրավունք չունի հայտարարել և վճարել շահութաբաժիններ, եթե շահութաբաժինների վճարումից անմիջապես հետո.

ա) Վարկային կազմակերպությունն ի վիճակի չի լինի բավարարել իր պարտավորությունները, որոնք կծագեն Վարկային կազմակերպության սովորական գործարար գործունեության ընթացքում,

բ) Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալը լրիվ չի վճարվել,

գ) Վարկային կազմակերպությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը՝ Օրենքի 58-րդ հոդվածի համաձայն,

դ) Շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Վարկային կազմակերպության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով, և

ե) Վարկային կազմակերպության զուտ ակտիվների արժեքը պակաս է Կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

9.2. Non-Payment of Dividends.
The Credit Organization may not declare and pay dividends if immediately after the payment of dividends:

a) the Credit Organization will not be able to satisfy its liabilities as they become due in the ordinary course of business;

b) the Credit Organization's Charter Capital has not been paid up;

c) the Credit Organization has not bought back all the shares under the provision of Article 58 of the Law;

d) as of the time of adopting a decision on payment of dividends, the condition of the Credit Organization is consistent with the insolvency (bankruptcy) criteria stipulated by law, or the Credit Organization will become insolvent (bankrupt) due to the payment of dividends; and

e) the Credit Organization's net assets are less than its charter capital, or they will become less as a result of dividend payment.

ՀՈԴՎԱԾ 10.
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10.1. Վարկային կազմակերպությունն ունի

ARTICLE 10.
MANAGEMENT OF THE CREDIT ORGANIZATION

10.1. The Credit Organization shall have the

կառավարման հետևյալ կառուցվածքը.

ա) Բաժնետերերի ժողով,
բ) Տնօրենների խորհուրդ,
գ) Վարչություն,
դ) Գլխավոր տնօրեն:

Վարկային կազմակերպության Բաժնետերերի ժողովը Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Վարկային կազմակերպության Տնօրենների խորհուրդն ընտրվում է Բաժնետերերի որոշմամբ՝ սույն Կանոնադրությանը համապատասխան: Վարչությունը և Գլխավոր տնօրենը կառավարում են Վարկային կազմակերպության առօրյա գործունեությունը:

following management structure:

a) Shareholders' Meeting
b) Board of Directors
c) Executive Board;
d) General Director.

The highest managing body of the Credit Organization shall be the Shareholders' Meeting of the Credit Organization. The Board of Directors of the Credit Organization shall be elected by resolution of the Shareholders in accordance with this Charter. The Executive Board and the General Director shall manage the day-to-day operations of the Credit Organization.

ՀՈԴՎԱԾ 11.
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Բաժնետերերի ժողովը («Ժողով») Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Բոլոր Բաժնետերերն իրավասու են մասնակցել Բաժնետերերի ժողովին: Տնօրենների խորհրդի և Վարչության անդամները կարող են Բաժնետերերի հրավերով մասնակցել Ժողովին և ելույթներ ունենալ Ժողովի ընթացքում:

11.1. Բաժնետերերի տարեկան ժողովը:
Բաժնետերերի ժողովը կարող է լինել երկու տեսակի՝ տարեկան և արտահերթ: Բաժնետերերի տարեկան ժողովը գումարվում է տարին մեկ անգամ՝ նախքան հուլիսի 1-ը: Ժողովի կոնկրետ ամսաթիվը, ժամը և վայրը նշանակվում են Տնօրենների խորհրդի որոշմամբ: Վարկային կազմակերպության Բաժնետոմսերի առաջին տարեկան ժողովը գումարվում է գործունեության առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

11.2. Բաժնետերերի արտահերթ ժողովը:
Բաժնետերերի արտահերթ ժողովը գումարվում է Տնօրենների խորհրդի կողմից՝

ARTICLE 11.
THE SHAREHOLDERS' MEETING

The Shareholders' Meeting (the "Meeting") is the supreme governing body of the Credit Organization**.** All Shareholders may participate in the Shareholders' Meeting. Members of the Board of Directors and Executive Board may participate and take the floor at the invitation of the Shareholders.

11.1. Annual Shareholders' Meeting.
Shareholders' Meeting may be of two types: annual and extraordinary. The Annual Shareholders' Meeting shall be convened once a year prior to July 1. The exact date, time and place of the Meeting shall be fixed by the Board of Directors. The first Annual Shareholders' Meeting of the Credit Organization shall be convened within six months after the end of the first financial year.

11.2. Extraordinary Shareholders' Meeting.
The Extraordinary Shareholders' Meetings shall be convened by the Board of Directors on its own initiative or upon a request of the Controller or

սեփական նախաձեռնությամբ, կամ Վերստուգողի կամ Տնօրենների խորհրդի Աուդիտի և ռիսկի հանձնաժողովի (եթե այդպիսին ստեղծվում է) պահանջով, եթե դա են պահանջում Վարկային կազմակերպության շահերը: Քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10%-ի տեր Բաժնետերը/Բաժնետերերն իրավասու են պահանջել, որպեսզի հրավիրվի Արտահերթ ժողով: Արտահերթ ժողով անցկացնելու պահանջը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում Վարկային կազմակերպության Տնօրենների խորհուրդը պարտավոր է որոշում կայացնել այդ ժողովն անցկացնելու կամ դրա անցկացումը մերժելու մասին: Վարկային կազմակերպության Տնօրենների խորհուրդն իրավասու է մերժել Արտահերթ ժողովի անցկացման պահանջը միայն Օրենքով նախատեսված դեպքերում: Արտահերթ ժողով անցկացնելու կարգը որոշվում է Վարկային կազմակերպության Տնօրենների խորհրդի կողմից Հայաստանի օրենսդրությանը համապատասխան:

Եթե Վարկային կազմակերպության Տնօրենների խորհուրդը սույնով նախատեսված ժամկետում որոշում չի կայացնում Արտահերթ ժողով անցկացնելու մասին, կամ որոշում է կայացնում Ժողովի անցկացումը մերժելու մասին, ապա Արտահերթ ժողով կարող է անցկացվել պահանջը ներկայացրած անձի/անձանց կողմից՝ Վարկային կազմակերպության հաշվին:

Audit and Risk Committee of the Board of Directors, if such is created, if the interests of the Credit Organization require so. The Shareholder(s) owning at least 10% of the voting shares shall have the right to request calling the Extraordinary Meeting. Within 10 days after the receipt of the request to hold an Extraordinary Meeting the Board of Directors of the Credit Organization shall make decision on holding or on refusing to hold such a meeting. The Board of Directors of the Credit Organization shall have the right to refuse the request on holding an Extraordinary Meeting only in the cases prescribed by the Law. The order of holding an Extraordinary Meeting shall be determined by the Board of Directors of the Credit Organization in accordance with the Armenian Law.

In the event the Board of Directors of the Credit Organization does not make a decision on holding an Extraordinary Meeting within the period specified herein or makes a decision on refusing to hold a Meeting, the Extraordinary Meeting may be held by the person/persons having submitted the request at the expense of the Credit Organization.

11.3. Բաժնետերերի ցուցակը:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բաժնետերերի ցուցակը կազմվում է Վարկային կազմակերպության Տնօրենների խորհրդի կողմից որոշված ամսաթվով՝ Բաժնետերերի ռեեստրում առկա տվյալների համաձայն:

11.3. Shareholders' list.

The list of the Shareholders having the right to participate in the Meeting shall be made as of the date determined by the Board of Directors of the Credit Organization in accordance with the data provided in the Shareholders Register.

11.4. Ժողովի մասին ծանուցումը:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր Բաժնետերերին տրվում է գրավոր ծանուցում Բաժնետերերի ժողովի մասին ֆաքսիմիլով, ֆաքսով, փոստով, սուրհանդակի կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ պայմանով, որ այդ էլեկտրոնային

11.4. Notice of the Meeting.

Written notice of the Shareholders' Meeting shall be provided to all Shareholders entitled to attend the Meeting by facsimile, fax, mail, courier or electronic mail provided that receipt of such electronic mail is confirmed by the recipient. The notice of the Annual Sharheolders' Meeting shall be provided not later than 10 days in advance of

փոստի ստացումը հավաստված լինի ստացողի կողմից: Բաժնետերերի տարեկան ժողովի մասին ծանուցումը պետք է տրվի Ժողովի օրվանից առնվազն 10 օր առաջ: Բաժնետերերի արտահերթ ժողովի մասին ծանուցումը տրվում է Բաժնետերերին ողջամտորեն հնարավորին չափ շուտ: Ծանուցումը պետք է ներառի Ժողովի անցկացման ամսաթիվը, վայրը և առաջարկվող օրակարգը:

the date of the Meeting; the notice of the Extraordinary Shareholders' Meeting shall be provided to the Shareholders as far in advance as reasonably possible. The notice shall include the date and place of the Meeting and its proposed agenda.

11.5. Օրակարգը:

Բաժնետերերի ժողովը չի կարող որոշումներ կայացնել Ժողովի օրակարգում չներառված հարցերի վերաբերյալ: Ժողովի օրակարգը հաստատվում է Խորհրդի կողմից՝ հաշվի առնելով Օրենքով սահմանված կարգով տարբեր Բաժնետերերի արած առաջարկությունները:

Վարկային կազմակերպության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի տեր ցանկացած Բաժնետեր իրավասու է ներկայացնել իր առաջարկությունները Բաժնետերերի ժողովի օրակարգի մասին, ինչպես նաև առաջադրել Տնօրենների խորհրդի անդամության և Վերստուգողի թեկնածություններ Ժողովի գումարից ոչ ուշ, քան 30 օր առաջ: Տնօրենների խորհուրդը Հայաստանի օրենսդրության համաձայն քննարկում և որոշում է, թե արդյոք առաջարկությունները պետք է ներառվեն օրակարգի, կամ առաջադրումները՝ թեկնածուների ցանկի մեջ:

11.5. Agenda.

The Shareholders' Meeting shall not make decisions on the issues not included in the Meeting agenda. The agenda of the Meeting shall be approved by the Board of Directors, taking into consideration the propositions made by different Shareholders in the order prescribed by the Law.

Any Shareholder who owns at least 2 percent of the voting shares of the Credit Organization shall have the right to submit his/her proposals to the agenda of the Shareholders' Meeting as well as propose candidates for the members of the Board of Directors and the Controller position not later than 30 days prior to the Meeting convocation. The Board of Directors shall discuss and decide in accordance with the Armenian Law whether it will or will not incorporate the proposals in the agenda or the list of candidates.

11.6. Ներկայացուցիչը:

Եթե Բաժնետերը մտադիր չէ մասնակցել Բաժնետերերի ժողովին, ապա նա կարող է գրավոր լիազորել մեկ այլ Բաժնետիրոջ կամ որևէ երրորդ անձի՝ Բաժնետերերի ժողովում հանդես գալու որպես Բաժնետիրոջ ներկայացուցիչ և քվեարկելու այդ Բաժնետիրոջ անունից:

11.6. Proxy.

If a Shareholder does not plan to participate in a Shareholders' Meeting, such Shareholder may issue a written proxy to another Shareholder or a third person to be the Shareholder's representative at the Shareholders' Meeting and to vote on the Shareholder's behalf.

11.7. Քվորում:

Ժողովն իրավասու է որոշումներ կայացնել (առկա է քվորում), եթե Ժողովին մասնակցում են Վարկային կազմակերպության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ

11.7. Quorum.

The Meeting is competent to transact business (the quorum is available) if Shareholders (their representatives) representing more than 50% of the voting shares of the Credit Organization are participating in the Meeting. Separate lists of the participants of the Meeting shall be prepared

տիրապետում են Վարկային կազմակերպության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին: Եթե Վարկային կազմակերպության Ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար կազմվում են Ժողովի մասնակիցների առանձին ցուցակներ:
Եթե Վարկային կազմակերպությունն ունի միայն մեկ Բաժնետեր, ապա Բաժնետերերի ժողովի իրավասությանը վերապահված խնդիրների վերաբերյալ որոշումները կայացվում են այդ՝ միակ Բաժնետիրոջ կողմից, գրավոր, առանց Ժողով հրավիրելու և այդ մասին ծանուցելու:

should the Meeting of the Credit Organization last more than one day.
In the event that the Credit Organization has a sole Shareholder, decisions on the matters within the competence of the Shareholders' Meeting shall be made by the sole Shareholder in writing, without calling a Meeting and providing a notice thereof.

11.8. Բաժնետերերի ժողովի իրավասությունները:
Բաժնետերերի ժողովի իրավասությանն են պատկանում.

ա) Վարկային կազմակերպության Կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

բ) Վարկային կազմակերպության վերակազմակերպման մասին որոշումներ կայացնելը,

գ) Վարկային կազմակերպության լուծարման մասին որոշումներ կայացնելը, լուծարման հանձնաժողով նշանակելը, լուծարման պլանի, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

դ) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ե) Թողարկված բաժնետոեմսերի առավելագույն քանակի որոշումը,

զ) Հայտարարված բաժնետոմսերի քանակի, անվանական արժեքի, տեսակների, և այդ բաժնետոմսերի

11.8. Competence of the Shareholders' Meeting.
The Shareholders' Meeting has competence to:

a) approve the Charter of the Credit Organization, approve revised and restated Charter;

b) make decisions on the reorganization of the Credit Organization;

c) make decisions on the liquidation of the Credit Organization, appoint a liquidation commission, approve the liquidation plan, the final, interim, and liquidation balance sheets;

d) determine the number of the Board members, elect them, and terminate their powers prior to the expiration of their term;

e) determine the maximum number of issued shares;

f) determine the number, nominal value, type of the authorized shares and the rights vested in these shares;

սեփականատերերին վերապահված իրավունքների որոշումը,

է) Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով Վարկային կազմակերպության Կանոնադրական կապիտալի ավելացումը,

g) increase the Charter Capital of the Credit Organization by increasing the nominal value of shares or issuing additional shares;

ը) Վարկային կազմակերպության բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, ընդհանուր քանակի կրճատման նպատակով Վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոեմսերի ձեռքբերման, ինչպես նաև Վարկային կազմակերպության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

h) decrease the Charter Capital of the Credit Organization by decreasing the nominal value of shares, by purchasing by the Credit Organization part of the shares in order to decrease their total number, and subsequent cancellation of the shares purchased by the Credit Organization;

թ) Վարկային կազմակերպության Վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

i) elect and remove the Controller;

ժ) Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենի և Վարչության անդամների վարձատրության չափի և պայմանների որոշումը,

j) determine the terms and conditions of remuneration and compensation for the General Director and members of the Executive Board of the Credit Organization;

ժա) Արտաքին աուդիտորի հաստատումը,

k) approve the external auditor;

ժբ) Վարկային կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը, Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության տարեկան արդյունքների հաստատումը,

l) approve annual reports, accounting balance sheets, allocation of profits and losses of the Credit Organization, adopt decisions on payment of dividends and define the size thereof, approve annual results of the operations of the branch and representative offices of the Credit Organization;

ժզ) Բաժնետերերի ժողովի անցկացման կարգի որոշումը,

m) determine procedures for holding the Shareholders' Meeting;

ժդ) Տնօրենների խորհրդի ներկայացմամբ՝ առաջին եռամսյակի, կիսամյակի, ֆինանսական տարվա առաջին ինը ամիսների արդյունքների հիման վրա շահութաբաժինների վճարման մասին որոշման կայացումը, ինչպես նաև դրանց գումարի, վճարման ձևի և ամսաթվի որոշումը,

n) upon recommendation of the Board of Directors decide on dividends payment upon the results of first quarter, half year, nine months of the financial year, as well as their amount, form and date of payment;

ժե) Օրենքով սահմանված կարգով խոշոր գործարքների կնքման թույլատրումը,

o) authorize the conclusion of large-scale transactions and related party transactions as provided by the Law;

ժզ) Օրենքով սահմանված դեպքերում Վարկային կազմակերպության թողարկած բաժնետոմսերի ձեռքբերման թույլատրումը,

p) authorize purchase of issued shares by the Credit Organization in cases provided by the Law;

ժէ) Տնօրենների խորհրդի ներկայացմամբ՝ բաժնետոմսերի համախմբման կամ բաժանման մասին որոշումը,

q) upon recommendation of the Board of Directors decide on split or consolidation of shares;

ժը) Վարկային կազմակերպության Վարչության կազմի հաստատումը,

r) determine composition of the Executive Board of the Credit Organization;

ժթ) Հայաստանի օրենսդրությամբ Ժողովին վերապահված այլ իրավասությունների իրականացումը:

s) exercise other powers granted to the Meeting by the Armenian Law.

11.9. Քվեարկությունը:

Քվեարկությունը Բաժնետերերի ժողովում իրականացվում է «մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով: Բաժնետերերի ժողովի որոշումները, բացառությամբ Հայաստանի օրենսդրությամբ կամ սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերի, կայացվում են Բաժնետերերի ժողովին մասնակցող Բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

Վերոհիշյալ «ա», «բ», «ե» և «ժե» կետերով նախատեսված որոշումները կայացվում են Ժողովին մասնակցող Բաժնետերերի ձայների ¾-ի (երեք քառորդի) մեծամասնությամբ:

Վարկային կազմակերպության լուծարման և Վարկային կազմակերպության

11.9. Voting.

Voting at the Shareholders' Meeting is based on the principle "one share – one vote". Resolutions of the Shareholders' Meeting are, except as otherwise provided by the Armenian Law or this Charter, passed by a simple majority of votes belonging to the Shareholders attending the Shareholders' Meeting.

Resolutions referred to in Clauses a, b, e and o above, shall be passed by the majority of ¾ (three fourths) of votes of the Shareholders participating in the Meeting.

Decisions on liquidation of the Credit Organization and decreasing the Charter Capital of the Credit Organization by any means shall be passed by the majority of ¾ (three fourths) of votes of the Shareholders participating in the Meeting, but not less than 2/3 (two thirds) of all voting shares of the Credit Organization.

Կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշումները ցանկացած պարագայում պետք է ընդունվեն Ժողովին մասնակցող Բաժնետերերի ձայների ¾-ի (երեք քառորդի) մեծամասնությամբ, որը, սակայն, չպետք է պակաս լինի Վարկային կազմակերպության բոլոր քվեարկող բաժնետոմսերի 2/3-ից (երկու երրորդից):

11.10. Բաժնետերերի որոշումների կայացումն առանց ժողով անցկացնելու:

Բաժնետերերի ժողովի որոշումներ կարող են կայացվել առանց ժողով (օրակարգը քննարկելու և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով բաժնետերերի համատեղ հանդիպում) անցկացնելու առանց նախնական ծանուցման՝ հեռակա քվեարկությամբ: Հեռակա քվեարկությամբ կայացված որոշումներն իրավական ուժ ունեն, եթե քվեարկությանը մասնակցել են քվեարկող բաժնետոմսերի տերերի 50%-ից ավելին: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ հեռակա կարգով կայացվող որոշման նախագիծը ներկայացվում է բաժնետերերին և իրավական ուժ ստանում որոշման ստորագրման օրը կամ որոշմամբ սահմանված ավելի ուշ ժամկետում:Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն առնվազն 30 օր առաջ:

11.11. Արձանագրությունը և քվեարկության արդյունքները:

Բաժնետերերի ժողովը նախագահում է Տնօրենների խորհրդի Նախագահը, իսկ վերջինիս կողմից ժողովը նախագահելու անհնարինության դեպքում՝ այդ նպատակով Բաժնետերերի ժողովի կողմից նշանակված անձը: Աուդիտի և ռիսկի հանձնաժողովի այն անդամները, Վերստուգողը և Տնօրենների խորհրդի այն անդամները, որոնք Բաժնետերեր չեն, Գլխավոր տնօրենը, Գլխավոր տնօրենի տեղակալը և Վարչության այլ անդամները կարող են Բաժնետերերի պահանջով մասնակցել Ժողովին:

Բաժնետերերի ժողովի արձանագրությունը կազմվում է Ժողովի ավարտից հետո 5 օրվա ընթացքում՝ առնվազն երկու բնօրինակով,

11.10. Shareholder resolutions without holding a meeting.

Resolutions of the Shareholders' Meeting may be made without holding a meeting (joint session of shareholders for discussion of agenda and resolving issues put to vote) through a remote voting. Decisions adopted by means of a remote vote shall have legal effect if more than 50% of the owners of the voting shares participated in the vote. In a remote voting the draft resolution of the Shareholders' Meeting shall be provided to the shareholders and will take effect from the moment of signature or later as foreseen by the resolution. In a remote voting the voting ballots shall be provided to the shareholders at least 30 days in advance.

11.11. Minutes and voting results.

The Shareholders' Meeting shall be chaired by the Chairman of the Board of Directors; failing him, the person appointed by the Shareholders' Meeting. Members of the Audit and Risk Committee, Controller as well as the members of the Board of Directors who are not Shareholders, the General Director, the deputy general director and other members of the Executive Board may participate in the Meeting at the request of the Shareholders.

The minutes of the Shareholders' Meeting shall be prepared within 5 days after the Meeting is closed at least in two original copies and shall be signed by the chairman and the secretary of the Meeting. The minutes must record the place and time of the Meeting, the total number of votes held by all Shareholders who own the voting shares, the number of votes held by all Shareholders participating in the Meeting, the chairman and secretary of the Meeting, the agenda, the principal

որոնք ստորագրում են Ժողովի նախագահը և քարտուղարը: Արձանագրության մեջ պետք է նշված լինի Ժողովի գումարման ամսաթիվը և վայրը, քվեարկող բաժնետոմսերի տեր բոլոր Բաժնետերերի ձայների ընդհանուր քանակը, Ժողովին մասնակցած բոլոր Բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը, Ժողովի նախագահը և քարտուղարը, Ժողովի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները և Ժողովի ընդունած որոշումները:
Բաժնետերերի ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները տրամադրվում են Վարկային կազմակերպության Բաժնետերերին այդ որոշումների ընդունումից հետո 45 օրվա ընթացքում:

topics addressed in the speeches, the issues put to the vote and the voting results, and the resolutions adopted by the Meeting.
Information regarding the decisions adopted by the Shareholders' Meeting as well as voting results shall be provided to the Shareholders of the Credit Organization within 45 days after adoption of those decisons.

ՀՈԴՎԱԾ 12.
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

12.1. Տնօրենների խորհուրդը:
Տնօրենների խորհուրդը («Խորհուրդ») իրականացնում է Վարկային կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են Ժողովի բացառիկ իրավասությանը, կամ սույն Կանոնադրության համաձայն կամ Տնօրենների խորհրդի որոշմամբ պատվիրակված են Վարչությանը կամ Վարչության նախագահին:
Խորհրդի անդամները պետք է համապատասխան ՀՀ կենտրոնական բանկի սահմանած որակավորման և արհեստավարժության պահանջներին:

12.2. Խորհրդի ընտրությունը:
Խորհուրդը բաղկացած է առնվազն 3 (երեք) և առավելագույնը 9 (ինը) անդամներից, որոնք ընտրվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, եթե սույն Կանոնադրությամբ այլ կերպ նախատեսված չէ, Ժողովի մասնակից Բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, երեք (3) տարի

ARTICLE 12.
BOARD OF DIRECTORS

12.1. Board of Directors.
The Board of Directors (the "Board") implements the general management of the activities of the Credit Organization except for the matters that are within the exclusive competence of the Meeting or matters delegated to the Executive Board and the Chairman of the Executive Board pursuant to this Charter or decisions of the Board of Directors.
Members of the Board shall meet the qualifications and professional requirements determined by the CBA.

12.2. Election of the Board.
The Board shall consist of minimum 3 (three) and maximum 9 (nine) members elected by the Shareholders' Meeting, unless otherwise specified in this Charter, by a majority vote of the Shareholders participating in the Meeting for a term of three (3) years with the possibility of re-nomination upon the close of each term. The rights of the Board terminate when the Shareholders'

ժամկետով՝ վերընտրման հնարավորությամբ: Խորհրդի իրավասությունները դադարում են այն ժամանակ, երբ Բաժնետերերի տարեկան ժողովի կողմից կատարվում է խորհրդի կազմի փոփոխություն: Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենը և Վարչության անդամները չեն կարող լինել Խորհրդի անդամներ: Խորհրդի ցանկացած անդամ կարող է Բաժնետերերի ժողովի որոշմամբ հեռացվել Խորհրդի կազմից՝ որոշակի պատճառով կամ առանց որևէ պատճառի: Խորհրդի ցանկացած անդամ կարող է ցանկացած ժամանակ դուրս գալ Խորհրդի կազմից՝ նախապես այդ մասին գրավոր ծանուցելով Խորհրդի նախագահին: Անդամի վաղաժամկետ հեռացման կամ հրաժարականի դեպքում Խորհրդում առաջացող բոլոր թափուր տեղերը լրացվում են Բաժնետերերի ժողովի կողմից: Անկախ Խորհրդում թափուր տեղերի առկայությունից, Խորհուրդն իրավասու է իրականացնել իր ցանկացած իրավասություն, եթե շարունակում է պաշտոնավարել Խորհրդի քվորում ապահովող անդամների քանակություն՝ սույնով նախատեսված իմաստով:
Բաժնետերերի ցուցակի կազմման օրվա դրությամբ Վարկային կազմակերպության քվեարկող բաժնետոմսերի 10%-ի կամ ավելի մեծ մասի տեր բաժնետերերն իրավասու են Խորհրդի մեկ անդամի նշանակել առանց ընտրության:

Meeting elects new Board members. General Director and members of the Executive Board of the Credit Organization can not be members of the Board of Directors.

Any Board member may be removed from the Board with or without cause by the decision of the Shareholders' Meeting. Any Board member may resign from the Board at any time by providing a prior written notice to the Chairman of the Board. All vacancies in the Board due to early removal or resignation of the member/s shall be filled in by the Shareholders' Meeting. Notwithstanding any vacancy on the Board, as long as a quorum of the Board, as defined herein, remains in office, the Board is competent to exercise all and any of its powers.
Shareholders of the Credit Organization owning 10% or more of the voting shares as of the date of the preparation of the Shareholders' list shall have the right to appoint one member of the Board without election.

12.3. Խորհրդի իրավասությունները:
Խորհուրդն իրավասու է.

ա) Որոշել Վարկային կազմակերպության գործունեության հիմնական ոլորտները,

բ) Վերահսկել Վարկային կազմակերպության ղեկավար մարմինների գործունեությունը,

գ) Հաստատել Վարկային կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,

12.3. Board Functions.
The Board shall have the following functions:

a) determine the main areas of Credit Organization activities;

b) supervise the activities of the management of the Credit Organization;

c) approve the internal organizational structure of the Credit Organization;

դ) Գումարել տարեկան և արտահերթ Ժողովներ, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,

d) assemble annual and special Meetings, except for cases specified in the Law;

ե) Հաստատել Ժողովների օրակարգը,

e) approve the Meeting agenda;

զ) Հաստատել Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը, ինչպես նաև լուծել բոլոր այն հարցերը, որոնք կապված են Ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանն Օրենքի դրույթներին համապատասխան,

f) approve the date of preparing the list of shareholders eligible to participate in the Meeting, and resolve all those issues related to the preparation and implementation of the Meeting, which the Board is authorized to resolve according to the provisions of the Law;

է) Օրենքի համաձայն առաջարկություններ ներկայացնել Ժողովների քննարկմանը,

g) present recommendations to the Meeting in accordance with the Law;

ը) Օրենքով սահմանված կարգով որոշել գույքի շուկայական արժեքը,

h) determine the market price of property in the manner stipulated in the Law;

թ) Վարկային կազմակերպության Վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ առաջարկություններ նախապատրաստել Ժողովի համար,

i) prepare recommendations to the Meeting regarding the procedure and conditions of remuneration and compensation to the Credit Organization’s Controller;

ժ) Սահմանել Վարկային կազմակերպության Արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափը,

j) determine the amount of payment to the External Auditor of the Credit Organization;

ժա) Միջանկյալ և տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ժողովին ներկայացվելիք առաջարկություններ նախապատրաստել,

k) prepare recommendations to the Meeting regarding the size and payment procedure of interim and annual dividends;

ժբ) Օգտագործել Վարկային կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամները,

l) utilize the Credit Organization’s reserve fund and other funds;

ժգ) Հաստատել կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթեր և այլ ներքին կանոնակարգեր,

m) approve internal documents regulating the activities of management bodies and other internal regulations;

ժդ) Հաստատել Վարկային կազմակերպության ամենամյա ծախսերի նախահաշիվը և գործարար ծրագիրը,

n) approve annual budget and business plan of the Credit Organization;

ժե) Որոշումներ կայացնել Վարկային կազմակերպության տեղաբաշխված բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր ձեռք բերելու վերաբերյալ,

ժզ) որոշումներ կայացնել վարկային կազմակերպության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման, այդ թվում հրապարակային տեղաբաշխման մասին

o) decide on acquiring outstanding shares, bonds and other securities of the Credit Organization;

p) making a decision on placement, including public placement of bonds and other securities of the Credit Organization;

ժէ) Նշանակել Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենի և Վարչության այլ անդամների, վաղաժամկետ դադարեցնել նրանց իրավասությունները,

q) appoint General Director and other members of the Executive Board of the Credit Organization, terminate their powers prior to the expiration of their terms;

ժը) Որոշում կայացնել դուստր ընկերությունների ստեղծման, դրանց կանոնադրական կապիտալում Վարկային կազմակերպության մասնակցության չափի մասին, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում, որը ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կողմից՝ Օրենքով սահմանված կարգով,

r) make decision on creating a subsidiary and on the size of participation of the Credit Organization in its charter capital unless such participation is considered a large-scale transaction which is subject to the approval of the Shareholders' Meeting as specified by the Law;

ժթ) Որոշում կայացնել Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման մասին և հաստատել դրանց ներքին կանոնակարգերը,

s) make decision on establishing branches and representative offices of the Credit Organization and approve their internal regulations;

ի) Որոշում կայացնել այլ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցելու մասին, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում, որը ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կողմից՝ Օրենքով սահմանված կարգով,

t) make decision on participation in the charter capital of other legal entities unless such participation is considered a large-scale transaction which is subject to the approval of the Shareholders' Meeting pursuant to the Law;

 իա) Որոշում կայացնել հոլդինգային ընկերություններում, ֆինանսական և արդյունաբերական խմբերում, միավորումներում և առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցության մասին,

u) make decision on participation in holding companies, financial and industrial groups, associations and other unions of commercial organizations;

իբ) Հաստատել ցանկացած պարտավորության հանձնառություն (օրինակները ներառում են, բայց չեն սահմանափակվում՝ պայմանագիր, համաձայնություն, ծրագիր), որը հավասար է կամ գերազանցում է 50,000 ԱՄՆ դոլար/համարժեք ՀՀ դրամ ծախսը: Ընդ որում, վերոնշյալ 50,000 ԱՄՆ դոլարի/համարժեք ՀՀ դրամի սահմանափակման մեջ չեն մտնում և ենթակա չեն խորհրդի կողմից հաստատման Վարկային կազմակերպության բանկային հաշվների միջև փոխանցումները, ծախսերի նախահաշվով (բյուջեով) նախատեսված գործունեությունները, Վարկային Կազմակերպության կողմից որպես հիմնական գործունեություն հաճախորդներին տրվող վարկերը, ՀՀ բանկերում դրված ավանդները, ինչպես նաև կարճաժամկետ (վեց ամիսը չգերազանցող) գործարքները՝ (back to back transactions (ներառյալ սվոփ)), ռեպո, դրամական միջոցների գրավով ապահովված վարկերի գործարքները, բանկերից ստացվող վարկերի և դեպոզիտների գործարքները, ֆինանսական կազմակերպություն չհամարվող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից ստացվող փոխառությունների, արտարժույթի առուվաճառքի և կանխիկացման գործարքները,

Ժամանակաշրջանի զուտ շահույթ	**69,548**	**214,029**	**(142,010)**	**6,996**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	**69,548**	**214,029**	**(142,010)**	**6,996**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15/01/2023

Վարկային կազմակերպության Գլխավոր գործառնական տնօրեն,
Գլխավոր տնօրեն/վարչության նախագահ — Ս. Մ. Հասս

Գլխավոր ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ — Ա. Պետրոսյան

«ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"FINCA" UNIVERSAL CREDIT ORGANIZATION CJSC
00445174
ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
31 Դեկտեմբերի 2022թ.

"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ագաթանգեղոսի 2ա
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)	Կանոնադրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթե	Չբաշխված շահույթ/վնաս	Ընդամենը կապիտալ
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)					
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2021թ. (ստուգված)	**4,905,960**	**343,967**	**-**	**579,485**	**5,829,412**
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-
Վերահաշվարկված մնացորդը	**4,905,960**	**343,967**	**-**	**579,485**	**5,829,412**
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-
Հայտարարված շահաբաժիններ		-		-	-
Համապարփակ եկամուտ	-	-	-	**6,996**	**6,996**
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ	-	-	-	**6,996**	6,996
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբերի 2021թ. (ստուգված)	**4,905,960**	**343,967**	**-**	**586,481**	**5,836,408**
Ընթացիկ տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)					
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2022թ. (ստուգված)	**4,905,960**	**343,967**	**-**	**586,481**	**5,836,408**
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-
Վերահաշվարկված մնացորդը	**4,905,960**	**343,967**	**-**	**586,481**	**5,836,408**
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-
Հայտարարված շահաբաժիններ		-		-	-
Համապարփակ եկամուտ	-	-	-	**214,029**	**214,029**
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ	-	-	-	214,029	214,029
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբերի 2022թ. (չստուգված)	**4,905,960**	**343,967**	**-**	**800,510**	**6,050,437**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15/01/2023

Վարկային կազմակերպության Գլխավոր գործառնական տնօրեն,
Գլխավոր տնօրեն/վարչության նախագահ Ծ.Ս.Հասան

Գլխավոր ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ Ա.Պետրոսյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի մասին

31 Դեկտեմբերի 2022թ.
"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ագաթանգեղոսի 2ա
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)	01/01/2022-31/12/2022	01/01/2021-31/12/2021
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ՝ նախքան շահութահարկով հարկումը	214,029	100,060
Ճշգրտումներ		
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստ	774,757	1,723,712
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից վնաս	(24,041)	(46,785)
Զուտ փոփոխություններ հաշվեգրված տոկոսագումարներում	(164,876)	(48,338)
Մաշվածություն և ամորտիզացիա	337,261	368,712
Արտարժութային գործառնություններից զուտ (օգուտ)/վնաս	(59,128)	(13,917)
Զուտ փոփոխություններ ընթացիկ և հետաձգված հարկերի գծով	(112,322)	55,121
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ներհոսք նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**965,679**	**2,138,565**
Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ		
Շահույթ կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների նվազում/(աճ)	-	-
Պահանջներ բանկերի նկատմամբ (աճ)/նվազում	(1,458,109)	
Հաճախորդներին տրված վարկերի (աճ)/նվազում	(2,677,056)	273,295
Ներդրումային արժեթղթերի (աճ)/նվազում	(202,296)	-
Այլ ակտիվներում (աճ)/նվազում	8,920	32,349
Հետգնման պայմանագրերով պարտավորությունների աճ/(նվազում)	199,329	-
Այլ պարտավորությունների աճ/(նվազում)	23,699	(271,973)
Դրամական միջոցների ներհոսք գործառնական գործունեությունից՝ մինչև հարկումը	**(3,139,834)**	**2,172,236**
Վճարված շահութահարկ	9,280	(55,121)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**(3,130,554)**	**2,117,115**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(28,507)	(11,915)
Հիմնական միջոցների վաճառքից հոսքեր	3,807	7,597
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(26,644)	(13,689)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(51,344)**	**(18,007)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության պարտավորության մարում	(266,757)	(154,122)
Փոխառու միջոցների մուտքեր	13,954,977	14,666,097
Փոխառու միջոցների մարումներ	(10,743,614)	(14,554,355)
Մուտքեր պարտատոմսերի թողարկումից	3,399,090	-
Թողարկված պարտատոմսերի մարում	(3,537,090)	(1,400,000)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**2,806,606**	**(1,442,380)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**(375,292)**	**656,727**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ, համախառն	**1,549,987**	**724,687**
Փոխարժեքի փոփոխումների ազդեցությունն արտարժույթով պահվող դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	346,188	168,572
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ, համախառն	**1,520,882**	**1,549,987**

Հավելյալ տեղեկություններ՝		
Ստացված տոկոսագումարներ	3,896,616	2,051,890
Վճարված տոկոսագումարներ	1,300,379	617,954

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15/01/2023

Վարկային կազմակերպության Գլխավոր գործառնական տնօրեն,
Գլխավոր տնօրեն/վարչության նախագահ — Ա. Մ. Հասս

Գլխավոր ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ — Ա. Պետրոսյան

«ՖԻՆՔԱ» ՄԻԿՐՈՖԻՆԱՆՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"FINCA" UNIVERSAL CREDIT ORGANIZATION
«ՖԻՆՔԱ»
"FINCA"
00445174
ԵՐԵՎԱՆ * YEREVAN

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

31 Դեկտեմբերի 2022թ.
"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ագաթանգեղոսի 2ա
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

Նորմատիվներ* **(հազ. դրամ)**	**Փաստացի մեծությունը**	**ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը**	**Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը**
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	4,905,960	150,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	5,121,715	1,000,000	Խախտում առկա չէ
Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	29.0%	12.0%	Խախտում առկա չէ
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	1.6%	25.0%	Խախտում առկա չէ
Ն51 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	0.0%	10.0%	Խախտում առկա չէ
Ն52 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	0.0%	5.0%	Խախտում առկա չէ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15/01/2023

Վարկային կազմակերպության Գլխավոր գործառնական տնօրեն,
Գլխավոր տնօրեն/վարչության նախագահ Ա. Ս. Հասոյ

Գլխավոր ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ Ա. Պետրոսյան

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ
"FINCA" UNIVERSAL CREDIT ORGANIZATION CJSC
«ՖԻՆՔԱ»
"FINCA"
00445174
ԵՐԵՎԱՆ * YEREVAN

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից տրամադրվող վարկերը եվ վարկավորման պայմանները

Տրամադրվող վարկերը	Բիզնես վարկեր, գյուղատնտեսական վարկեր, սպառողական և հիփոթեքային վարկեր
Տրամադրման ժամկետ	1– 180 ամիս
Վարկի մարման պայմաններ	Վարկի մայր գումարի, տոկոսագումարի և վարկի սպասարկման վճարի (առկայության դեպքում) հանրագումարի վճարումները յուրաքանչյուր ամիս հավասարաչափ, իսկ արտոնյալ ամիսների դեպքում՝ տոկոսագումարի և վարկի սպասարկման վճարի (առկայության դեպքում) հանրագումարի վճարումները յուրաքանչյուր ամիս հավասարաչափ: Գյուղատնտեսական վարկերի համար հնարավոր են ամսական զրոյական վճարումներով մարման գրաֆիկներ: Բիզնես և Գյուղատնտեսական վարկերի դեպքում հնարավոր է մարման ճկուն գրաֆիկ:
Տոկոսադրույքներ	0 % - 22.9 % տարեկան
Վարկի գումար	20,000 – 35,000,000 ՀՀ դրամ 650 – 150 000 ԱՄՆ դոլար
Վարկի սպասարկման վճար	ՀՀ դրամով բիզնես, գյուղատնտեսական և սպառողական վարկեր 0 - 2.05 %՝ վճարվում է ամսական, հաշվարկվում է տրամադրված գումարից: ԱՄՆ դոլարով բիզնես և գյուղատնտեսական վարկեր 0 - 1.45 %
Վարկի տրամադրման և կանխիկացման վճարներ	Վարկի տրամադրման վճար՝ ՀՀ դրամով բիզնես, գյուղատնտեսական և սպառողական վարկեր՝ 0%- 3.5 %: ԱՄՆ դոլարով բիզնես, գյուղատնտեսական վարկեր՝ 0% - 4.5%: ՀՀ դրամով հիփոթեքային վարկեր՝ 1%:

Վարկային կազմակերպության աշխատողների միջին եռամսյակային թվաքանակը կազմում է 356 մարդ:

Տրամադրվող վարկերի պայմանների մանրամասներին և հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթին կարող եք ծանոթանալ նաև կազմակերպության www.finca.am կայքից:

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15/01/2023

Վարկային կազմակերպության Գլխավոր գործառնական տնօրեն,
Գլխավոր տնօրեն/վարչության նախագահ — Ս. Մ. Հասս

Գլխավոր Ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ — Ա. Պետրոսյան

«ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"FINCA" UNIVERSAL CREDIT ORGANIZATION
«ՖԻՆՔԱ»
"FINCA"
00445174
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Ֆինքա»
Ունիվերսալ վարկային կազմակերպություն
փակ բաժնետիրական ընկերություն

Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորական եզրակացություն
2021 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

«ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

Բովանդակություն

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 2
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 8
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 11

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2021 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Կազմակերպությունը 12
2. Նոր և վերանայված ստանդարտների ընդունում 13
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական հիմնադրույթներ 15
4. Կարևոր հաշվապահական դատողությունների և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները 35
5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 36
6. Հաճախորդներին տրված վարկեր 37
7. Հիմնական միջոցներ 40
8. Ոչ նյութական ակտիվներ 41
9. Օգտագործման իրավունքով ակտիվներ 41
10. Այլ ակտիվներ 43
11. Թողարկված պարտքային արժեթղթեր 43
12. Այլ փոխառու միջոցներ 44
13. Այլ պարտավորություններ 46
14. Ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորությունների համադրում 47
15. Բաժնետիրական կապիտալ 48
16. Զուտ տոկոսային եկամուտ 48
17. Զուտ օգուտ արտարժութային գործառնություններից 48
18. Զուտ այլ օգուտ/(վնաս) 49
19. Շահութահարկ 49
20. Գործառնական ծախսեր 51
21. Պայմանական պարտավորություններ 51
22. Ֆինանսական գործիքների իրական արժեքը 51
23. Կապիտալի ռիսկի կառավարում 54
24. Ռիսկերի կառավարում 55
25. Գործարքներ կապակցված կողմերի հետ 76
26. Հետագա իրադարձություններ 77

«ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Կազմակերպություն) 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Կազմակերպության ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին:
- Կազմակերպության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Կազմակերպությունում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, իրականացնելու և պահպանելու համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Կազմակերպության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Կազմակերպության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն Ղեկավարությանը հավաստիանալու, որ Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Կազմակերպության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2022թ. մայիսի 6-ին:

Ստորագրված է Վարչության անունից՝

Վարդան Հարությունյան	**Անուշ Պետրոսյան**
Գլխավոր գործառնական տնօրեն/	Ֆինանսական տնօրեն/
Գործադիր տնօրենի ժ/պ	Գլխավոր հաշվապահ
2022 թ. մայիսի 6	2022 թ. մայիսի 6
Երևան, Հայաստանի Հանրապետություն	Երևան, Հայաստանի Հանրապետություն

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում պլազա» բիզնես կենտրոն,
7-րդ հարկ

Հեռ.՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20
www.deloitte.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին՝

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված՝ *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)*, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Առանցքային աուդիտորական հարց

Աուդիտի առանցքային հարցն այն հարցն է, որը, մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցը դիտարկվել է ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցի վերաբերյալ:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ֆիրմաների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ»-ի, նրա անդամ ֆիրմաների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/ru/about:
© 2021 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ինչու է հարցը սահմանվել աուդիտի առումով առանցքային

Հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) *գնահատում*

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության հաճախորդներին տրված վարկերի ամորտիզացված արժեքը կազմել է 23,117,991 հազար ՀՀ դրամ և 24,298,801 հազար ՀՀ դրամ, և ԱՊԿ-ն կազմել է համապատասխանաբար 4,870,267 հազար ՀՀ դրամ և 4,488,569 հազար ՀՀ դրամ:

Հավաքական հիմունքներով գնահատվող վարկերի համար առկա է սխալների ռիսկ կապված ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) գնահատման նպատակով օգտագործվող հիմնական տվյալների, ինչպես նաև դեֆոլտի հավանականության գնահատման (PD), դեֆոլտից առաջացած վնասների (LGD) գնահատման համար կատարված ենթադրությունների հետ, և պատմական ու ապագայամետ տեղեկատվության՝ շուկայում առկա տվյալներին անհամապատասխանության հետ:

Կազմակերպության ղեկավարության կողմից օգտագործվող դատողությունների էականության և սուբյեկտիվության, հավաքական հիմունքներով գնահատվող վարկերի ծավալի և COVID-19-ի, արտաքին տնտեսական միջավայրի և հետպատերազմյան վերականգնումների արդյունքում դատողությունների և գնահատումների աճող անորոշությունից ելնելով՝ մենք սահմանել ենք ակնկալվող պարտքային կորուստների հավաքական գնահատումը, մասնավորապես, դեֆոլտի հավանականության գնահատումը՝ որպես աուդիտի առանցքային հարց:

Մասնավորապես, մենք կենտրոնացրել ենք մեր ընթացակարգերը հետևյալ հարցերի շուրջ՝

- ԱՊԿ գնահատման և գործող վարկերի համապատասխան վարկանիշային

Ինչպես է հարցը հաշվի առնվել աուդիտի ընթացքում

Մենք ձեռք ենք բերել պատկերացում վարկերի տրամադրման, պարտքային ռիսկի կառավարման և հավաքական հիմունքներով գնահատվող վարկերի ԱՊԿ-ի գնահատման գործընթացների և վերահսկողական ընթացակարգերի վերաբերյալ, ներառյալ պարտքային ռիսկերի նշանակալի աճի ժամանակին բացահայտմանն ուղղված վերահսկողությունը:

Մենք ստուգել ենք հավաքական ԱՊԿ մոդելներում կիրառվող հիմնական ենթադրությունները, ինչպես նաև ընտրանքային հիմունքով ստուգել ենք ելակետային տվյալները և վերլուծել ենք այս մոդելների ամբողջականությունը:

Մեր աշխատանքներում ներառվել են հետևյալ գործընթացները՝

- ակտուարների օգնությամբ մենք ստուգել ենք հավաքական հիմունքներով գնահատվող հաճախորդների տրված վարկերի գծով ԱՊԿ-ի մաթեմատիկական ճշգրտությունը և հաշվարկը՝ համապատասխան ելակետային տվյալների հիման վրա վերահաշվարկելով ակնկալվող պարտքային կորուստների տարրերը: Գործընթացները ներառել են մոդելի և օգտագործվող բանաձևերի նպատակահարմարության գնահատումը՝ հաշվի առնելով մոդելավորման մեթոդները և վերահաշվարկելով դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտից առաջացած վնասները և դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը:
- Մենք վերլուծել ենք վարկի՝ դեֆոլտում հայտնվելու և դեֆոլտ գնացած վարկերից ակնկալվող ցանկացած վերականգնման մասով հիմնական ենթադրությունները՝ հիմնվելով ոլորտում մեր գիտելիքի և Կազմակերպության իրական փորձի, ինչպես նաև հասանելի ու

Ինչու է հարցը սահմանվել աուդիտի առումով առանցքային	Ինչպես է հարցը հաշվի առնվել աուդիտի ընթացքում
համակարգի հիմքում կիրառվող հիմնական ենթադրությունները և էական ելակետային տվյալները, և համապատասխան հաշվարկների իրականացման մոդելների ամբողջականությունը; • Պարտքային ռիսկերի նշանակալի աճի և դեֆոլտի փաստի ժամանակին բացահայտում՝ հիմք ընդունելով քանակական և որակական գործոնները; • Հաճախորդներին տրված վարկերի ըստ փուլերի ճշգրիտ բաշխում: Տես սույն ֆինանսական հաշվետվությունների ծան. 4, 6 և 24 Կազմակերպության քաղաքականության նկարագրության և համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան պահուստների մնացորդների բացահայտման համար:	համապատասխան ապագայամետ տեղեկատվության վրա; • Վարկերի ընտրանքի համար մենք համոզվել ենք՝ արդյոք պարտքային ռիսկի նշանակալի աճը ժամանակին է հայտնաբերվել, այդ թվում նաև, եթե կիրառելի էր, վերլուծել ենք վարկառուի ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ժամկետանց օրերը և ստուգել ենք արժեզրկման այլ համապատասխան դեպքերը, ինչպիսիք են՝ վարկային պայմանների վերանայումը և ֆինանսական մասով կատարողականի որոշ ցուցանիշներ, որոնք ժամանակին բացահայտվել և արտացոլել են COVID-19-ի ազդեցությունը: • Ընտրանքային սկզբունքով մենք ստուգել ենք առանցքային ելակետային տվյալների (ժամկետանցությունը, դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը, դեֆոլտից հետո վարկերի վերականգնումը, ապագայամետ տեղեկատվությունը) ճշտությունը և ամբողջականությունը: Մենք գնահատել ենք ֆինանսական հաշվետվություններում հաճախորդներին տրված վարկերի գծով բացահայտումների ճշտությունը և ամբողջականությունը՝ ՖՀՄՍ պահանջներին համապատասխանության հավաստիացման նպատակով: Մենք չենք գտել էական բացառություններ այս ստուգումներում:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է 2021թ. տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բայց չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը: Մենք ակնկալում ենք ստանալ 2021թ. տարեկան հաշվետվությունը աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրում կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր տեղեկատվության միջև, և արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Մեր պարտավորությունն է ծանոթանալ տարեկան հաշվետվությանը, և եթե մեր կատարած աշխատանքը հիմք հանդիսանա եզրակացնելու, որ տարեկան հաշվետվությունը պարունակում է էական խեղաթյուրումներ, մենք պարտավոր ենք տեղեկացնել այդ փաստի մասին կառավարման օղակներում գտնվող անձանց:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած,

կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրման ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզնից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և ուստի աուդիտի առումով առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այս հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, եթե օրենքը կամ կարգավորումը չի արգելում հարցի հանրայնացումը կամ, ծայրահեղ հազվադեպ դեպքերում, մենք որոշում ենք, որ չենք անդրադառնալու հարցին մեր եզրակացությունում, քանի որ խելամտորեն ակնկալվում է, որ դա անելու բացասական հետևանքները կգերակշռի նման հաղորդակցության բերած հանրային օգուտը:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն
Աուդիտի գործընկեր

2022 թ. մայիսի 6
Երևան, Հայաստանի Հանրապետություն
«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	1,549,987	724,687
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		1,885	152
Հաճախորդներին տրված վարկեր	6	18,247,724	19,810,232
Շահութաբերի գծով ընթացիկ ակտիվներ		51,048	39,814
Օգտագործման իրավունքով ակտիվներ	9	440,189	447,912
Հիմնական միջոցներ	7	120,130	178,728
Ոչ նյութական ակտիվներ	8	199,008	253,591
Այլ ակտիվներ	10	84,383	83,754
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**20,694,354**	**21,538,870**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Պարտքային արժեթղթերի թողարկում	11	3,540,061	5,030,607
Վարձակալության գծով պարտավորություններ	9	500,013	510,764
Այլ փոխառու միջոցներ	12	10,435,446	9,562,356
Հետաձգված հարկային պարտավորություններ	19	103,042	33,322
Այլ պարտավորություններ	13	279,384	572,409
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**14,857,946**	**15,709,458**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	15	4,905,960	4,905,960
Գլխավոր պահուստ	15	343,967	343,967
Չբաշխված շահույթ		586,481	579,485
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**5,836,408**	**5,829,412**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**20,694,354**	**21,538,870**

Վարչության անունից՝

Վարդան Հարոյան
Գլխավոր գործառնական տնօրեն/
Գործադիր տնօրենի ժ/պ

Մնուշ Պետրոսյան
Ֆինանսական տնօրեն/
Գլխավոր հաշվապահ

2022թ. մայիսի 6
Երևան, Հայաստանի Հանրապետություն

2022թ. մայիսի 6
Երևան, Հայաստանի Հանրապետություն

12-78 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	2021թ.	2020թ.
Տոկոսային եկամուտ	16	5,344,799	6,499,827
Տոկոսային ծախս	16,25	(1,279,102)	(1,536,214)
Զուտ տոկոսային եկամուտ մինչև տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստները	16	4,065,697	4,963,613
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստներ	5,6	(1,516,366)	(2,648,743)
Զուտ տոկոսային եկամուտ		**2,549,331**	**2,314,870**
Հաճախորդներին տրված վարկերի պայմանագրային դրամական հոսքերի փոփոխումից վնաս	24	(15,692)	(155,631)
Զուտ օգուտ արտարժութային գործառնություններից	17	72,775	89,400
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ (վնաս)/օգուտ		(26,094)	17,833
Վարձավճարային և կոմիսիոն ծախսեր		-	(14,611)
Զուտ այլ եկամուտներ/(վնաս)	18	161,890	(272,973)
Զուտ ոչ տոկոսային եկամուտ/(ծախս)		**192,879**	**(335,982)**
Գործառնական եկամուտ		**2,742,210**	**1,978,888**
Անձնակազմի գծով ծախսեր		(1,403,556)	(1,748,827)
Մաշվածություն և ամորտիզացիա	7,8,9	(367,619)	(468,060)
Այլ գործառնական ծախսեր	20,25	(894,319)	(812,091)
Գործառնական ծախսեր		**(2,665,494)**	**(3,028,978)**
Շահույթ/(վնաս)՝ նախքան շահութահարկով հարկումը		**76,716**	**(1,050,090)**
Շահութահարկի գծով (ծախս)/օգուտ	19	(69,720)	148,518
Տարվա զուտ (վնաս)/ շահույթ		**6,996**	**(901,572)**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ/(վնաս)		**6,996**	**(901,572)**

12-78 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ		**4,905,960**	**297,765**	**2,023,259**	**7,226,984**
Տարվա վնաս		-	-	(901,572)	**(901,572)**
Ընդամենը տարվա համապարփակ վնաս		**-**	**-**	**(901,572)**	**(901,572)**
Հայտարարված շահաբաժիններ	15	-	-	(496,000)	**(496,000)**
Փոխանցում գլխավոր պահուստին		-	46,202	(46,202)	-
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**4,905,960**	**343,967**	**579,485**	**5,829,412**
Տարվա շահույթ		-	-	6,996	**6,996**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**-**	**-**	**6,996**	**6,996**
Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**4,905,960**	343,967	**586,481**	**5,836,408**

12-78 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	2021թ.	2020թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Շահույթ/(վնաս)՝ հարկումից առաջ		76,716	(1,050,090)
Ճշգրտումներ՝			
Մաշվածություն և ամորտիզացիա	7, 8, 9	367,619	468,060
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների օտարումից (օգուտ)/վնաս		(7,939)	16,618
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստ	5,6,	1,516,366	2,648,743
Արտարժութային գործառնություններից զուտ վնաս/(օգուտ)		87,904	37,764
Պահուստի փոփոխություն	18	(126,500)	279,889
Այլ ոչ դրամական միջոցների փոփոխություն		73,221	175,924
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		**1,987,387**	**2,576,908**
Փոփոխություններ գործառնական ակտիվներում և պարտավորություններում			
Փոփոխություններ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներում		(27,827)	(302)
Փոփոխություններ ածանցյալ ֆինանսական ակտիվների տոկոսում		18,560	150
Փոփոխություններ հաճախորդներին տրված վարկերում		(712,916)	1,793,295
Այլ փոխառու միջոցների, պարտքային թողարկած արժեթղթերի մասով տոկոսների հաշվեգրման փոփոխություն		119,941	15,715
Փոփոխություններ այլ ակտիվներում		(13,787)	(21,477)
Փոփոխություններ օգտագործման իրավունքով ակտիվներում և վարձակալության գծով պարտավորություններում		822	(2,167)
Փոփոխություններ այլ պարտավորություններում		(52,079)	(61,533)
Փոփոխություններ բանկերի նկատմամբ պարտավորություններում		-	(1,209,687)
Փոփոխություններ ներդրումային արժեթղթերի տոկոսում		-	(3,078)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների մուտքեր		**1,320,101**	**3,087,824**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր		7,993	-
Հիմնական միջոցների ձեռքբերում		(31,422)	(24,990)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(15,709)	(24,012)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից մուտքեր		-	1,221,451
(Ներդրումային գործունեությունում օգտագործված)/ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր		**(39,138)**	**1,172,449**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վճարված շահաբաժիններ		-	(496,000)
Վարձակալության գծով պարտավորության մարում	14	(211,211)	(227,917)
Փոխառու միջոցներից մուտքեր	14	14,666,097	10,066,256
Փոխառու միջոցների մարումներ	14	(13,204,355)	(13,832,651)
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում		(1,400,000)	-
Ֆինանսական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		**(149,469)**	**(4,490,312)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**1,131,494**	**(230,039)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	5	**724,694**	**704,494**
Փոխարժեքի տատանումների ազդեցությունն արտարժույթով պահվող դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(306,150)	250,239
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	5	**1,550,038**	**724,694**
Հավելյալ տեղեկություններ՝			
Ստացված տոկոսագումարներ		4,061,422	5,106,198
Վճարված տոկոսագումարներ		(1,159,161)	(1,523,227)

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չի ստացել հաճախորդներին տրված անհավաքագրելի վարկերի ոչ դրամական մարումներ ակտիվների բռնագանձման տեսքով (2020թ. դեկտեմբերի 31՝ 4,886 հազար)

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն, որի 100% բաժնետոմսերը պատկանում են FINCA Microfinance Coöperatief U.A-ին (Նիդեռլանդներ): Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից և այն գործունեություն է իրականացնում 2006թ. մարտի 28-ին տրված N13 արտոնագրի համաձայն:

Կազմակերպությունը զբաղվում է միկրոֆինանսավորմամբ և տրամադրում է անհատական բիզնես վարկեր, ինչպես նաև սպառողական և գյուղատնտեսական միկրո վարկեր: Վարկերը տրամադրվում են ինչպես տեղական արժույթով, այնպես էլ արտարժույթով:

Կազմակերպության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ագաթանգեղոսի փող., 2ա:

2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը ՀՀ-ում ունի 30 մասնաճյուղ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 39 մասնաճյուղ): 2021թ. հունվարի 11-ին Կազմակերպությունը վերակազմակերպել է մասնաճյուղային ցանցը և փակել 9 մասնաճյուղ՝ միավորելով դրանք մոտակա մասնաճյուղերի հետ:

«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպության հիմնադիրը FINCA International Inc.՝ հարկերից ազատված, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնադրվել և գործում է Նյու Յորքի նահանգային օրենքների համաձայն: FINCA International Inc.-ը 2011թ.-ին FINCA Microfinance Coöperatief U.A-ին (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերակցություն (կոոպերատիվ), որի պաշտոնական գրասենյակը գտնվում է Նիդեռլանդների Ամստերդամ քաղաքում), փոխանցել է Կազմակերպության 100% բաժնետոմսերը (թվով 136,472 բաժնետոմս)՝ որպես Ընկերակցության անդամակցության վճար:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերակցության անդամներն են՝

1. FINCA Microfinance Holding Company LLC սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ գրանցված ԱՄՆ-ի Դելավեր նահանգում, գրանցման հասցեն՝ ԱՄՆ, Դելավեր 19808, Վիլմինգտոն, բն. 400, Սենթըրվիլ խճուղի 2711: FINCA Microfinance Holding Company LLC-ն ունի 99 քվե՝ որպես Ընկերակցության A դասի անդամ և 1 քվե որպես Ընկերակցության Բ դասի անդամ:

2. FINCA International LLC՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ գրանցված ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգում, գրանցման հասցեն՝ ԱՄՆ, Մերիլենդ 21202, Բալթիմոր, 11 Իսթ Չեյս փողոց: FINCA International LLC-ն ունի 1% քվե Ընկերակցությունում:

2021 և 2020-թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA Microfinance Holding Company LLC-ի բաժնետերերն են հանդիսացել՝

	2021 թ. դեկտեմբերի 31	2020 թ. դեկտեմբերի 31
Առաջին մակարդակի բաժնետերեր / թողարկված բաժնետիրական կապիտալի սեփականատերեր		
FINCA International LLC	65.89%	65.89%
International Finance Corporation (Միջազգային ֆինանսական կորպորացիա)	14.27%	14.27%
KfW	8.87%	8.87%
Nederlandse Financierings Maatschappij voor Ontwikkelingslanden N.V.	7.25%	7.25%
ASN-NOVIB FONDS	1.66%	1.66%
Triodos Custody B.V.	1.03%	1.03%
Triodos SICAV II	1.03%	1.03%
Ընդամենը	**100.00**	**100.00**

FINCA International Inc շահույթ չհետապնդող կորպորատիվ ընկերություն է, որը գործում է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենքների համաձայն, և որպես այդպիսին, դրա անդամները Կազմակերպությունում սեփականության իրավունք չունեն և չունեն տնտեսական իրավունքներ: 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA International, Inc.-ի անդամները հետևյալն են. Ռուպերտ Սքոֆիլդը, Ջոն Հեթչը, Ռոբերտ Հեթչը և Ռիչարդ Ուիլյամսոնը: FINCA International Inc.-ի ֆինանսական հաշվետվությունները հասանելի են հանրության համար:

FINCA International Inc.-ն ցածր եկամուտներ ունեցող անձանց տրամադրում է հաջողության հասնելու գործիքներ՝ նրանց առաջարկելով պատասխանատու ֆինանսական ծառայություններ, ինչպիսիք են փոքր վարկերը կամ խնայողական հաշիվները, հեռավոր համայնքների բնակիչների հետ տեխնոլոգիաների՝ բջջային հեռախոսների և պլանշետների միջոցով կապի հաստատում, ինչպես նաև մատչելի դարձնելով կյանքի որակը բարելավող ապրանքները: «ՖԻՆՔԱ»-ն իր գործունեությունը համայնքներում ծավալում է դուստր ընկերությունների միջոցով:

Դուստր ընկերությունները, սովորաբար, առանձին իրավաբանական անձինք են, որոնք «ՖԻՆՔԱ»-ի հետ կնքել են համապատասխան համաձայնագրեր: Փոքր վարկերը հնարավորություն են տալիս ներդրումներ կատարել անհատական կամ համայնքային շահութաբեր միկրո ձեռնարկություններում: Մասնակիցները բարելավում են իրենց վստահությունը սեփական հնարավորությունների նկատմամբ, արժանապատվության զգացումը և ստեղծում խնայողությունների ֆոնդ, որը պատկանում է համայնքին՝ որպես շարունակական ներդրումների մշտական աղբյուր:

2. ՆՈՐ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք գործում են ընթացիկ տարվա համար

Սույն փոփոխությունները և մեկնաբանությունները կիրառելի են Կազմակերպության համար 2021թ. հունվարի 1-ից.

Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 ստանդարտներում	Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխում – Փուլ 2
Փոփոխություններ ՖՀՄՍ 16 ստանդարտում	COVID-19-ի մասով վարձակալության գծով զիջումներ 2021թ. հունիսի 30-ից հետո

Վերը նշված ստանդարտները և մեկնաբանությունները վերանայվել են Կազմակերպության ղեկավարության կողմից, բայց էական ազդեցություն չեն ունեցել Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՍ-ներ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ Կազմակերպությունը չի կիրառել հրապարակված, սակայն դեռևս չգործող հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտները:

Նոր կամ վերանայված ստանդարտ կամ մեկնաբանություն	Կիրառելի է ներքոնշյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար
ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»	2023թ. հունվարի 1
Փոփոխություններ ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» ստանդարտում	2023թ. հունվարի 1
*Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում Պարտավորությունների դասակարգում՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ (*ՖՀՄՍ ստանդարտներում Տարեկան բարեփոխումների 2010-2012 ցիկլի մշակման նախագծի շրջանակներում*).*	2023թ. հունվարի 1
Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում «Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում»	2023թ. հունվարի 1
Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործունեության հայտարարության 2-րդ դրույթում - *Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում*	2023թ. հունվարի 1
Տարեկան բարեփոխումներ 2018-2020 ցիկլի ՖՀՄՍ ստանդարտներում Փոփոխություններ ՖՀՄՍ 3 ստանդարտում- «Հղում Հայեցակարգային Հիմունքներին»	2022թ. հունվարի 1
Փոփոխություններ ՀՀՄՍ 16 Հիմնական միջոցներ ստանդարտում- Նախքան նախատեսված օգտագործումը եկամուտ	2022թ. հունվարի 1
Փոփոխություններ ՀՀՄՍ 37 ստանդարտում-Պահուստներ, պայմանական պարտավորություններ և ակտիվներ-Անբարենպաստ պայամանագրեր Պայմանագրի կատարման արժեքը	2022թ. հունվարի 1
Փոփոխություններ ՀՀՄՍ 12 ստանդարտում Եզակի գործարքների արդյունքում առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ	2023թ. հունվարի 1
Փոփոխություն ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 ստանդարտներում Ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում	Ամսաթիվը պետք է որոշվի ՀՀՄՍԽ կողմից

Ղեկավարությունը չի ակնկալում, որ վերոնշյալ ստանդարտների որդեգրումը էական ազդեցություն կունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա հետագա ժամանակաշրջաններում :

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

Համապատասխանության մասին հայտարարություն. սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով (այսուհետ՝ հազար դրամ), եթե այլ բան նշված չէ:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Կազմակերպությունը գործում է անընդհատության հիմունքով և կշարունակի գործունեությունը մոտ ապագայում:

Հայաստանի գործարար միջավայրը

Զարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ավելի շատ են ենթակա զանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրներինը, ներառյալ տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և օրենսդրական ռիսկերը: Հայաստանում բիզնեսին վերաբերող օրենքներն ու կանոնակարգերը շարունակում են արագորեն փոխել հարկային և կարգավորիչ դաշտը և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Հայաստանի ապագա տնտեսական ուղղության վրա մեծապես ազդում է կառավարության կողմից ընդունված ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունը՝ իրավական, կարգավորիչ և քաղաքական միջավայրերի զարգացումների հետ միասին:

Հայաստանը շարունակում է կրել քաղաքական և տնտեսական փոփոխություններ: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանը չունի զարգացած գործարար և կարգավորող ենթակառուցվածք, որը սովորաբար գոյություն ունի ավելի հասուն ազատ շուկայական տնտեսությունում: Բացի այդ, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաներում գործունեության ծավալը, ինչը կարող է չանդրադառնալ ֆինանսական գործիքների արժեքի վրա: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է, ինչպես նաև կենտրոնացված տնտեսական բազան, տարածաշրջանային անկայունությունը:

Համաշխարհային ֆինանսական համակարգերում առկա ռիսկերը, այդ թվում՝ վարկային շուկաների վիճակի վատթարացումը կարող են դանդաղեցնել կամ խաթարել Հայաստանի տնտեսության զարգացումը, ինչպես նաև բացասաբար անդրադառնալ Կազմակերպության կապիտալի և դրա հասանելիության, ավելի ընդհանրականորեն՝ գործունեության արդյունքների, ֆինանսական դրության և հեռանկարների վրա: Առավել խիստ զգալի շուկայական սպառնալիքների և դժվարությունների արդյունքում ՀՀ տնտեսությունը, ինչպես նաև Կազմակերպության գործունեությունը կարող են վատթարանալ:

COVID-19

2020թ. սկզբին նոր կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19) սկսեց արագ տարածվել ամբողջ աշխարհով՝ հանգեցնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից 2020թ. մարտ ամսին համաճարակային կարգավիճակի մասին հայտարարմանը: Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու համար շատ երկրների կողմից ձեռնարկված պատասխան միջոցները հանգեցրել են մի շարք ընկերությունների համար գործունեությունների էական խափանումների և էական ազդեցություն են ունեցել համաշխարհային ֆինանսական շուկաների վրա: Քանի որ իրավիճակն արագ է զարգանում, այն

կարող է զգալի ազդեցություն ունենալ մի շարք ոլորտների ընկերությունների գործունեության վրա՝ ներառյալ բայց չսահմանափակված այնպիսի ազդեցություններով, ինչպիսիք են ձեռնարկությունների գործունեությունների խափանումը արտադրությունների խափանման կամ ձեռնարկությունների փակման հետևանքով, մատակարարման շղթայի ընդհատումը, անձնակազմի կարանտինը, պահանջարկի անկումը և ֆինանսավորման հայթայթման հետ կապված բարդությունները: Արդյունքում Կազմակերպությունը կարող է կրել նոր կորոնավիրուսային հիվանդության անհամեմատ զգալի ազդեցությունը համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա վերջինիս ունեցած բացասական ազդեցության հետևանքով:

COVID-19-ի ազդեցությունը Ընկերության գործունեության վրա մեծապես կախված է համաշխարհային և հայկական տնտեսության վրա համաճարակային ազդեցության տևողությունից և տարածվածությունից: 2020թ. կեսից վերջն ընկած հատվածում կառավարությունը թուլացրել է տնտեսական որոշ և գործարար միջավայրի սահմանափակումներ՝ հաշվի առնելով պանդեմիայի վիճակը, սակայն դրանց մասշտաբները կարող են փոխվել՝ ի պատասխան պանդեմիայի անորոշ ապագա զարգացմանը:

Քաղաքական անկայունությունը և ռազմական գործողությունները տարածաշրջանում

2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի տևական հակամարտությունը սրվեց հրադադարի ռեժիմի խախտմամբ, որը վերականգնվեց 2020թ. նոյեմբերի 10-ին կողմերի միջև ստորագրված հայտարարությամբ: Այդ ժամանակից ի վեր Հայաստանը քաղաքական և տնտեսական ցնցումներ է ապրում: Հայտարարության արդյունքների դեմ մի շարք բողոքներ հանգեցրել են արտահերթ խորհրդարանական ընտրությունների, որոնք տեղի են ունեցել 2021թ. հունիսին:

Իրավիճակի հետագա զարգացումը կարող է էական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության, ֆինանսական վիճակի և ապագա գործունեության արդյունքների վրա, ինչը դժվար է կանխատեսել՝ հաշվի առնելով քաղաքական անկայունության հետ կապված անորոշության աստիճանը:

Պատրաստման հիմունքներ

Կազմակերպությունն իր հաշվապահական հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն: Կազմակերպությունն իրականացրել է ճշգրտումներ և վերադասակարգումներ սույն ֆինանսական հաշվետվությունների՝ ՖՀՄՍ համաձայն պատրաստման և ներկայացման նպատակով:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիման վրա՝ բացառությամբ որոշակի ֆինանսական գործիքներից:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս Կազմակերպությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցներն այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Սույն ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ լիզինգային գործարքների, որը որոշվում է ՀՀՄՍ 17 և ՖՀՄՍ 16 շրջանակներում, և իրական արժեքին որոշակի նմանություն ունեցող գնահատականները, որոնք

իրական արժեք չեն հանդիսանում, ինչպիսիք են՝ իրացման զուտ արժեքը՝ ՀՀՄՍ 2-ի շրջանակներում, կամ օգտագործման արժեքը՝ ՀՀՄՍ 36-ի շրջանակներում:

Ի լրումն, ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում ելակետային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված գները (չճշգրտված), որոնք կազմակերպությանը հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:
- Մակարդակ 2-ի ելակետային տվյալներն իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող ելակետային տվյալները, որոնք ակտիվների կամ պարտավորությունների գծով ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են:
- Մակարդակ 3-ի ելակետային տվյալները իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտելի ելակետային տվյալները:

Կազմակերպությունը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները հաշվետու ամսաթվից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և հաշվետու ամսաթվից հետո ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են ծան. 24-ում:

Անընդհատություն

Ղեկավարությունը պատրաստել է տվյալ ֆինանսական հաշվետվությունը՝ ելնելով գործունեության անընդհատության սկզբունքից, որը նախատեսում է Կազմակերպության ակտիվների իրացում և կազմակերպության պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

Կազմակերպությունը ստացել է զուտ շահույթ 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 6,996 հազ. դրամի չափով (2020 թ. զուտ կորուստ՝ 901,572 հազ. դրամ):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը խախտել է միջազգային ֆինանսական հաստատությունների հետ փոխառության մի շարք համաձայնագրերով պահանջվող որոշ ֆինանսական սահմանափակումներ (ֆինանսական կովենանտներ): Կազմակերպությունը մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը բոլոր ֆինանսական կովենանտների համար ստացել է խախտման հետ կապված ներումներ:

Կազմակերպության ղեկավարությունը կարծում է, որ գործունեության անընդհատության սկզբունքի հիման վրա ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը նպատակահարմար է հետևյալ հանգամանքների պատճառով.

Ղեկավարությունն ակտիվ բանակցություններ է վարում վարկատուների հետ Finca Impact Finance Team-ի աջակցության վերաբերյալ, որպեսզի ապահովի խախտման հետ կապված ներումները: Կազմակերպությունը վերլուծել է միջազգային վարկատուների հետ բոլոր պայմանագրերի համար խաչաձև դեֆոլտի վերաբերյալ դրույթները: Ներկայումս Կազմակերպությունը չունի և չի ակնկալում, որ վարկատուները ծանուցում կթողարկեն, որ խախտումները դեֆոլտի

իրադարձություն են, որը մյուս վարկատուների համար առիթ կհանդիսանա ակտիվացնել խաչաձև դեֆոլտի վերաբերյալ դրույթը:

Կազմակերպության ղեկավարությունը կարծում է, որ գործունեության անընդհատության սկզբունքի հիման վրա ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը նպատակահարմար է հետևյալ առումով՝

1) Չնախատեսված հանգամանքների դեպքում ֆինանսավորման պլանների վարում և հաշվեկշռի իրացվելիության ցուցանիշների մոնիթորինգ՝ նորմատիվ պահանջներին համապատասխան:
2) 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և հաշվետու ամսաթվից հետո Կազմակերպությունը որևէ ծանուցում չի ստացել վարկատուներից որևէ վարկի անհապաղ մարման պահանջով հետագա ֆինանսավորումը կամ ծանուցումը դադարեցնելու մասին:
3) Հաշվետու ամսաթվից հետո Կազմակերպությունը թողարկել է պարտքային արժեթղթեր1,400,000 հազար ՀՀ դրամ գումարի չափով:
4) Հաշվետու ամսաթվից հետո Կազմակերպությունը առանց ուշացումների մարել է պայմանագրերում համաձայնեցված ժամանակացույցերին համապատասխան վարկերը:

Ղեկավարությունը կարծում է, որ, ելնելով իրացվելիության կառավարման ընթացիկ կանխատեսումներից և ձեռնարկված միջոցառումներից, ինչպես նաև հաշվի առնելով COVID-19 համաճարակի կապակցությամբ երկրում տիրող տնտեսական իրավիճակը և ազգային արժույթի արժևորումը, Կազմակերպությունը բավարար միջոցներ ունի իր գործունեությունը տեսանելի ապագայում շարունակելու համար:

Գործառնական և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Կազմակերպությունն իրականացնում է իր գործունեությունը («գործառնական արժույթ»): ՀՀ դրամը Հայաստանի Հանրապետությունում գործող արժույթն է և Կազմակերպության գործառնական և ներկայացման արժույթը: Բոլոր ֆինանսական տվյալները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, բացի այն դեպքերից, երբ դա պահանջվում կամ թույլատրվում է որևէ ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակորեն բացահայտված է Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնադրույթները ներկայացված են ստորև: Սույն հաշվետվությունում ներկայացված հաշվապահական քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Արտարժույթով գործարքներ

Կազմակերպության գործառնական արժույթից տարբեր այլ արժույթներով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են համապատասխան գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում գործառնական արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված, գործառնական արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը:

Պատմական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում՝ դրանց առաջացման ամսում:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտներն ու վնասները ներառվում են զուտ հիմունքով՝ որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից՝ արդյոք արտարժույթի շարժերը զուտ օգուտի կամ զուտ վնասի դիրքում են:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Կազմակերպության կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջի դրությամբ հետևյալն են՝

	Միջին փոխարժեք		Սփոթ փոխարժեք	
	2021 թ.	2020 թ.	2021 թ. դեկտեմբերի 31	2020 թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	503.73	491.65	480.14	522.59
ՀՀ դրամ/1 եվրո	596.40	559.30	542.61	641.11

Տոկոսային եկամտի և ծախսի ճանաչում: Ֆինանսական գործիքների համար տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են «Զուտ տոկոսային եկամտում» որպես «Տոկոսային եկամուտ» և «Տոկոսային ծախս» շահույթում կամ վնասում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ֆինանսական գործիքների ապագա գնահատված դրամական հոսքերը ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների զուտ հաշվեկշռային արժեքին: Ապագա դրամական հոսքերը գնահատվում են՝ հիմք ընդունելով գործիքի բոլոր պայմանագրային պայմանները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է բոլոր ապագա վճարման կամ ստացման ենթակա գումարները և միջնորդավճարները պայմանագրային կողմերի միջև, որոնք ուղղակիորեն վերագրելի են որոշակի պայմաններով վարկային պայմանագրին, գործարքի հետ կապված ծախսերին և այլ պարգևավճարներին կամ զեղչերին:

Տոկոսային եկամուտը/տոկոսային ծախսը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվների նկատմամբ, նախքան ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) մասհանումը կամ ֆինանսական պարտավորությունների ամորտիզացված արժեքի նկատմամբ: Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների դեպքում տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքի նկատմամբ (համախառն հաշվեկշռային արժեքը, հանած ԱՊԿ գծով մասհանումը):

Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և սկզբնական չափում. Կազմակերպության ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսկան ակտիվը կամ պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չունեն էական ֆինանսական բաղադրիչ, որոնք չափվում են գործարքի գնով: Գործարքի ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող), ավելացվում կամ նվազեցվում են ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից, ըստ անհրաժեշտության՝ նախնական ճանաչման դեպքում: Գործարքի ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրվում են իրական արժեքով ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը՝ շահույթի կամ վնասի միջոցով, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Դասակարգում և հետագա չափում. ՖՀՄՍ 9-ն ունի ֆինանսական ակտիվների դասակարգման երեք հիմնական կատեգորիաներ՝ ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: ՖՀՄՍ 9-ի դասակարգումն ընդհանուր առմամբ հիմնված է այն բիզնես մոդելի վրա, որի շրջանակներում կառավարվում է ֆինանսական ակտիվը և այդ ակտիվի պայմանագրային դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է հետևյալ պայմանները և նախորոշված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող՝

- Ակտիվը պահվում է այն բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը; և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են (SPPI):

Ֆինանսական ակտիվը չափվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, եթե բավարարում է հետևյալ պայմանները և նախորոշված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող՝

- Ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ինչպես հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, այնպես էլ վաճառել ֆինանսական ակտիվները; և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերի առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են (SPPI):

Կազմակերպությունը կարող է սկզբնական ճանաչման պահին առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներն անշրջելիորեն նախորոշել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող մշտական հիմունքներով ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այս որոշումը կայացվել է գործիք-առ-գործիք հիմունքով:

Այն ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվել որպես ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերոնշյալ հատվածում, չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Սա իր մեջ ներառում է բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվը, որը այլ կերպ համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջացով իրական արժեքով չափման պահանջներին, Կազմակերպությունը կարող է մշտական հիմունքներով դասակարգել այդպիսի ֆինանսական ակտիվը որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա վերացնում կամ զգալիորեն նվազեցնում է հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կարող էր առաջանալ հակառակ դեպքում:

<u>*Վերադասակարգում.*</u> Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում իրենց սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, որից հետո Կազմակերպությունը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման համար: Եթե փոփոխվում է բիզնես մոդելը, որի շրջանակում Կազմակերպությունը ֆինանսական ակտիվներ է պահում, ապա այդ փոփոխված ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են: Նոր կատեգորիային վերաբերող դասակարգման և չափման պահանջները կիրառվում են առաջընթաց կիրառման հիմունքներով՝ բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվանից, ինչը հանգեցնում է Կազմակերպության ֆինանսական ակտիվների վերադասակարգմանը: Ընթացիկ ֆինանսական տարվա և նախորդ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բիզնես մոդելում, որի շրջանակում Կազմակերպությունը ֆինանսական ակտիվներ է պահում, փոփոխություններ չեն կատարվել և, հետևաբար, դասակարգում չի կատարվել: Պայմանագրային դրամական միջոցների հոսքերը ներկայացվում են ստորև՝ *Ֆինանսական ակտիվների փոփոխության և ապաճանաչման* վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

<u>*Ֆինանսական ակտիվների արժեզրկում.*</u> ՖՀՄՍ 9 փոխարինում է ՀՀՄՍ 39-ի «առաջացած կորուստ» մոդելը «ակնկալվող պարտքային կորուստ» մոդելով: Արժեզրկման նոր մոդելը կիրառվում է որոշ վարկային հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի, բայց ոչ բաժնային ներդրումների մասով: ՖՀՄՍ 9-ի համաձայն, պարտքային կորուստները ճանաչվում են ավելի շուտ, քան ՀՀՄՍ 39-ի համաձայն:

Կազմակերպությունը ճանաչում է ֆինանսական ակտիվների ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) գծով մասհանումները, որոնք չեն չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Բացառությամբ գնված կամ ի սկզբանե արժեզրկված (ԳԻՍԱ - POCI) ֆինանսական ակտիվների, ԱՊԿ-ները պետք է չափվեն կորուստների գծով մասհանման հաշվառման միջոցով՝ ստորև նշվածների համարժեք գումարի չափով՝

- 12 ամսյա ակնկալվող պարտքային կորուստների չափով, այն է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների մի մասը, որն իրենից ներկայացնում է այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր դեֆոլտի դեպքերից կամ
- Ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր դեֆոլտի դեպքերից ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստի դեպքում ֆինանսական գործիքի համար պահանջվում է կորուստների գծով մասհանումներ, եթե այդ ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո: Բոլոր այլ ֆինանսական գործիքների համար ԱՊԿ-ները չափվում են 12-ամսյա ԱՊԿ-ի չափով:

Այլ դեբիտորական պարտքերի համար կորուստների գծով մասհանումները չափվում են ամբողջ ժամկետում ԱՊԿ-ին համարժեք գումարի չափով:

ԱՊԿ-ները, պարտքային կորուստների ներկա արժեքի՝ հավանականության վրա հիմնված հաշվարկներն են: Դրանք չափվում են Կազմակերպությանը պայմանագրային հիմունքներով վճարման ենթակա դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության ներկա արժեքի հիման վրա, որը Կազմակերպությունը ակնկալում է ստանալ տարբեր տնտեսական սցենարների համեմատության արդյունքում՝ զեղչված ակտիվի արդյունավետ տոկոսադրույքի չափով:

Կազմակերպությունը ընդհանրացված պարտքային ռիսկի բնութագիր ունեցող պորտֆելների դեպքում ԱՊԿ-ն չափում է հավաքական հիմունքով:

ԱՊԿ-ի չափման մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծան. 24-ում, ներառյալ հավաքական հիմունքով գնահատման դեպքում գործիքների խմբավորման մեթոդների մասին:

Կազմակերպության ֆինանսական ակտիվները դասակարգված են ըստ հետևյալ չափման կատեգորիաների՝

Ֆինանսական ակտիվներ	Բիզնես մոդել	SPPI	Չափման կատեգորիա
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Պահված պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հավաքագրման նպատակով	Դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ	Ամորտիզացված արժեք
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	Այլ բիզնես մոդել	Դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով (պարտադիր)
Հաճախորդներին տրված վարկեր	Պահված պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հավաքագրման նպատակով	Դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ	Ամորտիզացված արժեք
Ներդրումային արժեթղթեր	Պահված պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հավաքագրման նպատակով	Դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ	Ամորտիզացված արժեք

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկվում է այն ժամանակ, երբ տեղի են ունենում ֆինանսական ակտիվի համար ակնկալվող հետագա դրամական հոսքերի վրա շրջադարձային ազդեցություն ունեցող մեկ կամ ավելի իրադարձություններ: Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվները համարվում են փուլ 3-ի ակտիվներ: Պարտքային առումով արժեզրկման փաստը ներառում է հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտարկելի տվյալները՝

- Փոխառուի կամ գործընկերոջ զգալի ֆինանսական դժվարությունները,
- Պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը,
- Վարկի կամ փոխառության վերաձևակերպում այնպիսի պայմանով, ինչպիսին Կազմակերպությունը չէր նախատեսել:
- Ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը, կամ
- Հնարավոր է դառնում, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

Գնված կամ ի սկզբանե պարտքային առումով արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվներ. POCI ֆինանսական ակտիվների նկատմամբ այլ մոտեցում է ցուցաբերվում, քանի որ դրանք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Այսպիսի ակտիվների համար Կազմակերպությունը ճանաչում է սկզբնական ճանաչումից ի վեր ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստում բոլոր փոփոխությունները որպես կորուստների գծով մասհանում, իսկ ցանկացած փոփոխություն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այսպիսի ակտիվների համար

բարենպաստ փոփոխությունն առաջացնում է արժեզրկման գծով օգուտ: 2021 և 2020 թթ. ընթացքում Կազմակերպությունը չի գնել կամ ստեղծել պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ:

<u>ԱՊԿ գծով մասհանման ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում.</u> ԱՊԿ գծով մասհանումները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ՝

- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում;
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների դեպքում՝ կորուստների գծով ոչ մի պահուստ չի ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ հաշվեկշռային արժեքը չափվում է իրական արժեքով:
- Վարկային հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի դեպքում՝ որպես պահուստ, և
- Այն դեպքում, երբ ֆինանսական գործիքը ներառում է և օգտագործված, և չօգտագործված բաղադրիչ, և Կազմակերպությունը չի կարողանում որոշել վարկային գծի բաղադրիչի մասով ԱՊԿ-ն օգտագործված բաղադրիչից առանձին, ապա Կազմակերպությունը ներկայացնում է կորուստների գծով համախմբված պահուստ երկու բաղադրիչների համար: Համախմբված գումարը ներկայացվում է որպես օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից նվազում: Օգտագործված բաղադրիչի համախառն արժեքից կորուստների գծով մասհանման ցանկացած գերազանցում՝ ներկայացվում է որպես պահուստ:

<u>*Ֆինանսական ակտիվների փոփոխություն և ապաճանաչում.*</u> ֆինանսական ակտիվների փոփոխությունները տեղի են ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական միջոցների հոսքերը կառավարող պայմանագրային պայմանները վերանայվում կամ այլ կերպ փոփոխվում են ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման և մարման ժամկետների միջակայքում: Փոփոխությունն ազդում է պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերի գումարի և/կամ ժամկետների վրա անմիջապես կամ ապագայում:

Կազմակերպությունը վերանայում է ֆինանսական դժվարություններ ունեցող հաճախորդների վարկային պայմանագրի պայմանները, որպեսզի ապահովի ստացման ենթակա գումարների առավելագույն հավաքագրումը և նվազագույնի հասցնի դեֆոլտի ռիսկերը: Վարկի պայմանները վերանայվում են այն դեպքում, երբ չնայած վարկառուն հնարավոր ամեն ինչ արել է սկզբնական պայմանագրային վճարման պայմանները կատարելու համար, սակայն առկա է վճարումների չկատարման մեծ ռիսկ կամ դա արդեն տեղի է ունեցել, և ակնկալվում է, որ վարկառուն կկարողանա կատարել իր արդեն վերանայված պարտավորությունները: Վերանայված պայմանները հիմնականում ներառում են վարկի մարման ժամկետների երկարաձգում, վարկի դրամական միջոցների հոսքերի ժամկետների փոփոխություն (մայր գումարի և տոկոսների մարում), վճարման ենթակա գումարների կրճատում (մայր գումարի և տոկոսային գումարների համաներում) և պայմանագրային դրույթների փոփոխություններ:

Ֆինանսական ակտիվի փոփոխման դեպքում Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք այս փոփոխության արդյունքում առաջանում է ապաճանաչում: Կազմակերպության քաղաքականության համաձայն, փոփոխությունը հանգեցնում է ապաճանաչման, երբ այդ փոփոխության արդյունքում էապես տարբերվող այլ պայմանագրային պայմաններ են ստեղծվում: Որոշելու համար, թե արդյոք փոփոխված պայմանները էապես տարբերվում են սկզբնական պայմանագրային պայմաններից, Կազմակերպությունը հաշվի է առնում հետևյալը՝

- Կատարվում է քանակական գնահատում, որպեսզի համեմատվեն սկզբնական պայմաններով՝ մնացած պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքը և վերանայված պայմաններով պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և երկու գումարներն էլ զեղչվում են սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Եթե ներկա արժեքի տարբերությունը 10 տոկոսից ավել է, ապա Կազմակերպությունը որոշում է, որ առկա է վարկային պայմանագրի, որի պայմաններն էականորեն տարբեր են, ինչն էլ հանգեցնում է ապաճանաչման:
- Որակական գործոններ, ինչպիսիք են պայմանագրային դրամական հոսքերը պայմանագրի փոփոխությունից հետո այլևս չեն հանդիսանում բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI), արժույթի փոփոխությունը կամ պայմանագրային կողմի փոփոխությունը, տոկոսադրույքների փոփոխության մեծությունը, մարման ժամկետը, պայմանագրային սահմանափակումները:

Եթե պայմանները էապես տարբերվում են, ապա Կազմակերպությունը ապաճանաչում է սկզբնական ֆինանսական ակտիվները և ճանաչում է «նոր» ակտիվը իրական արժեքով և վերահաշվարկում է նոր արդյունավետ տոկոսադրույք այդ ակտիվի համար: Վերանայման ամսաթիվ է համարվում արժեզրկման հաշվարկի նպատակով սկզբնական ճանաչման ամսաթիվը, այդ թվում պարտքային ռիսկի նշանակալի աճի առկայությունը որոշելու նպատակով:

Եթե պայմանները էապես չեն տարբերվում, ապա վերանայումը կամ փոփոխությունները ապաճանաչման չեն հանգեցնում, և Կազմակերպությունը վերահաշվարկում է համախառն հաշվեկշռային արժեքը՝ հիմք ընդունելով ֆինանսական ակտիվի վերանայված դրամական հոսքերը, և ճանաչում է փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը շահույթում կամ վնասում: Նոր համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է՝ զեղչելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով գնված կամ ի սկզբանե արժեզրկված ֆինանսական ակտիվների համար):

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (ներառյալ՝ էապես տարբեր պայմանագրային պայմանների փոփոխման արդյունքում ուժը կորցնելը) կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ ռիսկերն ու օգուտները:

Եթե Կազմակերպությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Կազմակերպությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, ապա Կազմակերպությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը:

<u>*Դեֆոլտի սահմանումը.*</u> ԱՊԿ-ի սահմանման համար կարևոր է սահմանել դեֆոլտը: Վերջինիս սահմանումը օգտագործվում է ԱՊԿ-ի չափը և կորուստների գծով մասհանումները 12-ամսյա կամ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստի վրա հիմնված լինելը որոշելու համար, քանի որ դեֆոլտը դեֆոլտի հավանականության (PD - ԴՀ) բաղադրիչ է, որն ազդում է ԱՊԿ-ի գնահատման, ինչպես նաև պարտքային ռիսկի զգալի աճի հայտնաբերման վրա:

Կազմակերպությունը ստորև նշված հանգամանքների դեպքում արձանագրում է դեֆոլտ, երբ՝

- Վարկառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց ցանկացած նյութական վարկային հանձնառություն Կազմակերպության նկատմամբ, կամ
- Հավանական է, որ վարկառուն ամբողջությամբ չի վճարի իր վարկային հանձնառությունները:

Դեֆոլտի սահմանումը համապատասխանեցվում է տարբեր տեսակի ակտիվների տարբեր առանձնահատկություններն արտացոլելու նպատակով:

Վարկառուի՝ իր վարկային հանձնառությունների չկատարման հավանականության գնահատման նպատակով Կազմակերպությունը հաշվի է առնում որակական և քանակական ցուցանիշները: Քանակական տեղեկատվությունը ներառում է նույն վարկառուի այլ պարտավորությունների չկատարման կամ վճարի ուշացման մասին տվյալներ, որոնք այս վերլուծության կարևոր մասն են հանդիսանում: Դեֆոլտը գնահատելիս Կազմակերպությունը հաշվի է առնում տեղեկատվության տարբեր աղբյուրներ, որոնք ստացվել են ներքին ուղիներով կամ արտաքին աղբյուրներից:

Ստորև աղյուսակը տալիս է ՖՀՄՍ 9-ի համաձայն արժեզրկման պահանջների ամփոփ նկարագիրը (գնված կամ ի սկզբանե արժեզրկված ֆինանսական ակտիվներից բացի)՝

Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3
(Սկզբնական ճանաչում)	(Պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր)	(Պարտքային առումով արժեզրկված ակտիվներ)
12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ	Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ

Փուլ 3-ում գտնվող պարտքային առումով արժեզրկված ակտիվները անցնում են 6-ամսյա փորձաշրջան փուլ 2 տեղափոխվելուց առաջ պայմանագրի վարկային էական պարտավորությունները կատարելուց հետո:

Պարտքային ռիսկի նշանակալի աճ. Սկզբնական ճանաչումից ի վեր ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճի գնահատման նպատակով Կազմակերպությունը հաշվի է առնում ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը հասանելի է առանց անհարկի ծապսերի կամ ջանքերի: Այն ներառում է և՛ քանակական, և՛ որակական տեղեկատվություն և վերլուծություն՝ հիմնված Կազմակերպության պատմական փորձի և պարտքային ռիսկի մասնագիտական վերլուծության վրա, և ներառում է ապագայամետ տեղեկատվություն:

Այս գնահատման նպատակն է պարզել, արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, համեմատելով՝

- Վարկի ամբողջ ժամկետում հաշվառվող մնացած ԴՀ-ն հաշվետու ամսաթվի դրությամբ, և
- Վարկի ամբողջ ժամկետի ընթացքում հաշվառվող մնացած ԴՀ-ն այն ժամանակահատվածի համար, երբ այն գնահատվել է՝ հիմք ընդունելով ռիսկերի սկզբնական ճանաչման ժամանակ առկա փաստերը և հանգամանքները (անհրաժեշտության դեպքում ճշգրտելով կանխավճարի ակնկալիքների փոփոխությունների մասով)

Պարտքային ռիսկի նշանակալի աճը որոշելիս Կազմակերպությունը օգտագործում է հետևյալ երեք հայտանիշները՝

- Քանակական թեստ՝ հիմնված ԴՀ-ի շարժի վրա;
- «Վերանայման» կարգավիճակը; և
- 30 օր ժամկետանց լինելու հանգամանքը:

«Վերանայում» առաջանում է վարկային պայմանագրի վերակառուցման ժամանակ, այսինքն՝ տոկոսագումարի և մայր գումարի վճարման ժամկետների երկարաձգում վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում, որը տարբերվում է վարկի տրամադրման ժամանակ եղած վիճակից, և վարկառուն դիմել է Կազմակերպությանը վարկի վճարման ժամանակացույցի փոփոխման համար: Վարկային պայմանագրի վերանայվում է միայն այն ժամանակ, երբ Կազմակերպության համապատասխան ստորաբաժանումը համոզված է, որ վարկառուն կկարողանա վճարումները կատարել նոր ժամանակացույցին համապատասխան:

2020թ. ընթացքում երկրում հայտարարված արտակարգ դրության ժամանակ և COVID-19 համաճարակի բռնկման հետևանքով մտցված շրջափակումների պատճառով մի շարք վարկերի տրամադրվել է 2 ամսվա արտոնյալ ժամանակահատված: Այս բոլոր վարկերը վերադասակարգվել են 2-րդ փուլ, ապա վեց հաջորդական, առանց ուշացումների վճարներից հետո, ճանաչվել են վերականգնված և տեղափոխվել 1 փուլ: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1-ին փուլում վարկերի համախառն հաշվեկշռային արժեքը կազմում է 782,824 հազար ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,017,218 հազար ՀՀ դրամ) :

Բազմաթիվ տնտեսական սցենարների հիման վրա Կազմակերպությունը որոշում է ԴՀ-ն սկզբնական ճանաչման ժամանակ և հետագա հաշվետու ամսաթվերին: Տարբեր տնտեսական սցենարներ առաջացնում են տարբեր ԴՀ-ներ: Այս տարբեր սցենարների կշիռը ձևավորում է դեֆոլտի միջին կշռված հավանականության հիմք, որն օգտագործվում է պարտքային ռիսկի նշանակալի աճը որոշելիս: Կանխատեսումները ներառում են Հայաստանի տնտեսության ապագա հեռանկարների վերաբերյալ տեղեկություններ, ստացված տնտեսական փորձագետների զեկույցներից, ֆինանսական վերլուծաբաններից, պետական մարմիններից և այլ նմանատիպ կազմակերպություններից, ինչպես նաև փաստացի և կանխատեսական տնտեսական տեղեկությունների ներքին և արտաքին տարբեր աղբյուրներից:

Դուրսգրում. Ֆինանսական ակտիվները դուրս են գրվում այն ժամանակ, երբ Կազմակերպությունը չունի ֆինանսական ակտիվի վերականգնման (ամբողջական կամ մասնակի) ողջամիտ ակնկալիքներ: Այս դեպքում Կազմակերպությունը որոշում է, որ վարկառուն չունի համապատասխան ակտիվներ կամ եկամտի բավարար աղբյուրներ դուրս գրման ենթակա գումարների մարման նպատակով բավարար դրամական միջոցներ ստեղծելու համար:

Դուրսգրումը ներառում է ապաճանաչման իրադարձություն: Կազմակերպությունը կարող է դուրս գրված ֆինանսական ակտիվների նկատմամբ հարկադիր միջոցներ կիրառել: Կազմակերպության գործադրած հարկադիր միջոցների արդյունքում հավաքագրված գումարները արժեզրկման գծով օգուտ կառաջացնեն:

Կազմակերպության դուրսգրման քաղաքականությունը որոշվում է վերականգնման կորերի վերլուծության հիման վրա, որն առաջանում է ՖՀՄՍ 9-ի backtesting-ի և մոդելի ստուգման արդյունքում՝ որոշելու համար այն կետը, որի դեպքում ողջամտորեն կարելի է ակնկալել պորտֆելի 10% (տաս տոկոս)-ից պակաս մնացորդային գումարի հավաքագրում, որը գտնվում է դեֆոլտում առավելագույնը մինչև 24 ամիս Փուլ 3-ի վարկերի համար:

Վերականգնման կորի վերլուծության մեջ անհրաժեշտ է դիտարկել երեք պայման նախքան ստորև նշված քայլերի մեկնաբանության անորոշության արդյունքում մասնագիտական դատողություններին վերադառնալը՝

1) Կորի ձևը – անկախ այն բանից, արդյոք կորի արագացման գործառույթը սահմանվում է որպես ժամանակի ամենաբարձր կամ «վերջնական» վերականգնման դրույքաչափը որպես մոնոտոն («աստճանական») կամ արագ («կտրուկ»);
2) Վերականգնման վերջնական դրույքաչափի սաղդակը - 0%-ից մինչև 100%, անկախ այն բանից, արդյոք մեծ է, թե փոքր վերականգնման դրույքաչափը, և
3) Վերոնշյալ 10%-ի չափանիշի ամբողջական կամ հարաբերական կիրառման ընդունումը – արդյոք վերոնշյալ 1-ին և 2-րդ պայմանների դիտարկումից հետո մոնոտոն և լայնամասշտաբ լինելու վկայությունը պահանջում է 10%-ից պակաս վերականգնման վերջնական դրույքաչափի դուրսգրման չափանիշի կիրառում (ամբողջական կիրառում) կամ արագ և փոքրամասշտաբ լինելու վկայությունը պահանջում է 0.9-ով բազմապատկած վերջնական դրույքաչափի չափանիշի կիրառումը:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ.

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները սահմանվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են շահույթում կամ վնասում ճանաչվող վերագնահատման արդյունքում՝ այն չափով, որքանով նրանք նախորոշված հեջային գործիքների մաս չեն կազմում: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ֆինանսական պարտավորության համար վճարված ցանկացած տոկոս և շահույթի կամ վնասի այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում դասակարգվում որպես «զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներ» տողում:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները (ներառյալ փոխառությունները, թողարկված պարտքային արժեքթղթերը) սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքի ծախսերը: Դրանք այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային ծախսի համապատասխան ժամանակաշրջանում տեղաբաշխման մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն ավելի մանրամասն ներկայացված է ստորև «զուտ տոկոսային եկամուտ» բաժնում:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը. Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Կազմակերպության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Որակական գործոնների, քանակական գործոնների և որակական և քանակական գործոնների ընդհանուր ազդեցության ուսումնասիրություն: Կազմակերպությունը եզրակացնում է, որ փոփոխությունն էական է հետևյալ որակական գործոնների արդյունքում՝

- Ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն;
- Գրավի և պարտքի ապահովման այլ միջոցների փոփոխություն;
- Փոխարկման տարբերակի ներառում;

- Ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման նպատակով պայմանագրային պայմանները զգալիորեն տարբերվում են այն դեպքում, երբ նոր պայմաններով դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը (ներառյալ վճարված գումարները, հանած յուրաքանչյուր վճար, ստացված և զեղչված՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը) առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե փոփոխությունն էական չէ, ապա (1) նախքան փոփոխությունը՝ պարտավորության հաշվեկշռային արժեքի, և (2) փոփոխությունից հետո դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև առկա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում՝ որպես փոփոխության արդյունքում օգուտ կամ վնաս՝ այլ օգուտների և վնասների կազմում:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ. Կազմակերպությունը կնքում է գործարքներ տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով, որոնցից մի քանիսը դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, մինչդեռ մյուսները պահվում են տոկոսադրույքի ռիսկին, պարտքային ռիսկին և արտարժույթի դրույքաչափի ռիսկին ենթարկվածությունը կառավարելու նպատակով: Պահվող ածանցյալ գործիքները ներառում են արտարժույթի փոխանակման պայմանագրեր, տոկոսադրույքի սվոփեր և վարկային արժեզրկման սվոփեր: Ածանցյալ գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման ամսաթվով, և հետագայում վերաչափվում իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվեկշռային ամսաթվի դրությամբ: Դրանից բխող օգուտը/վնասն անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ածանցյալ ֆինանսական գործիքները համարվում են ակտիվներ, եթե դրանց իրական արժեքը դրական է, և համարվում են պարտավորություններ, եթե դրանց իրական արժեքը բացասական է:

Ածանցյալ գործիքը ներկայացվում է որպես ոչ ընթացիկ ակտիվ կամ ոչ ընթացիկ պարտավորություն, եթե գործիքի մնացորդային ժամկետը գերազանցում է 12 ամիսը և չի ակնկալվում, որ կիրականացվի կամ կկարգավորվի 12 ամսվա ընթացքում: Այլ ածանցյալ գործիքներ ներկայացվում են որպես ընթացիկ ակտիվներ կամ ընթացիկ պարտավորություններ:

Զուտ տոկոսային եկամուտ. Բոլոր ֆինանսական գործիքների մասով, բացառությամբ վաճառքի համար պահվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող գործիքներից, տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են «զուտ տոկոսային եկամուտում» որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս» շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների տոկոսը ներառվում է ժամանակաշրջանի ընթացքում իրական արժեքի շարժի մեջ, «Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող առևտրային ակտիվներից և այլ ֆինանսական ակտիվներիից և առևտրային պարտավորություններից» և «Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներից» հոդվածներում:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է բոլոր ապագա վճարման կամ ստացման ենթակա գումարները և միջնորդավճարները պայմանագրային կողմերի միջև, որոնք ուղղակիորեն վերագրելի են որոշակի պայմաններով վարկային պայմանագրին, գործարքի հետ կապված ծախսերին և այլ պարգևավճարներին կամ զեղչերին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով գործարքի արժեքը ճանաչվում է շահույթում կամ վնասում սկզբնական ճանաչման ժամանակ:

Վճարներ և կոմիսիոն եկամուտ/ծախս. վճարները և կոմիսիոն ծախսերն ու եկամուտներն արդյունավետ տոկոսադրույքի անբաժան մաս հանդիսացող վճարներից բացի ներառում են նաև այլ վճարներ (տես վերոնշյալ բաժինը): Կազմակեպության շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այս մասում ընդգրկված վճարները, ի թիվս այլ վճարների, ներառում են վարկային համաձայնագրի սպասարկման վճարներ, վարկային հանձնառությունների գծով չօգտագործման վճարներ, երբ քիչ հավանական է, որ այդ վճարները կառաջացնեն հատուկ վարկային հանձնառություններ և վարկային սինդիկացիոն վճարներ:

Ծառայությունների գծով վճարները և կոմիսիոն ծախսերը հաշվարկվում են ծառայությունների մատուցման ժամանակ:

Որոշելու համար, արդյոք պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կստեղծի կամ կմեծացնի հաշվապահան հաշվառման անհամապատասխանությունը շահույթում կամ վնասում, Կազմակերպությունը գնահատում է, արդյոք ակնկալվում է պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցության հաշվեգրում շահույթում կամ վնասում՝ պայմանավորված շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքի իրական արժեքի փոփոխությամբ: Այս որոշումը կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ:

Բաժնային գործիքներ: Բաժնային գործիքը ցանկացած այն պայմանագիրն է, որը վկայում է Կազմակերպության ակտիվում ունեցած բաժնեմասնակցության մասը՝ հանած բոլոր պարտավորությունները: Բաժնային գործիքները ճանաչվում են որպես մուտքեր՝ հանած թողարկման ուղղակի ծախսերը:

Կազմակերպության սեփական բաժնային գործիքների հետգնումը ճանաչվում և ուղղակիորեն նվազեցվում սեփական կապիտալից: Կազմակերպության սեփական բաժնային գործիքների գնման, վաճառքի, թողարկման կամ դադարեցման արդյունքում առաջացած օգուտները կամ վնասները չեն ճանաչվում շահույթում կամ վնասում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, վարկավորող կազմակերպություններից ստացվելիք գումարները, որոնց մարման սկզբնական ժամկետը չի գերազանցում 90 օրը և որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Հիմնական միջոցներ. հիմնական միջոցի միավորը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի հիման վրա և նախատեսված է զրոյացնելու ակտիվների արժեքը դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով հետևյալ օգտակար ծառայության ժամկետներով՝

- Կապի և հաղորդակցության միջոցներ	— 3 տարի;
- Գրասենյակային գույք	— 5 տարի;
- Փոխադրամիջոցներ	— 5 տարի;
- Այլ հիմնական միջոցներ	— 5 տարի:

Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումները մաշեցվում են վարձակալության ժամկետից և օգտակար ծառայության ժամկետից նվազագույնով, եթե առկա չէ ողջամիտ համոզվածություն այն մասին, որ Կազմակերպությունը կստանա ակտիվի նկատմամբ

սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում կամ կերկարաձգի վարձակալության ժամկետը:

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրս բերումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի վաճառքից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներ. Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները, որոնք առանձին են ձեռք բերվել, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ծրագրերի օգտակար ծառայության ժամկետ է համարվում 20 տարի, իսկ լիցենզիաներինը՝ 4 տարի: Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով՝ օգտական ծառայության հաշվարկված ժամկետի համար:

Ամորտիզացիան ճանաչվում է ուղիղ գծով `օգտակար ծառայության ժամկետների հաշվին: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում՝ գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվներ՝ հետազոտության և զարգացման ծախս: Հետազոտության գործունեության ծախսը ճանաչվում է որպես այն ժամանակաշրջանի ծախս, որում այն առաջացել է:

Մշակումից (կամ ներքին նախագծի մշակման փուլից) առաջացող ներքին ոչ նյութական ակտիվը ճանաչվում է միայն, եթե ներկայացվել են՝

- Ոչ նյութական ակտիվի կատարման տեխնիկական իրագործելիություն է, որը այն դարձնում է հնարավոր օգտագործման կամ վաճառքի համար;
- Ոչ նյութական ակտիվի կատարման, օգտագործման կամ վաճառքի մտադրություն;
- Ոչ նյութական ակտիվի օգտագործման կամ վաճառքի հնարավորություն;
- Ինչպես կարող է ոչ նյութական ակտիվը օգտվել հետագա հավանական տնտեսական օգուտներից;
- տեխնիկական, ֆինանսական և այլ ռեսուրսների հնարավորություն, որոնք կօգնեն կատարել զարգացումը և ոչ նյութական ակտիվի օգտագործումը կամ վաճառքը և
- Զարգացման ընթացքում ոչ նյութական ակտիվին վերագրելի ծախսը չափելու հնարավորություն:

Ներքին ոչ նյութական ակտիվների համար սկզբնապես ճանաչված գումարը ծախսի այն գումարն է, որն առաջացել է ոչ նյութական ակտիվի՝ վերոնշյալ չափանիշներին բավարարելու ամսաթվին: Եթե հնարավոր չէ ճանաչել ներքին ոչ նյութական ակտիվը, զարգացման ծախսը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում այն առաջացել է:

Սկզբնական ճանաչումից հետո ներքին ոչ նյութական ակտիվները գրանցվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկման կուտակված կորուստները այն նույն հիմունքով, որով ոչ նյութական ակտիվները ձեռք են բերվում առանձին:

Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում. ոչ նյութական ակտիվները ապաճանաչվում են դրանք օտարելիս կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գուդվիլից. յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Կազմակերպությունը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի գնահատվեն արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Կազմակերպությունը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության համար առնվազն տարեկան մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել: Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է: Օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով մինչ հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է ավելի քիչ քան հաշվեկշռային արժեքը, ապա հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչ փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչ վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է եկամուտ կամ կորստում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեզրկումից կորստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Հարկում. շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ. ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Կազմակերպության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Պահուստ է ճանաչվում այն հարցերի գծով, որոնց համար հարկի որոշումը անորոշ է, սակայն հավանական է համարվում, որ ապագայում կլինի դրամական միջոցների արտահոսք դեպի հարկային մարմին: Պահուստները չափվում են վճարման ենթակա գումարի լավագույն գնահատմամբ: Գնահատումը հիմնված է Ընկերության հարկային մասնագետների դատողությունների վրա, որոնք հիմնված են նման գործունեության հետ կապված նախկին փորձի վրա, և որոշ դեպքերում հիմնված են մասնագիտական անկախ հարկային խորհրդատվության վրա:

Հետաձգված հարկ. հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար (բացի բիզնես միավորումից), որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա: Բացի այդ, հետաձգված հարկային պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունը առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչման արդյունքում:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են դուստր ձեռնարկություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների և համատեղ ձեռնարկություններում բաժնետոմսերի, բացառությամբ այն դեպքերի, երբ Կազմակերպությունը ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նման ներդրումների և տոկոսների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այնքանով, որքանով հավանական է, որ կլինեն բավարար հարկվող շահույթներ, որոնց դիմաց կօգտագործվեն ժամանակավոր տարբերությունների օգուտները, և ակնկալվում է, որ դրանք կվերադարձվեն կանխատեսելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր. ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Պահուստներ. պահուստները ճանաչվում են, երբ Կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Կազմակերպությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերը և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Կազմակերպության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ. պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ ցանկացած պայմանագրային արտահոսքի հավանականությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, բայց դրանք բացահայտվում են, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Գրավ. Կազմակերպությունը որպես հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց ընդունում է գրավ, երբ դա նպատակահարմար է համարվում: Գրավը հիմնականում լինում է հաճախորդի ակտիվների նկատմամբ կոշտ գրավի տեսքով և Կազմակերպությանը վերապահվում է պահանջի իրավունք այս ակտիվների նկատմամբ հաճախորդի առկա և ապագա պարտավորությունների դիմաց:

Սեգմենտային հաշվետվություն. գործառնական սեգմենտը Կազմակերպության բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեության մեջ և որոնցից այն կարող է ստանալ եկամուտներ և կրել ծախսեր (ներառյալ Կազմակերպության այլ բաղադրիչների հետ գործառնություններին վերաբերող եկամուտները և ծախսերը), որի գործառնական արդյունքները պարբերաբար վերանայվում են Գործառնական Հարցերով Հիմնական Որոշումները Կայացնողի կողմից՝ սեգմենտին հատկացվելիք միջոցների վերաբերյալ որոշումներ կայացնելու և դրա կատարողականը գնահատելու նպատակով, և որի համար առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն:

Կազմակերպության աշխատանքները մեծապես ինտեգրացված են և ՖՀՄՍ 8. «Գործառնական սեգմենտներ» ստանդարտի իմաստով հանդիսանում են մեկ բիզնես սեգմենտ: Ղեկավարությունը Կազմակերպության առանձին բաղադրիչների գործառնական արդյունքներն առանձին չի ուսումնասիրում: Ակտիվները հիմնականում կենտրոնացած են Հայաստանի Հանրապետությունում, իսկ եկամուտների ու շահույթի մեծ մասը ստացվում են Հայաստանի Հանրապետությունում կատարվող գործարքներից կամ դրանց առնչությամբ: Գործառնական Հարցերով Հիմնական Որոշում Կայացնողը՝ Կազմակերպության դեպքում Տնօրենների խորհուրդը, միայն ստանում և վերանայում է Կազմակերպության վերաբերյալ ամբողջական տեղեկությունները:

Կազմակերպության հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս՝ Կազմակերպության ղեկավարությանը անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումները և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

4. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Կազմակերպության հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս Կազմակերպության ղեկավարությանն անհրաժեշտ է լինում կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումներն և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին, կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Այս բացահայտումը ներկայացնում է այն հարցերը, որոնք ունեն դատողության կամ բարդության առավել բարձր աստիճան և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները, որոնք ունեն զգալի ռիսկեր, որոնք հանգեցնում են հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում էական ճշգրտմանը: Յուրաքանչյուր գնահատման մասին մանրամասն տեղեկատվությունը ներառված է համապատասխան բացահայտումներում, այդ թվում ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր առնչվող հոդվածի համար հաշվարկման հիմքի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ակնկալվող պարտաքային կորուստների գծով մասհանման չափումը. Ամորտիզացված արժեքով և այլ համապարփակ եկամուտներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների համար ակնկալվող պարտքային կորուստներին ուղղված մասհանումների (ԱՊԿ) չափումը այն

ոլորտն է, որը պահանջում է համալիր մոդելների և ապագա տնտեսական պայմանների և վարկային վարքագծի վերաբերյալ զգալի ենթադրություններ (օրինակ՝ հաճախորդների դեֆոլտի հավանականությունը և դրա արդյունքում առաջացող կորուստները):

ԱՊԿ-ի չափման ժամանակ հաշվապահական պահանջների կիրառման համար անհրաժեշտ են նաև մի շարք կարևոր դատողություններ, ինչպիսիք են՝

- պարտքային ռիսկի նշանակալի աճի չափանիշների որոշում,
- ԱՊԿ-ի չափման համար համապատասխան մոդելների և ենթադրությունների ընտրություն;
- Յուրաքանչյուր վարկատեսակի/շուկայի և նրանց համապատասխան ԱՊԿ-ի համար սպասվելիք իրավիճակների քանակների և տեսակարար կշիռների սահմանում,
- ԱՊԿ-ի չափման նպատակով համանման ֆինանսական ակտիվների խմբերի ստեղծում:

ՀՀ ԿԲ պահուստի գնահատում. ԿԲ-ի պահուստի գնահատումը հիմնված է հետևյալ պայմանների և դրույթների կիրառման վրա՝

- 2020 թվականի համար 240,000 հազար ՀՀ դրամի պահուստ է հատկացվել ՀՀ ԿԲ ստուգման ակտի հիման վրա;
- Սպառողական վարկերի մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասով 2018թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հուլիսի 20-ն ընկած ժամանակահատվածում տրված վարկերի գծով՝ հիմք ընդունելով 365 օր 360 օրվա փոխարեն;
- Սպառողական վարկերի մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի և 8/05 կանոնակարգի 86-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման մասով 2018թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տրված վարկերի գծով;

Պահուստի հաշվարկի նպատակով կիրառված ժամանակահատվածի վերաբերյալ առկա է եղել անորոշություն: 2021 թվականի ընթացքում ՀՀ ԿԲ պահուստը վերահաշվարկվել է 113,500 հազար դրամի չափով՝ ՀՀ ԿԲ լրացուցիչ պարզաբանման համաձայն, որը սահմանում է կիրառել "Սպառողական վարկերի մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի և 8/05 կանոնակարգի 86-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման մասով պահուստի վերահաշվարկ, 2019 թ. օգոստոսի 16-ից հետո ընկած ժամանակահատվածում տրված վարկերի գծով: Արդյունքում հաշվեգրվել է 126,500 հազար դրամի եկամուտ:

5. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամ	605,699	190,628
Ընթացիկ հաշիվներ	944,339	534,066
	1,550,038	**724,694**
Հանած՝ ակնկալվող պարտքային կորուստներ	*(51)*	*(7)*
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**1,549,987**	**724,687**

ՖՀՄՍ 9-ի համաձայն, ԱՊԿ կորուստների գծով պահուստների համադրումը ըստ փուլերի ներկայացվում է ստորև՝

	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստներ առ 1 հունվար 2020թ.	**899**	**899**
Պահուստայի վերականգնում	(892)	(892)
Ակնկալվող պարտքային կորուստներ առ 31 դեկտեմբեր 2020թ.	**7**	**7**
Պահուստային ծախս	44	44
Ակնկալվող պարտքային կորուստներ առ 31 դեկտեմբեր 2021թ.	**51**	**51**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ընթացիկ հաշիվները պահվում են առևտրային ռեզիդենտ բանկերում, ընդ որում մնացորդի 81.7%-ը պահվում է երեք ռեզիդենտ առևտրային բանկում: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ընթացիկ հաշիվները պահվում են առևտրային ռեզիդենտ բանկերում, ընդ որում մնացորդի 81.8%-ը պահվում է երեք ռեզիդենտ առևտրային բանկում:

6. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	23,117,991	24,298,801
Հանած՝ ակնկալվող պարտքային կորուստներ	(4,870,267)	(4,488,569)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**18,247,724**	**19,810,232**

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերը ըստ վարկատեսակների՝

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Համախառն վարկեր	Ակնկալվող պարտքային կորուստներ	Զուտ վարկեր	Ակնկալվող պարտքային կորուստներ համախառն վարկերի գծով, %
Անհատական գյուղատնտեսական վարկեր	12,556,617	(2,520,618)	10,035,999	20.1%
Անհատական բիզնես վարկեր	6,886,862	(1,184,909)	5,701,953	17.2%
Սպառողական վարկեր	3,674,512	(1,164,740)	2,509,772	31.7%
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**23,117,991**	**(4,870,267)**	**18,247,724**	**21.1%**

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Համախառն վարկեր	Ակնկալվող պարտքային կորուստներ	Զուտ վարկեր	Ակնկալվող պարտքային կորուստներ համախառն վարկերի գծով, %
Անհատական գյուղատնտեսական վարկեր	13,159,094	(2,140,871)	11,018,223	16.3%
Անհատական բիզնես վարկեր	6,792,891	(1,336,288)	5,456,603	19.7%
Սպառողական վարկեր	4,346,816	(1,011,410)	3,335,406	23.3%
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**24,298,801**	**(4,488,569)**	**19,810,232**	**18.5%**

Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ նշված մնացորդները ներկայացնում են համապատասխան վարկատեսակների գծով մնացորդները

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերն ըստ տնտեսության ոլորտների՝

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Համախառն վարկերի պորտֆել	Համախառն վարկերի պորտֆել, %	Համախառն վարկերի պորտֆել	Համախառն վարկերի պորտֆել, %
Գյուղատնտեսություն	12,922,509	55.90%	13,695,466	56.36%
Ծառայություն	4,158,855	17.99%	4,791,741	19.72%
Առևտուր	3,761,204	16.27%	3,184,063	13.10%
Արտադրություն	786,060	3.40%	849,593	3.50%
Տրանսպորտ	660,728	2.86%	769,154	3.17%
Շինարարություն	49,012	0.21%	90,927	0.37%
Այլ	779,623	3.37%	917,857	3.78%
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**23,117,991**	**100.00%**	**24,298,801**	**100.00%**

Ստորև ներկայացված է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի շարժը:

	Գյուղա-տնտեսու-թյուն	Առևտուր	Արտադրու-թյուն	Տրանս-պորտ	Շինարարու-թյուն	Ծառայու-թյուն	Այլ	Ընդամենը
2020թ. հունվարի 1	**1,068,409**	**434,597**	**110,747**	**82,388**	**53,621**	**469,815**	**118,910**	**2,338,487**
Պահուստային ծախս	1,432,385	154,083	46,910	98,318	17,136	876,630	28,051	**2,653,513**
Նախկինում դուրս գրված ակտիվների վերականգնում	147,782	88,461	28,113	9,996	9,790	10,199	94,466	**388,807**
Հաճախորդներին տրված վարկերի դուրսգրում	(520,008)	(186,216)	(56,379)	(50,011)	(34,204)	(169,008)	(160,155)	**(1,175,981)**
Փուլ 3 վարկերի տոկոսային եկամտի ճշգրտում	62,719	21,967	2,661	2,749	1,198	37,866	498	**129,658**
Արտարժույթային տարբերություններ	75,269	21,878	5,606	5,215	2,336	38,781	5,000	**154,085**
2020թ. դեկտեմբերի 31	**2,266,556**	**534,770**	**137,658**	**148,655**	**49,877**	**1,264,283**	**86,770**	**4,488,569**
Պահուստային ծախս	969,856	25,557	(680)	33,279	20,961	257,357	209,992	**1,516,322**
Նախկինում դուրս գրված ակտիվների վերականգնում	122,876	91,369	25,278	16,079	8,578	25,437	91,103	**380,720**
Հաճախորդներին տրված վարկերի դուրսգրում	(695,016)	(168,514)	(50,781)	(49,379)	(44,092)	(335,026)	(214,099)	**(1,556,907)**
Փուլ 3 վարկերի տոկոսային եկամտի ճշգրտում	126,650	23,035	5,700	6,343	325	54,150	4,642	**220,845**
Արտարժույթային տարբերություններ	(134,963)	(24,202)	(4,102)	(8,146)	(193)	(4,384)	(3,292)	**(179,282)**
2021թ. դեկտեմբերի 31	**2,655,959**	**482,015**	**113,073**	**146,831**	**35,456**	**1,261,817**	**175,116**	**4,870,267**

Գրավի և պարտքի ապահովվության այլ միջոցների վերլուծություն. Կազմակերպությունը մանրակրկիտ ուսումնասիրում է արժեզրկված վարկերի համար պահվող գրավները, երբ ավելի հավանական է դառնում, որ Կազմակերպությանը կանցնի գրավի առարկայի սեփականությունը՝ հնարավոր կորուստները մեղմելու նպատակով: Ֆինանսական ակտիվները և դրանց գծով պահվող գրավների մասին տեղեկատվությունը 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

	2021թ. դեկտեմբերի 31	2020թ. դեկտեմբերի 31
Շարժական միջոցներով գրավադրված վարկեր	1,841,191	2,272,897
Ոչ շարժական միջոցներով գրավադրված վարկեր	5,162,961	3,881,761
Ընդամենը ապահովված վարկեր	**7,004,152**	**6,154,658**
Չապահովված վարկեր՝ էքսպրես վարկեր	13,783,043	16,331,179
Ընդամենը չապահովված վարկեր	**13,783,043**	16,331,179
Ընդամենը վարկեր	**20,787,195**	**22,485,837**
Հաշվեգրված տոկոսագումար	2,158,436	1,557,950
Չամորտիզացված սպասարկման վճարներ, զուտ	172,360	255,014
Հանած՝ ակնկալվող պարտքային կորուստների պահուստը	(4,870,267)	(4,488,569)
Հաճախորդներին տրված վարկեր	**18,247,724**	**19,810,232**

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված բոլոր վարկերը (ընդհանուր պորտֆելի 100%) տրվել են Հայաստանի Հանրապետությունում գործող անհատներին և Կազմակերպություններին, որը ցույց է տալիս, որ առկա է նշանակալի աշխարհագրական կենտրոնացում մեկ շրջանում:

Հաճախորդներին տրված վարկերի գծով այլ տեղեկատվությունները ներկայացված են ծան. 24:

7. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

	Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Կապի և հաղորդակցման միջոցներ	Գրասենյակային գույք	Փոխադրամիջոցներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2020թ. հունվարի 1	**334,516**	**498,945**	**336,557**	**77,826**	**216,044**	**1,463,888**
Ավելացումներ	7,965	8,352	4,854	-	3,819	24,990
Դուրսգրում	(57,045)	-	-	-	-	(57,045)
2020թ. դեկտեմբերի 31	**285,436**	**507,297**	**341,411**	**77,826**	**219,863**	**1,431,833**
Ավելացումներ	4,053	21,335	3,055	1,248	1,731	31,422
Դուրսգրումներ	(16,515)	-	(15,092)	(16,000)	(3,165)	(50,772)
Փոխանցումներ հիմնական միջոցների ենթադասերի միջև	(865)	92	68	-	705	-
2021թ. դեկտեմբերի 31	**272,109**	**528,724**	**329,442**	**63,074**	**219,134**	**1,412,483**
Կուտակված մաշվածություն						
2020թ. հունվարի 1	**250,968**	**342,109**	**304,607**	**77,561**	**205,139**	**1,180,384**
Մաշվածության ծախս	26,181	64,655	14,578	116	7,617	**113,147**
Դուրսգրում	(40,426)	-	-	-	-	**(40,426)**
2020թ. դեկտեմբերի 31	**236,723**	**406,764**	**319,185**	**77,677**	**212,756**	**1,253,105**
Մաշվածության ծախս	18,743	51,540	10,303	547	4,801	85,934
Դուրսգրումներ	(13,954)	-	(13,648)	(16,000)	(3,084)	(46,686)
Փոխանցումներ հիմնական միջոցների ենթադասերի միջև	(756)	151	9	-	596	-
2021թ. դեկտեմբերի 31	**240,756**	**458,455**	**315,849**	**62,224**	**215,069**	**1,292,353**
Զուտ հաշվեկշռային արժեք						
2021թ. դեկտեմբերի 31	**31,353**	**70,269**	**13,593**	**850**	**4,065**	**120,130**
2020թ. դեկտեմբերի 31	**48,713**	**100,533**	**22,226**	**149**	**7,107**	**178,728**

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված, բայց դեռ օգտագործվող ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը կազմում է 902,034 հազար և 889,537 հազար դրամ, համապատասխանաբար:

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել գրավադրված հիմնական միջոցներ:

8. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

	Ընդամենը
Սկզբնական արժեք	
2020թ. հունվարի 1	**623,148**
Ավելացումներ	24,012
2020թ. դեկտեմբերի 31	**647,160**
Ավելացումներ	15,709
2021թ. դեկտեմբերի 31	**662,869**
Կուտակված մաշվածություն	
2020թ. հունվարի 1	**290,679**
Ամորտիզացիայի ծախս	102,890
2020թ. դեկտեմբերի 31	**393,569**
Ամորտիզացիայի ծախս	70,292
2021թ. դեկտեմբերի 31	**463,861**
Զուտ հաշվեկշռային արժեք	
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**199,008**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**253,591**

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից:

9. ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱԿՏԻՎՆԵՐ

Օգտագործման իրավունքով ակտիվ	**Շինություններ**	**Ընդամենը**
Սկզբնական արժեք		
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	976,174	**976,174**
Ավելացումներ	147,809	**147,809**
Վարձակալության դադարեցումներ	(258,647)	**(258,647)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	865,336	**865,336**
Ավելացումներ	244,528	**244,528**
Վարձակալության դադարեցումներ	(101,896)	**(101,896)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,007,968	**1,007,968**
Կուտակված մաշվածություն		
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	259,360	**259,360**
Տարվա ծախս	252,023	**252,023**
Վարձակալության դադարեցումներ	(93,959)	**(93,959)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	417,424	**417,424**
Տարվա ծախս	211,393	**211,393**
Վարձակալության դադարեցումներ	(61,038)	**(61,038)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	567,779	**567,779**
Հաշվեկշռային արժեք		
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**447,912**	**447,912**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**440,189**	**440,189**

Կազմակերպությունը վարձակալում է բազմաթիվ շինություններ: Վարձակալության միջին ժամկետն է 5 տարի:

Վարձակալության գծով պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծան. 24-ում:

	2021թ. դեկտեմբերի 31	2020թ. դեկտեմբերի 31
Շահույթում և վնասում ճանաչված գումարներ		
Օգտագործման իրավունքով ակտիվի մաշվածության ծախս	211,393	252,023
Վարձակալության գծով պարտավորությունների տոկոսային ծախս	63,361	85,483
Եկամուտներ վարձակալության գծով պարտավորությունների զիջումներից	646	11,854
Եկամուտ վարձակալության դադարեցումից	4,032	15,336

Ընդամենը դրամական միջոցների արտահոսքը վարձակալությունների համար կազմում է 274,572 հազար ՀՀ դրամ:

Վարձակալության գծով պարտավորություն

	2021թ. դեկտեմբերի 31	2020թ. դեկտեմբերի 31
Ժամկետայնության վերլուծություն		
1-ին տարի	205,567	257,238
2-րդ տարի	165,514	170,161
3-րդ տարի	118,654	100,694
4-րդ տարի	75,188	57,373
5-րդ տարի	37,831	23,979
6-րդ տարի	9,120	9,420
7-րդ տարի	6,080	7,134
	617,954	**625,999**
Հանած՝ չվաստակած տոկոսային եկամուտը	(117,941)	(115,235)
	500,013	**510,764**
Վերլուծված է որպես՝		
Ոչ ընթացիկ	345,720	305,322
Ընթացիկ	154,923	205,442
	500,013	**510,764**

Վարձակալության գծով պարտավորությունների շարժը ներկայացված է ծան. 14-ում:

10. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ ֆինանսական ակտիվներ		
Ստացման ենթակա գումարներ վճարահաշվարկային կազմակերպություններից	17,683	16,251
Այլ ստացման ենթակա գումարներ	659	1,759
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**18,342**	**18,010**
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ		
Առգրավված ակտիվներ	20,109	19,569
Կանխավճարված հարկեր (բացառությամբ շահութահարկի) և բյուջեի նկատմամբ այլ պարտավորություններ	19,886	22,275
Կանխավճարներ ապրանքների և ծառայությունների գծով	13,148	14,142
Պաշարներ	11,827	8,735
Այլ	1,071	1,023
Ընդամենը այլ ակտիվներ	**84,383**	**83,754**

11. ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏՔԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

	Արժույթ	Թողարկման ամսաթիվ	Մարման ժամկետ ամիս/տարի	Արժեկտրոնի%	2021 թ. դեկտեմբերի 31	2020 թ. դեկտեմբերի 31
Թողարկված պարտքային արժեթղթեր	ՀՀ դրամ	24/04/19	26/09/22	10.5	1,541,043	1,540,672
Թողարկված պարտքային արժեթղթեր	ՀՀ դրամ	26/04/19	26/04/22	10.5	1,018,764	1,018,170
Թողարկված պարտքային արժեթղթեր	ԱՄՆ դոլար	25/02/19	25/02/22	6	980,254	1,066,500
Թողարկված պարտքային արժեթղթեր	ՀՀ դրամ	18/12/18	20/12/21	10.5	-	1,405,265
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր					**3,540,061**	**5,030,607**

2019 թվականի ընթացքում իրականացվել է 1,500,000 հազար ՀՀ դրամ, 1,400,000 հազար ՀՀ դրամ, 1,000,000 հազար ՀՀ դրամ և 2,000 հազար ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտքային արժեթղթերի չորս թողարկում՝ վերևում ներկայացված աղյուսակին համապատասխան:

12. ԱՅԼ ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

	Միջին կշռված անվանական տոկոսադրույք	2021թ. դեկտեմբերի 31	Միջին կշռված անվանական տոկոսադրույք	2020թ. դեկտեմբերի 31
Միջազգային ֆինանսական կազմակերպություններ	7.20%	5,353,928	8.20%	5,187,236
Հայաստանի Կենտրոնական Բանկ	6.30%	3,092,140	6.40%	85,192
Այլ ֆինանսական կազմակերպություններ	11.10%	1,102,201	9.60%	2,355,245
FINCA Microfinance Holding	6.40%	887,177	6.70%	1,934,683
Ընդամենը այլ փոխառու միջոցներ		**10,435,446**		**9,562,356**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի փոխառություններ 5 ֆինանսական հաստատություններից (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7 ֆինանսական հաստատություններից), որոնց մնացորդներից յուրաքանչյուրը գերազանցում է սեփական կապիտալի 10%: Այս մնացորդների համախառն արժեքը 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 6,485,344 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝8,874,137 հազար դրամ):

2021 թ. հունիսի 28-ին Կազմակերպությունը վարկային պայմանագիր է կնքել ՀՀ Կենտրոնական բանկի հետ՝ «ՓՄԶ Աջակցություն» ծրագրի շրջանակներում ՀՀ Կենտրոնական բանկի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW բանկի միջև: Վարկի կառավարումն իրականացվում է Գերմանահայկական հիմնադրամի (PMU GAF) ծրագրերի կառավարման բաժնի կողմից: Ծրագրի շրջանակներում վարկավորումը հիմնված է վերաֆինանսավորման սկզբունքների վրա, ինչը նշանակում է, որ Կազմակերպությունը սկզբում վարկեր է տրամադրում սեփական միջոցներից, իսկ հետո դիմում է PMU GAF-ին վերաֆինանսավորման համար: Եթե տրամադրված վարկերը համապատասխանում են ծրագրի պահանջներին, ապա ՀՀ Կենտրոնական բանկը վերաֆինանսավորում է այդ վարկերը: Վարկերը տրամադրվում են միայն տեղական արժույթով և հինգ տարի ժամկետով: ՀՀ-ում գործող մի քանի ֆինանսական հաստատություններ ևս մասնակցել են Ծրագրին նույն պայմաններով: Տոկոսադրույքը սահմանվում է Խորհրդի կողմից տարին երկու անգամ՝ ելնելով Կենտրոնական բանկի սահմանած վերաֆինանսավորման տոկոսադրույքից և 5 տարվա պետական պարտատոմսերի միջին եկամտաբերությունից, ինչպես նաև շուկայում ՓՄԶ վարկերի գնագոյացման ընդհանուր միտումից: Միևնույն ժամանակ, Խորհուրդը սահմանում է այն արդյունավետ տոկոսադրույքը, որը GAF Ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի մասով կարող է գանձվել հաճախորդներից: 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «ՓՄԶ Աջակցություն» ծրագրով վարկերի չմարված մնացորդը կազմել է 1,578,287 հազար ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մնացորդ չկա):

2021թ. մայիսի 20-ին Կազմակերպությունը ՀՀ Կենտրոնական բանկի հետ կնքել են վարկային պայմանագիր «Գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» ծրագրի (երրորդ փուլ) շրջանակներում ՀՀ Կենտրոնական բանկի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW բանկի միջև: Վարկի կառավարումն իրականացնում է Գերմանական հիմնադրամի ծրագրերի կառավարման բաժինը (PMU GAF): Ծրագրի շրջանակներում վարկավորումը հիմնված է վերաֆինանսավորման սկզբունքների վրա, ինչը նշանակում է, որ Կազմակերպությունը սկզբում տրամադրում է վարկեր սեփական միջոցներից, այնուհետև դիմում է PMU GAF-ին վերաֆինանսավորման համար: Եթե տրամադրված վարկերը համապատասխանում են Ծրագրի պահանջներին, ապա ՀՀ Կենտրոնական բանկը վերաֆինանսավորում է այդ վարկերը: Վարկերը տրամադրվում են միայն տեղական արժույթով և հինգ տարի ժամկետով: ՀՀ-ում գործող մի քանի

ֆինանսական հաստատություններ ևս մասնակցել են Ծրագրին նույն պայմաններով: Տոկոսադրույքը սահմանվում է Խորհրդի կողմից տարին երկու անգամ՝ ելնելով Կենտրոնական բանկի սահմանած վերաֆինանսավորման տոկոսադրույքից, ինչպես նաև շուկայում գյուղատնտեսական վարկերի գնագոյացման ընդհանուր միտումից: Միևնույն ժամանակ, Խորհուրդը սահմանում է այն արդյունավետ տոկոսադրույքը, որը GAF Ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի մասով կարող է գանձվել հաճախորդներից: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» ծրագրով տրամադրված վարկերի չմարված մնացորդը կազմել է 1,467,979 հազար ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մնացորդ չկա):

Կազմակերպության ղեկավարությունը համոզված է, որ գոյություն չունեն այլ այլ ֆինանսական գործիքներ, որոնք նման են ՀՀ ԿԲ-ից ստացված այլ փոխառու միջոցներին և վարկավորման պայմանների և հաճախորդների յուրահատուկ բնույթի, ինչպես նաև այլ մասնակիցներին, ինչպիսիք են այլ կոմերցիոն բանկերը, միջոցների հասանելիության արդյունքում այս պրոդուկտները ներկայացնում են առանձին շուկա: Արդյունքում, ՀՀ ԿԲ-ից այլ փոխառու միջոցները ստացվել են սովորական գործարքի միջոցով և հաշվեգրվել են իրական արժեքով սկզբնական ճանաչման ամսաթվին:

Կազմակերպությունը պարտավոր է համապատասխանել փոխառու միջոցներին առնչվող ֆինանսական սահմանափակումներին: Այս սահմանափակումները ներառում են սահմանված գործակիցներ՝ պարտավորություն/սեփական կապիտալ հարաբերակցությունը և մի շարք այլ ֆինանսական գործակիցներ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմակերպությունը խախտել է միջազգային ֆինանսական կազմակերպությունների և FINCA Microfinance Holding-ի հետ փոխառությունների համաձայնագրերով նախատեսված որոշակի ֆինանսական սահմանափակումներ, որոնք վերաբերում են պորտֆելի որակին և դրական եկամտաբերությանը: Հաշվետու ամսաթվի դրությամբ փոխառությունների գումարները, որոնց նկատմամբ տեղի են ունեցել խախտում, կազմել են 2,563,885 հազար ՀՀ դրամ:

Կազմակերպությունը վճարման ազատում է ստացել վարկատուներից մինչև 2021 թվականի ավարտը և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության իրացվելիության վերլուծության նպատակով Կազմակերպությունը փոխառությունների գծով վերադասակարգումներ չի իրականացրել, քանի որ այս վարկերը մարվելու են ըստ պայմանագրային պայմանների:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված բոլոր փոխառությունները դասակարգել է որպես ցպահանջ, քանի որ միջազգային կառույցների հետ գոյություն ունեն խաչաձև դեֆոլտի վերաբերյալ դրույթներ, տե՛ս ծանոթագրություն 24:

Այլ փոխառու միջոցները պետք է մարվեն հետևյալ կերպ.

	2021թ. դեկտեմբերի 31	**2020թ. դեկտեմբերի 31**
1-ին տարի	5,335,769	8,577,753
2-րդ տարի	1,973,572	962,220
3-րդ տարի	1,568,625	17,858
4-րդ տարի	774,097	3,016
5 -րդ տարի	783,383	1,509
	10,435,446	**9,562,356**

13. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ ֆինանսական պարտավորություններ		
ՀՀ ԿԲ պահուստ	34,125	240,000
Ծառայությունների համար վճարվող գումարներ	31,026	12,499
Այլ	13,351	-
Բիզնեսի վերակազմավորման պահուստ		39,890
	78,502	**292,389**
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ		
Չօգտագործած արձակուրդային պահուստ	93,911	164,624
Պարտավորություններ հարկերի գծով, բացառությամբ շահութահարկի	75,207	94,850
Այլ	31,764	20,546
Ընդամենը այլ պարտավորություններ	**279,384**	**572,409**

14. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է Կազմակերպության ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորություններում փոփոխությունները՝ այդ թվում դրամական և ոչ դրամական միջոցների փոփոխությունները: Ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորություններ են համարվում այն դրամական միջոցները, որոնք նախկինում դրամական միջոցների հաշվետվությունում դասակարգվել են կամ ապագայում դասակարգվելու են որպես ֆինանսական գործունեությունից առաջացած դրամական միջոցների հոսքեր:

					Ոչ դրամական փոփոխություններ			
	2021 թ. հունվարի 1	Մուտքեր/ դրամական հոսքեր	Մարումներ - դրամական հոսքեր	Տոկոսավճար	Տոկոսային ծախս	Արտարժույթի վերագնահատում	Նոր վարձակալություններ, պայմանագրի փոփոխություն և վարձակալության զիջումներ	2021 թ. դեկտեմբերի 31
Այլ փոխառու միջոցներ	9,562,356	14,666,097	(13,204,355)	(625,145)	749,200	(712,707)	-	10,435,446
Թողարկված պարտքային արժեթղթեր	5,030,607	-	(1,400,000)	(470,655)	466,541	(86,432)	-	3,540,061
Վարձակալության գծով պարտավորություններ	510,764	-	(211,211)	(63,361)	63,361	-	200,460	500,013
	15,103,727	**14,666,097**	**(14,815,566)**	**(1,159,161)**	**1,279,102**	**(799,139)**	**200,460**	**14,475,520**

					Ոչ դրամական փոփոխություններ			
	2020 թ. հունվարի 1	Մուտքեր/ դրամական հոսքեր	Մարումներ - դրամական հոսքեր	Տոկոսավճար	Տոկոսային ծախս	Արտարժույթի վերագնահատում	Նոր վարձակալություններ, պայմանագրի փոփոխություն և վարձակալության զիջումներ	2020 թ. դեկտեմբերի 31
Այլ փոխառու միջոցներ	12,513,956	10,066,256	(13,832,651)	(936,968)	949,063	802,700	-	9,562,356
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,940,839	-	-	(467,342)	470,962	86,148	-	5,030,607
Վարձակալության գծով պարտավորություններ	784,918	-	(227,917)	(88,211)	85,483	-	(43,509)	510,764
	18,239,713	**10,066,256**	**(14,060,568)**	**(1,492,521)**	**1,505,508**	**888,848**	**(43,509)**	**15,103,727**

(i) բանկային վարկերից, կապակցված կողմերից ստացված փոխառություններից և այլ փոխառություններից ստացված դրամական հոսքերը կազմում են փոխառություններից ստացված մուտքերի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում փոխառությունների մարման զուտ գումարը:

15. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած էր 490,596 սովորական բաժնետոմսերից՝ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Սովորական բաժնետոմսեր տնօրինողները իրավունք ունեն ստանալ շահաբաժիններ, որոնք հայտարարվում են ժամանակ առ ժամանակ և Կազմակերպության տարեկան ընդհանուր ժողովներին ունեն մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք:

Կազմակերպության բաժնետիրական կապիտալը բաժնետերերի կողմից վճարվել է ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժիններ և կապիտալի բաշխում ՀՀ դրամով:

Կազմակերպության բաժնետերերի միջև բաշխվող պահուստները սահմանափակված են իր կուտակված չբաշխված շահույթով, որոնք ներկայացված են վերահսկողության նպատակով պահանջված հաշվետվություններում: Չբաշխվող պահուստները ներկայացվում են պահուստավորման ֆոնդով, որը ստեղծվում է օրենսդրության պահանջով: Կազմակերպության պահուստային ֆոնդը ձևավորվում է տարեկան պարտադիր վարվող հատկացումների միջոցով՝ հաշվարկված Կազմակերպության զուտՖՀՄՍ շահույթի 5%-ի չափով 46,202 հազար դրամ մինչև ֆոնդը կազմի բաժնետիրական կապիտալի 15%-ը:

16. ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ

	2021թ.	2020թ.
Տոկոսային եկամուտ		
- հաճախորդներին տրված վարկեր	5,320,815	6,405,799
- ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	-	76,989
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	23,984	17,039
Ընդամենը տոկոսային եկամուտ	**5,344,799**	**6,499,827**
Տոկոսային ծախս		
- այլ փոխառու միջոցներ	(749,200)	(959,147)
- թողարկված պարտքային արժեթղթեր	(466,541)	(470,962)
- վարձակալության գծով պարտավորություն	(63,361)	(85,483)
- հետգնման պայմանագրեր	-	(20,622)
Ընդամենը տոկոսային ծախսեր	**(1,279,102)**	**(1,536,214)**
Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստները	**4,065,697**	**4,963,613**

Տուգանքները հաշվարկվում են հաշվեգրման մեթոդով և ներառվում են վարկի մայր գումարի և ժամկետանց հաշվեգրված տոկոսների գումարներում: 2021թ. այդ գումարը կկազմի 1,031,403 հազար ՀՀ դրամ (2020թ. `532,403 հազար ՀՀ դրամ): Քանի որ ժամկետանց գումարների հիմնական մասը բաժին է ընկնում 3-րդ փուլում գտնվող վարկերին, 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկված է 831,831 հազար ՀՀ դրամի չափով տուգանք (2020թ. `412,765 հազար ՀՀ դրամ):

17. ԶՈՒՏ ՕԳՈՒՏ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

	2021թ.	2020թ.
Արտարժույթի առքուվաճառքից զուտ օգուտ	160,679	127,164
Արտարժույթի վերագնահատումից զուտ (վնաս)	(87,904)	(37,764)
Ընդամենը զուտ օգուտ արտարժութային գործառնություններից	**72,775**	**89,400**

18. ԶՈՒՏ ԱՅԼ ՕԳՈՒՏ/(ՎՆԱՍ)

	2021թ.	2020թ.
Հայաստանի ԿԲ պահուստի օգուտ (ծան. 13)	126,500	(240,000)
Այլ եկամուտ	45,213	32,500
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	8,084	-
Օգուտ վարձակալության դադարեցումից	4,032	15,336
Օգուտ վարձակալության գծով զիջումներից	646	11,854
Օգուտ դրամաշնորհների գծով	-	7,749
Այլ ծախսեր	(18,408)	(7,775)
Վարձակալական հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումների դուրսգրման ծախսեր	(4,177)	(16,619)
Վերակազմավորման գծով ծախս	-	(55,699)
Վարկի վաղաժամ մարման տուգանք	-	(20,319)
Զուտ այլ օգուտ/(վնաս)	**161,890**	**(272,973)**

19. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

Կազմակերպությունը գնահատում և գրանցում է իր ընթացիկ վճարվելիք շահութահարկը և իր ակտիվների և պարտավորությունների հարկային բազան համաձայն ՀՀ հարկային օրենսդրության, որը կարող է տարբերվել ՖՀՄՍ-ից:

Կազմակերպությունն ունի որոշակի մշտական հարկային տարբերություններ, որոնք առաջանում են շահութահարկի նպատակներով չնվազեցվող որոշակի ծախսերից և շահութահարկի նպատակներով չհարկվող որոշակի եկամուտներից:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ժամանակավոր տարբերությունների նկատմամբ, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և դրանց հարկման բազաների միջև: 2021 և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա ժամանակավոր տարբերությունները հիմնականում վերաբերում են եկամտի և ծախսի ճանաչման համար տարբեր մեթոդների/ժամկետների կիրառությանը, ինչպես նաև որոշակի ակտիվների հարկային և հաշվեկշռային բազաների ժամանակավոր տարբերություններին:

Ստորև բերված հաշվարկներում օգտագործվում է ներկայիս հարկի դրույքաչափը՝ 18%, որը ՀՀ-ում վճարում են կորպորատիվ ձեռնարկությունները հարկվող շահույթի համար (ինչպես սահմանված է) ՀՀ հարկային օրենսդրության համապատասխան:

Ժամանակավոր տարբերությունները 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են հետևյալ աղյուսակում՝

	2021թ. դեկտեմբերի 31	2020թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային պարտավորություններ հետևյալի գծով՝		
Հաճախորդներին տրված վարկեր	(511,595)	(163,499)
Հիմնական միջոցներ	26,685	26,913
Վարձակալություն	8,249	11,125
Այլ ակտիվներ	-	(1,100)
Փոխառու միջոցներ	-	4,066
Հետագա ժամանակաշրջան տեղափոխված հարկային կորուստներ	316,787	-
Այլ պարտավորություններ	56,832	89,173
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	**(103,042)**	**(33,322)**

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությանը համապատասխան հարկային վնասը կարող է տեղափոխվել 5 տարով: Ղեկավարությունը նախատեսում է առաջիկա 2-3 տարիների ընթացքում օգտագործել հարկային վնասները:

2021 թվականի ընթացքում հետաձգված հարկային պարտավորությունները ավելացել են կարգավորող մարմնի պահանջների գծով պահուստի աճի արդյունքում, որոնք օգտագործվել են հաճախորդների տրված վարկերի հաշվեկշռային արժեքի որոշման համար հարկային նպատակներով: Կարգավորող մարմնի պահանջների գծով պահուստավորումը հիմնված է և օբյեկտիվ և սուբյեկտիվ չափորոշիչների վրա: Սուբյեկտիվ չափորոշիչի համաձայն, այլ ֆինանսական հաստատություններում վարկերի կատարողականության վերաբերյալ տեղեկատվությունն օգտագործվում է՝ հիմք ընդունելով պահուստավորման ավելի խիստ դասակարգում: COVID-19 համավարակի և հետագա սահմանային հակամարտության սրման ընթացքում այլ ֆինանսական հաստատություններում հաճախորդների վարկային պատմությունները հասանելի չեն եղել և միայն օբյեկտիվ չափորոշիչն (Կազմակերպությունում ժամկետանց օրերի քանակ) է կիրառվել կարգավորող մարմնի պահանջների գծով պահուստավորման ժամանակ: Հաշվետվությունն առաջին անգամ հասանելի է եղել 2021 թվականի ապրիլին՝ հանգեցնելով սուբյեկտիվ պահուստավորման նշանակալի աճի:

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արդյունավետ հարկային համադրումը ներկայացված է ստորև.

	2021թ.	2020թ.
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	**76,716**	**(1,050,090)**
Սահմանված դրույքաչափով հարկ (18%)	13,809	(189,016)
Մշտական տարբերություններից հարկի ազդեցությունը	55,911	17,887
Շահութահարկի դրույքաչափի փոփոխության հարկային ազդեցությունը	-	-
Նախորդ տարվան վերաբերվող ընթացիկ հարկային ծախս	-	22,611
Շահութահարկի գծով ծախս/(օգուտ)	**69,720**	**(148,518)**
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	-	48,244
Նախորդ տարիներին վերաբերվող ընթացիկ հարկային ծախս	-	22,611
Հետաձգված հարկային ծախս/(եկամուտ)՝ ճանաչված ընթացիկ տարում	69,720	(219,373)
Շահութահարկի գծով (ծախս)/օգուտ	**69,720**	**(148,518)**

Հետաձգված հարկային պարտավորություններ	**2021թ.**	**2020թ.**
Հունվարի 1-ի դրությամբ հետաձգված հարկային ակտիվներ	(33,322)	(252,695)
Շահույթում կամ վնասում ճանաչված ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(69,720)	219,373
Դեկտեմբերի 31-ի դրությամբ հետաձգված հարկային պարտավորություններ	**(103,042)**	**(33,322)**

20. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	2021թ.	2020թ.
Ռոյալթիներ	(116,542)	(154,882)
Տեղեկատվական տեխնոլոգիաների ծախսեր	(165,918)	(150,379)
Հարկեր բացառությամբ շահութահարկի	(157,167)	(75,129)
Մասնագիտական ծառայություններ	(73,704)	(78,706)
Ապահովագրություն	(70,351)	(67,841)
Հաղորդակցություն	(51,269)	(56,777)
Հիմնական միջոցների սպասարկում	(48,636)	(8,838)
Կոմունալ վճար	(32,332)	(38,641)
Բանկային ծախսեր	(27,551)	(15,624)
Գրասենյակային պարագաներ	(20,379)	(41,018)
Անվտանգության ծախսեր	(19,158)	(23,406)
Ներկայացուցչական ծախսեր	(17,985)	(1,005)
Վարկերի հավաքագրման ծախսեր	(16,802)	(10,671)
Ֆինանսական համակարգի հաշտարարի ծախսեր	(14,667)	(18,020)
Գովազդի ծախսեր	(12,480)	(8,702)
Գործուղման ծախսեր	(8,813)	(8,983)
Վերապատրաստման ծախսեր	(580)	(3,011)
Այլ ծախսեր	(39,985)	(50,458)
Ընդամենը գործառնական ծախսեր	**(894,319)**	**(812,091)**

Ռոյալթին վճարվում է որպես տոկոսային գործառնական եկամտի մաս և կարող է տատանվել 1,5% -ից մինչև 2% կախված գործառնական եկամտի չափից: Ռոյալթիի նկատմամբ վճարվում է ոչ ռեզիդենտի շահութահարկ:

21. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21.1. Կապիտալ ձեռքբերումների հանձնառություններ. Կազմակերպությունը 2021 և 2020 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի ունեցել կապիտալ ձեռքբերումների հանձնառություններ:

21.2. Դատական վարույթներ. Ժամանակ առ ժամանակ և բնականոն գործունեության ընթացքում, Կազմակերպությունը ստանում է հաճախորդների և գործընկերների կողմից բողոքներ: Ղեկավարությունը համոզված է, որ ոչ մի էական վնասներ տեղի չեն ունենա և համապատասխանաբար ոչ մի պահուստ հաշվեգրված չէ ֆինանսական հաշվետվություններում:

21.3. Հարկում. Հայաստանի Հանրապետության առևտրային համակարգը կարգավորող օրենսդրությունը, ներառյալ հարկային օրենսդրությունը, կարող է ունենալ մեկից ավելի մեկնաբանություններ: Ավելին, առկա է ռիսկ, որ հարկային մարմինները կամայական դատողություններ կարող են անել ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ: Եթե Կազմակերպության գործունեության վերաբերյալ ղեկավարության որոշակի որոշումներ հարկային մարմինների կողմից վիճարկվեն, Կազմակերպությունը կարող է ենթարկվել հավելյալ հարկերի, տույժերի և տուգանքների: Հարկատուները ենթակա են հարկային ստուգումների աուդիտի տարվան նախորդող երեք օրացուցային տարիներին:

22. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ՖՀՄՍ-ն սահմանում է իրական արժեքը որպես գումար, որով ակտիվը կարող է վաճառվել կամ պարտավորությունը փոխանցվել շուկայի մասնակիցների միջև սովորական պայմաններով ընթացող գործարքում չափման ամսաթվի դրությամբ:

22.1. Կազմակերպության՝ շարունակական հիմունքներով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը

Կազմակերպության որոշ ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետևյալ աղյուսակը ներկայացնում է նշված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի որոշման մեթոդները (մասնավորապես՝ օգտագործված գնահատման մեթոդները և ելակետային տվյալները):

Ֆինանսական ակտիվներ/ պարտավորու-թյուններ	Իրական արժեք 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Իրական արժեք 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման մեթոդ(ներ) և հիմնական ելակետային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի ելակետային տվյալների հարաբերակցու-թյունն իրական արժեքին
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ արժութային սվոփեր	1,885	152	Մակարդակ 2	Զեղչված դրամական հոսքերը, ապագա դրամական հոսքերը գնահատվում են ֆորվարդ փոխարժեքների և պայմանագրային ֆորվարդ փոխարժեքի հիման վրա՝զեղչված այն դրույքով, որն արտացոլում է տարբեր կողմերի պարտքային ռիսկը	ոչ կիրառելի	ոչ կիրառելի

22.2. Կազմակերպության՝ շարունակական հիմունքներով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը (պահանջվում է իրական արժեքի բացահայտումը)

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կարճաժամկետ բնույթի պատճառով ղեկավարությունը գտնում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտարկում են իրենց իրական արժեքներին: Որոշ այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համար ղեկավարությունը օգտագործում է զեղչված դրամական հոսքեր՝ իրական արժեքների գնահատման համար: Այս գնահատված դրամական հոսքերի զեղչման համար օգտագործվող տոկոսադրույքները հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի վրա `գումարած արժութային, գործիքի մարման ժամկետի և գործընկերոջ պարտքային ռիսկը:

	2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Ֆինանսական ակտիվներ				
- Հաճախորդներին տրված վարկեր	18,247,724	17,734,421	19,810,232	20,012,388
Ֆինանսական պարտավորություններ				
- Թողարկված պարտքային արժեթղթեր	3,540,061	3,547,256	5,030,607	5,135,286
- Այլ փոխառու միջոցներ	10,435,446	10,395,842	9,562,356	9,536,981
- Վարձակալության գծով պարտավորություն	500,013	495,945	510,764	506,813

Հետևյալ մեթոդները և ենթադրությունները Կազմակերպության կողմից օգտագործվում են իրական արժեքով չհաշվառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատելու համար:

Հաճախորդներին տրված վարկեր

Գնահատումն իրականացվել է միկրոֆինանսավորման հատվածում շուկայական տոկոսադրույքների կիրառմամբ՝ զեղչելով վարկի նախատեսված ապագա դրամական հոսքերը վարկի ժամկետայնության միջոցով, որտեղ Կազմակերպությունը գործում է համապատասխան տարվա վերջի դրությամբ: Հաճախորդներին տրված վարկերի իրական արժեքը դասակարգվում է որպես 3-րդ մակարդակի, քանի որ իրական արժեքը հաշվարկվել է ոչ դիտարկելի ելակետային տվյալների հիման վրա:

Այլ փոխառու միջոցներ

Գնահատումն իրականացվել է շուկայական տոկոսադրույքների կիրառմամբ՝ զեղչելով այլ փոխառու միջոցների նախատեսված ապագա դրամական հոսքերը ժամկետայնության միջոցով համապատասխան տարվա վերջի դրությամբ: Այլ փոխառու միջոցների գնահատված իրական արժեքը դասակարգվում է որպես 3-րդ մակարդակի, քանի որ իրական արժեքը հաշվարկվել է ոչ դիտարկելի ելակետային տվյալների հիման վրա:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Գնահատումն իրականացվել է շուկայական հայտարարված գնանշումների կիրառմամբ՝ զեղչելով թողարկված պարտքային արժեթղթերի նախատեսված ապագա դրամական հոսքերը ժամկետայնության միջոցով համապատասխան տարվա վերջի դրությամբ: Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը դասակարգվում է որպես 2-րդ մակարդակի, քանի որ իրական արժեքը հաշվարկվել է դիտարկելի ելակետային տվյալների հիման վրա (հայտարարված գնանշումների մասին տեղեկատվությունը հասանելի է ՀՀ բորսայի կայքում):

Վարձակալության գծով պարտավորություններ

Գնահատումն իրականացվել է շուկայական տոկոսադրույքների կիրառմամբ՝ զեղչելով վարձակալության գծով պարտավորությունների նախատեսված ապագա դրամական հոսքերը ժամկետայնության միջոցով համապատասխան տարվա վերջի դրությամբ: Վարձակալության գծով պարտավորությունների գնահատված իրական արժեքը դասակարգվում է որպես 3-րդ մակարդակի, քանի որ իրական արժեքը հաշվարկվել է ոչ դիտարկելի ելակետային տվյալների հիման վրա:

	2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ				
- Հաճախորդներին տրված վարկեր	-	-	17,734,421	**17,734,421**
Ֆինանսական պարտավորություններ				
- Թողարկված պարտքային արժեթղթեր	-	3,547,256	-	**3,547,256**
- Այլ փոխառու միջոցներ	-	-	10,395,842	**10,395,842**
- Վարձակալության գծով պարտավորություն	-	-	495,945	**495,945**

	2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
- Հաճախորդներին տրված վարկեր	-	-	20,012,388	**20,012,388**
Ներդրումային արժեթղթեր	-	-	-	**-**
Ֆինանսական պարտավորություններ				
- Թողարկված պարտքային արժեթղթեր	-	5,135,286	-	**5,135,286**
- Այլ փոխառու միջոցներ	-	-	9,536,981	**9,536,981**
- Վարձակալության գծով պարտավորություն	-	-	506,813	**506,813**

Վերոնշյալ աղյուսակներում 2-րդ և 3-րդ մակարդակներում ներառված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները որոշվել են համընդհանուր ընդունված գնորոշման մոդելների վրա հիմնված դրամական հոսքերի զեղչված արժեքի վերլուծության վրա, որտեղ հիմնական ելակետային տվյալը գործընկերների պարտքային ռիսկն արտացոլող զեղչման դրույքն է: Իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների միջև փոխանցումներ չեն եղել:

23. ԿԱՊԻՏԱԼԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կազմակերպությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Կազմակերպության գործունեության անընդհատությունը, միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրավված և սեփական միջոցների մակարդակի պահպանման եղանակով:

ՀՀ կենտրոնական բանկը Կազմակերպության համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, ունիվերսալ վարկային կազմակերպությունները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովեն 150,000 հազար ՀՀ դրամ նվազագույն բաժնետիրական կապիտալ (2020թ. դեկտեմբերի 31-ին՝ 150,000 հազար ՀՀ դրամ):

Համաձայն ՀՀ ԿԲ կանոնակարգային պահանջների, որոնք ուժի մեջ են մտել 2011թ.-ին, վարկային կազմակերպությունները, որոնք իրականացնում են արտարժույթի փոխանակման գործառնություններ կանխիկով վարկային մարումներից բացի այլ նպատակներով, պարտավոր են ապահովել կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը (կապիտալի համարժեքության նորմատիվ) և ընդհանուր կապիտալի նվազագույն մեծությունը նվազագույնից բարձր մակարդակում: 2013թ. Կազմակերպությունը փոփոխել է իր կանոնադրությունը, այնպես որ այն ունի իրավունք իրականացնելու կանխիկով արտարժույթի փոխանակման գործառնություններ՝ որպես գործունեության առանձին տեսակ: Հետևաբար Կազմակերպությունը պարտավոր է հաշվել և համապատասխանել կապիտալի համարժեքության նորմատիվի և ընդհանուր կապիտալի նվազագույն մեծության պահանջներին: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի նվազագույն մեծության պահանջը կազմում է 1,000,000 հազար ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,000,000 հազար), իսկ կապիտալի համարժեքության հարաբերակցության նորմատիվը – նվազագույնը 12% (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,000,000 հազար ՀՀ դրամ և 12%):

Կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկը՝ հիմնված ՀՀ ԿԲ կողմից սահմանված պահանջների վրա ներկայացված է ստորև.

	2021թ. դեկտեմբերի 31 աուդիտ չանցած	2020թ. դեկտեմբերի 31 աուդիտ չանցած
Հիմնական կապիտալ	3,077,369	5,714,480
Ընդամենը հիմնական կապիտալ	**3,077,369**	**5,714,480**
Ռիսկով կշռված ակտիվներ	16,765,787	21,141,652
Կապիտալի հարաբերակցությունը ռիսկով նշված ակտիվներին (%)	18.36%	27.03%
Կանոնակարգային նվազագույն պահանջը կանոնադրական կապիտալի հարաբերակցության գծով (%)	12.00%	12.00%
Համապատասխանություն նվազագույն բաժնետիրական կապիտալի պահանջներին	**Խախտումներ չեն արձանագրվել 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**Խախտումներ չեն արձանագրվել 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Վարչությունը վերանայում է կապիտալի կառուցվածքը կիսամյակային կտրվածքով: Կազմակերպության կապիտալի համարժեքությունը սահմանվում և վերահսկվում է՝ օգտագործելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված սահմանաչափերը: Որպես նման վերանայման մի մաս, Խորհուրդը դիտարկում է սեփական կապիտալի եկամտաբերության դրույքը (cost of capital) և կապիտալի յուրաքանչյուր դասին առնչվող ռիսկերը: Խորհրդի առաջարկությունների հիման վրա Կազմակերպությունն իր ընդհանուր կապիտալի կառուցվածքը կառուցում է շահաբաժինների վճարման, նոր բաժնետոմսերի թողարկման, ինչպես նաև նոր պարտքի թողարկման կամ գործող պարտքի մարման միջոցով: Ի լրումն, Կազմակերպությունը կառավարում է կապիտալը՝ պայմանագրային պահանջների իրականացման նպատակով:

24. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի կառավարումն Կազմակերպության բիզնեսի հիմնարար տարրերից է և Կազմակերպության գործունեության էական բաղկացուցիչը: Կազմակերպության գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերն են՝

- Պարտքային ռիսկեր;
- Իրացվելության ռիսկ;
- Շուկայական ռիսկ:

Կազմակերպությունն ընդունում է, որ անհրաժեշտ է ունենալ ռիսկերի կառավարման արդյունավետ և նպատակային գործընթացներ: Նշվածն իրականացնելու համար Կազմակերպությունը ստեղծել է ռիսկերի կառավարման հայեցակարգ, որի հիմնական նպատակն է պաշտպանել Կազմակերպությանը ռիսկերից և թույլ տալ նրան հասնելու իր գործունեության նպատակներին:

Կազմակերպության ռիսկերի կառավարման նպատակների սահմանման և քաղաքականությունների մշակման ընդհանուր պատասխանատվությունը կրում է Տնօրենների խորհուրդը: Տնօրենների խորհրդի ընդհանուր նպատակն է սահմանել այնպիսի քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկերն առանց անհարկի վատթարացնելու Կազմակերպության մրցունակությունը և ճկունությունը: Պահպանելով վերջնական պատասխանատվությունը՝ այն միաժամանակ փոխանցել է գործընթացներ նախագծելու և գործարկելու իրավասությունները, որոնք կապահովեն նպատակների և քաղաքականությունների արդյունավետ իրականացումը:

Կազմակերպության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է հայտնաբերել, բացահայտել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Կազմակերպությունը պարբերաբար վերանայում է ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայական պայմաններում, առաջարկվող ապրանքների և ծառայությունների շուկայում տեղի ունեցած փոփոխություններին արձագանքման նպատակով:

Վերապատրաստման և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Կազմակերպությունը նպատակ ունի կառուցել համակարգված և կառուցողական վերահսկողական միջավայր, որտեղ աշխատակիցները կպատկերացնեն իրենց դերը և պարտականությունները:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե պորտֆելի և թե գործարքների մակարդակով կառավարվում և վերահսկվում են Վարկային կոմիտեների և ակտիվների և պարտավորությունների կառավարան կոմիտեի (այսուհետ՝ ԱՊԿԿ) միջոցով: Ռիսկերի կոմիտեն պատասխանատու է ռիսկերի կառավարման քաղաքականության, ընթացակարգերի մշակման, վերահսկողության և օրենսդրական/կանոնակարգային դաշտում առկա ռիսկերի վերահսկողության համար և գնահատում է դրանց ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա: Այս մոտեցումը թույլ է տալիս Կազմակերպությանը նվազեցնել ՀՀ ներդրումային միջավայրի փոփոխությունների դեպքում Կազմակերպությանը սպառնացող հնարավոր կորուստները:

Տարեվերջից ի վեր ռիսկերի կառավարման բաժնում կամ ռիսկերի կառավարման քաղաքականություն փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Պարտքային ռիսկերի կառավարում

Կազմակերպությունը ենթակա է պարտքային ռիսկի, այն է՝ ռիսկ, որ ֆինանսական գործիքի մի կողմը չի կատարի իր պարտավորությունը՝ ֆինանսական կորուստներ պատճառելով մյուս կողմին:

Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է:

Համապատասխանաբար, պարտքային ռիսկը մեծագույն կարևորություն ունի միկրոֆինանսավորման կազմակերպությունների ռիսկերի կառավարման մեջ: Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Կազմակերպությունը կիրառում է տարբեր մեթոդներ պարտքային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:

Միկրոֆինանսակավորման ոլորտը ընդհանուր առմամբ հակված է պարտքային ռիսկի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերի և բանկային ավանդների միջոցով: Ինչ վերաբերում է հաճախորդներին տրված վարկերին, այս ռիսկը կենտրոնացած է Հայաստանի Հանրապետությունում: Այն մոնիտորինգի է ենթարկվում կանոնավորապես՝ պարտքային սահմանաչափերի և վարկունակության վերաբերյալ Կազմակերպության ռիսկի կառավարման քաղաքականությամբ սահմանված ուղենիշերի պահպանումն ապահովելու համար:

Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Վարկային Ռիսկերի բաժնի, Վարկային կոմիտեների և Կազմակերպության Վարչության կողմից: Նախքան որևէ հայտի կազմումը Վարկային կոմիտեի կողմից, վարկային գործընթացի վերաբերյալ բոլոր առաջարկությունները (վարկառուի սահմանաչափի հաստատում կամ վարկային պայմանագրերի մեջ

փոփոխությունների կատարում և այլն) վերանայվում և հաստատվում են Վարկային ռիսկերի բաժնի կողմից: Ամենօրյա ռիսկերի կառավարումն իրականացվում է Վարկային Ռիսկերի բաժնի ղեկավարի կողմից:

Կազմակերպության պարտքային քաղաքականությունը սահմանված է մի շարք ներքին կանոնակարգերով, որտեղ հստակ սահմանված են բոլոր առնչվող պահանջները համապատասխան վերահսկողական մեխանիզմների հետ մեկտեղ, ներառյալ վարկի տրամադրումը, չվճարված վարկերի մոնիտորինգը և այլն:

Կազմակերպությունը շարունակաբար մոնիտորինգ է իրականացնում առանձին պարտքային ռիսկերի գծով և պարբերաբար վերանայում է իր հաճախորդների վարկունակությունը: Վերանայումը հիմնված է իրականացված ամենավերջին մոնիտորինգի և ֆինանսական վերլուծությունների վրա, ինչպես նաև փոխառուից, կամ որևէ այլ կերպ ստացված տեղեկությունների վրա:

Առանձին հաճախորդների վերլուծությունից բացի, վարկային պորտֆելը պարբերաբար վերլուծվում է Ներքին վերահսկողության բաժնի կողմից՝ կապված կենտրոնացման և շուկայական ռիսկերի հետ:

Վարկային կոմիտեն այն վերլուծող մարմինն է, որը պատասխանատու է վարկային հայտերում ամփոփված տեղեկատվությունը վերլուծելու և պարտքային ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար: Վարկային կոմիտեն Կազմակերպության ներսում անկախ մարմին է, որը լիազորված է կայացնելու վերջնական որոշում պարտքային հայտը հաստատելու կամ մերժելու վերաբերյալ:

Վարկային կոմիտե ներկայացվող տեղեկատվության ճշգրտությունը վարկային մասնագետի պատասխանատվությունն է, ով լրացնում է նախնական հայտը դիմողի բիզնեսի և պարտքային ռիսկերի պատշաճ ուսումնասիրությունից հետո: Ի վերջո Վարկային կոմիտեի անդամները գնահատում են հայտի համապատասխանությունը սահմանված չափանիշներին (դիմողի վարկային պատմությունը, ֆինանսական վիճակը, մրցակցային ունակությունը և այլն):

Յուրաքանչյուր մասնաճյուղ պարտավոր է կիրառել Կազմակերպության վարկային քաղաքականությունը և ընթացակարգերը՝ Կազմակերպության ներքին կարգերում սահմանված վարկավորման լիազորությունների շրջանակներում: Յուրաքանչյուր մասնաճյուղի ղեկավար վարկային բոլոր տեսակի խնդիրների վերաբերյալ զեկուցում է ղեկավարությանը: Յուրաքանչյուր մասնաճյուղ պատասխանատու է իր վարկային պորտֆելի որակի և կատարողականի համար, ինչպես նաև իր պորտֆելի ներսում առկա ռիսկերի վերահսկողության և մոնիտորինգի համար: Ներքին աուդիտի և Ներքին վերահսկողության բաժիններն իրականացնում են մասնաճյուղերի և Կազմակերպության վարկային գործընթացների կանոնավոր ստուգումներ:

Կազմակերպության Վարկային ռիսկերի բաժինն ուսումնասիրում է ժամկետանց վարկերի վերլուծությունը և հետամուտ է լինում ժամկետանց մնացորդների հավաքագրմանը: Ղեկավարությունը, հետևաբար, տեղին է համարում ժամկետանց վարկերի և այլ պարտքային ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

Կազմակերպությունը կանոնավորում է պարտքային ռիսկի մակարդակը՝ սահմանափակելով մեկ վարկառուի կամ վարկառուների խմբի գծով, ինչպես նաև ըստ տնտեսության և աշխարհագրական սեգմենտների ռիսկի ընդունելի մակարդակները: Պարտքային ռիսկի սահմանաչափերն ըստ վարկառուի և ըստ վարկատեսակի հաստատում է Վարչությունը:

Վարկառուի գծով ռիսկը հետագայում սահմանափակվում է ենթասահմանաչափերով, որոնք վերաբերում են հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերին և սահմանվում են վարկային կոմիտեի կողմից: Փաստացի ռիսկերի համապատասխանությունը սահմանաչափերին հսկվում է օրական կտրվածքով՝ ապահովելու համար, որ Կազմակերպության կողմից սահմանված վարկային սահմանաչափերը և վարկունակության ուղեցույցները չեն խախտվում:

Ըստ նպատակահարմարության, և վարկերի մեծ մասի դեպքերում, Կազմակերպությունն ընդունում է գրավ կամ անձնական երաշխավորություն: Այնուամենայնիվ, վարկերի զգալի մասը տրված է անհատներին, որտեղ այսպիսի ապահովության միջոցներ չեն կարող ձեռք բերվել: Այսպիսի ռիսկերը մոնիտորինգի են ենթարկվում շարունակական հիմունքով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների:

<u>Պարտքային ռիսկի չափումը</u>

<u>Ակնկալվող պարտքային կորուստների չափում</u>

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ Կազմակերպությունն օգտագործում է արժեզրկման «եռափուլ» մոդել՝ վարկի սկզբնական ճանաչումից հետո որակի փոփոխությունների հիման վրա, որն ամփոփված է ստորև.

- Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով չարժեզրկված ֆինանսական գործիքը դասակարգվում է «փուլ 1-ում», որի պարտքային ռիսկը շարունակաբար վերահսկվում է Կազմակերպության կողմից;
- Եթե սկզբնական ճանաչումից հետո հայտնաբերվում է պարտքային ռիսկի նշանակալի աճը (SICR), ապա ֆինանսական գործիքը տեղափոխվում է «փուլ 2», սակայն դեռևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված;
- Եթե ֆինանսական գործիքը պարտքային առումով արժեզրկված է, ապա այն տեղափոխվում է «փուլ 3»;
- Փուլ 1-ում ֆինանսական գործիքների ԱՊԿ-ն չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների տվյալ մասին համարժեք գումարով, որոնք առաջանում են առաջիկա 12 ամիսների ընթացքում հնարավոր դեֆոլտի իրադարձությունների հետևանքով: 2-րդ կամ 3-րդ փուլերում գործիքների ԱՊԿ-ն չափվում է՝ հիմնվելով ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների վրա;
- ՖՀՄՍ 9-ի համաձայն, ԱՊԿ-ի չափման համապարփակ հայեցակարգը պետք է հաշվի առնի նաև կանխատեսումներ;
- Ձեռք բերված կամ սկզբնապես պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներն այն ակտիվներն են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Դրանց ԱՊԿ-ն մշտապես չափվում է ամբողջ ժամկետի հիման վրա (փուլ 3):

Դուրսգրում

Այն դեպքում, երբ պարբերական հավաքական վերականգնման պատմական վերլուծությունը ցույց է տալիս, որ Կազմակերպությունը չի ակնկալում զգալի լրացուցիչ վերականգնում դեֆոլտում որոշակի ամիսներից հետո ("MID"), ապա Կազմակերպությունը քաղաքականությամբ պայմանավորված վարկերը դուրս է գրում հավաքական հիմունքներով:

Ֆինանսական ակտիվների մասով վճարման ենթակա գումարը, որը դուրս է գրվել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում և առայժմ ենթակա է հարկադիր գործողությունների, կազմում է 1,506,919 հազար ՀՀ դրամ:

Խմբավորում՝ ըստ համանման պարտքային ռիսկի հատկանիշների

ԴՀ հաշվարկի նպատակով ֆինանսական ակտիվները բաժանվում են երկու սեգմենտի՝

- Փոքր վարկեր (մինչև 500,000 ՀՀ դրամ (1041 ԱՄՆ դոլարին համարժեք)
- Միջին և մեծ վարկեր (500,000 ՀՀ դրամից կամ 1041 ԱՄՆ դոլարից ավել)

Վերոնշյալ սեգմենտներն արտացոլում են հաճախորդների վարկունակության գնահատման մակարդակը, ընդ որում՝ մեծ վարկեր սեգմենտի համար կիրառվում են համեմատաբար ավելի խիստ գնահատականի չափորոշիչներ: Պատմական դեդոլտի դրույքաչափը օգտագործվում է որպես խստության ցուցանիշ, այնպես որ սեգմենտների միջև դեֆոլտի դրույքաչափերի տարբերությունն առավելագույնի է հասցվում:

Վարկանիշային մոդել

Ողջ հասանելի տեղեկատվությունը (ծառայությունների խմբեր, արտադրության որոլտներ և այլն) օգտագործվում են յուրաքանչյուր սեգմենտի համար ներքին վարկանիշային ցուցանիշ ստանալու համար: Այսպիսով, ստեղծվում են համանման ռիսկի հատկանիշներով խմբեր, որոնք այնուհետև օգտագործվում են սեգմենտի ԴՀ-ի կորի ճշգրտման համար:

ԱՊԿ-ի չափում

ԱՊԿ-ի չափման հիմնական ելակետային տվյալները հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքն է՝

- Դեֆոլտի հավանականություն (PD),
- Դեֆոլտից առաջացած վնաս (LGD),
- Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD)

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրում կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր տեղեկատվության միջև, և արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Մեր պարտավորությունն է ծանոթանալ տարեկան հաշվետվությանը, և եթե մեր կատարած աշխատանքը հիմք հանդիսանա եզրակացնելու, որ տարեկան հաշվետվությունը պարունակում է էական խեղաթյուրումներ, մենք պարտավոր ենք տեղեկացնել այդ փաստի մասին կառավարման օղակներում գտնվող անձանց:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրման ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզնից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր

հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և ուստի աուդիտի առումով առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այս հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, եթե օրենքը կամ կարգավորումը չի արգելում հարցի հանրայնացումը կամ, ծայրահեղ հազվադեպ դեպքերում, մենք որոշում ենք, որ չենք անդրադառնալու հարցին մեր եզրակացությունում, քանի որ խելամտորեն ակնկալվում է, որ դա անելու բացասական հետևանքները կգերակշռի նման հաղորդակցության բերած հանրային օգուտը:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն
Աուդիտի գործընկեր

2021 թ. մայիսի 4
Երևան, Հայաստանի Հանրապետություն
«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	724,687	703,595
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		152	-
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	25	-	1,191,045
Հաճախորդներին տրված վարկեր	6	19,810,232	23,921,915
Շահութահարկի գծով ընթացիկ ակտիվներ		39,814	89,269
Օգտագործման իրավունքով ակտիվներ	9	447,912	716,814
Հիմնական միջոցներ	7	178,728	283,504
Ոչ նյութական ակտիվներ	8	253,591	332,469
Այլ ակտիվներ	10	83,754	65,415
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**21,538,870**	**27,304,026**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	25	-	1,223,359
Պարտքային արժեթղթերի թողարկում	11	5,030,607	4,940,839
Վարձակալության գծով պարտավորություններ	9	510,764	784,918
Այլ փոխառու միջոցներ	12,23	9,562,356	12,513,956
Հետաձգված հարկային պարտավորություններ	20	33,322	252,695
Այլ պարտավորություններ	13,25	572,409	361,275
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**15,709,458**	**20,077,042**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	15	4,905,960	4,905,960
Չբաշխված շահույթ		923,452	2,321,024
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**5,829,412**	**7,226,984**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**21,538,870**	**27,304,026**

Վարչության անունից՝

Արամ Ղազարյան
Գործադիր տնօրեն

Մարգ Պետրոսյան
Ֆինանսական տնօրեն/
Գլխավոր հաշվապահ

2021թ. մայիսի 4
Երևան, Հայաստանի Հանրապետություն

2021թ. մայիսի 4
Երևան, Հայաստանի Հանրապետություն

12-79 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	2020թ.	2019թ.
Տոկոսային եկամուտ	16	6,499,827	6,961,770
Տոկոսային ծախս	16,26	(1,536,214)	(1,544,856)
Զուտ տոկոսային եկամուտ մինչև տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստները		4,963,613	5,416,914
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստներ	5,6,25	(2,648,743)	(1,047,755)
Զուտ տոկոսային եկամուտ		**2,314,870**	**4,369,159**
Հաճախորդներին տրված վարկերի պայմանագրային դրամական հոսքերի փոփոխումից վնաս	25	(155,631)	(13,357)
Զուտ օգուտ արտարժութային գործառնություններից	17	89,400	160,547
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		17,833	21,375
Վարձավճարային և կոմիսիոն ծախսեր		(14,611)	(21,880)
Այլ եկամուտներ	18	67,439	34,519
Այլ կորուստներ	19,13	(340,412)	-
Զուտ ոչ տոկոսային (ծախս)/եկամուտ		**(335,982)**	**181,204**
Գործառնական եկամուտ		**1,978,888**	**4,550,363**
Անձնակազմի գծով ծախսեր		(1,748,827)	(1,996,299)
Մաշվածություն և ամորտիզացիա	7,8,9	(468,060)	(483,968)
Այլ գործառնական ծախսեր	21,26	(812,091)	(924,825)
Գործառնական ծախսեր		**(3,028,978)**	**(3,405,092)**
(Վնաս)/շահույթ՝ նախքան շահութահարկով հարկումը		**(1,050,090)**	**1,145,271**
Շահութահարկի գծով օգուտ/(ծախս)	20	148,518	(221,231)
Տարվա զուտ (վնաս)/ շահույթ		**(901,572)**	**924,040**
Ընդամենը տարվա համապարփակ (վնաս)/եկամուտ		**(901,572)**	**924,040**

12-79 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ		**4,905,960**	**2,812,385**	**7,718,345**
Տարվա շահույթ		-	924,040	**924,040**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**-**	**924,040**	**924,040**
Հայտարարված շահաբաժիններ	15	-	(1,415,401)	**(1,415,401)**
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**4,905,960**	**2,321,024**	**7,226,984**
Տարվա վնաս		-	(901,572)	**(901,572)**
Ընդամենը տարվա համապարփակ վնաս		**-**	**(901,572)**	**(901,572)**
Հայտարարված շահաբաժիններ	15	-	(496,000)	**(496,000)**
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**4,905,960**	**923,452**	**5,829,412**

12-79 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
(Վնաս)/շահույթ՝ նախքան հարկումը		(1,050,090)	1,145,271
Ճշգրտումներ՝			
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստ	5,6,25	2,648,743	1,047,755
Վարձակալության դադարեցումից եկամուտ	9	(15,336)	-
Շահույթ վարձակալության զիջումից	9	(11,854)	-
Զուտ փոփոխություններ հաշվեգրված տոկոսային գումարներում		(1,009,439)	(440,419)
Մաշվածություն և ամորտիզացիա		468,060	483,968
Հաճախորդներին տրված վարկերի պայմանագրային դրամական հոսքերի փոփոխումից վնաս	25	155,631	13,357
Արտարժութային գործառնություններից զուտ վնաս	17	37,764	8,471
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		**1,223,479**	**2,258,403**
Փոփոխություններ գործառնական ակտիվներում և պարտավորություններում			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների (աճ)/ նվազում		(152)	348
Հաճախորդներին տրված վարկերի նվազում/(աճ)		2,866,478	(677,509)
Այլ ակտիվների նվազում		18,339	90,634
Հետգնման պայմանագրերով պարտավորությունների (նվազում)/աճ		(1,209,687)	267,467
Այլ պարտավորությունների նվազում/(աճ)		210,767	(139,771)
Դրամական միջոցների ներհոսք գործառնական գործունեությունից՝ մինչև հարկումը		**3,109,224**	**1,799,572**
Վճարված շահութահարկ		(21,400)	(228,746)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**3,087,824**	**1,570,826**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ներդրումային արժեթղթերի օտարումից և մարումից ստացված մուտքեր		1,221,451	-
Հիմնական միջոցների ձեռքբերում		(24,990)	(71,825)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(24,012)	(133,444)
Ներդրումային գործունեությունում օգտագործված դրամական միջոցների զուտ հոսքեր		**1,172,449**	**(205,269)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վճարված շահաբաժիններ		(496,000)	(1,415,401)
Վարձակալության գծով պարտավորության մարում	14	(227,917)	(199,346)
Փոխառու միջոցներից մուտքեր	14	10,066,256	31,539,215
Փոխառու միջոցների մարումներ	14	(13,832,651)	(31,726,406)
Մուտքեր պարտատոմսերի թողարկումից		-	3,462,754
Թողարկված պարտատոմսերի մարում		-	(3,409,407)
Ֆինանսական գործունեությունում օգտագործված դրամական միջոցների զուտ հոսքեր		**(4,490,312)**	**(1,748,591)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		**(230,039)**	(383,034)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ, համախառն	5	**704,494**	**936,412**
Փոխարժեքի տատանումների ազդեցությունն արտարժույթով պահվող դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		250,239	151,116
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ, համախառն	5	**724,694**	**704,494**
Հավելյալ տեղեկություններ՝			
Ստացված տոկոսագումարներ		5,106,198	6,239,320
Վճարված տոկոսագումարներ		(1,523,227)	(1,506,675)

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը ստացել է հաճախորդներին տրված անհավաքագրելի վարկերի ոչ դրամական մարումներ 19,149 հազար դրամի չափով ակտիվների առգրավվման տեսքով:

12-79 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն, որի 100% բաժնետոմսերը պատկանում են FINCA Microfinance Coöperatief U.A-ին (Նիդեռլանդներ): Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից և այն գործունեություն է իրականացնում 2006թ. մարտի 28-ին տրված N13 արտոնագրի համաձայն:

Կազմակերպությունը զբաղվում է միկրոֆինանսավորմամբ և տրամադրում է անհատական բիզնես վարկեր, ինչպես նաև սպառողական և գյուղատնտեսական միկրո վարկեր: Վարկերը տրամադրվում են ինչպես տեղական արժույթով, այնպես էլ արտարժույթով:

Կազմակերպության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ագաթանգեղոսի փող., 2ա:

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը ՀՀ-ում ունի 39 մասնաճյուղ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 39 մասնաճյուղ): 2021թ. հունվարի 11-ին Կազմակերպությունը վերակազմակերպել է մասնաճյուղային ցանցը և փակել 9 մասնաճյուղ՝ միավորելով դրանք մոտակա մասնաճյուղերի հետ:

«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպության հիմնադիրը FINCA International Inc.՝ հարկերից ազատված, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնադրվել և գործում է Նյու Յորքի նահանգային օրենքների համաձայն: FINCA International Inc.-ը 2011թ.-ին FINCA Microfinance Coöperatief U.A-ին (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերակցություն (կոոպերատիվ), որի պաշտոնական գրասենյակը գտնվում է Նիդեռլանդների Ամստերդամ քաղաքում), փոխանցել է Կազմակերպության 100% բաժնետոմսերը (թվով 136,472 բաժնետոմս)՝ որպես Ընկերակցության անդամակցության վճար:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերակցության անդամներն են՝

1. FINCA Microfinance Holding Company LLC սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ գրանցված ԱՄՆ-ի Դելավեր նահանգում, գրանցման հասցեն՝ ԱՄՆ, Դելավեր 19808, Վիլմինգտոն, բն. 400, Սենթրվիլ խճուղի 2711: FINCA Microfinance Holding Company LLC-ն ունի 99 քվե՝ որպես Ընկերակցության A դասի անդամ և 1 քվե որպես Ընկերակցության Բ դասի անդամ:

2. FINCA International LLC՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ գրանցված ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգում, գրանցման հասցեն՝ ԱՄՆ, Մերիլենդ 21202, Բալթիմոր, 11 Իսթ Չեյս փողոց: FINCA International LLC-ն ունի 1% քվե Ընկերակցությունում:

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA Microfinance Holding Company LLC-ի բաժնետերերն են հանդիսացել՝

	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Առաջին մակարդակի բաժնետերեր / թողարկված բաժնետիրական կապիտալի սեփականատերեր		
FINCA International LLC	65.89%	62.93%
International Finance Corporation (Միջազգային ֆինանսական կորպորացիա)	14.27%	14.27%
KfW	8.87%	8.87%
Nederlandse Financierings Maatschappij voor Ontwikkelingslanden N.V.	7.25%	7.25%
Credit Suisse Microfinance Fund Management Company	-	2.96%
ASN-NOVIB FONDS	1.66%	1.66%
Triodos Custody B.V.	1.03%	1.03%
Triodos SICAV II	1.03%	1.03%
Ընդամենը	**100.00**	**100.00%**

FINCA International Inc շահույթ չհետապնդող կորպորատիվ ընկերություն է, որը գործում է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենքների համաձայն, և որպես այդպիսին, դրա անդամները Կազմակերպությունում սեփականության իրավունք չունեն և չունեն տնտեսական իրավունքներ: 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA International, Inc.-ի անդամները հետևյալն են. Ռուպերտ Սքոֆիլդը, Ջոն Հեթչը, Ռոբերտ Հեթչը և Ռիչարդ Ուիլյամսոնը: FINCA International Inc.-ի ֆինանսական հաշվետվությունները հասանելի են հանրության համար:

FINCA International Inc.-ն ցածր եկամուտներ ունեցող անձանց տրամադրում է հաջողության հասնելու գործիքներ՝ նրանց առաջարկելով պատասխանատու ֆինանսական ծառայություններ, ինչպիսիք են փոքր վարկերը կամ խնայողական հաշիվները, հեռավոր համայնքների բնակիչների հետ տեխնոլոգիաների՝ բջջային հեռախոսների և պլանշետների միջոցով կապի հաստատում, ինչպես նաև մատչելի դարձնելով կյանքի որակը բարելավող ապրանքները: «ՖԻՆՔԱ»-ն իր գործունեությունը համայնքներում ծավալում է դուստր ընկերությունների միջոցով:

Դուստր ընկերությունները, սովորաբար, առանձին իրավաբանական անձինք են, որոնք «ՖԻՆՔԱ»-ի հետ կնքել են համապատասխան համաձայնագրեր: Փոքր վարկերը հնարավորություն են տալիս ներդրումներ կատարել անհատական կամ համայնքային շահութաբեր միկրո ձեռնարկություններում: Մասնակիցները բարելավում են իրենց վստահությունը սեփական հնարավորությունների նկատմամբ, արժանապատվության զգացումը և ստեղծում խնայողությունների ֆոնդ, որը պատկանում է համայնքին՝ որպես շարունակական ներդրումների մշտական աղբյուր:

2. ՆՈՐ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք գործում են ընթացիկ տարվա համար

Սույն փոփոխությունները և մեկնաբանությունները կիրառելի են Կազմակերպության համար 2020թ. հունվարի 1-ից.

Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 7 ստանդարտներում	*Հիմնական տոկոսադրույքի փոփոխություն*
Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 ստանդատներում	*Էականության սահմանումը*
Հայեցակարգային հիմունքներ	*ՖՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային Հիմունքների հղումների փոփոխությունները*

Վերը նշված ստանդարտները և մեկնաբանությունները վերանայվել են Կազմակերպության ղեկավարության կողմից, բայց էական ազդեցություն չեն ունեցել Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կազմակերպությունը նաև ժամկետից շուտ կիրառել է *COVID-19-ի համավարակի հետ կապված վարձակալության գծով զիջումների ստանդարտը:* Սույն փոփոխությունը կիրառելի է 2020թ. հունիսի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Սույն ստանդարտը հետադարձ հիմունքով կիրառվել է ՀՀՄՍ 8-ի համաձայն, սակայն չի վերաբերում նախորդ ժամանակաշրջաններին:

Վարձակալության գծով Զիջումները COVID-19 համավարակի հետ կապված, ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխությունների ժամկետից շուտ կիրառման ազդեցությունը

2020թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց COVID-19 համավարակի հետ կապված Վարձակալության գծով Զիջումները (ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխություն), որը վարձակալներին տրամադրում COVID-19-ի համավարակից ուղղակիորեն որպես հետևանք առաջացած վարձակալության զիջումների հաշվառման ազատումներ՝ նախատեսելով ՖՀՄՍ 16-ի ոչ պարտադիր գործնական բնույթի պարզեցում: Գործնական բնույթի պարզեցումը թույլ է տալիս վարձակալին որոշում ընդունել չգնահատել, թե արդյոք COVID-19-ի վարձակալության զիջումը համարվում է վարձակալության փոփոխություն: Վարձակալը, ով ընդունում է այդ որոշումը, COVID-19-ի վարձակալության գծով զիջումների արդյունքում վարձակալական վճարների ցանկացած փոփոխություն պետք է հաշվառի այնպես, ինչպես այն կհաշվառեր ՖՀՄՍ 16-ի կիրառմամբ, եթե փոփոխությունը չհամարվեր վարձակալության փոփոխում:

Գործնական բնույթի պարզեցումը կիրառվում է միայն COVID-19-ի ուղղակի հետևանք հանդիսացող վարձակալական արտոնության նկատմամբ և միայն հետևյալ բոլոր պայմանների պահպանման դեպքում.

1. Վարձակալական վճարների փոփոխությունը հանգեցնում է վարձակալության վարձատրության վերանայմանը, որն ըստ էության համընկնում է փոփոխությանը անմիջապես նախորդող վարձակալության վարձատրության հետ կամ պակաս է;
2. Վարձակալական վճարների ցանկացած նվազեցում ազդում է միայն 2021թ. հունիսի 30-ին կամ մինչև այդ թվականը վճարման ենթակա վճարների վրա (վարձակալության զիջումը համապատասխանում է այդ պայմանին, եթե այն հանգեցնում է 2021թ. հունիսի 30-ին վարձակալական վճարների նվազեցմանը կամ մինչև այդ թվականը և վարձակալական վճարների ավելացմանը, որոնք տարածվում են 2021թ. հունիսի 30-ից հետո);
3. Վարձակալության այլ պայմաններում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Ընթացիկ ֆինանսական տարվա ընթացքում Կազմակերպությունը կիրառել է ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխությունը (ինչպես թողարկվել է ՀԵՄՍԽ կողմից 2020թ. մայիսին)՝ ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ:

Ազդեցությունը բացառություն կիրառող վարձակալության վճարների փոփոխությունների հաշվառման վրա

Կազմակերպությունը հետադարձ հիմունքով կիրառել է ՖՀՄՍ 16:46Բ-ի պայմաններին բավարարող վարձակալության բոլոր զիջումները, և չի վերահաշվարկել նախորդ ժամանակաշրջանի թվերը:

Կազմակերպությունը 2021թ. հունիսի 30-ին կամ այդ ամսաթվից առաջ հասանելիք վարձավճարների նվազեցումից ունեցել է օգուտներ:

Կազմակերպությունը վարձակալության գծով պարտավորությունը վերաչափել է վերանայված վարձավճարների և վարձակալության նկատմամբ սկզբնապես կիրառված զեղչման դրույքի օգտագործմամբ, ինչի արդյունքում վարձակալության գծով պարտավորությունը նվազել է 11,854 հազար ՀՀ դրամով, որը ճանաչվել է շահույթի կամ վնասի հաշվետվությունում որպես վարձակալության բացասական փոփոխուն վճարում: Կազմակերպությունը շարունակում է ճանաչել վարձակալության գծով պարտավորությունների տոկոսային ծախսերը:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՍ-ներ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ Կազմակերպությունը չի կիրառել հրապարակված, սակայն դեռևս չգործող հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտները:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում (ՖՀՄՍ 2010-2012 թթ. տարեկան բարեփոխումների մշակման նախագծի շրջանակներում)	*Պարտավորությունների դասակարգում՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ*
Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 ստանդարտներում	*Ուղենիշային տոկոսադրույքի գծով բարեփոխում՝ Փուլ 2*
Փոփոխություններ ՀՀՄՍ 16 ստանդարտում	*Հիմնական միջոցներ՝ նախքան նախատեսված օգտագործումը ստացված մուտքերը*
Փոփոխություններ ՀՀՄՍ 37 ստանդարտում	*Պահուստներ, Պայմանական պարտավորություններ և ակտիվներ, Անբարենպաստ պայմանագրեր՝ պայմանագրի կատարման արժեքը*
Փոփոխություններ ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41 ստանդարտներում, և ՖՀՄՍ 16 ստանդարտի մաս կազմող ցուցադրական օրինակներում	*2018-2020 ցիկլի ՖՀՄՍ տարեկան բարեփոխումներ*

Ղեկավարությունը չի ակնկալում, որ վերոնշյալ ստանդարտների կիրառումը էական ազդեցություն կունենա Կազմակերպության հետագա ժամանակաշրջաններi ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

Համապատասխանության մասին հայտարարություն. սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով (այսուհետ՝ հազար դրամ), եթե այլ բան նշված չէ:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Կազմակերպությունը գործում է անընդհատության հիմունքով և կշարունակի գործունեությունը մոտ ապագայում:

Գործառնական միջավայր

Զարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ավելի շատ են ենթակա զանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրներինը, ներառյալ տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և օրենսդրական ռիսկերը: Հայաստանում բիզնեսին վերաբերող օրենքներն ու կանոնակարգերը շարունակում են արագորեն փոխել հարկային և կարգավորիչ դաշտը և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Հայաստանի ապագա տնտեսական ուղղության վրա մեծապես ազդում է կառավարության կողմից ընդունված ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունը՝ իրավական, կարգավորիչ և քաղաքական միջավայրերի զարգացումների հետ միասին:

Հայաստանը շարունակում է կրել քաղաքական և տնտեսական փոփոխություններ: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանը չունի զարգացած գործարար և կարգավորող ենթակառուցվածք, որը սովորաբար գոյություն ունի ավելի հասուն ազատ շուկայական տնտեսությունում: Բացի այդ, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաներում գործունեության ծավալը, ինչը կարող է չանդրադառնալ ֆինանսական գործիքների արժեքի վրա: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է, ինչպես նաև կենտրոնացված տնտեսական բազան, տարածաշրջանային անկայունությունը:

Համաշխարհային ֆինանսական համակարգերում առկա ռիսկերը, այդ թվում՝ վարկային շուկաների վիճակի վատթարացումը կարող են դանդաղեցնել կամ խաթարել Հայաստանի տնտեսության զարգացումը, ինչպես նաև բացասաբար անդրադառնալ Կազմակերպության կապիտալի և դրա հասանելիության, ավելի ընդհանրականորեն՝ գործունեության արդյունքների, ֆինանսական դրության և հեռանկարների վրա: Առավել խիստ զգալի շուկայական սպառնալիքների և դժվարությունների արդյունքում ՀՀ տնտեսությունը, ինչպես նաև Կազմակերպության գործունեությունը կարող են վատթարանալ:

COVID-19

2020թ. սկզբին նոր կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19) սկսեց արագ տարածվել ամբողջ աշխարհով՝ հանգեցնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից 2020թ. մարտ ամսին համաճարակային կարգավիճակի մասին հայտարարմանը: Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու համար շատ երկրների կողմից ձեռնարկված պատասխան միջոցները հանգեցրել են մի շարք ընկերությունների համար գործունեությունների էական խափանումների և էական ազդեցություն են ունեցել համաշխարհային ֆինանսական շուկաների վրա: Քանի որ իրավիճակն արագ է զարգանում, այն կարող է զգալի ազդեցություն ունենալ մի շարք ոլորտների ընկերությունների գործունեության վրա՝ ներառյալ բայց չսահմանափակված այնպիսի ազդեցություններով, ինչպիսիք են ձեռնարկությունների գործունեությունների խափանումը արտադրությունների խափանման կամ ձեռնարկությունների փակման հետևանքով, մատակարարման շղթայի ընդհատումը, անձնակազմի կարանտինը, պահանջարկի անկումը և ֆինանսավորման հայթայթման հետ կապված բարդությունները: Արդյունքում Կազմակերպությունը կարող է կրել նոր կորոնավիրուսային հիվանդության անհամեմատ զգալի ազդեցությունը համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա վերջինիս ունեցած բացասական ազդեցության հետևանքով:

Կազմակերպության ղեկավարությունը հետևում է տնտեսական իրավիճակի ընթացիկ փոփոխությունները և անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում մոտ ապագայում Կազմակերպության կայունության և զարգացման ապահովման նպատակով: Այնուամենայնիվ, COVID-19-ի

ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա մեծապես կախված է համաշխարհային և հայկական տնտեսության վրա համաճարակային ազդեցության տևողությունից և տարածվածությունից: Կազմակերպության գործունեության ապագա արդյունքների և ֆինանսական վիճակի վրա տնտեսական միջավայրում կատարվող փոփոխությունների ազդեցությունը ներկայումս դժվար է գնահատել:

Քաղաքական անկայունությունը և ռազմական գործողությունները տարածաշրջանում

2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի տևական հակամարտությունը սրվեց հրադադարի ռեժիմի խախտմամբ, որը վերականգնվեց 2020թ. նոյեմբերի 10-ին կողմերի միջև ստորագրված հայտարարությամբ: Այդ ժամանակից ի վեր Հայաստանը քաղաքական և տնտեսական ցնցումներ է ապրում: Հայտարարության արդյունքների դեմ մի շարք բողոքներ հանգեցրել են արտահերթ խորհրդարանական ընտրությունների, որոնք տեղի կունենան 2021թ. հունիսին:

Իրավիճակի հետագա զարգացումը կարող է էական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության, ֆինանսական վիճակի և ապագա գործունեության արդյունքների վրա, ինչը դժվար է կանխատեսել՝ հաշվի առնելով քաղաքական անկայունության հետ կապված անորոշության աստիճանը:

Պատրաստման հիմունքներ

Կազմակերպությունն իր հաշվապահական հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն: Կազմակերպությունն իրականացրել է ճշգրտումներ և վերադասակարգումներ սույն ֆինանսական հաշվետվությունների՝ ՖՀՄՍ համաձայն պատրաստման և ներկայացման նպատակով:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիման վրա՝ բացառությամբ որոշակի ֆինանսական գործիքներից:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս Կազմակերպությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցներն այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Սույն ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ լիզինգային գործարքների, որը որոշվում է ՀՀՄՍ 17 և ՖՀՄՍ 16 շրջանակներում, և իրական արժեքին որոշակի նմանություն ունեցող գնահատականները, որոնք իրական արժեք չեն հանդիսանում, ինչպիսիք են՝ իրացման զուտ արժեքը՝ ՀՀՄՍ 2-ի շրջանակներում, կամ օգտագործման արժեքը՝ ՀՀՄՍ 36-ի շրջանակներում:

Ի լրումն, ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում ելակետային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված գները (չճշգրտված), որոնք

կազմակերպությանը հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:

- Մակարդակ 2-ի ելակետային տվյալներն իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող ելակետային տվյալները, որոնք ակտիվների կամ պարտավորությունների գծով ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են:
- Մակարդակ 3-ի ելակետային տվյալները իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտելի ելակետային տվյալները:

Կազմակերպությունը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները հաշվետու ամսաթվից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և հաշվետու ամսաթվից հետո ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են ծան. 25-ում:

Անընդհատություն

Ղեկավարությունը պատրաստել է տվյալ ֆինանսական հաշվետվությունը՝ ելնելով գործունեության անընդհատության սկզբունքից, որը նախատեսում է Կազմակերպության ակտիվների իրացում և կազմակերպության պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

Կազմակերպությունը կրել է զուտ վնաս 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 901,572 հազ. դրամ (2019 թ. զուտ շահույթ՝ 924,040 հազ. դրամ):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը խախտել է միջազգային ֆինանսական հաստատությունների հետ փոխառության մի շարք համաձայնագրերով պահանջվող որոշ ֆինանսական սահմանափակումներ (ֆինանսական կովենանտներ), որոնք վերաբերում են պորտֆելի որակին և դրական եկամտաբերությանը: Հաշվետու ամսաթվի դրությամբ փոխառությունների գումարները, որոնց նկատմամբ տեղի են ունեցել դեֆոլտներ, կազմել են 5,187,236 հազար ՀՀ դրամ:

Կազմակերպության իրացվելիության դիրքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերլուծելու նպատակով Կազմակերպությունը ներառել է միջազգային ֆինանսական կազմակերպություններից պահանջված բոլոր փոխառությունները, քանի որ միջազգային կառույցների հետ պայմանագրերի համաձայն գոյություն ունեն խաչաձև դեֆոլտի վերաբերյալ դրույթներ, տե՛ս ծան. 25:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ցպահանջ ներկայացված Կազմակերպության ընթացիկ պարտավորությունները գերազանցում են մինչև մեկ ամիս ներկայացված ընթացիկ ակտիվները 825,534 հազար դրամով (2019թ.՝ 2,809,678 հազար դրամ՝ դրական): Տես ծան. 25.

Կազմակերպության ղեկավարությունը կարծում է, որ գործունեության անընդհատության սկզբունքի հիման վրա ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը նպատակահարմար է հետևյալ հանգամանքների պատճառով.

1) Չնախատեսված հանգամանքների դեպքում ֆինանսավորման պլանների վարում և հաշվեկշռի իրացվելիության ցուցանիշների մոնիթորինգ՝ նորմատիվ պահանջներին համապատասխան:
2) 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը որևէ ծանուցում չի ստացել վարկատուներից որևէ վարկի անհապաղ մարման պահանջով հետագա ֆինանսավորումը կամ ծանուցումը դադարեցնելու մասին:

3) Հաշվետու ամսաթվից հետո Կազմակերպությունը տեղական բանկերի հետ կնքել է 2 նոր վարկային պայմանագիր՝ 1,583,885 հազար ՀՀ դրամ գումարի չափով:

4) Կազմակերպությունը պայմանների վերաբերյալ հուշագիր է ստորագրել նաև 2 նոր հավանական վարկատուների հետ 4,180,720 հազար դրամի չափով:

5) Հաշվետու ամսաթվից հետո Կազմակերպությունը առանց ուշացումների մարել է պայմանագրերում համաձայնեցված ժամանակացույցերին համապատասխան վարկերը:

6) Կազմակերպությունն իրականացրել է ծախսերի կրճատման զգալի նախաձեռնություններ, որոնք հանգեցրել են շահութաբեր արդյունքների 2021թ. հունվար-փետրվար ամիսներին, և տարվա արդյունքներով ակնկալում է զուտ շահույթ:

Ղեկավարությունը կարծում է, որ, ելնելով իրացվելիության կառավարման ընթացիկ կանխատեսումներից և ձեռնարկված միջոցառումներից, հաշվի առնելով բաժնետիրոջ ֆինանսական աջակցությունը, ինչպես նաև հաշվի առնելով COVID-19 համաճարակի կապակցությամբ երկրում տիրող տնտեսական իրավիճակը և ազգային արժույթի թուլացումը, Կազմակերպությունը բավարար միջոցներ ունի իր գործունեությունը տեսանելի ապագայում շարունակելու համար:

Գործառնական և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Կազմակերպությունն իրականացնում է իր գործունեությունը («գործառնական արժույթ»): ՀՀ դրամը Հայաստանի Հանրապետությունում գործող արժույթն է և Կազմակերպության գործառնական և ներկայացման արժույթը: Բոլոր ֆինանսական տվյալները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, բացի այն դեպքերից, երբ դա պահանջվում կամ թույլատրվում է որևէ ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակորեն բացահայտված է Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնադրույթները ներկայացված են ստորև: Սույն հաշվետվությունում ներկայացված հաշվապահական քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Արտարժույթով գործարքներ

Կազմակերպության գործառնական արժույթից տարբեր այլ արժույթներով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են համապատասխան գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում գործառնական արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված, գործառնական արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը:

Պատմական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում՝ դրանց առաջացման ամսում:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտներն ու վնասները ներառվում են զուտ հիմունքով՝ որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից՝ արդյոք արտարժույթի շարժերը զուտ օգուտի կամ զուտ վնասի դիրքում են:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Կազմակերպության կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջի դրությամբ հետևյալն են՝

	Միջին փոխարժեք		Սփոթ փոխարժեք	
	2020 թ.	2019 թ.	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	491.65	479.06	522.59	479.70
ՀՀ դրամ/1 եվրո	559.30	531.67	641.11	537.26

Տոկոսային եկամտի և ծախսի ճանաչում: Ֆինանսական գործիքների համար տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են «Զուտ տոկոսային եկամտում» որպես «Տոկոսային եկամուտ» և «Տոկոսային ծախս» շահույթում կամ վնասում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ֆինանսական գործիքների ապագա գնահատված դրամական հոսքերը ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների զուտ հաշվեկշռային արժեքին: Ապագա դրամական հոսքերը գնահատվում են՝ հիմք ընդունելով գործիքի բոլոր պայմանագրային պայմանները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է բոլոր ապագա վճարման կամ ստացման ենթակա գումարները և միջնորդավճարները պայմանագրային կողմերի միջև, որոնք ուղղակիորեն վերագրելի են որոշակի պայմաններով վարկային պայմանագրին, գործարքի հետ կապված ծախսերին և այլ պարգևավճարներին կամ զեղչերին:

Տոկոսային եկամուտը/տոկոսային ծախսը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկսադրույքը ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվների նկատմամբ, նախքան ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) մասհանումը կամ ֆինանսական պարտավորությունների ամորտիզացված արժեքի նկատմամբ: Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների դեպքում տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ

տոկոսադրույքը վարկերի գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքի նկատմամբ (համախառն հաշվեկշռային արժեքը, հանած ԱՊԿ գծով մասհանումը):

Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և սկզբնական չափում. Կազմակերպության ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսկան ակտիվը կամ պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով, գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող բաղադրիչի համար, գործարքի արժեքը, որը ուղղակիորեն վերագրելի է ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Դասակարգում և հետագա չափում. ՖՀՄՍ 9-ն ունի ֆինանսական ակտիվների դասակարգման երեք հիմնական կատեգորիաներ՝ ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: ՖՀՄՍ 9-ի դասակարգումն ընդհանուր առմամբ հիմնված է այն բիզնես մոդելի վրա, որի շրջանակներում կառավարվում է ֆինանսական ակտիվը և այդ ակտիվի պայմանագրային դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է հետևյալ պայմանները և նախորոշված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող՝

- Ակտիվը պահվում է այն բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը; և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են (SPPI):

Ֆինանսական ակտիվը չափվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, եթե բավարարում է հետևյալ պայմանները և նախորոշված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող՝

- Ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ինչպես հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, այնպես էլ վաճառել ֆինանսական ակտիվները; և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերի առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են (SPPI):

Կազմակերպությունը կարող է սկզբնական ճանաչման պահին առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներն անշրջելիորեն նախորոշել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող մշտական հիմունքներով ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այս որոշումը կայացվել է գործիք-առ-գործիք հիմունքով:

Այն ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվել որպես ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես

ներկայացված է վերոնշյալ հատվածում, չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Սա իր մեջ ներառում է բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվը, որը այլ կերպ համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջներին, Կազմակերպությունը կարող է մշտական հիմունքներով դասակարգել այդպիսի ֆինանսական ակտիվը որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա վերացնում կամ զգալիորեն նվազեցնում է հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կարող էր առաջանալ հակառակ դեպքում:

<u>*Վերադասակարգում.*</u> Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում իրենց սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, որից հետո Կազմակերպությունը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման համար: Եթե փոփոխվում է բիզնես մոդելը, որի շրջանակում Կազմակերպությունը ֆինանսական ակտիվներ է պահում, ապա այդ փոփոխված ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են: Նոր կատեգորիային վերաբերող դասակարգման և չափման պահանջները կիրառվում են առաջընթաց կիրառման հիմունքներով՝ բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվանից, ինչը հանգեցնում է Կազմակերպության ֆինանսական ակտիվների վերադասակարգմանը: Ընթացիկ ֆինանսական տարվա և նախորդ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բիզնես մոդելում, որի շրջանակում Կազմակերպությունը ֆինանսական ակտիվներ է պահում, փոփոխություններ չեն կատարվել և, հետևաբար, դասակարգում չի կատարվել: Պայմանագրային դրամական միջոցների հոսքերը ներկայացվում են ստորև՝ *Ֆինանսական ակտիվների փոփոխության և ապաճանաչման* վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

<u>*Ֆինանսական ակտիվների արժեզրկում.*</u> ՖՀՄՍ 9 փոխարինում է ՀՀՄՍ 39-ի «առաջացած կորուստ» մոդելը «ակնկալվող պարտքային կորուստ» մոդելով: Արժեզրկման նոր մոդելը կիրառվում է որոշ վարկային հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի, բայց ոչ բաժնային ներդրումների մասով: ՖՀՄՍ 9-ի համաձայն, պարտքային կորուստները ճանաչվում են ավելի շուտ, քան ՀՀՄՍ 39-ի համաձայն:

Կազմակերպությունը ճանաչում է ֆինանսական ակտիվների ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) գծով մասհանումները, որոնք չեն չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Բացառությամբ գնված կամ ի սկզբանե արժեզրկված (ԳԻՍԱ - POCI) ֆինանսական ակտիվների, ԱՊԿ-ները պետք է չափվեն կորուստների գծով մասհանման հաշվառման միջոցով՝ ստորև նշվածների համարժեք գումարի չափով՝

- 12 ամսյա ակնկալվող պարտքային կորուստների չափով, այն է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների մի մասը, որն իրենից ներկայացնում է այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր դեֆոլտի դեպքերից կամ
- Ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր դեֆոլտի դեպքերից ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստի դեպքում ֆինանսական գործիքի համար պահանջվում է կորուստների գծով մասհանումներ, եթե այդ ֆինանսական գործիքի պարտքային

ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո: Բոլոր այլ ֆինանսական գործիքների համար ԱՊԿ-ները չափվում են 12-ամսյա ԱՊԿ-ի չափով:

Այլ դեբիտորական պարտքերի համար կորուստների գծով մասհանումները չափվում են ամբողջ ժամկետում ԱՊԿ-ին համարժեք գումարի չափով:

ԱՊԿ-ները, վարկային կորուստների ներկա արժեքի՝ հավանականության վրա հիմնված հաշվարկներն են: Դրանք չափվում են Կազմակերպությանը պայմանագրային հիմունքներով վճարման ենթակա դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության ներկա արժեքի հիման վրա, որը Կազմակերպությունը ակնկալում է ստանալ տարբեր տնտեսական սցենարների համեմատության արդյունքում՝ զեղչված ակտիվի արդյունավետ տոկոսադրույքի չափով:

Կազմակերպությունը ընդհանրացված պարտքային ռիսկի բնութագիր ունեցող պորտֆելների դեպքում ԱՊԿ-ն չափում է հավաքական հիմունքով:

ԱՊԿ-ի չափման մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծան. 25-ում, ներառյալ հավաքական հիմունքով գնահատման դեպքում գործիքների խմբավորման մեթոդների մասին:

Կազմակերպության ֆինանսական ակտիվները դասակարգված են ըստ հետևյալ չափման կատեգորիաների՝

Ֆինանսական ակտիվներ	Բիզնես մոդել	SPPI	Չափման կատեգորիա
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Պահված պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հավաքագրման նպատակով	Դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ	Ամորտիզացված արժեք
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	Այլ բիզնես մոդել	Դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով (պարտադիր)
Հաճախորդներին տրված վարկեր	Պահված պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հավաքագրման նպատակով	Դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ	Ամորտիզացված արժեք
Ներդրումային արժեթղթեր	Պահված պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հավաքագրման նպատակով	Դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ	Ամորտիզացված արժեք

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկվում է այն ժամանակ, երբ տեղի են ունենում ֆինանսական ակտիվի համար ակնկալվող հետագա դրամական հոսքերի վրա շրջադարձային ազդեցություն ունեցող մեկ կամ ավելի իրադարձություններ: Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվները համարվում են փուլ 3-ի ակտիվներ: Պարտքային առումով արժեզրկման փաստը ներառում է հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտարկելի տվյալները՝

- Փոխառուի կամ գործընկերոջ զգալի ֆինանսական դժվարությունները,
- Պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը,
- Վարկի կամ փոխառության վերաձևակերպում այնպիսի պայմանով, ինչպիսին Կազմակերպությունը չէր նախատեսել:
- Ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը, կամ
- Հնարավոր է դառնում, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

Երբեմն անհնար է առանձնացնել մեկ որոշակի իրադարձություն, քանի որ մի քանի իրադարձությունների միասնական ազդեցությունն է հանգեցնում ֆինանսական ակտիվների պարտքային առումով արժեզրկմանը: Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք պարտքային գործիքները, որոնք հանդիսանում են ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, համարվում են պարտքային առումով արժեզրկված յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Վարկը համարվում է արժեզրկված այն ժամանակ, երբ վարկառուի ֆինանսական դրության վատթարացման արդյունքում նրան զիջումներ են տրամադրվում, եթե չկան փաստեր այն մասին, որ զիջումների արդյունքում զգալիորեն նվազել են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի չստացման հավանականության ռիսկերը և բացակայում են արժեզրկման այլ հայտանիշներ: Այն ֆինանսական ակտիվները, որոնց համար դիտարկվում, սակայն չեն տրամադրվում զիջումներ, համարվում են պարտքային առումով արժեզրկված, երբ առկա են դիտարկելի ապացույցներ պարտքային առումով արժեզրկման վերաբերյալ, ներառյալ դեֆոլտի սահմանման պահանջներին համապատասխանությունը:

Դեֆոլտի սահմանումը (տես ստորև) ներառում է վճարունակության անհավանական լինելու հայտանիշերը, ինչպես նաև գումարների 90 օր կամ ավել ժամկետանց լինելու հավանականությունը:

<u>*Գնված կամ ի սկզբանե պարտքային առումով արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվներ.*</u> POCI ֆինանսական ակտիվների նկատմամբ այլ մոտեցում է ցուցաբերվում, քանի որ դրանք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Այսպիսի ակտիվների համար Կազմակերպությունը ճանաչում է սկզբնական ճանաչումից ի վեր ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստում բոլոր փոփոխությունները որպես կորուստների գծով մասհանում, իսկ ցանկացած փոփոխություն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այսպիսի ակտիվների համար բարենպաստ փոփոխությունն առաջացնում է արժեզրկման գծով օգուտ: 2020 և 2019 թթ. ընթացքում Կազմակերպությունը չի գնել կամ ստեղծել պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ:

<u>ԱՊԿ գծով մասհանման ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում.</u> ԱՊԿ գծով մասհանումները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ՝

- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում;
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների դեպքում՝ կորուստների գծով ոչ մի պահուստ չի ճանաչվում

ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ հաշվեկշռային արժեքը չափվում է իրական արժեքով:

- Վարկային հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի դեպքում՝ որպես պահուստ, և
- Այն դեպքում, երբ ֆինանսական գործիքը ներառում է և օգտագործված, և չօգտագործված բաղադրիչ, և Կազմակերպությունը չի կարողանում որոշել վարկային գծի բաղադրիչի մասով ԱՊԿ-ն օգտագործված բաղադրիչից առանձին, ապա Կազմակերպությունը ներկայացնում է կորուստների գծով համախմբված պահուստ երկու բաղադրիչների համար: Համախմբված գումարը ներկայացվում է որպես օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից նվազում: Օգտագործված բաղադրիչի համախառն արժեքից կորուստների գծով մասհանման ցանկացած գերազանցում ներկայացվում է որպես պահուստ:

Ֆինանսական ակտիվների պայմանագրային փոփոխություն և ապաճանաչում. ֆինանսական ակտիվների պայմանագրային փոփոխությունները տեղի են ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական միջոցների հոսքերը կառավարող պայմանագրային պայմանները վերանայվում կամ այլ կերպ փոփոխվում են ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման և մարման ժամկետների միջակայքում: Փոփոխությունն ազդում է պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերի գումարի և/կամ ժամկետների վրա անմիջապես կամ ապագայում:

Կազմակերպությունը վերանայում է ֆինանսական դժվարություններ ունեցող հաճախորդների վարկային պայմանագրի պայմանները, որպեսզի ապահովի ստացման ենթակա գումարների առավելագույն հավաքագրումը և նվազագույնի հասցնի դեֆոլտի ռիսկերը: Վարկի պայմանները վերանայվում են այն դեպքում, երբ չնայած վարկառուն հնարավոր ամեն ինչ արել է սկզբնական պայմանագրային վճարման պայմանները կատարելու համար, սակայն առկա է վճարումների չկատարման մեծ ռիսկ կամ դա արդեն տեղի է ունեցել, և ակնկալվում է, որ վարկառուն կկարողանա կատարել իր արդեն վերանայված պարտավորությունները: Վերանայված պայմանները հիմնականում ներառում են վարկի մարման ժամկետների երկարաձգում, վարկի դրամական միջոցների հոսքերի ժամկետների փոփոխություն (մայր գումարի և տոկոսների մարում), վճարման ենթակա գումարների կրճատում (մայր գումարի և տոկոսային գումարների համաներում) և պայմանագրային դրույթների փոփոխություններ:

Ֆինանսական ակտիվի փոփոխման դեպքում Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք այս փոփոխության արդյունքում առաջանում է ապաճանաչում: Կազմակերպության քաղաքականության համաձայն, փոփոխությունը հանգեցնում է ապաճանաչման, երբ այդ փոփոխության արդյունքում էապես տարբերվող այլ պայմանագրային պայմաններ են ստեղծվում: Որոշելու համար, թե արդյոք փոփոխված պայմանները էապես տարբերվում են սկզբնական պայմանագրային պայմաններից, Կազմակերպությունը հաշվի է առնում հետևյալը՝

- Կատարվում է քանակական գնահատում, որպեսզի համեմատվեն սկզբնական պայմաններով՝ մնացած պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքը և վերանայված պայմաններով պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և երկու գումարներն էլ զեղչվում են սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Եթե ներկա արժեքի տարբերությունը 10 տոկոսից ավել է, ապա Կազմակերպությունը որոշում է, որ առկա է վարկային պայմանագրի, որի պայմաններն էականորեն տարբեր են, ինչն էլ հանգեցնում է ապաճանաչման:
- Որակական գործոններ, ինչպիսիք են պայմանագրային դրամական հոսքերը պայմանագրի փոփոխությունից հետո այլևս չեն հանդիսանում բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI), արժույթի փոփոխությունը

կամ պայմանագրային կողմի փոփոխությունը, տոկոսադրույքների փոփոխության մեծությունը, մարման ժամկետը, պայմանագրային սահմանափակումները:

Եթե պայմանները էապես տարբերվում են, ապա Կազմակերպությունը ապաճանաչում է սկզբնական ֆինանսական ակտիվները և ճանաչում է «նոր» ակտիվը իրական արժեքով և վերահաշվարկում է նոր արդյունավետ տոկոսադրույք այդ ակտիվի համար: Վերանայման ամսաթիվ է համարվում արժեզրկման հաշվարկի նպատակով սկզբնական ճանաչման ամսաթիվը, այդ թվում պարտքային ռիսկի նշանակալի աճի առկայությունը որոշելու նպատակով:

Եթե պայմանները էապես չեն տարբերվում, ապա վերանայումը կամ փոփոխությունները ապաճանաչման չեն հանգեցնում, և Կազմակերպությունը վերահաշվարկում է համախառն հաշվեկշռային արժեքը՝ հիմք ընդունելով ֆինանսական ակտիվի վերանայված դրամական հոսքերը, և ճանաչում է փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը շահույթում կամ վնասում: Նոր համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է՝ զեղչելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով գնված կամ ի սկզբանե արժեզրկված ֆինանսական ակտիվների համար):

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (ներառյալ՝ էապես տարբեր պայմանագրային պայմանների փոփոխման արդյունքում ուժը կորցնելը) կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ ռիսկերն ու օգուտները:

Եթե Կազմակերպությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Կազմակերպությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, ապա Կազմակերպությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը:

Դեֆոլտի սահմանումը. ԱՊԿ-ի սահմանման համար կարևոր է սահմանել դեֆոլտը: Վերջինիս սահմանումը օգտագործվում է ԱՊԿ-ի չափը և կորուստների գծով մասհանումները 12-ամսյա կամ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստի վրա հիմնված լինելը որոշելու համար, քանի որ դեֆոլտը դեֆոլտի հավանականության (PD - ԴՀ) բաղադրիչ է, որն ազդում է ԱՊԿ-ի գնահատման, ինչպես նաև պարտքային ռիսկի զգալի աճի հայտնաբերման վրա:

Կազմակերպությունը ստորև նշված հանգամանքների դեպքում արձանագրում է դեֆոլտ, երբ՝

- Վարկառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց ցանկացած նյութական վարկային հանձնառություն Կազմակերպության նկատմամբ, կամ
- Հավանական է, որ վարկառուն ամբողջությամբ չի վճարի իր վարկային հանձնառությունները:

Դեֆոլտի սահմանումը համապատասխանեցվում է տարբեր տեսակի ակտիվների տարբեր առանձնահատկություններն արտացոլելու նպատակով:

Վարկառուի՝ իր վարկային հանձնառությունների չկատարման հավանականության գնահատման նպատակով Կազմակերպությունը հաշվի է առնում որակական և քանակական ցուցանիշները: Քանակական տեղեկատվությունը ներառում է նույն վարկառուի այլ պարտավորությունների չկատարման կամ վճարի ուշացման մասին տվյալներ, որոնք այս վերլուծության կարևոր մասն են հանդիսանում: Դեֆոլտը գնահատելիս Կազմակերպությունը հաշվի է առնում տեղեկատվության տարբեր աղբյուրներ, որոնք ստացվել են ներքին ուղիներով կամ արտաքին աղբյուրներից:

Ստորև աղյուսակը տալիս է ՖՀՄՍ 9-ի համաձայն արժեզրկման պահանջների ամփոփ նկարագիրը (գնված կամ ի սկզբանե արժեզրկված ֆինանսական ակտիվներից բացի)՝

Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3
(Սկզբնական ճանաչում)	(Պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր)	(Պարտքային առումով արժեզրկված ակտիվներ)
12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ	Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ

Փուլ 3-ում գտնվող պարտքային առումով արժեզրկված ակտիվները անցնում են 6-ամսյա փորձաշրջան փուլ 2 տեղափոխվելուց առաջ պայմանագրի վարկային էական պարտավորությունները կատարելուց հետո:

Պարտքային ռիսկի նշանակալի աճ. Սկզբնական ճանաչումից ի վեր ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճի գնահատման նպատակով Կազմակերպությունը հաշվի է առնում ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը հասանելի է առանց անհարկի ծապսերի կամ ջանքերի: Այն ներառում է և՛ քանակական, և՛ որակական տեղեկատվություն և վերլուծություն՝ հիմնված Կազմակերպության պատմական փորձի և պարտքային ռիսկի մասնագիտական վերլուծության վրա, և ներառում է ապագայամետ տեղեկատվություն:

Այս գնահատման նպատակն է պարզել, արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, համեմատելով՝

- Վարկի ամբողջ ժամկետում հաշվառվող մնացած ԴՀ-ն հաշվետու ամսաթվի դրությամբ, և
- Վարկի ամբողջ ժամկետի ընթացքում հաշվառվող մնացած ԴՀ-ն այն ժամանակահատվածի համար, երբ այն գնահատվել է՝ հիմք ընդունելով ռիսկերի սկզբնական ճանաչման ժամանակ առկա փաստերը և հանգամանքները (անհրաժեշտության դեպքում ճշգրտելով կանխավճարի ակնկալիքների փոփոխությունների մասով)

Պարտքային ռիսկի նշանակալի աճը որոշելիս Կազմակերպությունը օգտագործում է հետևյալ երեք հայտանիշները՝

- Քանակական թեստ՝ հիմնված ԴՀ-ի շարժի վրա;
- «Վերանայման» կարգավիճակը; և
- 30 օր ժամկետանց լինելու հանգամանքը:

«Վերանայում» առաջանում է վարկային պայմանագրի վերակառուցման ժամանակ, այսինքն՝ տոկոսագումարի և մայր գումարի վճարման ժամկետների երկարաձգում վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում, որը տարբերվում է վարկի տրամադրման ժամանակ եղած վիճակից, և վարկառուն դիմել է Կազմակերպությանը վարկի վճարման ժամանակացույցի փոփոխման համար: Վարկային պայմանագրի վերանայվում է միայն այն

ժամանակ, երբ Կազմակերպության համապատասխան ստորաբաժանումը համոզված է, որ վարկառուն կկարողանա վճարումները կատարել նոր ժամանակացույցին համապատասխան:

2020թ. ընթացքում երկրում հայտարարված արտակարգ դրության ժամանակ և COVID-19 համաճարակի բռնկման հետևանքով մտցված շրջափակումների պատճառով մի շարք վարկերի տրամադրվել է 2 ամսվա արտոնյալ ժամանակահատված: Այս բոլոր վարկերը վերադասակարգվել են 2-րդ փուլ, ապա վեց հաջորդական, առանց ուշացումների վճարներից հետո, ճանաչվել են վերականգնված և տեղափոխվել 1 փուլ: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1-ին փուլում վարկերի համախառն հաշվեկշռային արժեքը կազմում է 3,017,218 հազար ՀՀ դրամ:

Բազմաթիվ տնտեսական սցենարների հիման վրա Կազմակերպությունը որոշում է ԴՀ-ն սկզբնական ճանաչման ժամանակ և հետագա հաշվետու ամսաթվերին: Տարբեր տնտեսական սցենարներ առաջացնում են տարբեր ԴՀ-ներ: Այս տարբեր սցենարների կշիռը ձևավորում է դեֆոլտի միջին կշռված հավանականության հիմք, որն օգտագործվում է պարտքային ռիսկի նշանակալի աճը որոշելիս: Կանխատեսումները ներառում են Հայաստանի տնտեսության ապագա հեռանկարների վերաբերյալ տեղեկություններ, ստացված տնտեսական փորձագետների զեկույցներից, ֆինանսական վերլուծաբաններից, պետական մարմիններից և այլ նմանատիպ կազմակերպություններից, ինչպես նաև փաստացի և կանխատեսական տնտեսական տեղեկությունների ներքին և արտաքին տարբեր աղբյուրներից:

Դուրսգրում. Ֆինանսական ակտիվները դուրս են գրվում այն ժամանակ, երբ Կազմակերպությունը չունի ֆինանսական ակտիվի վերականգնման (ամբողջական կամ մասնակի) ողջամիտ ակնկալիքներ: Այս դեպքում Կազմակերպությունը որոշում է, որ վարկառուն չունի համապատասխան ակտիվներ կամ եկամտի բավարար աղբյուրներ դուրս գրման ենթակա գումարների մարման նպատակով բավարար դրամական միջոցներ ստեղծելու համար:

Դուրսգրումը ներառում է ապաճանաչման իրադարձություն: Կազմակերպությունը կարող է դուրս գրված ֆինանսական ակտիվների նկատմամբ հարկադիր միջոցներ կիրառել: Կազմակերպության գործադրած հարկադիր միջոցների արդյունքում հավաքագրված գումարները արժեզրկման գծով օգուտ կառաջացնեն:

Կազմակերպության դուրսգրման քաղաքականությունը որոշվում է վերականգնման կորերի վերլուծության հիման վրա, որն առաջանում է ՖՀՄՍ 9-ի backtesting-ի և մոդելի ստուգման արդյունքում՝ որոշելու համար այն կետը, որի դեպքում ողջամտորեն կարելի է ակնկալել պորտֆելի 10% (տաս տոկոս)-ից պակաս մնացորդային գումարի հավաքագրում, որը գտնվում է դեֆոլտում առավելագույնը մինչև 24 ամիս Փուլ 3-ի վարկերի համար:

Վերականգնման կորի վերլուծության մեջ անհրաժեշտ է դիտարկել երեք պայման նախքան ստորև նշված քայլերի մեկնաբանության անորոշության արդյունքում մասնագիտական դատողություններին վերադառնալը՝

1) Կորի ձևը – անկախ այն բանից, արդյոք կորի արագացման գործառույթը սահմանվում է որպես ժամանակի ամենաբարձր կամ «վերջնական» վերականգնման դրույքաչափը որպես մոնոտոն («աստճանական») կամ արագ («կտրուկ»);
2) Վերականգնման վերջնական դրույքաչափի սադղակը - 0%-ից մինչև 100%, անկախ այն բանից, արդյոք մեծ է, թե փոքր վերականգնման դրույքաչափը, և
3) Վերոնշյալ 10%-ի չափանիշի ամբողջական կամ հարաբերական կիրառման ընդունումը – արդյոք վերոնշյալ 1-ին և 2-րդ պայմանների դիտարկումից հետո մոնոտոն և լայնամասշտաբ լինելու վկայությունը պահանջում է 10%-ից պակաս վերականգնման վերջնական դրույքաչափի դուրսգրման չափանիշի կիրառում (ամբողջական կիրառում) կամ արագ և

փոքրամասշտաբ լինելու վկայությունը պահանջում է 0.9-ով բազմապատկած վերջնական դրույքաչափի չափանիշի կիրառումը:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ.

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները սահմանվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են շահույթում կամ վնասում ճանաչվող վերագնահատման արդյունքում՝ այն չափով, որքանով նրանք նախորոշված հեջային գործիքների մաս չեն կազմում: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ֆինանսական պարտավորության համար վճարված ցանկացած տոկոս և շահույթի կամ վնասի այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում դասակարգվում որպես «զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներ» տողում:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները (ներառյալ փոխառությունները, թողարկված պարտքային արժեքթղթերը) սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքի ծախսերը: Դրանք այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային ծախսի համապատասխան ժամանակաշրջանում տեղաբաշխման մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն ավելի մանրամասն ներկայացված է ստորև «զուտ տոկոսային եկամուտ» բաժնում:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը. Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Կազմակերպության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Որակական գործոնների, քանակական գործոնների և որակական և քանակական գործոնների ընդհանուր ազդեցության ուսումնասիրություն: Կազմակերպությունը եզրակացնում է, որ փոփոխությունն էական է հետևյալ որակական գործոնների արդյունքում՝

- Ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն;
- Գրավի և պարտքի ապահովման այլ միջոցների փոփոխություն;
- Փոխարկման տարբերակի ներառում;
- Ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման նպատակով պայմանագրային պայմանները զգալիորեն տարբերվում են այն դեպքում, երբ նոր պայմաններով դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը (ներառյալ վճարված գումարները, հանած յուրաքանչյուր վճար, ստացված և զեղչված՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը) առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե փոփոխությունն էական չէ, ապա (1) նախքան փոփոխությունը՝ պարտավորության հաշվեկշռային արժեքի, և (2) փոփոխությունից հետո դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև առկա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում՝ որպես փոփոխության արդյունքում օգուտ կամ վնաս՝ այլ օգուտների և վնասների կազմում:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ. Կազմակերպությունը կնքում է գործարքներ տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով, որոնցից մի քանիսը դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, մինչդեռ մյուսները պահվում են տոկոսադրույքի ռիսկին, պարտքային ռիսկին և արտարժույթի դրույքաչափի ռիսկին ենթարկվածությունը կառավարելու նպատակով: Պահվող ածանցյալ գործիքները ներառում են արտարժույթի փոխանակման պայմանագրեր, տոկոսադրույքի սվոփեր և վարկային արժեզրկման սվոփեր: Ածանցյալ գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման ամսաթվով, և հետագայում վերաչափվում իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվեկշռային ամսաթվի դրությամբ: Դրանից բխող օգուտը/վնասն անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ածանցյալ ֆինանսական գործիքները համարվում են ակտիվներ, եթե դրանց իրական արժեքը դրական է, և համարվում են պարտավորություններ, եթե դրանց իրական արժեքը բացասական է:

Ածանցյալ գործիքը ներկայացվում է որպես ոչ ընթացիկ ակտիվ կամ ոչ ընթացիկ պարտավորություն, եթե գործիքի մնացորդային ժամկետը գերազանցում է 12 ամիսը և չի ակնկալվում, որ կիրականացվի կամ կկարգավորվի 12 ամսվա ընթացքում: Այլ ածանցյալ գործիքներ ներկայացվում են որպես ընթացիկ ակտիվներ կամ ընթացիկ պարտավորություններ:

Զուտ տոկոսային եկամուտ. Բոլոր ֆինանսական գործիքների մասով, բացառությամբ վաճառքի համար պահվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող գործիքներից, տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են «զուտ տոկոսային եկամուտում» որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս» շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների տոկոսը ներառվում է ժամանակաշրջանի ընթացքում իրական արժեքի շարժի մեջ, «Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող առևտրային ակտիվներից և այլ ֆինանսական ակտիվներիից և առևտրային պարտավորություններից» և «Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներից» հոդվածներում:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է բոլոր ապագա վճարման կամ ստացման ենթակա գումարները և միջնորդավճարները պայմանագրային կողմերի միջև, որոնք ուղղակիորեն վերագրելի են որոշակի պայմաններով վարկային պայմանագրին, գործարքի հետ կապված ծախսերին և այլ պարգևավճարներին կամ զեղչերին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով գործարքի արժեքը ճանաչվում է շահույթում կամ վնասում սկզբնական ճանաչման ժամանակ:

Վճարներ և կոմիսիոն եկամուտ/ծախս. վճարները և կոմիսիոն ծախսերն ու եկամուտները արդյունավետ տոկոսադրույքի անբաժան մաս հանդիսացող վճարներից բացի ներառում են նաև այլ վճարներ (տես վերոնշյալ բաժինը): Կազմակեպության շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այս մասում ընդգրկված վճարները, ի թիվս այլ վճարների, ներառում են վարկային համաձայնագրի սպասարկման վճարներ, վարկային հանձնառությունների գծով չօգտագործման վճարներ, երբ քիչ հավանական է, որ այդ վճարները կառաջացնեն հատուկ վարկային հանձնառություններ և վարկային սինդիկացիոն վճարներ:

Ծառայությունների գծով վճարները և կոմիսիոն ծախսերը հաշվարկվում են ծառայությունների մատուցման ժամանակ:

Որոշելու համար, արդյոք պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կստեղծի կամ կմեծացնի հաշվապահան

հաշվառման անհամապատասխանությունը շահույթում կամ վնասում, Կազմակերպությունը գնահատում է, արդյոք ակնկալվում է պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցության հաշվեգրում շահույթում կամ վնասում՝ պայմանավորված շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքի իրական արժեքի փոփոխությամբ: Այս որոշումը կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ:

Բաժնային գործիքներ: Բաժնային գործիքը ցանկացած այն պայմանագիրն է, որը վկայում է Կազմակերպության ակտիվում ունեցած բաժնեմասնակցության մասը՝ հանած բոլոր պարտավորությունները: Բաժնային գործիքները ճանաչվում են որպես մուտքեր՝ հանած թողարկման ուղղակի ծախսերը:

Կազմակերպության սեփական բաժնային գործիքների հետգնումը ճանաչվում և ուղղակիորեն նվազեցվում սեփական կապիտալից: Կազմակերպության սեփական բաժնային գործիքների գնման, վաճառքի, թողարկման կամ դադարեցման արդյունքում առաջացած օգուտները կամ վնասները չեն ճանաչվում շահույթում կամ վնասում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, վարկավորող կազմակերպություններից ստացվելիք գումարները, որոնց մարման սկզբնական ժամկետը չի գերազանցում 90 օրը և որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Հիմնական միջոցներ. հիմնական միջոցի միավորը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի հիման վրա և նախատեսված է զրոյացնելու ակտիվների արժեքը դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով հետևյալ օգտակար ծառայության ժամկետներով՝

- Կապի և հաղորդակցության միջոցներ	— 3 տարի;
- Գրասենյակային գույք	— 5 տարի;
- Փոխադրամիջոցներ	— 5 տարի;
- Այլ հիմնական միջոցներ	— 5 տարի:

Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումները մաշեցվում են վարձակալության ժամկետից և օգտակար ծառայության ժամկետից նվազագույնով, եթե առկա չէ ողջամիտ համոզվածություն այն մասին, որ Կազմակերպությունը կստանա ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում կամ կերկարաձգի վարձակալության ժամկետը:

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրս բերումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի վաճառքից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներ. Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները, որոնք առանձին են ձեռք բերվել, հաշվառվում են սկզբնական

արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Երագրերի օգտակար ծառայության ժամկետ է համարվում 20 տարի, իսկ լիցենզիաներինը՝ 4 տարի: Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով՝ օգտական ծառայության հաշվարկված ժամկետի համար:

Ամորտիզացիան ճանաչվում է ուղիղ գծով `օգտակար ծառայության ժամկետների հաշվին: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում՝ գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվներ՝ հետազոտության և զարգացման ծախս: Հետազոտության գործունեության ծախսը ճանաչվում է որպես այն ժամանակաշրջանի ծախս, որում այն առաջացել է:

Զարգացումից (կամ ներքին նածագծի զարգացման փուլից) առաջացող ներքին ոչ նյութական ակտիվը ճանաչվում է միայն եթե ներկայացվել են՝

- Ոչ նյութական ակտիվի կատարման տեխնիկական իրագործելիություն է, որը այն դարձնում է հնարավոր օգտագործման կամ վաճառքի համար;
- Ոչ նյութական ակտիվի կատարման, օգտագործման կամ վաճառքի մտադրություն;
- Ոչ նյութական ակտիվի օգտագործման կամ վաճառքի հնարավորություն;
- Ինչպես կարող է ոչ նյութական ակտիվը օգտվել հետագա հավանական տնտեսական օգուտներից;
- տեխնիկական, ֆինանսական և այլ ռեսուրսների հնարավորություն, որոնք կօգնեն կատարել զարգացումը և ոչ նյութական ակտիվի օգտագործումը կամ վաճառքը և
- Զարգացման ընթացքում ոչ նյութական ակտիվին վերագրելի ծախսը չափելու հնարավորություն:

Ներքին ոչ նյութական ակտիվների համար սկզբնապես ճանաչված գումարը ծախսի այն գումարն է, որն առաջացել է ոչ նյութական ակտիվի՝ վերոնշյալ չափանիշներին բավարարելու ամսաթվին: Եթե հնարավոր չէ ճանաչել ներքին ոչ նյութական ակտիվը, զարգացման ծախսը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում այն առաջացել է:

Սկզբնական ճանաչումից հետո ներքին ոչ նյութական ակտիվները գրանցվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկման կուտակված կորուստները այն նույն հիմունքով, որով ոչ նյութական ակտիվները ձեռք են բերվում առանձին:

<u>Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում</u>. ոչ նյութական ակտիվները ապաճանաչվում են դրանք օտարելիս կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

<u>Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գուդվիլից.</u> յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Կազմակերպությունը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում

եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի գնահատվեն արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Կազմակերպությունը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության համար առնվազն տարեկան մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել: Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է: Օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով մինչ հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է ավելի քիչ քան հաշվեկշռային արժեքը, ապա հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչ փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչ վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է եկամուտ կամ կորստում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեզրկումից կորստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Հարկում. շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

<u>Ընթացիկ հարկ</u>. ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Կազմակերպության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

<u>Հետաձգված հարկ</u>. հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն

չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար (բացի բիզնես միավորումից), որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով՝ կապված հիմնական միջոցների և հաճախորդներին տրված վարկերի հետ: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, կապված վերը նշված ներդրումների հետ, ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը և ժամանակավոր տարբերությունը կմարի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր. ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Պահուստներ. պահուստները ճանաչվում են, երբ Կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Կազմակերպությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերը և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Կազմակերպության կողմից

պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ. պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ ցանկացած պայմանագրային արտահոսքի հավանականությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, բայց դրանք բացահայտվում են, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Գրավ. Կազմակերպությունը որպես հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց ընդունում է գրավ, երբ դա նպատակահարմար է համարվում: Գրավը հիմնականում լինում է հաճախորդի ակտիվների նկատմամբ կոշտ գրավի տեսքով և Կազմակերպությանը վերապահվում է պահանջի իրավունք այս ակտիվների նկատմամբ հաճախորդի առկա և ապագա պարտավորությունների դիմաց:

Սեգմենտային հաշվետվություն. գործառնական սեգմենտը Կազմակերպության բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեության մեջ և որոնցից այն կարող է ստանալ եկամուտներ և կրել ծախսեր (ներառյալ Կազմակերպության այլ բաղադրիչների հետ գործառնություններին վերաբերող եկամուտները և ծախսերը), որի գործառնական արդյունքները պարբերաբար վերանայվում են Գործառնական Հարցերով Հիմնական Որոշումները Կայացնողի կողմից՝ սեգմենտին հատկացվելիք միջոցների վերաբերյալ որոշումներ կայացնելու և դրա կատարողականը գնահատելու նպատակով, և որի համար առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն:

Կազմակերպության աշխատանքները մեծապես ինտեգրացված են և ՖՀՄՍ 8. «Գործառնական սեգմենտներ» ստանդարտի իմաստով հանդիսանում են մեկ բիզնես սեգմենտ: Ղեկավարությունը Կազմակերպության առանձին բաղադրիչների գործառնական արդյունքներն առանձին չի ուսումնասիրում: Ակտիվները հիմնականում կենտրոնացած են Հայաստանի Հանրապետությունում, իսկ եկամուտների ու շահույթի մեծ մասը ստացվում են Հայաստանի Հանրապետությունում կատարվող գործարքներից կամ դրանց առնչությամբ: Գործառնական Հարցերով Հիմնական Որոշում Կայացնողը՝ Կազմակերպության դեպքում Տնօրենների խորհուրդը, միայն ստանում և վերանայում է Կազմակերպության վերաբերյալ ամբողջական տեղեկությունները:

Կազմակերպության հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս՝ Կազմակերպության ղեկավարությանը անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումները և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

4. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Կազմակերպության հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս Կազմակերպության ղեկավարությանն անհրաժեշտ է լինում կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումներն և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին, կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Այս բացահայտումը ներկայացնում է այն հարցերը, որոնք ունեն դատողության կամ բարդության առավել բարձր աստիճան և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները, որոնք ունեն զգալի ռիսկեր, որոնք հանգեցնում են հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում էական ճշգրտմանը: Յուրաքանչյուր գնահատման մասին մանրամասն տեղեկատվությունը ներառված է համապատասխան բացահայտումներում, այդ թվում ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր առնչվող հոդվածի համար հաշվարկման հիմքի վերաբերյալ տեղեկատվությունը:

Կորուստների գծով մասհանման չափումը. Ամորտիզացված արժեքով և այլ համապարփակ եկամուտներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների համար ակնկալվող պարտքային կորուստներին ուղղված մասհանումների (ԱՊԿ) չափումը այն ոլորտն է, որը պահանջում է համալիր մոդելների և ապագա տնտեսական պայմանների և վարկային վարքագծի վերաբերյալ զգալի ենթադրություններ (օրինակ՝ հաճախորդների դեֆոլտի հավանականությունը և դրա արդյունքում առաջացող կորուստները):

ԱՊԿ-ի չափման ժամանակ հաշվապահական պահանջների կիրառման համար անհրաժեշտ են նաև մի շարք կարևոր դատողություններ, ինչպիսիք են `

- պարտքային ռիսկի նշանակալի աճի չափանիշների որոշում,
- ԱՊԿ-ի չափման համար համապատասխան մոդելների և ենթադրությունների ընտրություն;
- Յուրաքանչյուր վարկատեսակի/շուկայի և նրանց համապատասխան ԱՊԿ-ի համար սպասվելիք իրավիճակների քանակների և տեսակարար կշիռների սահմանում,
- ԱՊԿ-ի չափման նպատակով համանման ֆինանսական ակտիվների խմբերի ստեղծում:

ՖՀՄՍ 9 ստանդարտի COVID-19 միջոցառումներ, պատերազմի հետևանքների մեղմացման միջոցառումներ

Կազմակերպությունը որոշում է, թե արդյոք COVID-19 պանդեմիան ազդում է վարկառուների պարտքային ռիսկի զգալի աճի վրա: Կազմակերպությունը ժամանակավորապես վերանայել է հետաձգման կարգավիճակը՝ կիրառելով «Վերականգնման ընթացակարգը» և «պարտքային ռիսկի զգալի աճը» (SICR), դրանով իսկ ճշգրտելով դեֆոլտի հավանականությունը՝ հաշվի առնելով համաճարակի ազդեցությունը: Վերականգնման ընթացակարգը կիրառվում է միայն վերակառուցված վարկերի համար, որոնց հետաձգման նշույթը կարող է հանվել, որոնք ընթացիկ

էին (առանց ուշացման) մինչև դեկրետ/ ճգնաժամային ժամանակաշրջան և վերակառուցում և ընթացիկ են իրենց վերակառուցված վիճակում և վեց ամսվա ընթացքում ավարտել են ծրագրված հաջորդական վճարումները:

Կազմակերպությունը նաև կիրառում է մակրոտնտեսական կանխատեսումներ, որոնք հաշվի են առնում COVID-19-ի ազդեցությունը, որը հասանելի է առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի:

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա ընթացքում հաճախորդներին տրամադրված ամորտիզացված արժեքով փոփոխված վարկերի ընդհանուր գումարը կազմում է 12,342,547 հազար դրամ, որից 2020թ. ընթացքում մարվել է 3,017,218 հազար դրամ: Փոփոխված վարկերի զգալի մասը բաժին է ընկնում COVID-19-ին:

Մի շարք հաճախորդներ տուժել են Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների սրման հետևանքով: Պատերազմի զոհերի վարկերը դուրս են գրվել 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 37,387 հազար ՀՀ դրամ ընդհանուր հաշվեկշռային գումարով: Վարկերը, որոնցով տուժել է ընտանիքի մերձավոր անդամը, դասակարգվել են որպես 3-րդ փուլի վարկեր, ինչի արդյունքում 13,824 հազար դրամ համախառն հաշվեկշռային արժեքով վարկերը 1-ին փուլից վերադասակարգվել են 3-րդ փուլ, իսկ 25,569 հազար դրամ համախառն հաշվեկշռային արժեքով վարկերը 2-րդ փուլից վերադասակարգվել են 3-րդ փուլ:

ՀՀ ԿԲ պահուստի գնահատում. ԿԲ-ի պահուստին գնահատումը հիմնված է հետևյալ պայմանների և դրույթների կիրառման վրա.

- Կազմակերպությունը նախատեսում է վերահաշվարկել Սպառողական վարկերի մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի խախտման կապակցությամբ հաշվարկված տոկոսների գումարը՝ 2018թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հուլիսի 20-ն ընկած ժամանակահատվածում տրված վարկերի գծով՝ հիմք ընդունելով 365 օր 360 օրվա փոխարեն;
- Կազմակերպությունը պետք է վերահաշվարկի Սպառողական վարկերի մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի և 86-րդ հոդվածի 3-րդ կետի 8/05-րդ հոդվածի 3-րդ կետի խախտմամբ մարված վարկերի դիմաց ստացված և վճարված վճարները:

Ելնելով Կազմակերպության ենթադրություններից՝ ներքոնշյալ կանոնների խախտումներից տուժած հաճախորդների մոտ 70%-ը կպահանջի վերադարձնել իրենց գումարները: Մնացած հաճախորդները համարվում են պասիվ:

5. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամ	190,628	211,975
Ընթացիկ հաշիվներ	534,066	492,519
	724,694	**704,494**
Հանած՝ ակնկալվող պարտքային կորուստներ	*(7)*	(899)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**724,687**	**703,595**

ՖՀՄՍ 9-ի համաձայն, ԱՊԿ կորուստների գծով պահուստների համադրումը ըստ փուլերի ներկայացվում է ստորև՝

	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստներ առ 1 հունվար 2019թ.	**238**	**238**
Պահուստային ծախս	661	**661**
Ակնկալվող պարտքային կորուստներ առ 31 դեկտեմբեր 2019թ.	**899**	**899**
Ակնկալվող պարտքային կորուստներ առ 31 հունվար 2020թ.	**899**	**899**
Վերականգնում	(892)	**(892)**
Ակնկալվող պարտքային կորուստներ առ 31 դեկտեմբեր 2020թ.	**7**	**7**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ընթացիկ հաշիվները պահվում են առևտրային ռեզիդենտ բանկերում, ընդ որում մնացորդի 81.8%-ը պահվում է երկու ռեզիդենտ առևտրային բանկում: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Կազմակերպությունը չունի որևէ ֆինանսական հաստատությունում կենտրոնացած միջոցներ, որոնց մնացորդը կգերազանցեր սեփական կապիտալի 10%-ը (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ զրո):

6. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	24,298,801	26,260,402
Հանած՝ ակնկալվող պարտքային կորուստներ	(4,488,569)	(2,338,487)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**19,810,232**	**23,921,915**

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերը ըստ վարկատեսակների՝

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Համախառն վարկեր	Կորուստների գծով մասհանում	Զուտ վարկեր	Կորուստների գծով մասհանում համախառն վարկերի նկատմամբ, %
Անհատական գյուղատնտեսական վարկեր	13,159,094	(2,140,871)	11,018,223	16.3%
Անհատական բիզնես վարկեր	6,792,891	(1,336,288)	5,456,603	19.7%
Սպառողական վարկեր	4,346,816	(1,011,410)	3,335,406	23.3%
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**24,298,801**	**(4,488,569)**	**19,810,232**	**18.5%**

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Համախառն վարկեր	Կորուստների գծով մասհանում	Զուտ վարկեր	Կորուստների գծով մասհանում համախառն վարկերի նկատմամբ, %
Անհատական գյուղատնտեսական վարկեր	13,529,982	(1,033,545)	12,496,437	7.64%
Անհատական բիզնես վարկեր	10,874,402	(1,109,612)	9,764,790	10.20%
Սպառողական վարկեր	1,855,801	(195,286)	1,660,515	10.52%
Խմբային վարկեր*	41	(38)	3	92.68%
Խմբային գյուղատնտեսական վարկեր*	176	(6)	170	3.41%
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**26,260,402**	**(2,338,487)**	**23,921,915**	8.90%

*Սրանք ներկայացնում են խմբային վարկերը և խմբային գյուղատնտեսական վարկերը, որոնք Կազմակերպությունն այլևս չի տրամադրում որպես առանձին վարկատեսակ: Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ նշված մնացորդները ներկայացնում են համապատասխան վարկատեսակների գծով մնացորդները:

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերն ըստ տնտեսության ոլորտների՝

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Համախառն վարկեր	Համախառն վարկեր, %	Համախառն վարկեր	Համախառն վարկեր, %
Գյուղատնտեսություն	13,695,466	56.36%	13,950,911	53.13%
Ծառայություն	4,791,741	19.72%	5,025,840	19.14%
Առևտուր	3,184,063	13.10%	4,000,782	15.24%
Արդյունաբերություն	849,593	3.50%	1,133,689	4.32%
Տրանսպորտ	769,154	3.17%	837,550	3.19%
Շինարարություն	90,927	0.37%	154,624	0.59%
Այլ	917,857	3.78%	1,157,006	4.41%
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**24,298,801**	**100.00%**	**26,260,402**	**100.00%**

Ստորև ներկայացված է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի շարժը:

	Գյուղա-տնտեսու-թյուն	Առևտուր	Արդյունա-բերություն	Տրանս-պորտ	Շինարարու-թյուն	Ծառայու-թյուն	Այլ	Ընդամենը
2019թ. հունվարի 1	**901,155**	**326,502**	**95,565**	**86,157**	**60,857**	**171,314**	**155,652**	**1,797,202**
Պահուստային ծախս	491,827	152,049	44,559	41,347	16,671	292,801	8,967	**1,048,221**
Նախկինում դուրս գրված ակտիվների վերականգնում	152,424	144,021	29,580	15,812	10,487	11,649	46,562	**410,535**
Հաճախորդներին տրամադրված վարկերի դուրսգրում	(500,613)	(196,161)	(62,807)	(63,641)	(36,597)	(24,899)	(92,125)	**(976,843)**
Փուլ 3 վարկերի տոկոսային եկամտի ճշգրտում	27,398	9,271	4,157	2,940	2,245	20,216	266	**66,493**
Արտարժույթային տարբերություններ	(3,782)	(1,085)	(307)	(227)	(42)	(1,266)	(412)	**(7,121)**
2019թ. դեկտեմբերի 31	**1,068,409**	**434,597**	**110,747**	**82,388**	**53,621**	**469,815**	**118,910**	**2,338,487**
Պահուստային ծախս	1,432,385	154,083	46,910	98,318	17,136	876,630	28,051	**2,653,513**
Նախկինում դուրս գրված ակտիվների վերականգնում	147,782	88,461	28,113	9,996	9,790	10,199	34,423	**328,764**
Հաճախորդներին տրամադրված վարկերի դուրսգրում	(520,008)	(186,216)	(56,379)	(50,011)	(34,204)	(169,008)	(100,112)	**(1,115,938)**
Փուլ 3 վարկերի տոկոսային եկամտի ճշգրտում	62,719	21,967	2,661	2,749	1,198	37,866	498	**129,658**
Արտարժույթային տարբերություններ	75,269	21,878	5,606	5,215	2,336	38,781	5,000	**154,085**
2020թ. դեկտեմբերի 31	**2,266,556**	**534,770**	**137,658**	**148,655**	**49,877**	**1,264,283**	**86,770**	**4,488,569**

Գրավի և պարտքի ապահովվության այլ միջոցների վերլուծություն. Կազմակերպությունը մանրակրկիտ ուսումնասիրում է արժեզրկված վարկերի համար պահվող գրավները, երբ ավելի հավանական է դառնում, որ Կազմակերպությանը կանցնի գրավի առարկայի սեփականությունը՝ հնարավոր կորուստները մեղմելու նպատակով: Ֆինանսական ակտիվները և դրանց գծով պահվող գրավների մասին տեղեկատվությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

	2020թ. դեկտեմբերի 31	2019թ. դեկտեմբերի 31
Շարժական միջոցներով գրավադրված վարկեր	2,272,897	2,292,870
Ոչ շարժական միջոցներով գրավադրված վարկեր	3,881,761	4,506,473
Ընդամենը ապահովված վարկեր	**6,154,658**	**6,799,343**
Չապահովված վարկեր՝ էքսպրես վարկեր	16,331,179	18,529,606
Ընդամենը չապահովված վարկեր	16,331,179	18,529,606
Ընդամենը վարկեր	**22,485,837**	**25,328,949**
Հաշվեգրված տոկոսագումար	1,557,950	903,215
Սպասարկման վճարներ, զուտ	255,014	28,238
Հանած՝ ակնկալվող պարտքային կորուստների պահուստը	(4,488,569)	(2,338,487)
Հաճախորդներին տրված վարկեր	**19,810,232**	**23,921,915**

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված բոլոր վարկերը (ընդհանուր պորտֆելի 100%) տրվել են Հայաստանի Հանրապետությունում գործող անհատներին և Կազմակերպություններին, որը ցույց է տալիս, որ առկա է նշանակալի աշխարհագրական կենտրոնացում մեկ շրջանում:

Հաճախորդներին տրված վարկերի գծով այլ տեղեկատվությունները տե՛ս ծան. 25:

7. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

	Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Կապի և հաղոր-դակցման միջոցներ	Գրասենյակային գույք	Փոխադրա-միջոցներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2019թ. հունվարի 1	**325,950**	**454,729**	**323,652**	**76,599**	**211,133**	**1,392,063**
Ավելացումներ	8,566	44,216	12,905	1,227	4,911	**71,825**
2019թ. դեկտեմբերի 31	**334,516**	**498,945**	**336,557**	**77,826**	**216,044**	**1,463,888**
Ավելացումներ	7,965	8,352	4,854	-	3,819	**24,990**
Դուրսգրումներ	(57,045)	-	-	-	-	**(57,045)**
2020թ. դեկտեմբերի 31	**285,436**	**507,297**	**341,411**	**77,826**	**219,863**	**1,431,833**
Կուտակված մաշվածություն						
2019թ. հունվարի 1	**221,356**	**277,683**	**280,416**	**76,599**	**189,341**	**1,045,395**
Մաշվածության ծախս	29,612	64,426	24,191	962	15,798	**134,989**
2019թ. դեկտեմբերի 31	**250,968**	**342,109**	**304,607**	**77,561**	**205,139**	**1,180,384**
Մաշվածության ծախս	26,181	64,655	14,578	116	7,617	**113,147**
Դուրսգրումներ	(40,426)	-	-	-	-	**(40,426)**
2020թ. դեկտեմբերի 31	**236,723**	**406,764**	**319,185**	**77,677**	**212,756**	**1,253,105**
Զուտ հաշվեկշռային արժեք						
2020թ. դեկտեմբերի 31	**48,713**	**100,533**	**22,226**	**149**	**7,107**	**178,728**
2019թ. դեկտեմբերի 31	**83,548**	**156,836**	**31,950**	**265**	**10,905**	**283,504**

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված, բայց դեռ օգտագործվող ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը կազմում է 889,537 հազար և 766,070 հազար դրամ, համապատասխանաբար:

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել գրավադրված հիմնական միջոցներ:

8. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2019թ. հունվարի 1	**489,704**	**489,704**
Ավելացումներ	133,444	**133,444**
2019թ. դեկտեմբերի 31	**623,148**	**623,148**
Ավելացումներ	24,012	**24,012**
2020թ. դեկտեմբերի 31	**647,160**	**647,160**
Ամորտիզացիայի ծախս		
2019թ. հունվարի 1	**201,060**	**201,060**
Ամորտիզացիայի ծախս	89,619	**89,619**
2019թ. դեկտեմբերի 31	**290,679**	**290,679**
Ամորտիզացիայի ծախս	102,890	**102,890**
2020թ. դեկտեմբերի 31	**393,569**	**393,569**
Զուտ հաշվեկշռային արժեք		
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**253,591**	**253,591**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**332,469**	**332,469**

9. ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱԿՏԻՎՆԵՐ

Օգտագործման իրավունքով ակտիվ	**Շինություններ**	**Ընդամենը**
Սկզբնական արժեք		
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	976,174	**976,174**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	976,174	**976,174**
Ավելացումներ	147,809	**147,809**
Վարձակալության դադարեցում	(258,647)	**(258,647)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	865,336	**865,336**
Կուտակված մաշվածություն		
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Տարվա ծախս	259,360	**259,360**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	259,360	**259,360**
Տարվա ծախս	252,023	**252,023**
Վարձակալության դադարեցում	(93,959)	**(93,959)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	417,424	**417,424**
Հաշվեկշռային արժեք		
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**716,814**	**716,814**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**447,912**	**447,912**

Կազմակերպությունը վարձակալում է բազմաթիվ շինություններ: Վարձակալության միջին ժամկետն է 5 տարի:

2020թ. ընթացքում Կազմակերպությունը ծախսերի օպտիմալացման նպատակով փակել կամ փոխարինել է 14 մասնաճյուղ, որի արդյունքում դադարեցվել է 168,688 հազար ՀՀ դրամ օգտագործման իրավունքով ակտիվների ճանաչումը:

Վարձակալության գծով պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծան. 25-ում և ծան. 14-ում:

	2020թ. դեկտեմբերի 31	2019թ. դեկտեմբերի 31
Շահույթում և մնասում ճանաչված գումարներ		
Ակտիվի օգտագործման իրավունքի մաշվածության ծախս	252,023	259,360
Վարձակալության գծով պարտավորությունների տոկոսային ծախս	85,483	108,984
Կարճաժամկետ վաձակալություններին առնչվող ծախս	-	1,083
Եկամուտներ վարձակալության գծով պարտավորությունների զիջումներից	11,854	-
Ակտիվի օգտագործման իրավունքի ապաճանաչումից եկամուտ	15,336	-

Ընդամենը դրամական միջոցների արտահոսքը վարձակալությունների համար կազմում է 227,917 հազար ՀՀ դրամ:

Վարձակալության գծով պարտավորություն

	2020թ. դեկտեմբերի 31	2019թ. դեկտեմբերի 31
Ժամկետայնության վերլուծություն		
1-ին տարի	257,238	336,036
2-րդ տարի	170,161	327,945
3-րդ տարի	100,694	327,945
4-րդ տարի	57,373	85,670
5-րդ տարի	23,979	-
6-րդ տարի	9,420	-
7-րդ տարի	7,134	-
	625,999	**1,077,596**
Հանած՝ չվաստակած տոկոսային եկամուտը	(115,235)	(292,678)
	510,764	**784,918**
Վերլուծված է որպես՝		
Ոչ ընթացիկ	305,322	558,537
Ընթացիկ	205,442	226,381
	510,764	**784,918**

2020թ. ընթացքում COVID-19 համաճարակի բռնկման արդյունքում Կազմակերպությանը տրամադրվել են վարձավճարների գծով զիջումներ, որոնք չեն դիտարկվել որպես վարձակալության պայմանագրի փոփոխություն: Արդյունքում՝ զիջումներից ստացված շահույթը 11,854 հազար դրամի չափով ճանաչվել է այլ եկամուտների կազմում: Վարձակալության գծով պարտավորությունների շարժը ներկայացված է ծան. 14-ում:

10. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ ֆինանսական ակտիվներ		
Ստանալիք գումարներ վճարահաշվարկային կազմակերպություններից	16,251	12,373
Այլ ստացվելիք գումարներ	1,759	3,022
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**18,010**	**15,395**
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ		
Կանխավճարված հարկեր և այլ պարտավորություններ բյուջեին բացառությամբ շահութահարկի	22,275	15,227
Վերադարձված ակտիվներ	19,569	420
Կանխավճարներ ապրանքների և ծառայությունների գծով	14,142	13,743
Պաշարներ	8,735	15,439
Այլ	1,023	5,191
Ընդամենը այլ ակտիվներ	**83,754**	**65,415**

11. ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏՔԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

	Արժույթ	Թողարկման ամսաթիվ	Մարման ժամկետ ամիս/տարի	Արժեկտրոնի%	2020 թ. դեկտեմբերի 31	2019 թ. դեկտեմբերի 31
Թողարկված պարտքային արժեթղթեր	ՀՀ դրամ	28/10/19	24/09/22	10.5	1,540,672	1,539,905
Թողարկված պարտքային արժեթղթեր	ՀՀ դրամ	09/01/19	20/12/21	10.5	1,405,265	1,405,493
Թողարկված պարտքային արժեթղթեր	ՀՀ դրամ	17/05/19	26/04/22	10.5	1,018,170	1,017,068
Թողարկված պարտքային արժեթղթեր	ԱՄՆ դոլար	18/03/19	25/02/22	6	1,066,500	978,373
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր					**5,030,607**	**4,940,839**

2019թ. ընթացքում իրականացվել է 1,500,000 հազար ՀՀ դրամ, 1,400,000 հազար ՀՀ դրամ, 1,000,000 հազար ՀՀ դրամ և 2,000 հազար ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտքային արժեթղթերի չորս թողարկում՝ ստորև ներկայացված աղյուսակին համապատասխան:

12. ԱՅԼ ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

	Միջին կշռված անվանական տոկոսադրույք	2020թ. դեկտեմբերի 31	Միջին կշռված անվանական տոկոսադրույք	2019թ. դեկտեմբերի 31
Միջազգային ֆինանսական կազմակերպություններ	8.20%	5,187,236	7.94%	11,173,532
FINCA Microfinance Holding	6.70%	1,934,683	-	-
Հայաստանի Կենտրոնական Բանկ	6.40%	85,192	6.41%	100,776
Այլ ֆինանսական կազմակերպություններ	9.60%	2,355,245	9.98%	1,239,648
Ընդամենը այլ փոխառու միջոցներ		**9,562,356**		**12,513,956**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի փոխառություններ 7 ֆինանսական հաստատություններից (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7 ֆինանսական հաստատություններից), որոնց մնացորդներից յուրաքանչյուրը գերազանցում է սեփական կապիտալի 10%: Այս մնացորդների համախառն արժեքը 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 8,874,137 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝11,981,562 հազար դրամ):

Կազմակերպությունը պարտավոր է համապատասխանել փոխառու միջոցներին առնչվող ֆինանսական սահմանափակումներին: Այս սահմանափակումները ներառում են սահմանված գործակիցներ՝ պարտավորություն/սեփական կապիտալ հարաբերակցությունը և մի շարք այլ ֆինանսական գործակիցներ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմակերպությունը խախտել է միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ փոխառությունների համաձայնագրերով նախատեսված որոշակի ֆինանսական սահմանափակումներ, որոնք վերաբերում են պորտֆելի որակին և դրական եկամտաբերությանը: Հաշվետու ամսաթվի դրությամբ փոխառությունների գումարները, որոնց նկատմամբ տեղի են ունեցել դեֆոլտներ, կազմել են 5,187,236 հազար ՀՀ դրամ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության իրացվելիության վերլուծության նպատակով Կազմակերպությունը միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված բոլոր փոխառությունները դասակարգել է որպես ցպահանջ, քանի որ միջագային կառույցների հետ գոյություն ունեն խաչաձև դեֆոլտի վերաբերյալ դրույթներ, տե՛ս ծանոթագրություն 25:

Ղեկավարությունը, սակայն, կարծում է, որ այդ վարկերը կմարվեն ըստ իրենց պայմանագրային պայմանների, և խախտման հետ կապված ներումները կստացվեն վարկատուներից:
Այս պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով:

Այլ փոխառու միջոցները պետք է մարվեն հետևյալ կերպ.

	2020թ. դեկտեմբերի 31	2019թ. դեկտեմբերի 31
1-ին տարի	8,577,753	7,543,095
2-րդ տարի	962,220	3,984,958
3-րդ տարի	17,858	972,478
4-րդ տարի	3,016	10,415
5 -րդ տարի	1,508	3,010
	9,562,355	**12,513,956**

13. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ ֆինանսական պարտավորություններ		
ՀՀ ԿԲ պահուստ	240,000	-
Բիզնեսի վերակազմավորման պահուստ	39,890	-
Ծառայությունների համար վճարվող գումարներ	12,499	47,645
Այլ	-	7,344
	292,389	**54,989**
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ		
Չօգտագործած արձակուրդային պահուստ	164,624	213,717
Պարտավորություններ հարկերի գծով բացառությամբ շահութահարկի	94,850	84,979
Այլ	20,546	7,590
Ընդամենը այլ պարտավորություններ	**572,409**	**361,275**

Պլանային ստուգումից հետո Հայաստանի Կենտրոնական բանկը (ԿԲ) Կազմակերպությանը պարտավորեցրել է վճարումներ կատարել իր հաճախորդներին՝ վճարման ենթակա տոկոսների վերահաշվարկի և գերագնահատված միջնորդավճարների կապակցությամբ: Ստուգման արդյունքում Կազմակերպությունը գնահատել և ճանաչել է ստորև նկարագրած կարգավորումներին համապատասխանող պահուստը ըստ քայլ առ քայլ պլանի:

Քայլ առ քայլ պլանի համաձայն, Կազմակերպությունը պետք է կատարի հետևյալ գործողությունները՝

1. Կազմակերպությունը նախատեսում է վերահաշվարկել "Սպառողական վարկերի մասին" ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասով հաշվարկված տոկոսների գումարը՝ 2018 թ. հունվարի 1-ից մինչև 2020 թ.հուլիսի 20-ն ընկած ժամանակահատվածում տրված վարկերի գծով՝ հիմք ընդունելով 365 օր 360 օրվա փոխարեն

2. Կազմակերպությունը պետք է վերահաշվարկի ստացված և վերադարձման ենթակա տրամադրման վճարները այն վարկերի գծով, որոնք տրամադրվել են 2018թ. հունվարի 1-ից սկսած և մարման ժամկետից շուտ են մարվել հաճախորդների կողմից "Սպառողական վարկերի մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի և 86-րդ հոդվածի 3-րդ դրույթ 8/05-ի 86 (3) կետի խախտման մասով:

Գումարները պետք է վերադարձվեն հաճախորդներին մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը:

Վերակազմավորման պահուստը այն ծախսերի գծով է, որոնք Կազմակերպությունը կկրի 2021թ.՝ 9 մասնաճյուղերի փակման, և աշխատակիցների կրճատման հետևանքով:

14. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է Կազմակերպության ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորություններում փոփոխությունները՝ այդ թվում դրամական և ոչ դրամական միջոցների փոփոխությունները: Ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորություններ են համարվում այն դրամական միջոցները, որոնք նախկինում դրամական միջոցների հաշվետվությունում դասակարգվել են կամ ապագայում դասակարգվելու են որպես ֆինանսական գործունեությունից առաջացած դրամական միջոցների հոսքեր:

					Ոչ դրամական փոփոխություններ			
	2020 թ. հունվարի 1	Մուտքեր/ դրամական հոսքեր	Մարումներ - դրամական հոսքեր	Տոկոսավճար	Տոկոսային ծախս	Արտարժույթի վերագնահատում	Նոր վարձակալություններ, պայմանագրի փոփոխություն և վարձակալության զիջումներ	2020 թ. դեկտեմբերի 31
Այլ փոխառու միջոցներ	12,513,956	10,066,256	(13,832,651)	(936,968)	949,063	802,700	-	9,562,356
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,940,839	-	-	(467,342)	470,962	86,148	-	5,030,607
Վարձակալության գծով պարտավորություններ	784,918	-	(227,917)	(88,211)	85,483	-	(43,509)	510,764
	18,239,713	**10,066,256**	**(14,060,568)**	**(1,492,521)**	**1,505,508**	**888,848**	**(43,509)**	**15,103,727**

					Ոչ դրամական փոփոխություններ		
	2019 թ. հունվարի 1	Մուտքեր/ դրամական հոսքեր	Մարումներ - դրամական հոսքեր	Տոկոսավճար	Տոկոսային ծախս	Արտարժույթի վերագնահատում	2019 թ. դեկտեմբերի 31
Այլ փոխառու միջոցներ	12,808,713	31,539,215	(31,726,406)	(981,726)	972,808	(98,648)	12,513,956
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,927,646	3,462,754	(3,409,407)	(425,656)	385,866	(364)	4,940,839
Վարձակալության գծով պարտավորություններ	976,174	-	(199,346)	(100,894)	108,984	-	784,918
	18,712,533	**35,001,969**	**(35,335,159)**	**(1,508,276)**	**1,467,658**	**(99,012)**	**18,239,713**

(i) բանկային վարկերից, կապակցված կողմերից ստացված փոխառություններից և այլ փոխառություններից ստացված դրամական հոսքերը կազմում են փոխառություններից ստացված մուտքերի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում փոխառությունների մարման զուտ գումարը:

15. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած էր 490,596 սովորական բաժնետոմսերից՝ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Սովորական բաժնետոմսեր տնօրինողները իրավունք ունեն ստանալ շահաբաժիններ, որոնք հայտարարվում են ժամանակ առ ժամանակ և Կազմակերպության տարեկան ընդհանուր ժողովներին ունեն մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք:

Կազմակերպության բաժնետիրական կապիտալը բաժնետերերի կողմից վճարվել է ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժիններ և կապիտալի բաշխում ՀՀ դրամով:

Կազմակերպության բաժնետերերի միջև բաշխվող պահուստները սահմանափակված են իր կուտակված չբաշխված շահույթով, որոնք ներկայացված են վերահսկողության նպատակով պահանջված հաշվետվություններում: Չբաշխվող պահուստները ներկայացվում են պահուստավորման ֆոնդով, որը ստեղծվում է օրենսդրության պահանջով: Կազմակերպության պահուստային ֆոնդը ձևավորվում է տարեկան պարտադիր վարվող հատկացումների միջոցով՝ հաշվարկված Կազմակերպության զուտ շահույթի 5%-ի չափով 46,202 հազար դրամ (2019: 46,599 հազար դրամ), մինչև ֆոնդը կազմի բաժնետիրական կապիտալի 15%-ը:

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության պահուստային կապիտալը կազմում է 343,967 հազար դրամ և 297,765 հազար դրամ: Պահուստի այս գումարը կարող է օգտագործվել Կազմակերպության կորուստները ծածկելու, ինչպես նաև Կազմակերպության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

2020 թ. Կազմակերպությունը հայտարարել և վճարել է 496,000 հազար դրամի չափով շահաբաժիններ (2019 թ.՝ 1,415,401 հազար դրամ): 5% ոչ ռեզիդենտի շահութահարկը ներառված է գումարի մեջ:

16. ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ

	2020թ.	2019թ.
Տոկոսային եկամուտ		
- հաճախորդներին տրված վարկեր	6,405,799	6,881,561
- ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	76,989	75,678
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17,039	4,519
- տոկոսային եկամուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից	-	12
Ընդամենը տոկոսային եկամուտ	**6,499,827**	**6,961,770**
Տոկոսային ծախս		
- այլ փոխառու միջոցներ	(959,147)	(1,006,329)
- թողարկված պարտքային արժեթղթեր	(470,962)	(391,061)
- վարձակալության գծով պարտավորություն	(85,483)	(108,984)
- հետգնման պայմանագրեր	(20,622)	(38,470)
- տոկոսային ծախս շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից	-	(12)
Ընդամենը տոկոսային ծախսեր	**(1,536,214)**	**(1,544,856)**
Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստները	**4,963,613**	**5,416,914**

Տուգանքները հաշվարկվում են հաշվեգրման մեթոդով և ներառվում են վարկի մայր գումարի և ժամկետանց հաշվեգրված տոկոսների գումարներում: 2020թ. այդ գումարը կկազմի 532, 403 հազար ՀՀ դրամ (2019թ. ՝ 427 362 հազար ՀՀ դրամ) : Քանի որ ժամկետանց գումարների հիմնական մասը բաժին է ընկնում 3-րդ փուլում գտնվող վարկերին, 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկված է 412, 765 հազար ՀՀ դրամի չափով տուգանք (2019թ. ՝ 290 962 հազար ՀՀ դրամ):

17. ԶՈՒՏ ՕԳՈՒՏ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

	2020թ.	2019թ.
Արտարժույթի առքուվաճառքից զուտ օգուտ	127,164	169,018
Արտարժույթի վերագնահատումից զուտ վնաս	(37,764)	(8,471)
Ընդամենը զուտ օգուտ արտարժութային գործառնություններից	**89,400**	**160,547**

18. ԱՅԼ ՕԳՈՒՏ

	2020թ.	2019թ.
Օգուտ վարձակալության դադարեցումից	15,336	-
Օգուտ վարձակալության գծով զիջումներից	11,854	-
Օգուտ դրամաշնորհների գծով	7,749	9,355
Այլ եկամուտ	32,500	25,164
Ընդամենը այլ եկամուտ	**67,439**	**34,519**

19. ԱՅԼ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

	2020թ.	2019թ.
Հայաստանի ԿԲ պահուստ (ծան. 13)	(240,000)	-
Վերակազմավորման գծով ծախս	(55,699)	-
Վարկի վաղաժամ մարման տուգանք	(20,319)	-
Վարձակալական հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումների դուրսգրման ծախսեր	(16,619)	-
Այլ ծախսեր	(7,775)	-
Ընդամենը այլ ծախսեր	**(340,412)**	**-**

Վերակազմավորման հետ կապված ծախսերը կապված են 9 մասնաճյուղերի փակման ապահովման հետ, 39,890 հազար ՀՀ դրամը կրճատվող անձնակազմի ազատման հետ կապված վճարների և 15,809 հազար ՀՀ դրամը կանխավճարներից ուղղակի դուրսգրման հետ:

20. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

Կազմակերպությունը գնահատում և գրանցում է իր ընթացիկ վճարվելիք շահութահարկը և իր ակտիվների և պարտավորությունների հարկային բազան համաձայն ՀՀ հարկային օրենսդրության, որը կարող է տարբերվել ՖՀՄՍ-ից:

Կազմակերպությունն ունի որոշակի մշտական հարկային տարբերություններ, որոնք առաջանում են շահութահարկի նպատակներով չնվազեցվող որոշակի ծախսերից և շահութահարկի նպատակներով չհարկվող որոշակի եկամուտներից:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ժամանակավոր տարբերությունների նկատմամբ, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և

պարտավորությունների հաշվեկշռային գումարների և դրանց հարկման բազաների միջև: 2020 և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա ժամանակավոր տարբերությունները հիմնականում վերաբերում են եկամտի և ծախսի ճանաչման համար տարբեր մեթոդների/ժամկետների կիրառությանը, ինչպես նաև որոշակի ակտիվների հարկային և հաշվեկշռային բազաների ժամանակավոր տարբերություններին:

Ստորև բերված հաշվարկներում օգտագործվում է ներկայիս հարկի դրույքաչափը՝ 18%, որը ՀՀ-ում վճարում են կորպորատիվ ձեռնարկությունները հարկվող շահույթի համար (ինչպես սահմանված է) ՀՀ հարկային օրենսդրության համապատասխան:

Ժամանակավոր տարբերությունները 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են հետևյալ աղյուսակում՝

	2020թ. դեկտեմբերի 31	**2019թ. դեկտեմբերի 31**
Հետաձգված հարկային պարտավորություններ հետևյալի գծով		
Հաճախորդներին տրված վարկեր	(163,499)	(332,456)
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	-	860
Հիմնական միջոցներ	26,913	25,252
Վարձակալություն	11,125	8,171
Այլ ակտիվներ	(1,100)	(887)
Այլ փոխառու միջոցներ	4,066	(2,968)
Այլ պարտավորություններ	89,173	49,333
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	**(33,322)**	**(252,695)**

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արդյունավետ հարկային համադրումը ներկայացված է ստորև.

	2020թ.	**2019թ.**
Շահույթ մինչև հարկումը	**(1,050,090)**	**1,145,271**
Սահմանված դրույքաչափով հարկ (18%)	(189,016)	229,054
Մշտական տարբերություններից հարկի ազդեցությունը	17,887	20,263
Շահութահարկի դրույքաչափի փոփոխության հարկային ազդեցությունը	-	(28,086)
Նախորդ տարվան վերաբերվող ընթացիկ հարկային ծախս	22,611	-
Նախկինում չճանաչված հետաձգված հարկի ճանաչում		
	(148,518)	**221,231**
Շահութահարկի գծով (ծախս)/օգուտ		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	48,244	130,307
Նախորդ տարվան վերաբերվող ընթացիկ հարկային ծախս	22,611	-
Հետաձգված հարկային ծախս/(եկամուտ)՝ ճանաչված ընթացիկ տարում	(219,373)	90,924
Շահութահարկի գծով (ծախս)/օգուտ	**(148,518)**	**221,231**

Հետաձգված հարկային պարտավորություններ	**2020թ.**	**2019թ.**
Հունվարի 1-ի դրությամբ հետաձգված հարկային ակտիվներ	(252,695)	(161,771)
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և վերադարձ	219,373	(119,010)
Շահութահարկի դրույքաչափի փոփոխության հարկային ազդեցությունը	-	28,086
Դեկտեմբերի 31-ի դրությամբ հետաձգված հարկային պարտավորություններ	**(33,322)**	**(252,695)**

21. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	2020թ.	2019թ.
Ռոյալթիներ	(154,882)	(178,716)
Տեղեկատվական տեխնոլոգիաների ծախսեր	(150,379)	(139,751)
Մասնագիտական ծառայություններ	(78,706)	(59,485)
Հարկեր բացառությամբ շահութահարկի	(71,262)	(58,956)
Ապահովագրություն	(67,841)	(70,708)
Հաղորդակցություն	(56,777)	(54,723)
Գրասենյակային պարագաներ	(41,018)	(42,231)
Կոմունալ վճար	(38,641)	(38,387)
Անվտանգության ծախսեր	(23,406)	(23,060)
Ֆինանսական միջնորդի ծախսեր	(18,020)	(18,208)
Բանկային ծախսեր	(15,624)	(34,301)
Վարկերի հավաքագրման ծախսեր	(10,671)	(16,879)
Գործուղման ծախսեր	(8,983)	(27,733)
Հիմնական միջոցների սպասարկում	(8,838)	(32,767)
Գովազդի ծախսեր	(8,702)	(33,884)
Հարկեր և այլ տույժեր և տուգանքներ	(3,867)	(8,745)
Վերապատրաստման ծախսեր	(3,011)	(8,544)
Ներկայացուցչական ծախսեր	(1,005)	(11,854)
Կարճաժամկետ վարձակալություններ	-	(1,083)
Այլ ծախսեր	(50,458)	(64,810)
Ընդամենը գործառնական ծախսեր	**(812,091)**	**(924,825)**

Ռոյալթին վճարվում է որպես տոկոսային գործառնական եկամտի մաս և կարող է տատանվել 1,5% -ից մինչև 2% կախված գործառնական եկամտի չափից: Ռոյալթիի նկատմամբ վճարվում է ոչ ռեզիդենտի շահութահարկ:

22. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

22.1 Կապիտալ ձեռքբերումների հանձնառություններ. Կազմակերպությունը 2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի ունեցել կապիտալ ձեռքբերումների հանձնառություններ:

22.2 Դատական վարույթներ. Ժամանակ առ ժամանակ և բնականոն գործունեության ընթացքում, Կազմակերպությունը ստանում է հաճախորդների և գործընկերների կողմից բողոքներ: Ղեկավարությունը համոզված է, որ ոչ մի էական վնասներ տեղի չեն ունենա և համապատասխանաբար ոչ մի պահուստ հաշվեգրված չէ ֆինանսական հաշվետվություններում:

22.3 Հարկում. Հայաստանի Հանրապետության առևտրային համակարգը կարգավորող օրենսդրությունը, ներառյալ հարկային օրենսդրությունը, կարող է ունենալ մեկից ավելի մեկնաբանություններ: Ավելին, առկա է ռիսկ, որ հարկային մարմինները կամայական դատողություններ կարող են անել ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ: Եթե Կազմակերպության գործունեության վերաբերյալ ղեկավարության որոշակի որոշումներ հարկային մարմինների կողմից վիճարկվեն, Կազմակերպությունը կարող է ենթարկվել հավելյալ հարկերի, տույժերի և տուգանքների: Հարկատուները ենթակա են հարկային ստուգումների աուդիտի տարվան նախորդող երեք օրացուցային տարիներին:

23. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ՖՀՄՍ-ն սահմանում է իրական արժեքը որպես գումար, որով ակտիվը կարող է վաճառվել կամ պարտավորությունը փոխանցվել շուկայի մասնակիցների միջև սովորական պայմաններով ընթացող գործարքում չափման ամսաթվի դրությամբ:

23.1 Կազմակերպության՝ շարունակական հիմունքներով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը

Կազմակերպության որոշ ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետևյալ աղյուսակը ներկայացնում է նշված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի որոշման մեթոդները (մասնավորապես՝ օգտագործված գնահատման մեթոդները և ելակետային տվյալները):

Ֆինանսական ակտիվներ/ պարտավորու-թյուններ	Իրական արժեք 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Իրական արժեք 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման մեթոդ(ներ) և հիմնական ելակետային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի ելակետային տվյալների հարաբերակցու-թյունն իրական արժեքին
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ արժութային սվոփեր	152	-	Մակարդակ 2	Զեղչված դրամական հոսքերը, ապագա դրամական հոսքերը գնահատվում են ֆորվարդ փոխարժեքների և պայմանագրային ֆորվարդ փոխարժեքի վրա՝զեղչված այն դրույքով, որն արտացոլում է տարբեր գործիքների պարտքային ռիսկը	ոչ կիրառելի	ոչ կիրառելի

23.2 Կազմակերպության՝ շարունակական հիմունքներով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը (պահանջվում է իրական արժեքի բացահայտումը)

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կարճաժամկետ բնույթի պատճառով ղեկավարությունը գտնում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտարկում են իրենց իրական արժեքներին: Որոշ այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համար ղեկավարությունը օգտագործում է զեղչված դրամական հոսքեր՝ իրական արժեքների գնահատման համար: Այս գնահատված դրամական հոսքերի զեղչման համար օգտագործվող տոկոսադրույքները հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի վրա՝գումարած արժութային, գործիքի մարման ժամկետի և գործընկերոջ պարտքային ռիսկը:

	2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Ֆինանսական ակտիվներ				
- Հաճախորդներին տրված վարկեր	19,810,232	20,012,388	23,921,915	24,849,723
- Ներդրումային արժեթղթեր	-	-	1,191,045	1,240,074
Ֆինանսական պարտավորություններ				
- Թողարկված պարտքային արժեթղթեր	5,030,607	5,135,286	4,940,839	5,016,789
- Փոխառու միջոցներ	9,562,356	9,536,981	12,513,956	12,484,245
- Վարձակալության գծով պարտավորություն	510,764	506,813	784,918	786,528

	2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
- Հաճախորդներին տրված վարկեր	-	-	20,012,388	20,012,388
Ֆինանսական պարտավորություններ				
- Թողարկված պարտքային արժեթղթեր	-	5,135,286	-	5,135,286
- Այլ փոխառու միջոցներ	-	-	9,536,981	9,536,981
- Վարձակալության գծով պարտավորություն	-	-	506,813	506,813

	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
- Հաճախորդներին տրված վարկեր	-	-	24,849,723	**24,849,723**
- Ներդրումային արժեթղթեր	1,240,074	-	-	**1,240,074**
Ֆինանսական պարտավորություններ				
- Թողարկված պարտքային արժեթղթեր	-	5,016,789	-	**5,016,789**
- Այլ փոխառու միջոցներ	-	-	12,484,245	**12,484,245**
- Վարձակալության գծով պարտավորություն	-	-	786,528	**786,528**

Վերոնշյալ աղյուսակներում 2-րդ և 3-րդ մակարդակներում ներառված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները որոշվել են համընդհանուր ընդունված գնորոշման մոդելների վրա հիմնված դրամական հոսքերի զեղչված արժեքի վերլուծության վրա, որտեղ հիմնական ելակետային տվյալը գործընկերների պարտքային ռիսկն արտացոլող զեղչման դրույքն է:

24. ԿԱՊԻՏԱԼԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կազմակերպությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Կազմակերպության գործունեության անընդհատությունը, միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրավված և սեփական միջոցների մակարդակի պահպանման եղանակով:

ՀՀ կենտրոնական բանկը Կազմակերպության համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, ունիվերսալ վարկային կազմակերպությունները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է

ապահովեն 150,000 հազար ՀՀ դրամ նվազագույն բաժնետիրական կապիտալ (2019թ. դեկտեմբերի 31-ին՝ 150,000 հազար ՀՀ դրամ):

Համաձայն ՀՀ ԿԲ կանոնակարգային պահանջների, որոնք ուժի մեջ են մտել 2011թ.-ին, վարկային կազմակերպությունները, որոնք իրականացնում են արտարժույթի փոխանակման գործառնություններ կանխիկով վարկային մարումներից բացի այլ նպատակներով, պարտավոր են ապահովել կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը (կապիտալի համարժեքության նորմատիվ) և ընդհանուր կապիտալի նվազագույն մեծությունը նվազագույնից բարձր մակարդակում: 2013թ. Կազմակերպությունը փոփոխել է իր կանոնադրությունը, այնպես որ այն ունի իրավունք իրականացնելու կանխիկով արտարժույթի փոխանակման գործառնություններ՝ որպես գործունեության առանձին տեսակ: Հետևաբար Կազմակերպությունը պարտավոր է հաշվել և համապատասխանել կապիտալի համարժեքության նորմատիվի և ընդհանուր կապիտալի նվազագույն մեծության պահանջներին: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի նվազագույն մեծության պահանջը կազմում է 1,000,000 հազար ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,000,000 հազար), իսկ կապիտալի համարժեքության հարաբերակցության նորմատիվը – նվազագույնը 12% (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,000,000 հազար ՀՀ դրամ և 12%):

Կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկը՝ հիմնված ՀՀ ԿԲ կողմից սահմանված պահանջների վրա ներկայացված է ստորև.

	2020թ. դեկտեմբերի 31 աուդիտ չանցած	**2019թ. դեկտեմբերի 31 աուդիտ չանցած**
Հիմնական կապիտալ	5,714,480	5,752,292
Լրացուցիչ կապիտալ	-	24,253
Ընդամենը կապիտալ	**5,714,480**	**5,776,545**
Ռիսկով կշռված ակտիվներ	21,141,652	24,716,011
Կապիտալի հարաբերակցությունը ռիսկով նշված ակտիվներին (%)	27.03%	23.37%
Կանոնակարգային նվազագույն պահանջը կանոնադրական կապիտալի հարաբերակցության գծով (%)	12.00%	12.00%
Համապատասխանություն նվազագույն բաժնետիրական կապիտալի պահանջներին	**Խախտումներ չեն արձանագրվել տարվա ընթացքում**	**Խախտումներ չեն արձանագրվել տարվա ընթացքում**

Վարչությունը վերանայում է կապիտալի կառուցվածքը կիսամյակային կտրվածքով: Կազմակերպության կապիտալի համարժեքությունը սահմանվում և վերահսկվում է՝ օգտագործելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված սահմանաչափերը: Որպես նման վերանայման մի մաս, Խորհուրդը դիտարկում է սեփական կապիտալի եկամտաբերության դրույքը (cost of capital) և կապիտալի յուրաքանչյուր դասին առնչվող ռիսկերը: Խորհրդի առաջարկությունների հիման վրա Կազմակերպությունն իր ընդհանուր կապիտալի կառուցվածքը կառուցում է շահաբաժինների վճարման, նոր բաժնետոմսերի թողարկման, ինչպես նաև նոր պարտքի թողարկման կամ գործող պարտքի մարման միջոցով: Ի լրումն, Կազմակերպությունը կառավարում է կապիտալը՝ պայմանագրային պահանջների իրականացման նպատակով:

25. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի կառավարումն Կազմակերպության բիզնեսի հիմնարար տարրերից է և Կազմակերպության գործունեության էական բաղկացուցիչը: Կազմակերպության գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերն են՝

- Պարտքային ռիսկեր;
- Իրացվելության ռիսկ;
- Շուկայական ռիսկ:

Կազմակերպությունն ընդունում է, որ անհրաժեշտ է ունենալ ռիսկերի կառավարման արդյունավետ և նպատակային գործընթացներ: Նշվածն իրականացնելու համար Կազմակերպությունը ստեղծել է ռիսկերի կառավարման հայեցակարգ, որի հիմնական նպատակն է պաշտպանել Կազմակերպությանը ռիսկերից և թույլ տալ նրան հասնելու իր գործունեության նպատակներին:

Կազմակերպության ռիսկերի կառավարման նպատակների սահմանման և քաղաքականությունների մշակման ընդհանուր պատասխանատվությունը կրում է Տնօրենների խորհուրդը: Տնօրենների խորհրդի ընդհանուր նպատակն է սահմանել այնպիսի քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկերն առանց անհարկի վատթարացնելու Կազմակերպության մրցունակությունը և ճկունությունը: Պահպանելով վերջնական պատասխանատվությունը՝ այն միաժամանակ փոխանցել է գործընթացներ նախագծելու և գործարկելու իրավասությունները, որոնք կապահովեն նպատակների և քաղաքականությունների արդյունավետ իրականացումը:

Կազմակերպության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է հայտնաբերել, բացահայտել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Կազմակերպությունը պարբերաբար վերանայում է ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայական պայմաններում, առաջարկվող ապրանքների և ծառայությունների շուկայում տեղի ունեցած փոփոխություններին արձագանքման նպատակով:

Վերապատրաստման և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Կազմակերպությունը նպատակ ունի կառուցել համակարգված և կառուցողական վերահսկողական միջավայր, որտեղ աշխատակիցները կպատկերացնեն իրենց դերը և պարտականությունները:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե պորտֆելի և թե գործարքների մակարդակով կառավարվում և վերահսկվում են Վարկային կոմիտեների և ակտիվների և պարտավորությունների կառավարան կոմիտեի (այսուհետ՝ ԱՊԿԿ) միջոցով: Ռիսկերի կոմիտեն պատասխանատու է ռիսկերի կառավարման քաղաքականության, ընթացակարգերի մշակման, վերահսկողության և օրենսդրական/կանոնակարգային դաշտում առկա ռիսկերի վերահսկողության համար և գնահատում է դրանց ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա: Այս մոտեցումը թույլ է տալիս Կազմակերպությանը նվազեցնել ՀՀ ներդրումային միջավայրի փոփոխությունների դեպքում Կազմակերպությանը սպառնացող հնարավոր կորուստները:

Տարեվերջից ի վեր ռիսկերի կառավարման բաժնում կամ ռիսկերի կառավարման քաղաքականություն փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Պարտքային ռիսկերի կառավարում

Կազմակերպությունը ենթակա է պարտքային ռիսկի, այն է՝ ռիսկ, որ ֆինանսական գործիքի մի կողմը չի կատարի իր պարտավորությունը՝ ֆինանսական կորուստներ պատճառելով մյուս կողմին:

Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, պարտքային ռիսկը մեծագույն կարևորություն ունի միկրոֆինանսավորման կազմակերպությունների ռիսկերի կառավարման մեջ: Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Կազմակերպությունը կիրառում է տարբեր մեթոդներ պարտքային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:

Միկրոֆինանսակավորման ոլորտը ընդհանուր առմամբ հակված է պարտքային ռիսկի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերի և բանկային ավանդների միջոցով: Ինչ վերաբերում է հաճախորդներին տրված վարկերին, այս ռիսկը կենտրոնացած է Հայաստանի Հանրապետությունում: Այն մոնիտորինգի է ենթարկվում կանոնավորապես՝ պարտքային սահմանաչափերի և վարկունակության վերաբերյալ Կազմակերպության ռիսկի կառավարման քաղաքականությամբ սահմանված ուղենիշերի պահպանումն ապահովելու համար:

Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Վարկային Ռիսկերի բաժնի, Վարկային կոմիտեների և Կազմակերպության Վարչության կողմից: Նախքան որևէ հայտի կազմումը Վարկային կոմիտեի կողմից, վարկային գործընթացի վերաբերյալ բոլոր առաջարկությունները (վարկառուի սահմանաչափի հաստատում կամ վարկային պայմանագրերի մեջ փոփոխությունների կատարում և այլն) վերանայվում և հաստատվում են Վարկային ռիսկերի բաժնի կողմից: Ամենօրյա ռիսկերի կառավարումն իրականացվում է Վարկային Ռիսկերի բաժնի ղեկավարի կողմից:

Կազմակերպության պարտքային քաղաքականությունը սահմանված է մի շարք ներքին կանոնակարգերով, որտեղ հստակ սահմանված են բոլոր առնչվող պահանջները համապատասխան վերահսկողական մեխանիզմների հետ մեկտեղ, ներառյալ վարկի տրամադրումը, չվճարված վարկերի մոնիտորինգը և այլն:

Կազմակերպությունը շարունակաբար մոնիտորինգ է իրականացնում առանձին պարտքային ռիսկերի գծով և պարբերաբար վերանայում է իր հաճախորդների վարկունակությունը: Վերանայումը հիմնված է իրականացված ամենավերջին մոնիտորինգի և ֆինանսական վերլուծությունների վրա, ինչպես նաև փոխառուից, կամ որևէ այլ կերպ ստացված տեղեկությունների վրա:

Առանձին հաճախորդների վերլուծությունից բացի, վարկային պորտֆելը պարբերաբար վերլուծվում է Ներքին վերահսկողության բաժնի կողմից՝ կապված կենտրոնացման և շուկայական ռիսկերի հետ:

Վարկային կոմիտեն այն վերլուծող մարմինն է, որը պատասխանատու է վարկային հայտերում ամփոփված տեղեկատվությունը վերլուծելու և պարտքային ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար: Վարկային կոմիտեն Կազմակերպության ներսում անկախ մարմին է, որը լիազորված է կայացնելու վերջնական որոշում պարտքային հայտը հաստատելու կամ մերժելու վերաբերյալ:

Վարկային կոմիտե ներկայացվող տեղեկատվության ճշգրտությունը վարկային մասնագետի պատասխանատվությունն է, ով լրացնում է նախնական հայտը դիմողի բիզնեսի և պարտքային

ռիսկերի պատշաճ ուսումնասիրությունից հետո: Ի վերջո Վարկային կոմիտեի անդամները գնահատում են հայտի համապատասխանությունը սահմանված չափանիշներին (դիմողի վարկային պատմությունը, ֆինանսական վիճակը, մրցակցային ունակությունը և այլն):

Յուրաքանչյուր մասնաճյուղ պարտավոր է կիրառել Կազմակերպության վարկային քաղաքականությունը և ընթացակարգերը՝ Կազմակերպության ներքին կարգերում սահմանված վարկավորման լիազորությունների շրջանակներում: Յուրաքանչյուր մասնաճյուղի ղեկավար վարկային բոլոր տեսակի խնդիրների վերաբերյալ զեկուցում է ղեկավարությանը: Յուրաքանչյուր մասնաճյուղ պատասխանատու է իր վարկային պորտֆելի որակի և կատարողականի համար, ինչպես նաև իր պորտֆելի ներսում առկա ռիսկերի վերահսկողության և մոնիտորինգի համար: Ներքին աուդիտի և Ներքին վերահսկողության բաժիններն իրականացնում են մասնաճյուղերի և Կազմակերպության վարկային գործընթացների կանոնավոր ստուգումներ:

Կազմակերպության Վարկային ռիսկերի բաժինն ուսումնասիրում է ժամկետանց վարկերի վերլուծությունը և հետամուտ է լինում ժամկետանց մնացորդների հավաքագրմանը: Ղեկավարությունը, հետևաբար, տեղին է համարում ժամկետանց վարկերի և այլ պարտքային ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

Կազմակերպությունը կանոնավորում է պարտքային ռիսկի մակարդակը՝ սահմանափակելով մեկ վարկառուի կամ վարկառուների խմբի գծով, ինչպես նաև ըստ տնտեսության և աշխարհագրական սեգմենտների ռիսկի ընդունելի մակարդակները: Պարտքային ռիսկի սահմանաչափերն ըստ վարկառուի և ըստ վարկատեսակի հաստատում է Վարչությունը: Վարկառուի գծով ռիսկը հետագայում սահմանափակվում է ենթասահմանաչափերով, որոնք վերաբերում են հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերին և սահմանվում են վարկային կոմիտեի կողմից: Փաստացի ռիսկերի համապատասխանությունը սահմանաչափերին հսկվում է օրական կտրվածքով՝ ապահովելու համար, որ Կազմակերպության կողմից սահմանված վարկային սահմանաչափերը և վարկունակության ուղեցույցները չեն խախտվում:

Ըստ նպատակահարմարության, և վարկերի մեծ մասի դեպքերում, Կազմակերպությունն ընդունում է գրավ կամ անձնական երաշխավորություն: Այնուամենայնիվ, վարկերի զգալի մասը տրված է անհատներին, որտեղ այսպիսի ապահովության միջոցներ չեն կարող ձեռք բերվել: Այսպիսի ռիսկերը մոնիտորինգի են ենթարկվում շարունակական հիմունքով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների:

<u>Պարտքային ռիսկի չափումը</u>

(ա) Վարկեր և փոխատվություններ (ներառյալ վարկային հանձնառությունները և երաշխիքները)

Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը բարդ է և պահանջում է մոդելների օգտագործում, քանի որ ռիսկը տարբերվում է կախված շուկայական պայմանների փոփոխություններից, ակնկալվող դրամական հոսքերից և ժամանակից: Ակտիվների պորտֆելի պարտքային ռիսկի գնահատումը ենթադրում է դեֆոլտների առաջացման հավանականության, կորուստների գործակիցների և կոնտրագենտների միջև դեֆոլտների հարաբերակցության հետագա գնահատում: Ռիսկերի կառավարման հաշվետվությունների նպատակով Կազմակերպությունը դիտարկում և համախմբում է վարկի չափը որպես պարտքային ռիսկի տարր: Կազմակերպությունը չափում է պարտքային ռիսկը, օգտագործելով դեֆոլտի հավանականությունը (PD/ԴՀ), դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD/ԴԺԳԱ) և դեֆոլտից առաջացած վնասը (LGD/ԴԱՎ): Սա նման է ՖՀՄՍ 9-ի համաձայն ԱՊԿ-ի չափման համար օգտագործվող մոտեցմանը:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ Կազմակերպությունն օգտագործում է արժեզրկման «եռափուլ» մոդել՝ վարկի սկզբնական ճանաչումից հետո որակի փոփոխությունների հիման վրա, որն ամփոփված է ստորև.

- Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով չարժեզրկված ֆինանսական գործիքը դասակարգվում է «փուլ 1-ում», որի պարտքային ռիսկը շարունակաբար վերահսկվում է Կազմակերպության կողմից;
- Եթե սկզբնական ճանաչումից հետո հայտնաբերվում է պարտքային ռիսկի նշանակալի աճը (SICR), ապա ֆինանսական գործիքը տեղափոխվում է «փուլ 2», սակայն դեռևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված;
- Եթե ֆինանսական գործիքը պարտքային առումով արժեզրկված է, ապա այն տեղափոխվում է «փուլ 3»;
- Փուլ 1-ում ֆինանսական գործիքների ԱՊԿ-ն չափվում է առաջիկա 12 ամիսների ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների տվյալ մասին համարժեք գումարով, որոնք առաջանում են առաջիկա 12 ամիսների ընթացքում հնարավոր դեֆոլտի իրադարձությունների հետևանքով: 2-րդ կամ 3-րդ փուլերում գործիքների ԱՊԿ-ն չափվում է՝ հիմնվելով ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների վրա;
- ՖՀՄՍ 9-ի համաձայն, ԱՊԿ-ի չափման համապարփակ հայեցակարգը պետք է հաշվի առնի նաև կանխատեսումներ;
- Ձեռք բերված կամ սկզբնապես պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներն այն ակտիվներն են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Դրանց ԱՊԿ-ն մշտապես չափվում է ամբողջ ժամկետի հիման վրա (փուլ 3):

Դուրսգրում

Այն դեպքում, երբ պարբերական հավաքական վերականգնման պատմական վերլուծությունը ցույց է տալիս, որ Կազմակերպությունը չի ակնկալում զգալի լրացուցիչ վերականգնում դեֆոլտում որոշակի ամիսներից հետո ("MID"), ապա Կազմակերպությունը քաղաքականությամբ պայմանավորված վարկերը դուրս է գրում հավաքական հիմունքներով:

Ֆինանսական ակտիվների մասով վճարման ենթակա գումարը, որը դուրս է գրվել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում և առայժմ ենթակա է հարկադիր գործողությունների, կազմում է 1,078,551 հազար ՀՀ դրամ:

Խմբավորում՝ ըստ համանման պարտքային ռիսկի հատկանիշների

ԴՀ հաշվարկի նպատակով ֆինանսական ակտիվները բաժանվում են երկու սեգմենտի՝

- Փոքր վարկեր (մինչև 500,000 ՀՀ դրամ (957 ԱՄՆ դոլարին համարժեք)
- Միջին և մեծ վարկեր (500,000 ՀՀ դրամից կամ 957 ԱՄՆ դոլարից ավել)

Վերոնշյալ սեգմենտներն արտացոլում են հաճախորդների վարկունակության գնահատման մակարդակը, ընդ որում՝ մեծ վարկեր սեգմենտի համար կիրառվում են համեմատաբար ավելի խիստ գնահատականի չափորոշիչներ: Պատմական դեդոլտի դրույքաչափը օգտագործվում է որպես խստության ցուցանիշ, այնպես որ սեգմենտների միջև դեֆոլտի դրույքաչափերի տարբերությունն առավելագույնի է հասցվում:

Վարկանիշային մոդել

Ողջ հասանելի տեղեկատվությունը (ծառայությունների խմբեր, արտադրության որոլտներ և այլն) օգտագործվում են յուրաքանչյուր սեգմենտի համար ներքին վարկանիշային ցուցանիշ ստանալու համար: Այսպիսով, ստեղծվում են համանման ռիսկի հատկանիշներով խմբեր, որոնք այնուհետև օգտագործվում են սեգմենտի ԴՀ-ի կորի ճշգրտման համար:

ԱՊԿ-ի չափում

ԱՊԿ-ի չափման հիմնական ելակետային տվյալները հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքն է՝

- Դեֆոլտի հավանականություն (PD),
- Դեֆոլտից առաջացած վնաս (LGD),
- Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD)

Այս պարամետրերը հիմնականում ստացվում են ներքին օգտագործման վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից:

Դեֆոլտի հավանականություն (PD)

ԴՀ-ն իրենից ներկայացնում է վարկառուի՝ իր ֆինանսական պարտավորությունների չկատարման հավանականությունը (ինչպես ներկայացված է «դեֆոլտի և պարտքային առումով արժեզրկման սահմանում» վերոնշյալ հատվածում) հաջորդ 12 ամիսների ընթացքում (12-ամսյա ԴՀ) կամ պարտավորության գործողության մնացած ժամանակահատվածում (դեֆոլտի հավանականություն ամբողջ ժամկետում):

Ամբողջ ժամկետում հաշվարկված ԴՀ-ն ձևավորվում է 12-ամսյա ԴՀ-ի նկատմամբ կիրառելով պորտֆելի ներկա ժամկետայնության վերլուծությունը: Ժամկետայնության վերլուծությունն ուսումնասիրում է, թե ինչպես է պորտֆելը զարգանում վարկի սկզբնական ճանաչման պահից սկսած վարկի գործողության ամբողջ ժամանակահատվածում: Ժամկետայնության վերլուծությունը սահմանելիս հիմք է ընդունվում պատմական տեսանելի տեղեկատվությունը, և ենթադրություն է արվում, որ այն միևնույնն է տվյալ պորտֆելում և տվյալ պարտքային խմբում գտնվող բոլոր ակտիվների համար: Այն հիմնավորվում է պատմական տեղեկատվության վերլուծությամբ:

Դեֆոլտի հավանականությունը մոդելավորելիս օգտագործվել է վիճակագրական «գոյատևման» մեթոդը՝ կիրառելով ձախողման ցուցանիշը:

Ձախողման ցուցանիշը որոշվում է ըստ Կոքսի համամասնական ռիսկերի մոդելի, որը կիսա-հարաչափական (պարամետրիկ) մոդել է: Այն կովարիացիաների համար օգտագործում է ենթադրյալ պարզ ձևերը, իսկ ազատ ցուցանիշների ճշգրիտ արժեքը որոշվում է մասնակի հավանականությամբ: Ելակետային տվյալները ստացվում են հարաչափական (պարամետրիկ) մեթոդներով: Մակրոէկոնոմիկական մոդելը/ծրագրահատվածը (macroeconomic overlay) կարող է ուղղակիորեն ներառվել ռիսկերի գնահատման գործառույթում ժամանակակից կախյալ փոփոխականի միջոցով: Ձախողման ստացված ցուցանիշների հիման վրա որոշվում է տվյալ պահին ("PiT") դեֆոլտի հավանականությունը (PD), այն է՝ սահմանային PD ցուցանիշները տվյալ ժամանակահատվածի համար:

Դիտարկման համար կիրառվել են հինգ տարվա տվյալներ:

Ստորև ներկայացված են 2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՊԿ-ի փոփոխությունները, որոնք կարող են տեղի ունենալ, եթե փաստացի մակրոտնտեսական ցուցանիշները տարբերվեն մոդելում կիրառված մակրոտնտեսական կանխատեսումներից:

	2020թ.		
Օգտագործված մակրո պարամետրեր	ՀՆԱ		
Զգայունության թեստի համար մակրո պարամետրերի փոփոխության %	50%	Փոփոխություն չի եղել	-50%
Վարկային պորտֆել			
Փոքր	1,267,081	1,268,779	1,270,500
Միջին և մեծ	3,214,378	3,219,790	3,225,246
Ընդամենը վարկային պորտֆել	**4,481,459**	**4,488,569**	**4,495,746**
Ընդամենը	**4,481,459**	**4,488,569**	**4,495,746**

	2019թ.		
Օգտագործված մակրո պարամետրեր	ՀՆԱ		
Զգայունության թեստի համար մակրո պարամետրերի փոփոխության %	11%	Փոփոխություն չի եղել	-17%
Վարկային պորտֆել			
Փոքր	622,023	622,034	622,046
Միջին և մեծ	1,716,333	1,716,453	1,716,647
Ընդամենը վարկային պորտֆել	**2,338,356**	**2,338,487**	**2,338,693**
Այլ ֆինանսական գործիքներ	-	4,777	-
Ընդամենը	**2,338,356**	**2,343,264**	**2,338,693**

Դեֆոլտից առաջացած վնաս (LGD)

LGD-ն դեֆոլտի ժամանակ հավանական կորստի մեծությունն է: Կազմակերպությունը գնահատում է LGD-ի պարամետրերը վճարումները չկատարող կոնտրագենտների նկատմամբ հայցերի վերականգնման դրույքաչափերի պատմության հիման վրա: LGD մոդելը հաշվի է առնում միայն դրամական միջոցների վերադարձը: LGD-ն հաշվարկվում է զեղչված դրամական հոսքերի հիման վրա՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքը որպես զեղչման գործակից:

Գրավով ապահովված վարկերն օգտագործում են գրավի արժեքը, այնինչ գրավով չապահովված և երաշխավորված վարկերն օգտագործում են դեֆոլտից վերականգնման դրույքաչափը:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD)

EAD-ն հիմնված է այն գումարների վրա, որոնք Կազմակերպությունն ակնկալում է ստանալ դեֆոլտի պահին, առաջիկա 12 ամիսների ընթացքում (12-ամսյա EAD) կամ վարկի գործողության ամբողջ ժամկետում (ամբողջ ժամկետում հաշվարկված EAD):

Ապագայամետ տեղեկատվության օգտագործում

Կազմակերպությունը օգտագործում է ապագայամետ տեղեկատվությունը և՛ սկզբնական ճանաչումից հետո գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճի գնահատման, և՛ ԱՊԿ-ի չափման ժամանակ:

Կազմակերպությունը բացահայտել և փաստաթղթավորել է պարտքային ռիսկի և պորտֆելի գծով պարտքային կորուստների հիմնական գործոնները՝ օգտագործելով պատմական տվյալների

վերլուծությունը, գնահատել է մակրոտնտեսական փոփոխականների ազդեցությունը ԴՀ-ի և վերականգնման դրույքաչափերի վրա: Մակրոտնտեսական փոփոխականը, որը ներգրավված էր վերլուծության մեջ, ՀՆԱ-ի աճի իրական տեմպն է:

Ստորև աղյուսակում նկարագրված են տնտեսական սցենարներում ներառված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք օգտագործվել են 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2021-ից 2025 թթ. համար:

		2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.
ՀՆԱ անվանական աճի ցուցանիշ, %	Հիմնական	5.98%	8.14%	8.38 %	8.93%	9.02%

Հաճախորդներին տրված վարկերի որակական վերլուծություն

Ստորև աղյուսակում արտացոլված է հաճախորդներին տրված վարկերի որակական վերլուծությունը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

Վարկային պորտֆել	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Համախառն հաշվեկշռային արժեք				
Ընթացիկ	14,291,911	1,617,782	401,753	**16,311,446**
1-30 օր ժամկետանց	9,788	1,146,962	67,031	**1,223,781**
31-60 օր ժամկետանց	-	459,574	89,774	**549,348**
61-90 օր ժամկետանց	-	734,662	111,006	**845,668**
90 օրից ավել ժամկետանց	-	-	5,368,558	**5,368,558**
	14,301,699	**3,958,980**	**6,038,122**	**24,298,801**
Ակնկալվող պարտքային կորուստներ	(363,635)	(765,031)	(3,359,903)	**(4,488,569)**
Ընդամենը վարկային պորտֆել	**13,938,064**	**3,193,949**	**2,678,219**	**19,810,232**

Ստորև աղյուսակում արտացոլված է հաճախորդներին տրված վարկերի որակական վերլուծությունը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

Վարկային պորտֆել	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Համախառն հաշվեկշռային արժեք				
Ընթացիկ	22,306,800	498,172	217,431	**23,022,403**
1-30 օր ժամկետանց	-	237,646	25,781	**263,427**
31-60 օր ժամկետանց	-	146,876	7,229	**154,105**
61-90 օր ժամկետանց	-	79,437	102,405	**181,842**
90 օրից ավել ժամկետանց	-	-	2,638,625	**2,638,625**
	22,306,800	**962,131**	**2,991,471**	**26,260,402**
Ակնկալվող պարտքային կորուստներ	(282,736)	(157,910)	(1,897,841)	**(2,338,487)**
Ընդամենը վարկային պորտֆել	**22,024,064**	**804,221**	**1,093,630**	**23,921,915**
Այլ ֆինանասական գործիքներ				
Համախառն հաշվեկշռային արժեք	1,899,417	-	-	**1,899,417**
Ակնկալվող պարտքային կորուստներ	(4,777)	-	-	**(4,777)**
	1,894,640	**-**	**-**	**1,894,640**

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փուլերի միջև վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների փոխանցումները՝ արտահայտված հազար ՀՀ դրամով .

	Փուլ 1 12-ամսյա ԱՊԿ	Փուլ 2 Ամբողջ ժամկետում ԱՊԿ	Փուլ 3 Ամբողջ ժամկետում ԱՊԿ	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր՝ ամորտիզացված արժեքով				
Համախառն հաշվեկշռային արժեք 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**22,479,341**	**1,171,476**	**2,323,292**	**25,974,109**
Փոփոխություններ համախառն հաշվեկշռային արժեքում				
- Անցում փուլ 1-ից փուլ 2	(2,815,073)	2,815,073	-	-
- Անցում փուլ 2-ից փուլ 1	1,032,020	(1,032,020)	-	-
- Անցում փուլ 2-ից փուլ 3	-	(1,689,674)	1,689,674	-
- Անցում փուլ 3-ից փուլ 2	-	37,137	(37,137)	-
- Անցում փուլ 1-ից փուլ 3	(2,525)	-	2,525	-
Նոր ֆինանսական գործիքներ, ստեղծված կամ գնված	22,460,600	-	-	**22,460,600**
Մայր գումարի մարում	(20,885,861)	(213,205)	(34,019)	**(21,133,085)**
Տոկոսների հաշվեգրման փոփոխություն	728,634	(23,930)	136,235	**840,939**
Ֆինանսական գործիքների պայմանագրային դրամական հոսքերի փոփոխություն	(6,660)	(13,498)	(14,099)	**(34,257)**
Ապաճանաչում ժամանակաշրջանի ընթացքում	(573,232)	(80,328)	(90,080)	**(743,640)**
Դուրսգրումներ	-	-	(976,843)	**(976,843)**
Արտարժույթի տարբերություններ	(110,444)	(8,900)	(8,077)	**(127,421)**
Համախառն հաշվեկշռային արժեք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**22,306,800**	**962,131**	**2,991,471**	**26,260,402**
Փոփոխություններ համախառն հաշվեկշռային արժեքում				
- Անցում փուլ 1-ից փուլ 2	(12,864,445)	12,864,445	-	-
- Անցում փուլ 2-ից փուլ 1	4,484,393	(4,484,393)	-	-
- Անցում փուլ 2-ից փուլ 3	-	(4,055,158)	4,055,158	-
- Անցում փուլ 3-ից փուլ 2	-	52,154	(52,154)	-
- Անցում փուլ 1-ից փուլ 3	(53,486)	-	53,486	-
Նոր ֆինանսական գործիքներ, ստեղծված կամ գնված	16,533,357	-	-	**16,533,357**
Մայր գումարի մարում	(13,481,792)	(378,307)	(306,383)	**(14,166,482)**
Տոկոսների հաշվեգրման փոփոխություն	593,608	50,368	503,509	**1,147,485**
Ֆինանսական գործիքների պայմանագրային դրամական հոսքերի փոփոխություն	82,642	(8,161)	(2,794)	**71,687**
Ապաճանաչում ժամանակաշրջանի ընթացքում	(3,740,132)	(1,371,486)	(203,820)	**(5,315,438)**
Դուրսգրումներ	-	-	(1,175,981)	**(1,175,981)**
Արտարժույթի տարբերություններ	440,754	327,390	175,627	**943,771**
Համախառն հաշվեկշռային արժեք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**14,301,699**	**3,958,983**	**6,038,119**	**24,298,801**
ԱՊԿ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(363,634)**	**(765,031)**	**(3,359,904)**	**(4,488,569)**

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փուլերի միջև ակնկալվող պարտքային կորստի վարկերի պահուստների փոխանցումները՝ արտահայտված հազար ՀՀ դրամով:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Փուլ 1 12-ամսյա ԱՊԿ	Փուլ 2 Ամբողջ ժամկետում ԱՊԿ	Փուլ 3 Ամբողջ ժամկետում ԱՊԿ	Ընդամենը
ԱՊԿ հաճախորդների տրված վարկեր ամորտիզացված արժեքով				
ԱՊԿ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**248,162**	**169,556**	**1,379,484**	**1,797,202**
Փոփոխություններ կորուստների գծով պահուստի գումարներում				
- Անցում փուլ 1-ից փուլ 2	(49,227)	49,227	-	-
- Անցում փուլ 2-ից փուլ 1	305,535	(305,535)	-	-
- Անցում փուլ 2-ից փուլ 3	-	(567,028)	567,028	-
- Անցում փուլ 3-ից փուլ 2	-	18,569	(18,569)	-
- Անցում փուլ 1-ից փուլ 3	(61)	-	61	-
Նոր ֆինանսական գործիքներ, ստեղծված կամ գնված	494,642	-	-	**494,642**
Փոփոխություններ PD/LGD/EAD-ում և ֆինանսական գործիքի պայմանագրային դրամական հոսքերի փոփոխություն	(588,244)	797,848	960,818	**1,170,422**
Ապաճանաչում ժամանակաշրջանի ընթացքում	(126,546)	(3,450)	(9,819)	**(139,815)**
Դուրսգրումներ	-	-	(976,843)	**(976,843)**
Արտարժութային տարբերությունների	(1,525)	(1,277)	(4,319)	**(7,121)**
Կորուստների գծով պահուստ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**282,736**	**157,910**	**1,897,841**	**2,338,487**
Փոփոխություններ կորուստների գծով պահուստի գումարներում				
- Անցում փուլ 1-ից փուլ 2	(335,573)	335,573	-	-
- Անցում փուլ 2-ից փուլ 1	518,432	(518,432)	-	-
- Անցում փուլ 2-ից փուլ 3	-	(1,532,827)	1,532,827	-
- Անցում փուլ 3-ից փուլ 2	-	29,710	(29,710)	-
- Անցում փուլ 1-ից փուլ 3	(4,996)	-	4,996	-
Նոր ֆինանսական գործիքներ, ստեղծված կամ գնված	494,327	-	-	**494,327**
Փոփոխություններ PD/LGD/EAD-ում և ֆինանսական գործիքի պայմանագրային դրամական հոսքերի փոփոխություն	(61,596)	2,328,015	1,127,784	**3,394,203**
Ապաճանաչում ժամանակաշրջանի ընթացքում	(535,864)	(77,398)	(163,333)	**(776,595)**
Դուրսգրումներ	-	-	(1,115,938)	**(1,115,938)**
Արտարժութային տարբերությունների	6,168	42,480	105,437	**154,085**
ԱՊԿ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**363,634**	**765,031**	**3,359,904**	**4,488,569**

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում Կազմակերպությունը փոփոխել է հաճախորդների որոշ վարկերի գծով դրամական միջոցների պայմանագրային հոսքերը: Բոլոր այդպիսի վարկերը փոխանցվել են առնվազն 2-րդ փուլ՝ հնարավոր կորուստների պահուստով, որը գնահատվում է ակնկալվող պարտքային վնասներին հավասար չափով:

Տարվա ընթացքում փոփոխված վարկերի դեպքում ամորտիզացված արժեքը վարկի փոփոխությունից անմիջապես առաջ և փոփոխության արդյունքում առաջացած շահույթում կամ վնասում ներկայացված է ստորև՝

	2020թ.
Ամորտիզացված արժեքը մինչ փոփոխությունը	12,342,547
Արժեզրկման պահուստ	(2,014,439)
Զուտ փոփոխության կորուստ	(155,631)
Հաճախորդներին տրամադրված զուտ վարկեր	**10,172,477**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չկան վարկեր, որոնք նախկինում փոփոխվել են, երբ դրանք գտնվում էին 2/3 փուլում, որոնք այժմ դասակարգվում են որպես 1 փուլ: Վարկերի համախառն հաշվեկշռային արժեքը, որոնք նախկինում փոփոխվել էին, երբ դրանք գտնվում էին 2/3 փուլում և այժմ դասակարգվում են որպես 1-ին փուլ՝ հաշվի առնելով 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող կորուստների 12 ամսվա համար գնահատված հնարավոր կորուստների պահուստի գումարը, կազմել է 1,032,076 հազար ՀՀ դրամ:

Վերանայված վարկեր և կանխավճարներ

Վարկերը և կանխավճարները, ընդհանուր առմամբ, վերանայվում են հաճախորդների հետ շարունակական փոխհարաբերությունների շրջանակներում, կամ վարկառուի դրության անբարենպաստ փոփոխության արդյունքում: Վերջինի դեպքում վերանայումը կարող է հանգեցնել մարման ժամկետի կամ մարման ժամանակացույցի երկարաձգման, համաձայն որի, Կազմակերպությունն իրապես անբարենպաստ վիճակում գտնվող վարկառուներին առաջարկում է զեղչային տոկոսադրույքներ: Արդյունքում՝ տվյալ ակտիվը շարունակում է մնալ ժամկետանց և անհատապես արժեզրկված, ընդ որում՝ տոկոսի և մայր գումարի վճարումը թույլ չի տալիս վերականգնել ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը: Այլ դեպքերում վերանայումը կհանգեցնի նոր պայմանագրի ստորագրման, որն, ըստ էության, կդիտվի որպես նոր վարկ:

Ստորև աղյուսակը ներկայացնում է վերակայված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը, ըստ ակտիվի դասերի՝

Ֆինանսական ակտիվների դաս	2020թ. դեկտեմբերի 31	2019թ. դեկտեմբերի 31
Հաճախորդներին տրված վարկեր	4,156,230	1,384,939

Միկրոֆինանսավորման ոլորտը ընդհանուր առմամբ հակված է պարտքային ռիսկի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերի միջոցով: Ինչ վերաբերում է հաճախորդներին տրված վարկերին, այս ռիսկը կենտրոնացած է Հայաստանի Հանրապետությունում: Այն մոնիտորինգի է ենթարկվում կանոնավորապես՝ վարկային սահմանաչափերի և վարկունակության վերաբերյալ Կազմակերպության ռիսկի կառավարման քաղաքականությամբ սահմանված ուղենիշերի պահպանումն ապահովելու համար:

Հետհաշվեկշռային ռիսկ. Կազմակերպությունը արտահաշվեկշռային ռիսկերի համար կիրառում է ռիսկերի կառավարման նույն քաղաքականությունը, որը կիրառվում է նաև հաշվեկշռային ռիսկերի պարագայում:

Ներդրումային արժեքթղթեր

Ստորև ներկայացված է ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վարկային որակի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ ՖՀՄՍ 9-ի փուլերի:

	2019թ.			
	Փուլ 1 12-ամսյա ԱՊԿ	Փուլ 2 Ամբողջ ժամկետում ԱՊԿ	Փուլ 3 Ամբողջ ժամկետում ԱՊԿ	Ընդամենը
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	1,194,923	-	-	**1,194,923**
Ընդամենը համախառն հաշվեկշռային արժեք	**1,194,923**	-	-	**1,194,923**
Կորուստների գծով պահուստ	(3,878)	-	-	**(3,878)**
Հաշվեկշռային արժեք	**1,191,045**	-	-	**1,191,045**

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**5,005**	**5,005**
Վերականգնում	(1,127)	**(1,127)**
Ակնկալվող պարտքային կորուստ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,878**	**3,878**
Ակնկալվող պարտքային կորուստ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**3,878**	**3,878**
Վերականգնում	(3,878)	**(3,878)**
Ակնկալվող պարտքային կորուստ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**-**

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,194,923 հազար դրամի ներդրումային արժեթղթերը գրավադրված են եղել հետգնման պայմանագրերով Կազմակերպության պարտավորությունների դիմաց: Եվրոպարտատոմսերի անվանական տոկոսադրույքը կազմել է 6,90% (1 եվրոպարտատոմս), մարման ժամկետը՝ 2020 թվականը:

Աշխարհագրական կենտրոնացում. Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական կենտրոնացումը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև՝

	Հայաստանի Հանրապետություն	ՏՀԶԿ երկրներ	Այլ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	724,687	-	-	**724,687**
Հաճախորդներին տրված վարկեր	19,810,232	-	-	**19,810,232**
Այլ ֆինանսական ակտիվներ	18,010	-	-	**18,010**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**20,552,929**	**-**	**-**	**20,552,929**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Այլ փոխառու միջոցներ	2,360,552	7,121,993	79,811	**9,562,356**
Թողարկված պարտքային արժեթղթեր	5,030,607	-	-	**5,030,607**
Վարձակալության գծով պարտավորություն	510,764	-	-	**510,764**
Այլ ֆինանսական պարտավորություններ	281,086	11,303	-	**292,389**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**8,183,009**	**7,133,296**	**79,811**	**15,396,116**
Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների զուտ դիրքը	**12,369,920**	**(7,133,296)**	**(79,811)**	**5,156,813**
Զուտ դիրք	**12,369,920**	**(7,133,296)**	**(79,811)**	**5,156,813**

Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական կենտրոնացումը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև՝

	Հայաստանի Հանրապետություն	ՏՀՀԿ երկրներ	Այլ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	703,595	-	-	**703,595**
Հաճախորդներին տրված վարկեր	23,921,915	-	-	**23,921,915**
Ներդրումային արժեթղթեր	1,191,045	-	-	**1,191,045**
Այլ ֆինանսական ակտիվներ	15,395			**15,395**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**25,831,950**	**-**	**-**	**25,831,950**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	1,223,359	-	-	**1,223,359**
Փոխառու միջոցներ	1,340,415	11,028,287	145,254	**12,513,956**
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,940,839	-	-	**4,940,839**
Վարձակալության գծով պարտավորություն	784,918	-	-	**784,918**
Այլ ֆինանսական պարտավորություններ	43,686	11,303		**54,989**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**8,333,217**	**11,039,590**	**145,254**	**19,518,061**
Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների զուտ դիրքը	**17,498,733**	**(11,039,590)**	**(145,254)**	**6,313,889**
Զուտ դիրքը	**17,498,733**	**(11,039,590)**	**(145,254)**	**6,313,889**

Կազմակերպությունը իրականացնում է բազմաթիվ գործարքներ, որտեղ գործընկերները վարկանշված չեն միջազգային վարկանշային գործակալությունների կողմից: Կազմակերպությունը մշակել է ներքին մոդելներ, որոնք թույլ են տալիս նրան որոշելու գործընկերների վարկանիշները, որոնք համադրելի են միջազգային վարկանիշային գործակալությունների վարկանիշների հետ:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկի կառավարումը. իրացվելիության ռիսկը վերաբերում է բավարար միջոցների առկայությանը՝ բավարարելու փոխառու միջոցների և այլ ֆինանսական հանձնառությունների հետվերադարձը նշված ֆինանսական գործիքների մարման ժամկետին:

Կազմակերպության մոտեցումը իրացվելիության կառավարման խնդրին կայանում է նրանում, որպեսզի հնարավորինս ապահովվի բավարար իրացվելիություն պարտավորությունների մարման համար, թե ընթացիկ, և թե սթրեսային իրավիճակներում, առանց Կազմակերպության վարկանիշին անընդունելի վնաս հասցնելու կամ կորուստներ առաջացնելու:

ԱՊԿԿ-ն վերահսկում է այս տեսակի ռիսկերը ժամկետայնության վերլուծության միջոցով՝ որոշելով Կազմակերպության ռազմավարությունը հաջորդ ֆինանսական ժամանակաշրջանի համար: Իրացվելիության ռիսկի կառավարման համար Կազմակերպությունը կատարում է իր հաճախորդների գործառնությունների գծով ակնկալվող դրամական հոսքերի ամենօրյա մոնիտորինգ, որը ակտիվների/պարտավորությունների կառավարման գործընթացի մաս է կազմում: Ընթացիկ իրացվելիությունը կառավարվում է Գանձապետարանի կողմից, ով կառավարում է կարճաժամկետ իրացվելի միջոցները, որը հիմնականում բաղկացած է կարճաժամկետ ավանդներից ընթացիկ իրացվելիության աջակցման և դրամական հոսքերի օպտիմալացման նպատակով:

Իրացվելիության և տոկոսային ռիսկի վերլուծությունը ներկայացված է հետևյալ աղյուսակում: Ստորև ներկայացվածը հիմնված է Կազմակերպության ներսում հիմնական ղեկավար անձնակազմի տրամադրած տեղեկատվության վրա:

Հաշվետու ամսաթվի դրությամբ 5,187,236 հազար ՀՀ դրամի չափով փոխառու միջոցները դասակարգվել են մինչև 1 ամիս մարման ժամկետով: Սակայն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և հաշվետու ամսաթվից հետո Կազմակերպությունը որևէ ծանուցում չի ստացել հետագա ֆինանսավորման դադարեցման մասին կամ ծանուցում չի ստացել վարկատուներից որևէ վարկ անհապաղ մարելու պահանջներով: Այնուամենայնիվ, Կազմակերպության ղեկավարությունը համոզված է, որ այդ վարկերը կմարվեն իրենց պայմանագրային պայմաններին համապատասխան, և խախտման հետ կապված ներումները կստացվեն վարկատուներից:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	2020 թ. դեկտեմբերի 31					
	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-5 տարի	Ընդամենը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2.40%	534,059	-	-	-	**534,059**
Հաճախորդներին տրված վարկեր	32.16%	730,784	1,441,236	6,692,602	10,945,610	**19,810,232**
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ		**1,264,843**	**1,441,236**	**6,692,602**	**10,945,610**	**20,344,291**
Ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		190,628	-	-	-	**190,628**
Այլ ֆինանսական ակտիվներ		18,010	-	-	-	**18,010**
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ		**208,638**	**-**	**-**	**-**	**208,638**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ		**1,473,481**	**1,441,236**	**6,692,602**	**10,945,610**	**20,552,929**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ						
Այլ փոխառու միջոցներ	8.24%	6,613,231	879,811	1,055,172	49,660	**8,597,874**
Թողարկված պարտքային արժեթղթեր	9.50%	-	64,883	1,424,538	3,541,186	**5,030,607**
Վարձակալության գծով պարտավորություն	12.90%	63,472	9,970	151,939	285,383	**510,764**
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		**6,676,703**	**954,664**	**2,631,649**	**3,876,229**	**14,139,245**
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ						
Այլ փոխառու միջոցներ	6ամս. LIBOR +5.6%	29,539	-	-	934,943	**964,482**
Ընդամենը փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		**29,539**	**-**	**-**	**934,943**	**964,482**
Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ						
Այլ ֆինանսական պարտավորություններ		292,389	-	-	-	**292,389**

Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	**292,389**	-	-	-	**292,389**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**6,998,631**	**954,664**	**2,631,649**	**4,811,172**	**15,396,116**
Տոկոսադրույքի զգայունության տարբերություն	(5,441,399)	486,572	4,060,953	6,134,438	
Տոկոսադրույքի զգայունության կուտակային տարբերություն	**(5,441,399)**	**(4,954,827)**	**(893,874)**	**5,240,564**	
Ածանցյալ ֆինանսական գործիքներ					
Համախառն՝ արտարժույթի սվոփեր	**152**	-	-	-	**152**
Իրացվելիության տարբերություն	(5,524,998)	486,572	4,212,892	6,134,438	
Իրացվելիության կուտակային տարբերություն	**(5,524,998)**	**(5,038,426)**	**(825,534)**	**5,308,904**	

	2019 թ. դեկտեմբերի 31					
	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	**Մինչև 1 ամիս**	**1-3 ամիս**	**3 ամսից 1 տարի**	**1-5 տարի**	**Ընդամենը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4.00%	491,620	-	-	-	**491,620**
Հաճախորդներին տրված վարկեր	33.60%	889,043	1,557,280	7,746,763	13,728,829	**23,921,915**
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	6.43%	-	-	1,191,045	-	**1,191,045**
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ		**1,380,663**	**1,557,280**	**8,937,808**	**13,728,829**	**25,604,580**
Ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		211,975	-	-	-	**211,975**
Այլ ֆինանսական ակտիվներ		15,395	-	-	-	**15,395**
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ		**227,370**	-	-	-	**227,370**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ		**1,608,033**	**1,557,280**	**8,937,808**	**13,728,829**	**25,831,950**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ						
Այլ փոխառու միջոցներ	6.80%	144,261	200,237	6,011,068	3,831,189	**10,186,755**
Թողարկված պարտքային արժեթղթեր	9.61%	-	62,248	22,598	4,855,993	**4,940,839**

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

Վարձակալության գծով պարտավորություն	12.34%	8,091	38,664	179,626	558,537	**784,918**
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	5.66%	1,223,359	-	-	-	**1,223,359**
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		**1,375,711**	**301,149**	**6,213,292**	**9,245,719**	**17,135,871**
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ						
Այլ փոխառու միջոցներ	6 ամս. LIBOR +5.6%	-	-	1,175,921	1,151,280	**2,327,201**
Ընդամենը փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		**-**	**-**	**1,175,921**	**1,151,280**	**2,327,201**
Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ						
Այլ ֆինանսական պարտավորություններ		54,989	-	-	-	**54,989**
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ		**54,989**	**-**	**-**	**-**	**54,989**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		**1,430,700**	**301,149**	**7,389,213**	**10,396,999**	**19,518,061**
Տոկոսադրույքի զգայունության տարբերություն		4,952	1,256,131	1,548,595	3,331,830	
Տոկոսադրույքի զգայունության կուտակային տարբերություն		**4,952**	**1,261,083**	**2,809,678**	**6,141,508**	
Իրացվելիության տարբերություն		177,333	1,256,131	1,548,595	3,331,830	
Իրացվելիության կուտակային տարբերություն		**177,333**	**1,433,464**	**2,982,059**	**6,313,889**	

Կուտակային իրացվելիության տարբերություն. վերը ներկայացված աղյուսակը ներկայացնում է Կազմակերպության ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծությունը՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների: Վերը նշված գումարները փոփոխական տոկոսադրույքով գործիքների համար՝ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով, ենթակա են փոփոխման, եթե փոփոխական տոկոսադրույքներում փոփոխությունները տարբերվեն հաշվետու ժամանակաշրջանի վերջում որոշված տոկոսադրույքների գնահատականներից: Արժեզրկված ակտիվները ներկայացված են հաշվեկշռային արժեքներով՝ հանած արժեզրկման գծով մասհանումը և հիմնված են դրամական միջոցների ներհոսքի ակնկալվող ժամկետների վրա:

Ստորև բերված աղյուսակներում մանրամասն ներկայացված է Կազմակերպության մնացած պայմանագրային մարման ժամկետը՝ ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների համար համաձայնեցված մարման ժամկետներով: Աղյուսակները կազմվել են ֆինանսական պարտավորությունների չզեղչված կանխիկ դրամական հոսքերի հիման վրա՝ ելնելով պայմանագրային մարման հնարավոր ամենավաղ ժամկետի հիման վրա: Չի ակնկալվում, որ ստորև բերված աղյուսակում ներառված դրամական հոսքերը կարող են տեղի ունենալ զգալիորեն ավելի վաղ, կամ զգալիորեն տարբեր քանակությամբ: Աղյուսակները ներառում են ինչպես տոկոսային, այնպես էլ մայր գումարների գծով դրամական հոսքեր: Այն դեպքում, երբ տոկոսային հոսքերը տատանվող դրույքաչափով են, չզեղչված գումարը ստացվում է տոկոսադրույքի կորերից՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

		2020թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ					
	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-5 տարի	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ							
Այլ փոխառու միջոցներ	8.24%	6,626,255	893,004	1,097,525	53,467	**8,670,251**	**8,597,874**
Թողարկված պարտքային արժեթղթեր	9.50%	-	110,105	1,762,105	3,786,392	**5,658,602**	**5,030,607**
Վարձակալության գծով պարտավորություն	12.90%	21,437	42,873	192,928	368,761	**625,999**	**510,764**
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		**6,647,692**	**1,045,982**	**3,052,558**	**4,208,620**	**14,954,852**	**14,139,245**
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ							
Այլ փոխառու միջոցներ	6mo LIBOR +5.6%	31,958	-	31,094	971,756	**1,034,808**	**964,482**
Ընդամենը փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		**31,958**	**-**	**31,094**	**971,756**	**1,034,808**	**964,482**
Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ							
Այլ ֆինանսական պարտավորություններ		292,389	-	-	-	**292,389**	**292,389**
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ		**292,389**	**-**	**-**	**-**	**292,389**	**292,389**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ		**6,972,039**	**1,045,982**	**3,083,652**	**5,180,376**	**16,282,049**	**15,396,116**

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	2019թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ						
	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-5 տարի	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ							
Այլ փոխառու միջոցներ	6.80%	152,112	220,107	6,533,790	4,149,460	**11,055,469**	**10,186,755**
Թողարկված պարտքային արժեթղթեր	9.61%	-	107,453	359,244	5,565,092	**6,031,789**	**4,940,839**
Վարձակալության գծով պարտավորություն	12.34%	36,419	53,898	245,719	741,560	**1,077,596**	**784,918**
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	5.66%	1,223,359	-	-	-	**1,223,359**	**1,223,359**
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		**1,411,890**	**381,458**	**7,138,753**	**10,456,112**	**19,388,213**	**17,135,871**
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ							
Այլ փոխառու միջոցներ	8.03%	-	-	1,316,322	1,316,322	**2,632,644**	**2,327,201**
Ընդամենը փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		**-**	**-**	**1,316,322**	**1,316,322**	**2,632,644**	**2,327,201**
Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ							
Այլ ֆինանսական պարտավորություններ		54,989	-	-	-	**54,989**	**54,989**
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ		**54,989**	**-**	**-**	**-**	**54,989**	**54,989**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ		**1,466,879**	**381,458**	**8,455,075**	**11,772,434**	**22,075,846**	**19,518,061**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ Կազմակերպության շահույթները կամ կապիտալը կամ իր գործունեության նպատակներին հասնելու կարողությունը կվատթարանան շուկայական տոկոսադրույքներում և գներում փոփոխությունների կամ դրանց անկայունության պատճառով: Շուկայական ռիսկն ընդգրկում է տոկոսադրույքի և արժութային ռիսկերը: Փոփոխություններ տեղի չեն ունեցել Կազմակերպության ռիսկերի գնահատման մոտեցումներում կամ ռիսկի աստիճանում, ինչպես նաև ռիսկերի կառավարման և չափման մեթոդներում:

Տոկոսադրույքի ռիսկ. Կազմակերպության դրամական հոսքերի տոկոսադրույքի ռիսկը այն ռիսկն է, որ ֆինանսական ակտիվի ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայում առկա տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում, և իրական արժեքի տոկոսադրույքի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի շուկայում գերակշռող տոկոսադրույքներում տեղի ունեցող փոփոխությունների արդյունքում՝ արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման արդյունքում:

Տոկոսադրույքի զգայունություն. Կազմակերպությունը կառավարում է իրական արժեքով տոկոսադրույքի ռիսկը՝ պարբերաբար գնահատելով պոտենցիալ կորուստները, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից: Կազմակերպության ղեկավարությունը իրականացնում է Կազմակերպության ընթացիկ ֆինանսական գործունեության մոնիտորինգ, գնահատում է Կազմակերպության տոկոսադրույքի իրական արժեքի փոփոխությունների զգայունությունը և դրա ազդեցությունն Կազմակերպության շահութաբերության վրա:

Զգայունության վերլուծություններն իրականացվել են՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսադրույքի ռիսկին ենթական ոչ ածանցյալ գործիքների մնացորդները:

Լողացող տոկոսադրույքով պարտավորությունների համար վերլուծությունները կատարվել են՝ ենթադրելով, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չմարված պարտավորության գումարն այդպիսին է եղել ամբողջ տարվա ընթացքում: Հիմնական ղեկավար անձնակազմին տոկոսադրույքի ռիսկի փոփոխության վերաբերյալ ներքին հաշվետվություններ ներկայացնելիս օգտագործվում է 200 բազիսային կետով աճի կամ նվազման ենթադրությունը, և ներկայացնում է ղեկավարության գնահատականը՝ տոկոսադրույքի գծով հնարավոր փոփոխությունների վերաբերյալ:

Եթե տոկոսադրույքները լինեին 200 բազիսային կետով ավելի բարձր կամ ցածր, և բոլոր մնացած փոփոխականները լինեին հաստատուն, ապա Կազմակերպության եկամուտը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կաճեր/կնվազեր 26,004 հազար ՀՀ դրամի չափով (2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 45,990 հազար ՀՀ դրամի չափով):

Արտարժույթի ռիսկ. արտարժույթի ռիսկը սահմանվում է որպես ֆինանսական գործիքի արժեքի տատանումն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Կազմակերպության ֆինանսական վիճակը և դրամական հոսքերը ենթակա են գերիշխող արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցության ռիսկին:

ԱՊԿԿ-ն վերահսկում է արտարժույթի ռիսկը՝ կառավարելով արժութային բաց դիրքն ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկման և այլ մակրոտնտեսական ցուցանիշների գնահատումների հիման վրա, ինչը Կազմակերպությանը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել

վնասներն ազգային արժույթի նկատմամբ փոխարժեքի զգալի տատանումներից: Գանձապետն իրականացնում է Կազմակերպության արժութային բաց դիրքի ամենօրյա մոնիտորինգ: Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Կազմակերպության վրա 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	409,351	278,283	37,053	**724,687**
Հաճախորդներին տրված վարկեր	11,024,356	8,785,876	-	**19,810,232**
Ներդրումային արժեթղթեր	18,010	-	-	**18,010**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**11,451,717**	**9,064,159**	**37,053**	**20,552,929**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Այլ փոխառու միջոցներ	2,314,587	7,247,769	-	**9,562,356**
Այլ ֆինանսական պարտավորություններ	155,449	136,940	-	**292,389**
Թողարկված պարտքային արժեթղթեր	3,964,107	1,066,500	-	**5,030,607**
Վարձակալության գծով պարտավորություն	510,764	-	-	**510,764**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**6,944,907**	**8,451,209**	**-**	**15,396,116**
Հաշվեկշռային բաց դիրք	**4,506,810**	**612,950**	**37,053**	**5,156,813**
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Համախառն՝ արտարժույթի սվոփեր	522,742	(522,590)	-	152
Բաց դիրք	**5,029,552**	**90,360**	**37,053**	**5,156,965**

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Կազմակերպության վրա 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	396,436	252,991	54,168	**703,595**
Հաճախորդներին տրված վարկեր	12,467,684	11,454,231	-	**23,921,915**
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	-	1,191,045	-	**1,191,045**
Այլ ֆինանսական պարտավորություններ	15,395	-	-	**15,395**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**12,879,515**	**12,898,267**	**54,168**	**25,831,950**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Այլ փոխառու միջոցներ	1,529,441	10,984,515	-	**12,513,956**
Այլ ֆինանսական պարտավորություններ	33,730	21,259	-	**54,989**
Թողարկված պարտքային արժեթղթեր	3,962,466	978,373	-	**4,940,839**
Վարձակալության գծով պարտավորություններ	784,918	-	-	**784,918**
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	1,000,250	223,109	-	**1,223,359**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**7,310,805**	**12,207,256**	**-**	**19,518,061**
Հաշվեկշռային բաց դիրք	**5,568,710**	**691,011**	**54,168**	**6,313,889**
Բաց դիրք	**5,568,710**	**691,011**	**54,168**	**6,313,889**

Արտարժույթի ռիսկի զգայունություն. Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Կազմակերպության զգայունությունը ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար փոխարժեքի 20% աճի կամ նվազման հանդեպ: Տվյալ 20%-ն իրենից ներկայացնում է այն զգայունակության տոկոսը, որն օգտագործվում է արտարժութային ռիսկի վերաբերյալ հիմնական ղեկավար անձնակազմին ներքին հաշվետվություններ ներկայացնելիս և իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն ըստ ղեկավարության գնահատականի: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված մնացորդները և ճշգրտում է դրանց փոխարկումը ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 20% փոփոխության տեսանկյունից: Զգայունության վերլուծությունը ներառում է արտաքին վարկերը, որոնց դեպքում վարկի գնանշումը կատարված է վարկատուի կամ վարկառուի գործառնական արժույթից տարբեր արժույթով: Ստորև նշված դրական թիվը նշանակում է նախքան շահութահարկով շահույթի կամ կապիտալի տարրի աճ այն դեպքերում, երբ ՀՀ դրամն արժեվորվում է ԱՄՆ դոլարի նկատմամբ 20%-ի չափով

	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շահույթի կամ վնասի նկատմամբ ազդեցությունը	(18,072)	(138,202)
Կապիտալի նկատմամբ ազդեցությունը	(18,072)	(138,202)

Զգայունության վերլուծության սահմանափակումները. վերը նշված աղյուսակում բերված է առանցքային ենթադրության փոփոխության ազդեցությունը այլ ենթադրությունների անփոփոխ պայմանների դեպքում: Իրականում ենթադրությունների, ինչպես նաև այլ գործոնների միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Հարկ է նաև նշել, որ այս զգայունությունները ոչ գծային են, և ավելի մեծ կամ փոքր ազդեցությունները չպետք է միջարկվեն (ինտերպոլյացվեն) կամ արտարկվեն (էքստրապոլյացվեն) այս արդյունքներից:

Զգայունության վերլուծությունում հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ Կազմակերպության ակտիվները և պարտավորությունները ակտիվորեն կառավարվում են: Ի լրումն, Կազմակերպության ներկայիս ֆինանսական դիրքը կարող է տարբեր լինել այն ժամանակ, երբ որևէ իրական շուկայական շարժ տեղի ունենա: Օրինակ, Կազմակերպության ֆինանսական ռիսկերի կառավարման ռազմավարությունը նպատակ ունի կառավարելու շուկայական տատանումների ազդեցությանը ենթակա լինելը: Երբ ներդրումային շուկաներն անցնում են զանազան շեմային մակարդակներից, Կազմակերպության ղեկավարության արձագանքը կարող է ներառել այնպիսի գործողությունների իրականացում, ինչպիսիք են ներդրումների վաճառքը, ներդրումային պորտֆելի բաշխվածության փոփոխությունը և այլ կանխարգելիչ միջոցառումներ: Հետևաբար, ենթադրությունների իրական փոփոխության ազդեցությունը կարող է որևէ ազդեցություն չունենալ պարտավորությունների վրա, մինչդեռ ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվում են շուկայական արժեքով: Այս հանգամանքներում, ակտիվների և պարտավորությունների տարբեր չափման հիմունքները կարող են հանգեցնել բաժնետիրական կապիտալի տատանումների:

Զգայունության վերլուծության այլ սահմանափակումները ներառում են հիպոթետիկ շուկայական շարժերի կիրառումը պոտենցիալ ռիսկերը ներկայացնելու նպատակով, որոնք ընդամենը ներկայացնում են Կազմակերպության տեսակետը մոտակա ժամանակների շուկայական հնարավոր փոփոխությունների վերաբերյալ, որոնք չեն կարող կանխատեսվել որևէ հավաստիությամբ, ինչպես և այն ենթադրությունը, որ բոլոր տոկոսադրույքները շարժվում են համանմանորեն:

Գնային ռիսկ. Գնային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի շուկայական գների փոփոխության արդյունքում անկախ նրանից, թե փոփոխությունները հետևանք են առանձին արժեթղթին կամ դրա թողարկողին յուրահատուկ գործոնների, թե շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող գործոնների:Կազմակերպությունը ենթարկվում է իր ապրանքների կամ ծառայությունների շուկայական գների փոփոխության ռիսկին, որոնք ենթակա են թե՛ ընդհանուր, թե՛ յուրահատուկ շուկայական տատանումների:

Կազմակերպությունը կառավարում է գնային ռիսկն այն պոտենցիալ կորուստների պարբերաբար գնահատման միջոցով, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից, ինչպես նաև սահմանելով և պահպանելով համապատասխան վնասների կանխարգելման սահմանաչափեր և միջակայքերի (մարժաներ) և գրավի պահանջներ:

Կազմակերպության չտրամադրված վարկային հանձնառությունների գծով հնարավոր վնասների գումարը հավասար է այդ հանձնառությունների ընդհանուր գումարին: Այնուամենայնիվ, վնասի հավանական գումարը ավելի փոքր է քան այդ գումարը, քանի որ հանձնառությունների մեծ մասը պայմանական են՝ կախված մի շարք պայմաններից, որոնք սահմանված են վարկային պայմանագրերում:

Գործառնական ռիսկ. Գործառնական ռիսկը իրենից ներկայացնում է կորուստների վտանգ՝ պայմանավորված համակարգերի ձախողումներով, մարդկային սխալներով, կեղծիքներով կամ այլ արտաքին իրադարձություններով: Երբ վերահսկողության իրականացումը ձախողվում է, գործառնական ռիսկը կարող է հանգեցնել հեղինակության անկման, ունենալ իրավական կամ վերահսկողական հետևանքներ, կամ առաջ բերել ֆինանսական կորուստներ:

Կազմակերպությունը չի ակնկալում վերացնել բոլոր գործառնական ռիսկերը, բայց գործադրում է անհրաժեշտ ջանքերը վերահսկողական համակարգի, մշտադիտարկման և արագ արձագանքելու միջոցով կառավարելու հնարավոր ռիսկերը: Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ բաժանում, մուտքի, թույլտվությունների և համապատասխանության ստուգման ընթացակարգեր, անձնակազմի ուսուցում և գնահատման գործընթացներ:

26. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

	2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Կապակցված կողմի հետ մնացորդ	Ընդհանուր դասն ըստ ֆինանսական հաշվետվութ-յունների	Կապակցված կողմի հետ մնացորդ	Ընդհանուր դասն ըստ ֆինանսական հաշվետվութ-յունների
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Այլ փոխառություններ (ծան. 12)				
Բաղկացած հետևյալների մնացորդներից՝				
- անուղղակի բաժնետերեր	1,934,683	9,562,356	-	-
Այլ պարտավորու-թյուններ (ծան.13)				
Բաղկացած հետևյալների հաշվեկշիռներից՝				
- մայր կազմակեր-պություն	-	-	(11,404)	(361,275)

	2020թ.		2019թ.	
	Կապակցված կողմի հետ գործառնու-թյուններ	Ընդհանուր դասն ըստ ֆինանսական հաշվետվությունների	Կապակցված կողմի հետ գործառնու-թյուններ	Ընդհանուր դասն ըստ ֆինանսական հաշվետվութ-յունների
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի հաշվետվություն				
Տոկոսային ծախս (ծան.16)	56,157	1,536,214	4,680	1,544,856
Այլ գործառնական ծախսեր (ծան. 21)	302,010	812,091	304,195	924,825
Բաղկացած հետևյալների հետ գործարքներից՝				
- մայր կազմակերպու-թյուն (ռոյալթի և կառավարման վճարներ)	178,417	-	198,871	-
- այլ կապակցված կողմեր (ՏՏ և այլ ծառայություններ)	123,593	-	105,324	-

	2020թ.		2019թ.	
	Կապակցված կողմի հետ գործառնու-թյունները	Ընդհանուր դասն ըստ ֆինանսական հաշվետվութ-յունների	Կապակցված կողմի հետ գործառնու-թյունները	Ընդհանուր դասն ըստ ֆինանսական հաշվետվութ-յունների
Ղեկավար անձնակազմի հատուցում				
- Կարճաժամկետ վճարումներ աշխատակիցներին	186,784	1,748,827	158,782	2,996,299

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմը բաղկացած է եղել 3 պաշտոնից (2019թ. դեկտեմբերի 31՝ 3 պաշտոն):

27. ՀԵՏԱԳԱ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021թ. փետրվարի 7-ին Կազմակերպությունը տեղական բանկի հետ կնքել է 800,000 ՀՀ դրամ գումարի վարկային գծի պայմանագիր՝ 1 տարի ժամկետով:

2021թ. փետրվարի 19-ին Կազմակերպությունը վարկային գծի պայմանագիր է ստորագրել մեկ այլ տեղական բանկի հետ 1,500 հազար ԱՄՆ դոլարի չափով 1 տարի ժամկետով (783,885 հազար ՀՀ դրամ):

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան *«20» մարտի 2023թ.*

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Թողարկող») ի դեմս Գլխավոր տնօրեն Սթիվեն Մայքլ Հասսի, որը գործում է Թողարկողի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ»), ի դեմս Գործադիր տնօրեն Միհեր Անանյանի, որը գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով նաև «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրի շրջանակներում Բանկը Թողարկողին աջակցում է Թողարկողի Տնօրենների Խորհրդի կողմից արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման մասին 16.02.2023թ.-ի թիվ N 05/2023 որոշմամբ հաստատված մինչև 1,667,000,000 (մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունյոթ միլիոն) ՀՀ դրամ և/կամ մինչև 4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով արժեթղթերի (այսուհետ՝ «Արժեթղթեր») Ծրագրային ազդագրի կազմման, իրավասու մարմնում գրանցման, Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակման աշխատանքներում, ինչպես նաև պարտավորվում է Թողարկողին մատուցել Արժեթղթերի տեղաբաշխման ծառայություններ և դրանց հետ կապված ու այդ գործընթացների հետ առնչվող այլ ծառայություններ (այդ թվում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ տեղաբաշխողի կողմից մատուցվող այլ ծառայություններ)՝ դրանց պայմանները նախապես համաձայնեցնելով Թողարկողի հետ:

1.2. Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման յուրաքանչյուր դեպքի համար Արժեթղթերի տեղաբաշխման ձևը (երաշխավորված կամ չերաշխավորված), տեղաբաշխման կարգը, Արժեթղթերի ծավալը, քանակը, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Բանկին վճարման ենթակա գումարի չափն ու կարգը, Կողմերի պատասխանատվությունը և տեղաբաշխման կազմակերպմանն առնչվող այլ պայմանները կսահմանվեն Կողմերի միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրերով, որոնք կհանդիսանան Պայմանագրի անբաժանելի մասը:

2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է մինչև Պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարումը:

2.2 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս Կողմին առնվազն 10 օր առաջ գրավոր ծանուցելով:

2.3 Պայմանագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

2.4 Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ապահովել մյուս կողմից ստացված բանկային, ֆինանսական, առևտրային և այլ տեղեկատվության խիստ գաղտնիությունը: Նման տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

2.5 Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՆԿ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բյուզանդի 87, 85 տարածք
ՀՎՀՀ՝ 02500518
թ/հ՝ 103002101519
ՀՀ Կենտրոնական բանկ,
հեռ.՝ (+374 10) 59-23-23
ֆաքս.՝ (+374 10) 54-78-94

Գործադիր տնօրեն՝

Միեր Անանյան

ստորագրություն

ԹՈՂԱՐԿՈՂ
«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Ագաթանգեղոսի 2ա
ՀՎՀՀ՝ 00445174
հ/հ՝ 1510023156470100
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
հեռ.՝ (+374 12) 555555

Գլխավոր տնօրեն՝

Սթիվեն Մայքլ Հասս

ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՉԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

ք.Երևան «20» մարտի 2023թ.

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ Թողարկող)՝ ի դեմս գլխավոր տնօրեն Սթիվեն Մայքլ Հասսի, որը գործում է Թողարկողի կանոնադրության հիման վրա՝ մի կողմից, և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ)՝ ի դեմս գործադիր տնօրեն Միեր Անանյանի, որը գործում է Բանկի կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից (միասին անվանվելով նաև Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Հիմք ընդունելով Թողարկողի՝ արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման մասին Տնօրենների Խորհրդի 16.02.2023թ.-ի թիվ N 05/2023 որոշումը՝ Թողարկողը նախատեսում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից արժեթղթերի թողարկման ազդագրի/ծրագրային ազդագրի/շրջանակներում իրականացնել մինչև 1,667,000,000 (մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունյոթ միլիոն) ՀՀ դրամ և/կամ մինչև 4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով արժեթղթերի թողարկումներ :

1.2. Հիմք ընդունելով Թողարկողի Տնօրենների Խորհրդի 16.02.2023թ.-ի թիվ N 05/2023 որոշումը՝ Թողարկողը նախատեսում է իրականացնել վերոնշյալ արժեթղթերի (այսուհետ՝ Արժեթղթեր) թողարկում և տեղաբաշխում՝ մինչև մինչև 1,667,000,000 (մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունյոթ միլիոն) ՀՀ դրամ և/կամ մինչև 4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով՝ հետևյալ պայմաններով.

1.1.1.	Արժեթղթերի տեսակը՝	Անվանական արժեկտրոնային	
1.1.2.	Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով	
1.1.3.	Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային	
1.1.4.	Արժեթղթերի փոխարկելիությունը՝	Ոչ փոխարկելի	
1.1.5.	Արժեթղթերի թողարկման արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
1.1.6.	Արժեթղթերի թողարկման ծավալը՝	մինչև 1,667,000,000 (մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունյոթ միլիոն) ՀՀ դրամ և/կամ մինչև 4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար	
1.1.7.	Մեկ արժեթղթի անվանական արժեքը՝	50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
1.1.8.	Արժեթղթերի քանակը՝	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո	

1.1.9.	Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման օրը՝	յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով
1.1.10.	Արժեթղթերի շրջանառության ժամկետը՝	
1.1.11.	Արժեթղթերի արժեկտրոնային եկամտաբերությունը՝	
1.1.12.	Արժեթղթերի շրջանառության ձևը՝	Բացառապես կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով
1.1.13.	Արժեթղթերի շրջանառելիության սահմանափակումներ՝	Տեղաբաշխումից հետո արժեթղթերի առքուվաճառքը երկրորդային շուկայում կարող է իրականացվել բացառապես կարգավորվող շուկայում
1.1.14.	Արժեթղթերի տեղաբաշխման ձևը՝	Պարտատոմսերը տեղաբաշխվում են Բորսայի տեղաբաշխման համակարգով ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով
1.1.15.	Արժեթղթերի ապահովվածությունը՝	Առաջարկվող պարտատոմսերն ապահովված չեն
1.1.16.	Արժեթղթերի մարումը՝	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով
1.1.17.	Արժեթղթերի գնի հաշվարկման բանաձև՝	Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով $$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{FV}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$ $$\tau = \frac{DSN}{DCC}$$ որտեղ՝ DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է, DCC -գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

		f -արժեկտրոնի վճարման հաճախականությունն է մեկ տարում N -հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը C - միավոր պարտատոմսի տարեկան արժեկտրոնը y - մինչև մարում եկամտաբերություն, i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից, FV- պարտատոմսի անվանական արժեք:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Սույն համաձայնագրով Բանկը պարտավորվում է Թողարկողին մատուցել Արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման հետ կապված սույն համաձայնագրի 2.2. կետում նշված ծառայությունները, իսկ Թողարկողը պարտավորվում է սույն համաձայնագրով սահմանված կարգով վճարել մատուցված ծառայությունների համար:

2.2. Բանկը Թողարկողին մատուցում է հետևյալ ծառայությունները՝

2.2.1. Թողարկողի կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա մշակում է Արժեթղթերի Ազդագիրը (այսուհետ՝ Ազդագիր) և աշխատանքներ է իրականացնում ՀՀ Կենտրոնական բանկում Ազդագրի գրանցման ուղղությամբ:

2.2.2. Սույն համաձայնագրի 3-րդ մասով սահմանված կարգով, իրականացնում է Թողարկողի Արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխում:

2.2.3. Արժեթղթերի տեղաբաշխման ավարտից հետո ամփոփում է տեղաբաշխման արդյունքները, նախապատրաստում է տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունները:

2.2.4. Ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում (այսուհետ՝ «ՀԿԴ») տեղաբաշխման համար և տեղաբաշխումից հետո անհրաժեշտ գործողությունների իրականացման նպատակով:

2.2.5. Կազմակերպում է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում (այսուհետ՝ «Բորսա») Արժեթղթերի առևտրին թույլտվության գործընթացը, պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների, փաստաթղթերի) կազմումը և ներկայացումը Բորսա:

2.2.6. Ապահովում է Արժեթղթերի տեղաբաշխումը արտաբորսայում բաժանորդագրության սկզբունքով:

2.2.7. Կատարում է սույն համաձայնագրի 2.2.1-2.2.5 կետերում նկարագրված գործողությունների իրականացման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

2.2.8. Ծրագրային ազդագրի շրջանակներում սույն համաձայնագրի 1.2 կետում նշված թողարկման առաջին տրանշից հետո Արժեթղթերի մնացած հաջորդական

թողարկումների պայմանները առանձին համաձայնագրերով կսահմանվեն Թողարկողի և Բանկի կողմից:

3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՉԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

Տեղաբաշխում բորսայում

3.1. Բանկը կազմակերպում է Բորսայում Արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման գործընթացը և պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/փաստաթղթերի) Բորսա ներկայացումը: Սույն միջոցառման իրականացման ապահովման շրջանակներում Թողարկողը Բանկին լիազորում է Թողարկողի անունից հանդես գալ Բորսայում, մասնավորապես, Արժեթղթերի թողարկման գործընթացի կազմակերպման համար ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր:

3.2. Արժեթղթերը տեղաբաշխվում են Բորսայի տեղաբաշխման համակարգով ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ Բորսայի կանոններով սահմանված կարգով:

3.3. Արժեթղթերի ձեռքբերման հայտերի ընդունումն ու դրա իրականացման/մերժման հետագա գործընթացը կարգավորվում է Բորսայի համապատասխան ընթացակարգերի համաձայն:

3.4. Արժեթղթերի տեղաբաշխման աճուրդին չեն կարող ներկայացվել.

3.4.1. գնման ոչ մրցակցային հայտ,

3.4.2. լրիվ բավարարմամբ հայտ:

3.5. Կողմերը հայտերի բավարարման կտրման նվազագույն գինը կսահմանեն Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով:

3.6. Բանկի կողմից կարգավորվող շուկայում Արժեթղթերի շուկայի ստեղծման ծառայությունների մատուցման դեպքում Թողարկողի և Բանկի կողմից սահմանվում է Արժեթղթերի շուկա ստեղծողի կողմից ձեռք բերման ենթակա Արժեթղթերի ծավալ փաստացի տեղաբաշխված ընդհանուր ծավալի 15%-ի չափով, որը շուկա ստեղծողի կողմից ձեռք է բերվում հայտերի բավարարման կտրման նվազագույն գնով:

3.7. Սույն համաձայնագրի 3.5 և 3.6 կետերում նշված տեղեկատվությունը հրապարակվում է տեղաբաշխման մասին հայտարարության մեջ:

3.8. Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, ինչպես նաև աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել Բորսայի կանոններով սահմանված կարգով: Տեղաբաշխումը կարող է չեղյալ կամ չկայացած համարվել Բորսայի կանոններով սահմանված կարգով:

4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Թողարկողի ցանկության դեպքում Արժեթղթերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա, հակառակ դեպքում՝ Ազդագրի ժամկետի ընթացքում, Բանկը կազմակերպում է Բորսայում Արժեթղթերի թույլտվության/ցուցակման գործընթացի իրականացումը՝ ներառյալ, Թողարկողի աջակցությամբ պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/փաստաթղթերի) կազմումը և Բորսա ներկայացումը: Սույն միջոցառման իրականացման ապահովման շրջանակներում Թողարկողը Բանկին լիազորում

է Թողարկողի անունից հանդես գալ Բորսայում, մասնավորապես, Թողարկողի Արժեթղթերի առևտրին թույլտվության գործընթացի կազմակերպման համար ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր /այդ թվում՝ գրություններ, տեղեկանքներ և այլն/, ստորագրել, կատարել անհրաժեշտ վճարումներ:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Թողարկողն իրավունք ունի՝

5.1.1. Բանկից պահանջել սույն համաձայնագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների ամբողջովին կատարում:

5.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Բանկի կողմից սույն համաձայնագրով մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Բանկի գործունեությանը:

5.1.3. Ողջամիտ և օրենքին չհակասող ցուցումներ տալ Բանկին՝ ծառայության մատուցման (փաստաթղթերի կազմման և դրանց բովանդակության) վերաբերյալ:

5.1.4. Ծառայության մատուցման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալ Բանկից:

5.2. Թողարկողը պարտավոր է՝

5.2.1. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում կատարել ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև սույն համաձայնագրով սահմանված իր պարտականությունները:

5.2.2. Բանկի պահանջով ողջամիտ ժամկետներում տրամադրել նրա կողմից մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև Բանկի պահանջով Բանկին ներկայացնել անհրաժեշտ փաստեր և հիմնավորումներ Թողարկողի կողմից բացահայտման ենթակա տեղեկատվության արժանահավատության և լիարժեքության վերաբերյալ:

5.2.3. Փոխհատուցել Բանկին ներկայացված անարժանահավատ և խեղաթյուրված (բաց թողնված) տեղեկատվության բացահայտման հետևանքով Բանկի կրած այն վնասները, որոնք առաջացել են պետական լիազորված մարմինների կամ Արժեթղթեր ձեռքբերող ներդրողների պահանջով:

5.2.4. Անհրաժեշտության դեպքում, սույն համաձայնագրով տրված լիազորություններից բացի, Բանկին տալ լիազորագրեր սույն համաձայնագրով նախատեսված ծառայությունների պատշաճ մատուցման համար:

5.2.5. Սույն համաձայնագրի գործողության ընթացքում չփոփոխել Արժեթղթերի տեղաբաշխման պայմանները (մասնավորապես՝ սույն համաձայնագրի 1.2 կետում նշվածները) և չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կսահմանափակեն տեղաբաշխման ընթացքը կամ կվատթարացնեն Արժեթղթերի տեղաբաշխման և շրջանառության պայմանները:

5.2.6. Բանկին ներկայացնել տեղեկատվություն ՀՀ կենտրոնական բանկ և Բորսա ներկայացվող տեղեկությունների և/կամ փաստաթղթերի լրացումների և փոփոխությունների (ընթացիկ, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների, էական փաստերի և տեղեկությունների) և դրանց բովանդակության վերաբերյալ:

5.2.7. Սույն համաձայնագրով սահմանված ծառայությունների համար Բանկին վճարել սույն համաձայնագրով սահմանված վճարները՝ սույն համաձայնագրով սահմանված կարգով և պայմաններով:

5.2.8. Սույն համաձայնագրով իր ստանձնած պարտավորությունների կատարմանը խոչընդոտող անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու դեպքում անհապաղ տեղեկացնել Բանկին այդ մասին:

5.2.9. Բանկի պահանջով կատարել սույն համաձայնագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

5.3. Բանկն իրավունք ունի՝

5.3.1. Թողարկողից պահանջել սույն համաձայնագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը:

5.3.2. Թողարկողից ստանալ և օգտագործել սույն համաձայնագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար Թողարկողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև այդ տեղեկությունների արժանահավատության և լիարժեքության (ամբողջականության) վերաբերյալ լրացուցիչ հիմնավորումներ և փաստարկներ, այդ թվում՝ Թողարկողից պահանջել ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձի պարզաբանումները Թողարկողի կողմից ներկայացված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու նպատակով:

5.3.3. Սույն համաձայնագրի 2.2. կետով սահմանված ծառայությունների մատուցման ընթացքում Թողարկողի հետ կազմակերպել աշխատանքային հանդիպումներ և քննարկել այնպիսի հարցեր, որոնք պահանջում են հրատապ լուծումներ:

5.3.4. Հարցում կատարել Վարկային բյուրոներին Թողարկողի վարկերի և փոխառությունների վերաբերյալ հիմնավոր և հավաստի տեղեկատվություն ստանալու նպատակով:

5.3.5. Իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն համաձայնագրով սահմանված կարգով, ժամկետներում և չափով:

5.4. Բանկը պարտավոր է՝

5.4.1. Տեղաբաշխման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ Բորսայի անդամներին տեղեկատվություն տրամադրել Արժեթղթերի տեղաբաշխման մասին:

5.4.2. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում կատարել ՀՀ օրենսդրությամբ և սույն համաձայնագրով սահմանված՝ իր կողմից ստանձնած պարտականությունները:

5.4.3. Սույն համաձայնագրով նախատեսված ծառայությունների մատուցումը սկսել ոչ ուշ, քան սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու և Թողարկողի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը Բանկին տրամադրելու հաջորդ օրվանից:

5.4.4. Պատշաճ որակով մատուցել սույն համաձայնագրով նախատեսված ծառայությունները:

5.4.5. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով և ողջամիտ ժամկետներում:

5.4.6. ՀՀ օրենսդրության շրջանակներում ապահովել կատարվող գործառնությունների գաղտնիությունը:

5.4.7. Արժեթղթերի տեղաբաշխումից հետո Թողարկողին տրամադրել Արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը տեղաբաշխման օրվա դրությամբ:

5.4.8. Թողարկողին տրամադրել տեղեկություններ տեղաբաշխման աճուրդի մասնակիցների և ներկայացված հայտերի վերաբերյալ:

6. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Բանկի կողմից սույն համաձայնագրի առարկա Արժեթղթերի ազդագիրը գրանցման նպատակով ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում Բանկը Թողարկողին է ներկայացնում սույն համաձայնագրի 6.2 կետում նախատեսված տեղաբաշխման ծառայությունների նախապատրաստման ծառայությունների հաշիվ-ապրանքագիր, իսկ Բորսայում Արժեթղթերի առևտրի թույլատրմանը դիմելուն (կամ սույն համաձայնագրի 7.3 կետով նախատեսված՝ Բանկից անկախ պատճառներով Բորսայում առևտրին Արժեթղթերի թույլատրման մերժմանը) հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում Բանկը Թողարկողին է ներկայացնում նաև սույն համաձայնագրի 6.2 կետում նախատեսված՝ Արժեթղթերի տեղաբաշխման ծառայությունների հաշիվ-ապրանքագիր:

6.2. Սույն համաձայնագրով նախատեսված տեղաբաշխման ծառայությունների նախապատրաստման ծառայությունների դիմաց Թողարկողը Բանկին վճարում է միանվագ 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (առանց ավելացված արժեքի հարկի), Ծրագրային Ազդագրի դեպքում յուրաքանչյուր լրացման համար՝ 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտից հետո Թողարկողը Բանկին է վճարում Արժեթղթերի տեղաբաշխման ծառայությունների վճար՝ փաստացի տեղաբաշխված Արժեթղթերի անվանական ծավալի 0.3%-ի չափով (առանց ավելացված արժեքի հարկի):

6.3. Արժեթղթերի տեղաբաշխման և առևտրի թույլատրման հետ կապված բոլոր ծախսերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարումները կատարվում են Թողարկողի կողմից:

6.4. Արտարժույթով թողարկումների դեպքում տեղաբաշխման ծառայության վճարի հաշվարկման համար հիմք է ընդունվում տեղաբաշխման օրվա/օրերի համար ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն համաձայնագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

7.2. Կողմը պատասխանատվություն չի կրում սույն համաձայնագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե դա ծագել է մյուս Կողմի՝ սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով:

7.3. Բորսայի կանոններով սահմանված կարգով Արժեթղթերը առևտրին չթույլատրման համար Բանկը պատասխանատվություն չի կրում, եթե Բանկն իրականացրել է Արժեթղթերի առևտրին թույլատրման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները, սակայն առևտրին չթույլատրումը եղել է Բանկից անկախ պատճառներով:

7.4. Սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում ծառայությունների դիմաց վճարումը չկատարելու դեպքում Թողարկողը Բանկին վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0.13 (զրո ամբողջ տասներեք հարյուրերորդական) տոկոսի չափով, բացառությամբ այն դեպքերի, երբ վճարման չկատարումը պայմանավորված է Բանկի կողմից ծառայությունների ոչ պատշաճ մատուցմամբ: Տույժի վճարումը Թողարկողին չի ազատում իր վրա դրված պարտավորությունները կատարելուց և խախտումները վերացնելու պարտականության կատարումից:

7.4.1. Սույն համաձայնագրի 2.2. կետով սահմանված ծառայությունների մատուցումից հրաժարվելու, ոչ պատշաճ կատարելու և/կամ սույն համաձայնագիրը Բանկի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծելու դեպքում Բանկը Թողարկողին հետ է վերադարձնում սույն համաձայնագրի 6.2 կետում նշված գումարը/գումարները և վճարում է այդ գումարի 10 (տասը) տոկոսի չափով տուգանք, եթե սույն համաձայնագրի լուծումը պայմանավորված չէ Թողարկողի կողմից սույն համաձայնագրով նախատեսված՝ Թողարկողի պարտավորությունների ոչ պատշաճ կատարելու հետ: Տույժի վճարումը Բանկին չի ազատում իր վրա դրված պարտավորությունները կատարելուց և խախտումները վերացնելու պարտականության կատարումից:

7.4.2. Սույն համաձայնագիրը Թողարկողի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում Թողարկողի կողմից Բանկին վճարված՝ սույն համաձայնագրի 6.2 կետում նշված գումարը/գումարները Բանկի կողմից հետ չի վերադարձվում, եթե սույն համաձայնագրի լուծումը պայմանավորված չէ Բանկի կողմից սույն համաձայնագրի 2.2. կետով սահմանված ծառայությունները ոչ պատշաճ կատարելու հետ:

7.5. Սույն համաձայնագրի որևէ դրույթի անվավերությունը չի հանգեցնում այլ դրույթի (դրույթների) անվավերության: Կողմերը պարտավորվում են չվիճարկել համաձայնագրի լրիվ կամ մասնակի անվավերությունը կամ իրավաբանական ուժը՝ համաձայնագրով սահմանված իրենց պարտավորությունները չկատարելու համար, և միաժամանակ պարտավորվում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն ու գործողությունները համաձայնագրի նպատակը և պայմանները գործող օրենսդրության համաձայն իրականացնելու ուղղությամբ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն համաձայնագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն համաձայնագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական

մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն համաձայնագրով պարտավորությունների կատարումը:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Սույն համաձայնագրի կապակցությամբ Կողմերի միջև առաջացած տարաձայնություններն ու վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Սույնով Թողարկողը հաստատում է, որ Բանկն իրեն ծանոթացրել է ՀՀ-ում ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին:

10.2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է մինչև սույն համաձայնագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարումը:

10.3. Սույն համաձայնագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս Կողմին նախապես մեկ շաբաթ առաջ պատշաճ ծանուցելով:

10.4. Սույն համաձայնագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

10.5. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ապահովել մյուս կողմից ստացված բանկային, ֆինանսական, առևտրային և այլ տեղեկատվության խիստ գաղտնիությունը: Նման տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

10.6. Սույն համաձայնագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10.7. Սույն համաձայնագիրը հանդիսանում է Կողմերի միջև 20.03.2023թ. կնքված Համագործակցության պայմանագրի անբաժանելի մասը:

11. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՆԿ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բուզանդի 87-րդ շենք, թիվ 85
ՀՎՀՀ՝ 02500518
թ/հ՝ 103002101519
ՀՀ Կենտրոնական բանկ,
հեռ.՝ (+374 10) 59-23-23

Գործադիր տնօրեն՝

Միհր Անանյան

ստորագրություն

ԹՈՂԱՐԿՈՂ
«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Ագաթանգեղոսի 2ա
ՀՎՀՀ՝ 00445174
հ/հ՝ 1510023156470100
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
հեռ.՝ (+374 12) 555555

Գլխավոր տնօրեն՝

Սթիվեն Մայքլ Հասս

ստորագրություն